Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ

ԹՈՒՐՔԻԱ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԵՎ ՄԻՋԱՎԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Վերլուծական նյութեր
Թողարկում 2

32(56)
Ռ-98

Վերլուծական նյութեր

Թողարկում 2

ԹՈՒՐՔԻԱ. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

4206

Երևան
«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
2008

ՀՏԴ 620:339
ԳՄԴ 31+65.9(2)8
Թ 988

Թ 988 **Թուրքիա. էներգետիկան և միջազգային տնտեսական կապերը:** Վերլուծական նյութեր, - թող. 2. - Երևան, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ , 2008. 211 էջ:

Խմբագրական կոլեգիա՝ Հ. Ավետիսյան, Ա. Այվազյան, Լ. Անդրիասյան, Ա. Արշակյան, Հ. Ասրյան, Հ. Դեմոյան, Ա. Եղիազարյան, Գ. Իսագուլյան, Ս. Մինասյան, Ն. Փանոսյան, Վ.Սարգսյան, Գ. Սաֆարյան, Ռ. Սաֆրաստյան

ԳՄԴ 31+65.9(2)8

Ամփոփում
Ժողովածուն ներառում է տեղեկատվական-վերլուծական նյութեր, որոնք նվիրված են ժամանակակից Թուրքիայի էներգետիկայի ու միջազգային տնտեսական կապերի խնդիրներին: Հանգամանորեն ներկայացված են Թուրքական Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի, Չինաստանի, Կենտրոնասիական հանրապետությունների և Ֆրանսիայի հետ, դրանց հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները:
Ժողովածուն նախատեսված է մասնագետների, ինչպես նաև այն ընթերցողների համար, որոնք հետաքրքրվում են Թուրքիայի էներգետիկայի ու տնտեսության հետ կապված հարցերով:

ISBN 978-99941-865-0-1

© Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2008 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Եղիազարյան
Թուրքիայի էներգետիկ սեկտորը. հիմնախնդիրները և հեռանկարները 5

Միխայիլ Աղաջանյան
Առևտրա-տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև 50

Սերգեյ Շաքարյանց
Թուրքիայի և Իրանի տնտեսական համագործակցությունը տարածաշրջանում 100

Վլադիմիր Իվանով
Թուրք-վրացական տնտեսական համագործակցության որոշ ասպեկտները. տնտեսություն՝ պայմանավորված քաղաքականությամբ 142

Լևոն Հովսեփյան
Թուրքիա-Չինաստան առևտրատնտեսական հարաբերությունների շուրջ 157

Հայկ Դեմոյան
Առևտրատնտեսական կապերի հաստատումն ու խորացումը Թուրքիայի և ԱՊՀ-ի թուրքալեզու հանրապետությունների միջև 168

Թամարա Անդրիասյան
Ֆրանսիայի առևտրատնտեսական շահերը Թուրքիայում և երկու երկրների փոխհարաբերությունները 188

Summaries 203

Թուրքիայի էներգետիկ սեկտորը. հիմնախնդիրները և հեռանկարները

Աշոտ Եղիազարյան

1. Թուրքիայի կախվածության աստիճանը էներգառեսուրսներից

1.1 Առաջնային էներգիայի սպառման աճը

Թուրքիայում ինդուստրիալիզացման և ուրբանիզացման գործընթացների արդյունքում էներգիայի սպառումը 1960-ական և 1970-ական թվականներին գրեթե եռապատկվեց: 1960 թվականին սպառվող առաջնային էներգիայի կեսից ավելին կազմում էին ոչ առևտրային աղբյուրները, գլխավորապես փայտը: Այդ տարիներին զգալի կշիռ ուներ նաև գոմաղբի օգտագործումը: Էներգիայի այդ ոչ առևտրային աղբյուրները, գումարած քարածխի և գորշ ածխի ներքին արտադրությունը, ապահովում էին երկրում սպառվող ամբողջ առաջնային էներգիայի ավելի քան 80%-ը: Նավթի կշիռը առաջնային էներգիայի սպառման մեջ կազմում էր ընդամենը 18%. Ընակչության, ուրբանիզացիայի և տնտեսական հետագա աճի արդյունքում էներգիայի սպառումը նորից եռապատկվեց հաջորդ քսան տարիներին՝ 1980-ական և 1990-ական թվականներին: Սակայն այդ աճը փոփոխություն բերեց նաև սպառվող էներգառեսուրսների կառուցվածքում, ավելացնելով նաև երկրի կախվածությունը ներմուծվող էներգառեսուրսներից: Այս առումով իրենց դերը խաղացին նավթամթերքների գծով պետական սուբսիդիաները, որոնք դարձան էներգիայի օգտագործվող աղբյուրների փոփոխության հիմնական պատճառներից մեկը: 1980 թվականին նավթը արդեն ապահովում էր երկրում սպառվող առաջնային էներգիայի մոտավորապես 47%-ը, քարածուխը և գորշ ածուխը՝ մոտավորապես 21%-ը, հիդրոէներգիան՝ 8%-ը, իսկ ոչ առևտրային աղբյուրները՝ միայն 23%-ը: 1992 թվականին առաջնային էներգիայի սպառման մեջ նավթի բաժինը կազմել է 43.5%, գորշ ածխի և քարածխի բաժինը՝ 31.1%, հիդրոէներգիայի բաժինը՝ 4.1%, բնական գազի բաժինը՝ 6.9% և էներգիայի այլ աղբյուրների բաժինը (ներառյալ երկրաջերմային, արևային և քամու էներգիան)՝ 14.4%. 80-ական թվականների վերջերից, էներգիայի սպառման կառուցվածքում սկսեց ավելանալ բնական գազի բաժինը, իսկ 90-ական թվականներին հզոր հիդրոհամալիրների կառուցման հետ կապված՝ նաև հիդրոէներգիայինը: Այսպես, առաջնային էներգիայի սպառման կառուցվածքում 2001 թվականին նավթի բաժինը կազմել է 39.6%, բնական գազինը՝ 19%, ածխինը՝ 27.6%, հիդրոէներգիայինը՝ 13.8%: Ըստ կանխատեսումների, 2010 թվականին այդ ցուցանիշները պետք է լինեն համապատասխանաբար՝ 33%, 32%, 26% և 9%: Ենթադրվում է, որ մինչև 2020 թվականը նավթի սպառումը կկրկնապատկվի, իսկ գազի սպառումը կավելանա չորս անգամ: Այսինքն, գազի սպառումը կշարունակի ավելանալ առաջանցիկ տեմպերով:

Ընդհանուր առմամբ, 1963-2004 թվականների ընթացքում էներգիայի սպառման միջին տարեկան աճը Թուրքիայում կազմել է 4.8%, էլեկտրաէ-

ներգիայինը՝ 9.7%: Ոչ վաղ արված կանխատեսումները ցույց են տալիս, որ այդ միտումները կշարունակվեն և տեսանելի ապագայում: Հարկ է նշել, որ չնայած էներգիայի սպառման զգալի ավելացմանը, ըստ բնակչության մեկ շնչին ընկնող առաջնային էներգիայի և էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշների, Թուրքիան զիջում է ոչ միայն Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) երկրներին, այլև հետ է մնում համաշխարհային միջին ցուցանիշներից: Այսպես, ըստ 2003 թվականի տվյալների բնակչության մեկ շնչին ընկնող առաջնային էներգիայի սպառումը Թուրքիայում կազմել է 1.12 նավթային համարժեք (TOE), էլեկտրաէներգիայինը՝ 1654 կիլովատ/ժամ: Նույն թվականին համանման միջին համաշխարհային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1.69 TOE և 2429 կիլովատ/ժամ, իսկ ՏՀԶԿ երկրներում՝ 4.67 TEO և 8,044 կիլովատ/ժամ:

2005 թվականի վերջի դրությամբ, Թուրքիայի բնակչությունը կազմել է 69.8 մլն. մարդ: Ենթադրվում է, որ 2010 թվականին երկրի բնակչության թիվը կկազմի 74.1 մլն. մարդ, իսկ 2022 թվականին կհասնի 83.4 մլն. մարդու: Չնայած բնակչության աճի տեմպերը ընկնում են, սակայն տեսանելի հեռանկարում դրանք կմնան բավականաչափ բարձր: 2005 թվականին բնակչության աճը կազմել է 1.3%, իսկ 2022 թվականին այդ ցուցանիշը կնվազի ընդամենը 0.3%-ով և կկազմի 1%: Ի լրումն բնակչության աճի, եթե Թուրքիայի տնտեսությունը զարգանա աճի միջին տեմպերով, ապա 2020 թվականին առաջնային էներգիայի սպառումը երկրում զգալիորեն կաճի: Ենթադրվում է, որ հաջորդ մի քանի տարիներին էներգիայի սպառումը Թուրքիայում տարեկան կաճի մինչև 8%-ով՝ ՏՀԶԿ երկրների միջին 1.5%-ի համեմատությամբ, Թուրքիայում ստեղծելով աշխարհի ամենադինամիկ էներգիայի շուկաներից մեկը: Բայց դրա հետ մեկտեղ կմեծանա նաև երկրի կախվածությունը էներգառեսուրսների ներմուծումից և համաշխարհային էներգետիկ շուկայի տատանումներից: 2004 թվականին առաջնային էներգիայի արտադրությունը Թուրքիայում համարժեք է եղել 24.5 մլն. TOE, այն դեպքում, երբ էներգիայի ընդհանուր սպառումը կազմել է 87.6 մլն. TOE: Դա նշանակում է, որ էներգիայի նկատմամբ Թուրքիայի պահանջմունքների 72%-ը ապահովել են օտարերկրյա մատակարարները: Սպասվում է, որ 2010 թվականին առաջնային էներգիայի սպառումը կկազմի 126 մլն. TOE, իսկ 2020 թվականին՝ 222 մլն. TOE (տես գրաֆիկ 1): Ընդ որում կանխատեսվում է, որ 2020 թվականին Թուրքիայի կախվածությունը էներգակիրների ներմուծումից կարող է հասնել 80%-ի: Հարկ է նշել, որ մինչև 2001 թվականի ֆինանսական ճգնաժամը նախատեսվում էր, որ առաջնային էներգիայի սպառումը 2010 թվականին կկազմի 153.9 մլն. TOE, այսինքն 22.1%-ով ավել ճշգրտված կանխատեսումային ցուցանիշից:

Ընդհանուր առմամբ, հաջորդ տասնամյակներին Թուրքիայի էներգետիկայի հատվածը կգարգանա ոչ միայն Թուրքիայի համար ավանդական հանդիսացող, այլ նաև մի շարք նոր ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ: Թուրքական իշխանությունները ենթադրում են, որ հաջորդ տասնամյակի ընթացքում երկրի էներգետիկայի հատվածը կաճի արագ տեմպերով, որին կնպաստեն հետևյալ գործոնների հիմնական խմբերը՝

- բնակչության աճը և բնակչության մեկ շնչի հաշվով էներգիայի սպառման արագ աճը, համախառն ներքին արդյունքի շարունակվող հաստատուն աճը: Ընդ որում էլեկտրաէներգիայի սպառումը կաճի երկու անգամ արագ ՀՆԱ-ի աճի համեմատությամբ,
- Թուրքիայի ռազմավարական դիրքը էներգառեսուրսներով հարուստ երկրների (Մերձավոր Արևելքի, Կասպիական ավազանի երկրներ և Ռուսաստան) և Եվրոպայում խոշոր սպառողների միջև, ինչը կնպաստի ներդրումների ներգրավմանը խողովակաշարերի շինարարության մեջ և նավահանգստային հզորությունների ու ենթակառուցվածքների զարգացմանը,
- աշխարհածինների բարձր գները և դրանց ներմուծումից կախվածությունը, ինչը կավելացնի ներդրումները վերականգնվող և ատոմային էներգետիկայի մեջ,
- գեներացնող օբյեկտների և էներգաբաշխիչ ցանցերի մասնավորեցումը, ինչը կնպաստի նոր, այդ թվում օտարերկրյա մասնավոր ներդրումների և տեխնոլոգիաների ներգրավմանը:

Գրաֆիկ 1. Առաջնային էներգիայի սպառման գնահատականները (2004-2020թթ.)



Աղբյուրը՝ Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն

Գրաֆիկ 2. Առաջնային էներգիայի սպառումը ըստ աղբյուրների (%, 2004թ.)



Աղբյուրը՝ Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն

Գրաֆիկ 3. Առաջնային էներգիայի օգտագործումը ըստ ճյուղերի (%, 2004թ.)



Աղբյուրը՝ Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն

2004 թվականին էներգիայի սպառման կառուցվածքում նավթի բաժինը կազմել է 38%, ածխինը՝ 27%, բնական գազինը՝ 23%, և հիդրոէներգիայինը՝ 12% (տես գրաֆիկ 2): Նույն թվականին առաջնային էներգիայի սպառումը ըստ տնտեսության ճյուղերի ունեցել է հետևյալ պատկերը. արդյունաբերություն՝ 42%, բնակարանային և կոմունալ տնտեսություն՝ 30%, տրանսպորտ՝ 20%, գյուղատնտեսություն՝ 5%, այլ ճյուղերը՝ 3% (տես գրաֆիկ 3):

Առաջնային էներգիայի սպառման գծով առջևում է արդյունաբերությունը, որի պահանջմունքները աճում են արագ տեմպերով: Որոշ փորձագետներ գտնում են, որ էներգառեսուրսների ներմուծումից կախվածության փոքրացման համար Թուրքիան պետք է մեծ ուշադրություն հատկացնի արդյունաբերության մեջ էներգառեսուրսների նկատմամբ պահանջմունքների աճի սահմանափակմանը, այդ ճյուղում իրականացնելով կառուցվածքային փոփոխություններ: Թուրքական արդյունաբերության առավել էներգատար ենթաճյուղերն են սև և գունավոր մետալուրգիան, քիմիան, ցեմենտի, աղյուսի և կերամիկայի արտադրությունը: Թուրքիան կանգնած է նաև տնտեսության բոլոր ոլորտներում էներգիայի անարդյունավետ օգտագործման հիմնախնդրի առջև:

1.2 Նավթի պաշարները, արդյունահանումը և սպառումը

2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նավթի ապացուցված պաշարները Թուրքիայում կազմել են մոտավորապես 300 մլն. բարել, ինչը համարժեք է երկրում վառելիքի այդ տեսակի մոտավորապես երկու տարվա սպառմանը: Ընդհանուր առմամբ, Թուրքիայի երկրաբանաֆիզիկական առանձնահատկությունների պատճառով նավթային դեպոզիտները հաճախ պարունակվում են փոքր կոլեկտորներում, ինչը դժվարացնում է հետախուզական աշխատանքները և նավթի հանույթը: Բացի այդ նավթի

թուրքական հանքավայրերը ցրված են ամբողջ երկրով մեկ: Թուրքիայի նավթի հանքավայրերի մեծ մասը տեղաբաշխված են "Hakkari" ավազանում (հարավ-արևելյան Անատոլիա) Իրանի, Իրաքի և Սիրիայի սահմանների մոտ: Այստեղ հանքավայրերը ծեր են, իսկ արդյունահանման ինքնարժեքը՝ բարձր: Որոնողական-հետախուզական աշխատանքները խթանելու համար թուրքական կառավարությունը, 1983 թվականին թույլատրեց օտարերկրյա նավթային ընկերություններին արտահանել Անատոլիայում հայտնաբերված և արդյունահանված նավթի 35 տոկոսը և օֆշորային գոտիներում հայտնաբերված և արդյունահանված նավթի 45 տոկոսը: Չնայած դրանից հետո որոշ օտարերկրյա ընկերություններ սկսեցին հետախուզական աշխատանքներ, նավթի նշանակալի պաշարներ Թուրքիայի տարածքում և նրա օֆշորային գոտիներում, այդպես էլ չգտնվեց: Որոնողական-հետախուզական աշխատանքները 1985 թվականին ցույց տվեցին, որ Թուրքիան ունի նավթային դեպոզիտներ շատ խորքային մակարդակներում (ըստ "Shell" նավթային ընկերության գնահատականների Կենտրոնական Անատոլիայում կան նավթի զգալի պաշարներ), սակայն չհաջողվեց պարզել դրա քանակությունը: 1991 թվականին "British Petrolium"-ը սկսեց նավթ փնտրել Սև ծովի օֆշորային գոտիներում: Ենթադրվում է, որ նշանակալի նավթային դեպոզիտներ կան էգեյան ծովում: Սակայն պոտենցիալ նավթային պաշարները էգեյան ծովում հետախուզված չեն թուրք-հունական տարածքային վեճերի պատճառով: 1961 թվականից Թուրքիայում հետախուզվել և հորատվել են շուրջ 1 400 հորատանցքեր:

Նավթի սեփական արտադրությունը ներկայացված է հիմնականում երեք ընկերությունների կողմից՝ Թուրքական Պետական Նավթային Ընկերություն (TPAO[1]), "Shell" և "ExxonMobil": Բացի այս ընկերություններից ոչ մեծ քանակությամբ նավթ, Թուրքիայում արդյունահանում է ռումինական "Petrom" ընկերությունը (ներկա պահին արտադրում է օրական մոտավորապես 2 600 բարել "Selmo" բլոկում) և Մերձավորարևելյան "Aladdin" ընկերությունը (ներկա պահին արտադրում է օրական 480 բարել "Siirt" և "Gaziantep" բլոկներում): 1969 թվականին Թուրքիայում արդյունահանվել է 3.6 մլն. տոննա նավթ, այնուհետև արտադրությունը նվազել է մոտավորապես մինչև 2.1 մլն. տոննա /1985 թվականին/, քանի որ դեպոզիտները սպառվել էին: 1980-ական թվականների ընթացքում նավթային հանքավայրերի երկրորդային վերականգնման փորձ եղավ հարավ-արևելյան Անատոլիայի "Bati Raman"-ի մարզերում: Սպասվում էր, որ քսան տարվա ժամանակաշրջանում այդ ծևով կարել է արտադրել տարեկան մոտավորապես 1.5 մլն. տոննա նավթ: 1990-ական թվականների սկզբին նավթի արտադրությունը նորից ավելացավ՝ գրեթե մինչև 4.4 մլն. տոննա:

TPAO-ի կշիռը թուրքական նավթարդյունահանման մեջ կազմում է 80% (ներկայումս TPAO-ն արդյունահանում է իր կողմից 1991 թվականին արտադրվող նավթի ծավալի մոտ կեսը): Վերջին տարիներին TPAO-ն նավթի որոնման գծով մեծ ջանքեր է գործադրում երկրի ներսում և արտասահմանում՝ հույս ունենալով բարձրացնել նավթի արդյունահանման ծավալները: Սակայն շատ նախագծեր Հարավ-Արևելյան Անատոլիայում չեն իրականացվում նավթային սարքավորումների վրա քրդերի գինված հարձակումների պատճառով, ինչը խոչընդոտում է նաև այդ տարածաշրջանում արևմտյան օպերատորների գործունեությանը: 1990-ական թվական-

ների կեսերից TPAO-ի հեռանկարային պլաններում կարևոր նշանակություն սկսեցին ձեռք բերել կասպյան նախագծերը: Ընկերությունը հույս ունի, որ 2010 թվականին օրական մինչև 70 հազար բարել նավթ կստանա ադրբեջանական "Ազերի-Չիրագ-Գյունեշլի" նախագծի շրջանակներում: TPAO-ն հանդիսանում է Ադրբեջանական միջազգային գործառնական ընկերության բաժնետոմսերի 6,75%-ի սեփականատերը: Բացի դրանից, TPAO-ն ունի 5,08% բաժին Հիմնական Արտահանման խողովակաշարի (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան) շինարարության ֆինանսավորման համար ստեղծված հովանավորչական խմբում: TPAO-ն ունեցել է նաև 5% "Բյուրդաշի" ծովային հանքավայրի հետախուզման և նախագծի մշակման (այդ նախագծում ներդրել է $16,9 մլն., բայց հետո պայմանագիրը կասեցվել է առևտրային անարդյունավետության պատճառով), և 10% «Արազ, Ալով և Շարգ» ծովային հանքավայրի հետախուզման և մշակման նախագծի շրջանակներում (այդ նախագծում ներդրել է $22.3 մլն., բայց հետո հետախուզական աշխատանքները դադարեցվել են, Կասպից ծովի իրավական կարգավիճակի անորոշության պատճառով, Իրանի հետ դիմակայության արդյունքում): Ադրբեջանի նավթագազային ճյուղում ներդրումների ընդհանուր ծավալով TPAO-ն չորրորդ օտարերկրյա ընկերությունն է "British Petrolium", "ExxonMobil" և "Statoil" ընկերություններից հետո: Թուրքական նավթային հսկան 1995-2005 թվականների ժամանակաշրջանում Ադրբեջանի նավթային և գազային նախագծերում ներդրել է մոտավորապես $2 մլրդ: Ընկերությունը մտադիր է Ադրբեջանի էներգետիկ նախագծերում ներդնել ընդհանուր ծավալով $4.5 մլրդ.: TPAO-ն նավթային կոնցեսիաներ ունի նաև Ղազախստանում, Ավստրալիայում, Պակիստանում և Եգիպտոսում:

2004 թվականին Թուրքիայում արդյունահանված նավթի ծավալը կազմել է օրական 42 904 բարել, որից օրական 42 421 բարելը կազմել է հում նավթը: Նավթի ներմուծումը 1980-ական թվականների սկզբում կազմել է միջին հաշվով օրական 300 հազար բարել, իսկ 1990-ական թվականների սկզբում՝ 450 հազար բարել: Նավթի սպառումը 2004 թվականին կազմել է օրական 685 000 բարել: Այսինքն, զուտ նավթային ներմուծումը 2004 թվականին կազմել է օրական 642 081 բարել կամ երկրում նավթի ընդհանուր սպառման 90%-ը: Այսպիսով, ներկայումս Թուրքիան ներմուծում է երկրում սպառվող նավթի մոտավորապես 90%-ը, գլխավորապես Մերձավոր Արևելքից (Սաուդյան Արաբիա, Իրան, Իրաք, Սիրիա) և Ռուսաստանից: Նավթը ապահովում է առաջնային էներգիայի նկատմամբ երկրի պահանջմունքների 38%-ը: Հեռանկարում նավթի ներմուծումը կավելանա: Կանխատեսվում է, որ 2020 թվականին նավթի սպառումը կավելանա 50%-ով: Բայց հարկ է նշել, որ դրա բաժինը առաջնային էներգիայի սպառման մեջ կփոքրանա բնական գազի կշռի բարձրացման հաշվին:

Թուրքիայի նավթավերամշակող հզորությունները, 2005 թվականի հունվարի 1-ի դրությամբ, կազմել են օրական 802 275 բարել կամ տարեկան մոտ 40 մլն. տոննա (ներառյալ Սերսինում գտնվող "Atas" մասնավոր նավթավերամշակող գործարանի օրական 88 000 բարել հզորությունները): Թուրքիայի նավթավերամշակման մեջ գերիշխող դեր է խաղում պետական հսկողության տակ գտնվող "Tupras" (Turkiye Petrol Rafinerileri AS) ընկերությունը, որը վերահսկում է երկրի նավթամթերքների շուկայի ավելի քան

85%-ը: Ընկերությունը ստեղծվել է 1983 թվականին և խոշորագույններից մեկն է Եվրոպայում: Խմբի կազմի մեջ մտնում են 4 նավթավերամշակող գործարաններ (ՆՎԳ)՝ հարավ-արևմուտքում գտնվող "Batman" գործարանը, օրական 22 015 բարել հզորությամբ, Իզմիրի մոտ գտնվող "Aliaga" գործարանը, օրական 226 440 բարել հզորությամբ, Ստամբուլի մոտ գտնվող "Izmit" գործարանը (հանդիսանում է Թուրքիայի խոշորագույն նավթավերամշակող գործարանը, այն վնասվել է 1999 թվականի օգոստոսին տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ), օրական 251 600 բարել հզորությամբ, և Անկարայի մոտ գտնվող "Kirikkale" Կենտրոնական-Անատոլիական վերամշակող գործարանը, օրական 113 200 բարել հզորությամբ: "Tupras"-ի կազմի մեջ մտնում է նաև "Korfez" նավթաքիմիական համալիրը, որը ըստ վերջին տվյալների գտնվում է սնանկացման եզրին: Շուկայի մնացած մասն ընկնում է "British Petrolium", "ExxonMobil", "TotalFinaElf", "Agip", և "ConocoPhillips" ընկերություններին: Ներկայումս "Tupras"-ը Արևմտյան Թուրքիայում ("Yarimca"-ի մոտ) կառուցում է հինգերորդ նավթավերամշակող գործարանը, $700-$800 մլն. արժողությամբ: Այդ շինարարությունը պլանավորվում էր ավարտել 2007 թվականին: Մոտակա տարիներին "Tupras"-ի պլանների մեջ է մտնում իր նավթավերամշակող հզորությունների արդիականացումը՝ եվրոպական ստանդարտներին համապատասխանող ավելի թեթև նավթամթերքների արտադրության համար: 2005 թվականի հունիսին, Թուրքիայի ֆինանսների նախարարությունը "Tupras"-ին տրամադրեց $128 մլն. փոխատվություն, որպեսզի արդիականացվի "Kirikkale"-ի գործարանը: "Tupras"-ի շուկայական կապիտալիզացիան կազմում է մոտ $4 մլրդ: Ընկերության տարեկան շահույթը կազմում է մոտավորապես $500 մլն: Արդեն շատ տարիներ "Turpas"-ը գլխավորում է երկրի ամենախոշոր 500 արդյունաբերական ընկերությունների ցուցակը:

Թուրքիայի աջակցման մասին Միջազգային արժութային հիմնադրամի կողմից հավանություն ստացած ծրագրի շրջանակներում, դեռևս 2002 թվականին, պետությունը սկսեց "Tupras"-ի $3,9 մլրդ. մասնավորեցումը, մասնավոր անձանց վաճառելով ընկերության բաժնետոմսերի 31%-ը: 2004 թվականին մրցույթային վաճառքի դրվեց ընկերության բաժնետոմսերի պետական փաթեթի մնացած 65,67%-ը: Ըստ մրցույթի արդյունքների, Թուրքիայի բարձրագույն մասնավորեցման կոմիտեն հաղթող ճանաչեց "Efremov Kautchuk" («Թաթնավթը» «Zorlu Group» խմբի հետ միությամբ) ռուս-թուրքական համատեղ ձեռնարկությանը: Այդ ընկերությունը "Tupras"-ի պետական փաթեթի համար առաջարկել էին $1,302 մլրդ.: Սակայն Թուրքիայի Գերագույն դատարանը ձևական հիմքերով (իբր գործարքը չի համապատասխանում հասարակական շահերին, ինչպես նաև մրցույթի ընթացակարգի խախտման պատճառով) չեղյալ հայտարարեց մրցույթի արդյունքները: «Թաթնավթը» հանդիսանում է ռուսական նավթի միակ մատակարարը Թուրքիա: 2003 թվականին ընկերությունը "Tupras"-ին մատակարարել է 2,8 մլն. տոննա նավթ: Հարկ է նշել, որ ռուսական ընկերություններին երբեք հեշտությամբ չի հաջողվել թափանցել թուրքական էներգետիկ շուկա: Իրականության մեջ քաղաքական գործոնները վճռական դեր են խաղում Թուրքիայի էներգետիկ շուկա մտնելիս և այդ առումով ռուսական ընկերությունները բախվում են արևմտյան մրցակիցների կոշտ դիմադրությանը: "Tupras"-ի դեպքում ակնհայտ է, որ ըստ էության ով կտի-

ռապետի դրա բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթին, նա էլ կստանա կստանա թուրքական նավթավերամշակման և նավթամթերքների շուկայի վերահսկումը:

Հավանաբար, հաշվի առնելով «Թաթնավթ»-ի փորձը, մեկ այլ ռուսական ընկերություն, «Լուկոյլը», ընտրեց ավելի ինքնուրույն ռազմավարություն՝ թուրքական Զոնգուլդակ պրովինցիայում կառուցել նոր նավթավերամշակման գործարան $2,5 մլրդ. արժողությամբ: Ռուսական ընկերությունը համապատասխան դիմում է ուղղել Թուրքիայի էներգետիկ շուկաների կարգավորման խորհրդին: Նավթավերամշակման գործարանի հզորությունը կկազմի տարեկան շուրջ 8-10 մլն. տոննա նավթ: Ենթադրվում է, որ գործարանը կվերամշակի ռուսական և ղազախական նավթ:

2005 թվականի մարտին Ստամբուլի ֆոնդային բորսայի միջոցով օտարերկրյա ներդրողներին վաճառվեցին "Tupras"-ի պետությանը պատկանող բաժնետոմսերի 14,76%-ը: Վաճառված բաժնետոմսերի ընդհանուր արժեքը կազմեց $446 մլն.: Այդ բաժնետոմսերի սեփականատեր դարձան վեց օտարերկրյա ընկերություններ՝ "Nordic Pacific"-ը, "Singapore Investments"-ը, "Viclov Holdings Ltd."-ն, "Baer Emerging Markets"-ը, "Diversified Markets"-ը, "Global Securities (USA) Inc."-ը: Բաժնետոմսերի ամենախոշոր փաթեթները բաժին հասան "Global Securities (USA) Inc"-ին (4,8%) և "Viclov Holdings Ltd"-ին (4,75%): 2005 թվականի ապրիլին կառավարությունը ևս մեկ առաջարկություն արեց բաժնետոմսերի պետական փաթեթի մնացած 51 տոկոսի վաճառքի մասին: Մրցույթի նկատմամբ հետաքրքրություն դրսևորեցին ինչպես օտարերկրյա ընկերությունները (այնպիսիք, ինչպիսիք են իսպանական "Repsol"-ը, լեհական "PKN Orlen"-ը, հնդկական IOC-ը, իտալական ENI-ին, ավստրիական OMV-ն և անգլո-հոլանդական "Royal Dutch/Shell Group"-ը), այնպես էլ թուրքական "Petrol Ofisi"-ը, "OYAK"-ը, "Opet"-ը և "Zorlu Group"-ը: Այդ մրցույթում հաղթեց թուրքական "Koc Holding" կոնգլոմերատից և անգլո-հոլանդական "Royal Dutch Shell" ընկերությունից կազմված կոնցեռնը, որը ընկերության բաժնետոմսերի համար առաջարկեց $4.14 մլրդ: Մասնավորեցման գծով Թուրքիայի բարձրագույն խորհուրդը գործարքը հաստատեց 2005 թվականի նոյեմբերի 7-ին, իսկ 2006 թվականի հունվարի 26-ին տվյալ ընկերությունների հետ բաժնետոմսերի 51 տոկոս պետական փաթեթի վաճառքի մասին համաձայնագիր կնքեց: Վճարումը կատարվեց կանխիկ դրամական միջոցներով: Այսպիսով, "Turpas"-ի շուրջ մասնավորեցման սկսնդալից հետո վերջապես պետական բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը վաճառվեց:

Ընդհանուր առմամբ թուրքական մասնավորեցումը միշտ աչքի է ընկել սկանդալներով, որը պայմանավորված է սուր ներքաղաքական հակասություններով: Թուրքերը շատ զգայուն են հատկապես ռազմավարական էներգետիկ օբյեկտների մասնավորեցման հարցերում: Էներգետիկ անվտանգության ապահովման և արևմտյան ներդրողներից աճող կախվածության հաղթահարման որոնումներում, Թուրքիան Ադրբեջանի հետ մշակում է կասպյան էներգետիկ հզորությունների համատեղ օգտագործման պլան: Այդ համագործակցության շրջանակներում Ադրբեջանը և Թուրքիան պլանավորում են Ջեյհանում ստեղծել նավթի վերամշակման համատեղ ձեռնարկություն տարեկան 20 մլն. տոննա արտադրողականությամբ: Բացի դրանից, նախատեսվում է արտադրանքի լայն տեսակների ունեցող նավթաքիմիական համալիրի շինարարություն: Նախնական հաշվարկներով, նախագծի իրացման համար կպահանջվի $5 մլրդ.: Ենթադրվում է, որ համատեղ ձեռնարկության առաջնային ներդրումների 51%-ը կպատկանի Ադրբեջանին, 49%-ը՝ Թուրքիային: Բայց դա դեռ մտադրություն է, որի իրականացումը կապված է բազմաթիվ, հնարավոր է նաև սկզբունքորեն անլուծելի հիմնախնդիրների հետ:

Թուրքիայում մասնավորեցման գործընթացն արագացնելու ՄԱՀ-ի պահանջով, 2002 թվականի հուլիսին, Թուրքիայի կառավարությունը հայտարարեց, որ վաճառում է իր մանրածախային սպառման «Petrol Ofisi AS» /POAS/ ընկերության 25,8-տոկոսանոց մասնաբաժինը «Dogan Petrol Yatirimlari AS» /Dogan/ ընկերությանը, մի բաժնետիրոջ, որը տիրում է «POAS»-ի հսկիչ փաթեթին: Նեկայումս «Dogan»-ի մասնաբաժինը «POAS»-ի կապիտալում կազմում է 52,73 %: Ընկերության մնացած բաժնետոմսերը պատկանում են ավստրիական նավթագազային «OMV» ընկերությանը /34%/ և մինորիտար բաժնետերերի /13,27%/: «POAS»-ը վերահսկում է թուրքական նավթային շուկայի երրորդ մասը:

Էներգետիկ օբյեկտների սեփականաշնորհման ծրագրի շրջանակներում, 2003 թ.-ի օգոստոսին, Թուրքիան հայտարարեց երկրի խոշորագույն նավթաքիմիական «Petkim» ընկերության բաժնետոմսերի 88 %-ի վաճառքի մասին: 2005 թ.-ի ապրիլին «Petkim»-ի պետական մասնաբաժնի 35,4 %-ը վաճառվեց 267 մլն. դոլարով: Այդ բաժնետոմսերը հիմնականում բաժին հասան արտասահմանյան ներդրողներին: «Petkim»-ի բաժնետոմսերի հսկիչ փաթեթի սեփականաշնորհման գործընթացի ավարտը նախատեսված է 2007 թ.-ին: Ըստ ընկերության հաշվետվության, 2006 թ.-ի ընթացքում բաժնետոմսերի 54,32 %-ը գտնվում էին սեփականաշնորհման նախարարության տրամադրության տակ, բաժնետոմսերի 7 %-ը պատկանում էր Պետական Թոշակային Հիմնադրամին, իսկ 38,68 %-ը այլ ներդրողներին:

1.3. Բնական գազի պաշարները, արդյունահանումը և սպառումը

Թուրքական գազի շուկան հանդիսանում է աշխարհում առավել արագ աճողներից մեկը, չնայած նրան, որ բնական գազը երկրում սկսեցին օգտագործել համեմատաբար ուշ, 1970-ական թվականների սկզբներին, երբ սահմանափակ քանակությամբ արդյունահանվող սեփական գազը սկսեց կիրառվել մի քանի արդյունաբերական ձեռնարկություններում: Թուրքիայում բնական գազի սպառմանը գերակա նշանակություն է տրվում մի քանի պատճառներով՝ էկոլոգիական (գազը ավելի քիչ է աղտոտում շրջակա միջավայրը, քան ածուխը կամ նավթը), աշխարհագրական (Թուրքիան տեղաբաշխված է Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի գազի պաշարներով հարուստ երկրների մոտ), էներգետիկ (բնական գազի լայն օգտագործումը Թուրքիայի համար նշանակում է նաև նավթից մեծ կախվածություն ունեցող երկրի էներգահաշվեկշռի դիվերսիֆիկացում), տնտեսական (Թուրքիան գազի ներմուծման մի մասը կարող է փոխհատուցել իր տարածքով այդ էներգակիրի արտահանումից ստացված տարանցիկ վճարների օգնությամբ), և քաղաքական (Թուրքիան ձգտում է ամրապնդել իր հարաբերությունները Կասպյան և Կենտրոնա-ասիական երկրների

հետ, որոնց մի մասը հանդիսանում են բնական գազի պոտենցիալ կարևոր արտահանողներ):

«Marmara Kuzey»-ը (Հյուսիսային Մարմարա) հանդիսանում է Թուրքիայում բնական գազի ամենամեծ հանքավայրը: Այդ օֆշորային հանքավայրը շահագործվում է 1997 թվականի մայիսից: 2002 թվականի մարտին պաշտոնապես բացվեց "Gocerler" գազի հանքավայրը, որի արտադրական պոտենցիալը գնահատվում է տարեկան 6.6 մլրդ. խորանարդ ֆուտ: Բացի այդ, 2001 թվականի հուլիսին TPAO-ն հայտարարեց, որ գազ է գտել Մերսինում և Իսկենդերունի ծոցում (Միջերկրական ծովի թուրքական մասում): 2004 թվականի սեպտեմբերին TPAO-ն հայտարարեց հարուստ գազի պաշարների հայտնաբերման մասին "Ayazli-1"-ում և "Ayazli-2"-ում (Սև ծովի հարավ-թուրքական առափնյա մաս): Նույն ժամանակվանից համատեղ ձեռնարկությունը "TPAO» /51 %/, «Toreador»-ը /37 %/ և «Stratic»-ը /12 %/ այդ շրջանում իրականացրեցին ծավալուն հետախուզական հորատում և սեյսմիկ փորձարկումներ: «Toreador» ընկերության գնահատականներով, այդ շրջանի բնական գազի պաշարները կազմում են 1,4 տրլն. խոր. ֆուտ: 2006 թ.-ին «TPAO-Toreador-Stratic» կոնսորցիումը հայտարարեց «Akcakoca» /SASB/ Հարավային ենթաավազանում բնական գազի նոր հանքավայրի բացման մասին, ներառելով «Bayhanli-1»-ը և «Akkaya-3»-ը: Սև ծովի արևելյան ափին գազի հանքավայրերի բացման որոնումների մեջ TPAO-ն համագործակցում է «British Petrolium» և «Chevron» ընկերությունների հետ: 2006 թ.-ի ընթացքում TPAO-ն օրական արդյունահանել է 50 մլն.խոր. ֆուտ բնական գազ, չնայած արտադրությունը երբեմն գերազանցել է օրական 70 մլն.խոր. ֆուտը: Նավթային գազը /զուգընթաց գազը/ հիմնականում օգտագործվում է նավթային հանքավայրերում նավթի արդյունահանման ընդլայնման նպատակով: Սակայն, բնական գազի պաշարները Թուրքիայում խիստ համեստ են և երկիրը գործնականում ամբողջովին կախված է էներգառեսուրսի այդ տեսակի ներկրումից: Բնական գազի պաշարները Թուրքիայում, ըստ 2006 թ.-ի հունվարի 1-ի դրության, կազմել են 300 մլրդ.խոր. ֆուտ /մոտավորապես 8,5 մլրդ.խոր.մ./, ինչը համարժեք է այդ երկրի կողմից նշված վառելիքի հինգ ամիսների օգտագործմանը: 2004 թ.-ի ընթացքում Թուրքիայում արդյունահանվել է մոտ 24 մլրդ. և սպառվել է 793 մլրդ. ֆուտ /22,2 մլրդ.խոր.մ./ բնական գազ: Այսինքն, բնական գազի զուտ ներկրումը կազմել է 769 մլրդ. ֆուտ կամ ընդհանուր սպառման 97 %-ը: Հարկ է նշել, որ 1991 թ.-ին երկիրը սպառում էր ընդամենը 150 մլրդ. խոր. ֆուտ /4,2 մլրդ.խոր.մ./, այսինքն ներկայիս սպառման մակարդակի 20 %-ից պակաս: Երկրում բնական գազի սպառման աճն ավելի արագ է, քան նավթինը: Այդ պատճառով էներգիայի ընդհանուր սպառման մեջ բնական գազի մասնաբաժինը շարունակում է ավելանալ: Ներկայումս բնական գազի մասնաբաժինը կազմում է Թուրքիայում սպառվող ամբողջ էներգիայի մոտավորապես 17 %-ը: Երկրի գազային շուկայում հեղուկ բնական գազի /ՀԲԳ/ մասնաբաժինը կազմում է 0,5 % /մոտ 103 000 տոննա/: Նախատեսվում է, որ ՀԲԳ-ի օգտագործման մասնաբաժինը կաճի հետագա տարիների ընթացքում: Ներկայումս Թուրքիան ունի ՀԲԳ-ի ներկրման միայն մեկ տերմինալ /տարեկան 112 մլրդ.խոր. ֆուտ հզորությամբ/: Տերմինալը գտնվում է Երեգլիզիում /Մարմարա/, Ստամբուլից ոչ հեռու: ՀԲԳ-ը ներկրվում է Ալժիրից և Նիգերիայից: Առկա

են Եգիպտոսից ՀԲԳ-ի ներկրման տերմինալի շինարարության պլաններ Իզմիրում /տարեկան 212 մլրդ.խոր. ֆուտ հզորությամբ/:

Այն դեպքում, երբ Թուրքիան նավթի մատակարարման մատչելիության առումով չունի լուրջ խոչընդոտներ /ունենալով ընդարձակ ծովային սահմաններ, Թուրքիան նավթը հիմնականում ստանում է Լիբիայից և Ալժիրից ժամանող տանկերներով/, բնական գազի մատակարարումը Թուրքիա միշտ հանդիսացել է ավելի գրգռող հիմնախնդիր: Չունենալով համապատասխան զարգացած գազային ենթակառուցվածքներ, Թուրքիան նախորդ երկու տասնամյակների ընթացքում դժվարություններ էր կրում բնական գազի մատակարարման հարցում: Այդ խնդրի լուծման կարևորությունը ստիպեց Թուրքիայի իշխանություններին գազի գնման մասին մի քանի երկարաժամկետ համաձայնագրեր ստորագրել Ռուսաստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի, Իրանի, Ալժիրի և Նիգերիայի հետ, ընդ որում գերագնահատելով դրա սպառման հեռանկարային պահանջարկը:

1996-2000 թթ.-ի ժամանակահատվածում, գազի օգտագործումը Թուրքիայում աճել է գրեթե երկու անգամ /տես. աղյուսակ 1-ը/: Տնտեսության ինդուստրիալիզացիան, բնակչության քանակի աճը, կյանքի նոր որակը հանդիսանում են այն հիմնական գործոնները, որոնք ազդում են բնական գազի սպառման աճի վրա:

Աղյուսակ 1. Գազի սպառման կառուցվածքը 1996-2000թթ., մլն. մ³

Ճյուղը	1996	1997	1998	1999	2000	2000/1996 (%)
Կոմունալ	1 484	1 955	2 185	2 355	2 724	183,6
Արդյունաբերական	1 364	1 830	1 898	1 810	1 895	138,9
Պարարտանյութերի արտադրություն	802	734	472	141	110	13,7
Էլեկտրաէներգետիկա	4 050	4 900	5 333	7 743	9 420	232,6
Ընդամենը	7 700	9 419	9 888	12 040	14 149	183,8

Աղբյուրը՝ BOTAS ընկերության տվյալները

Գազի օգտագործման կառուցվածքում առաջընթաց տեմպերով աճել են էլեկտրաէներգետիկայի և կոմունալ տնտեսության մասնաբաժինները: Էլեկտրաէներգետիկան հանդիսանում է բնական գազի ամենախոշոր սպառողը: 1996-2000 թթ.-ի ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ստացման համար օգտագործված բնական գազի ծավալն աճել է 232,6 %-ով և կազմել է 9,42 մլրդ.խոր.մ. /երկրում գազի գումարային օգտագործման 66,6 %-ը/: 2000 թ.-ին երկրում արդյունաբերության, բնակարանային-կոմունալ սեկտորի և պարարտանյութերի արտադրության մասնաբաժինները բնական գազի ընդհանուր սպառման մեջ համապատասխանաբար կազմել են 13,4 %, 19,2 % և 0,8 %:

BOTAS-ի կանխատեսումներով[2] ենթադրվում էր, որ 2000-2005 թթ.-ի ժամանակահատվածի ընթացքում երկրում բնական գազի օգտագործումը կա-

ճի երեք անգամ, հասնելով 43,6 մլրդ.խոր.մ.-ի, իսկ արդեն 2020 թ.-ին կկազմի 82,8 մլրդ.խոր.մ.: Ենթադրվում էր, որ գազի նկատմամբ պահանջարկի աճը կպահպանվի տնտեսության բոլոր սեկտորներում /բացի պարարտանյութերի արտադրության մեջ դրա օգտագործումից/, սակայն գերակշռող բնագավառը մինչ օրս մնում է էլեկտրաէներգետիկան /տես աղյուսակ 2-ը/:

Աղյուսակ 2. Գազի սպառման կառուցվածքը 2005 թվականից մինչև 2020 թվականը, մլն. մ³

Ճյուղը	2005 թ.	2005/2000 (%)	2010 թ.	2015 թ.	2020 թ.
Կոմունալ	7 371	270,6	11 091	12 446	13 088
Արդյունաբերական	14 226	750,7	18 294	19 957	21 146
Պարարտանյութերի արտադրություն	304	276,4	304	304	304
Էլեկտրաէներգետիկա	21 698	230,3	25 413	34 638	48 246
Ընդամենը	43 598	308,0	55 102	67 344	82 785

Աղբյուրը՝ BOTAS ընկերության տվյալները

Սակայն BOTAS-ը իր կանխատեսումներում չէր նախատեսել շատ գործոններ, որոնք ազդում են հակառակ ուղղությամբ, այդ թվում չէր կարող հաշվի առնել այն, որ 2000-2001 թթ.-ին Թուրքիայում տեղի կունենա ծանր ֆինանսական ճգնաժամ: Ֆինանսական ճգնաժամը և երկրի բազմաթիվ տնտեսական հիմնախնդիրները, ինչպես նաև էներգետիկ շուկայի ազատականացման հետևանքով առաջացած գնային փոփոխությունները, ստիպեցին Թուրքական Պետական Խողովակաշարային Ընկերությանը շտկել իրենց կանխատեսումները Թուրքիայում բնական գազի պահանջարկի աճի առումով: 2005 թ.-ի սպառման ստորընթաց վերանայումը կազմել է 40 % /1,6 տրլն.-ից մինչև 0,9 տրլն.խոր. ֆուտ/: Այսպիսով, Թուրքիան հայտնվեց այն փաստի առջև, որ, ըստ BOTAS պետական ընկերության կողմից կնքված պայմանագրերի, գազի գնման ծավալների պարտավորությունը գերազանցում է իրական պահանջարկը:

Ներկա պահին BOTAS-ը ունի 8 երկարաժամկետ պայմանագրեր, որոնք կնքվել են 6 տարբեր երկրների արտահանողների հետ /տես աղյուսակ 3-ը/: Ըստ կնքված երկարաժամկետ պայմանագրերի Թուրքիան բնական գազը ներկրում է Ռուսաստանից, Իրանից և Ադրբեջանից, իսկ ՀԲԳ-ը Ալժիրից և Նիգերիայից:

Գործնականում Թուրքիան շատ ավելի մեծ քանակի բնական գազի ներկրման պայմանագրեր է կնքել, քան համաձայն նոր կանխատեսումների, դրա կարիքն ունի: Թուրքիան մինչև 2010 թ.-ը տարեկան բնական գազի ներկրման համար կնքել է մոտ 1,8 տրլն.խոր ֆուտ ծավալի պայմանագրեր /50,4 մլրդ.խոր.մ./, ինչը 25 %-ով ավելին է, քան տվյալ տարվա համար BOTAS-ի կողմից ճշգրտված կանխատեսումը /1,4 տրլն.խոր. ֆուտ կամ 39,2 մլրդ.խոր.մ./:

Աղյուսակ 3. Թուրքիա բնական գազի ներմուծման գծով կնքված պայմանագրերը

Արտահանող երկիրը	Մատակարարման պիկային ծավալ /տարեկան մլրդ.խոր.մ./	Պայմանագրի ստորագրման տարեթիվը	Պայմանագրի գործողության ժամկետը /տարի/	Կարգավիճակը
Ռուսաստանի Դաշնություն (նախնական եթթուղի)	6	14.02.86	25	Գործում է
Ռուսաստանի Դաշնություն (Turusgaz)	8	18.02.98	23	Գործում է
Ալժիր /ՀԲԳ/	4	14.04.88	20	Գործում է
Նիգերիա /ՀԲԳ/	1,2	9.11.95	22	Գործում է
Իրան	10	8.08.96	25	Գործում է
Ռուսաստանի Դաշնություն /Երկնագույն հոսք/	16	15.12.97	25	Գործում է
Խորվաթիա	16	21.05.99	30	Չի գործում
Ադրբեջան	6,6	12.03.01	15	Գործում է
ԸՆԴԱՄԵՆԸ	67,8			

Աղբյուրը՝ BOTAS ընկերության տվյալները

Իտալական ENI ընկերության փորձագետները գտնում են, որ 2010 թ.-ին Թուրքիայում բնական գազի պահանջարկը կհասնի միայն 38 մլրդ.խոր.մ.-ի: Գազի ավելցուկը Թուրքիան պատրաստվում է վերաարտահանել ԵՄ-ի երկրներ, որտեղ մոտակա 15 տարիների ընթացքում գազի սպառումը կաճի գրեթե 50 %-ով: Այս համատեքստում Թուրքիան քննարկում է բնական գազի ավելցուկի պահպանման համար ստորջրյա գազապահեստարանների շինարարության հնարավորությունը: Մարմարյա ծովում կամ Կենտրոնական Անատոլիայում Աղի լճի տակ /Tuz Golu/: 2002 թ.-ի հուլիսին TPAO-ն բանակցություններ սկսեց գերմանական «Lurgi Oel Gas Chemie» ընկերության հետ Թուրքիայում առաջին գազապահեստարանի կառուցման շուրջ: Գազապահեստարանը պետք է տեղակայվի Մարմարյա ծովի ափին, Ստամբուլից ոչ հեռու, և պետք է ներառի գազի մաքրման սարքավորում: BOTAS-ը պլանավորում է գազապահեստարան կառուցել Կենտրոնական Անատոլիայում գտնվող Աղի լճի տակ:

1.4. Ածխի պաշարները, արդյունահանումը և սպառումը

Թուրքիան տիրապետում է քարածխի և լիգնիտի /գորշածխի/ զգալի պաշարների /համաշխարհային պաշարների մոտ 0,6 %-ը/: Քարածխի պաշարները գնահատվում են մոտավորապես 1,1 մլրդ. կարճ տոննա, իսկ լիգնիտինը 8 մլրդ. կարճ տոննա: Լիգնիտի պաշարները բաշխված են Թուրքիայի ամբողջ տարածքով, սակայն Թուրքիայի լիգնիտի մոտ 40 %-ը տեղակայված է հարավ-արևելյան Անատոլիայի «Afsin-Elbistan» ավազանում: Քարածուխ արդյունահանվում է միայն Թուրքիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Զոնգուլդակ շրջանում: Քարածխի արդյունահանումը, վերամշակումը և բաշխումը իրականացվում է պետությանը պատկանող «Լիգնիտի Թուրքական Ընկերության» կողմից /TTK/, իսկ լիգնիտի հիմնա-

կան մասի արտադրությունը՝ թուրքական ածխային ձեռնարկությունների կողմից: Բացի այդ, Թուրքական պետական էլեկտրաէներգետիկ ընկերությունը /Turkey's Electricity Generating Authority/ լիգնիտ արտադրում է երեք էլեկտրակայանների համար: 1990-ից մինչև 2000 թվականները Թուրքիայի ածխային սեկտորում զբաղված աշխատողների քանակը նվազել է 63 993-ից մինչև 35 665 մարդու: Թուրքական ածուխը, որը հիմնականում օգտագործվում է էլեկտրաէներգիայի արտադրության համար, ունի ցածր որակ /պարունակում է մեծ քանակի ջուր և ծծումբ, դժվարությամբ է այրվում և խիստ աղտոտում է օդը/: Ածխի արտադրությանը խոչնդոտում է նաև դրա կուտակումների մեծ խորությունը: Սակայն, այնուամենայնիվ դրա արտադրությունն աճում էր բարձր տեմպերով: Եթե 1970-1975 թթ.-ին ընթացքում երկրում տարեկան արդյունահանվում էր մոտ 7,9 մլն. տոննա ածուխ, ապա 2003 թ.-ին ածխի արտադրությունը կազմեց 53,1 տոննա: Սակայն, երկրում այդ վառելիքի սպառումը գերազանցում է դրա արտադրության ծավալները: 2003 թ.-ին Թուրքիայում սպառվել է 71,0 մլն. տոննա ածուխ, այսինքն մաքուր ներկրումը կազմել է 17,9 մլն. կարճ տոննա:

1.5. Վերականգնվող էներգառեսուրսները

Թուրքիան ունի զգալի հիդրոէներգետիկ ռեսուրսներ /ընդհանուր համաշխարհային պաշարների 1 %-ը/: Թուրքիան մեծ պոտենցիալ ունի նաև քամու, երկրաջերմային և արևային էներգիայի զարգացման համար: Սակայն, բացառությամբ հիդրոռեսուրսների, վերականգնվող էներգիայի մնացած բոլոր աղբյուրների օգտագործումը աննշան է: Քամու էներգիայի պոտենցիալը կազմում է մոտավորապես 120 000 ՄՎտ: Քամու էներգիայի ստացման առանձնապես հրապուրիչ շրջանները տեղակայված են Թուրքիայի արևմտյան ափեզրին և հարավ-արևելյան Անատոլիայում: Արևային էներգիան հիմնականում օգտագործվում է ջեռուցման նպատակով: Երկրաջերմային էներգիայի պաշարներով երկիրը Եվրոպայում զբաղեցնում է առաջին տեղը, իսկ աշխարհում 7-րդը: Թուրքիայում միակ երկրաջերմային էլեկտրակայանը գտնվում է Դենիզլի-Կոզզլդերե շրջանում, որն օժտված է 20,4 ՄՎտ բրուտտո հզորությամբ և նետտո ապահովում է 12 ՄՎտ էլեկտրաէներգիայի արտադրություն: Աֆյոնում, Կյուտահյեում, Բալըկեսիրում, Իզմիր-Բալչովում, Անկարա-Կոզզլջահամամում և Մանիսե-Սալիխլիում երկրաջերմային էներգիան օգտագործվում է որպես ջերմության աղբյուր: Չնայած Թուրքիայի երկրաջերմային ռեսուրսները զգալի են, սակայն դրանք համակարգորեն դեռ չեն ուսումնասիրվել: Էներգիայի երկրաջերմային պոտենցիալը գնահատված է 35 գազային հորատանցքերի սահմաններում: Թուրքիան զգալի հնարավորություններ ունի նաև կենսառեսուրսների օգտագործման մեջ:

2. Էլեկտրաէներգիայի արտադրությունն ու սպառումը

2.1. Էլեկտրաէներգիայի արտադրությունը

1970-ական թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի պահանջարկը Թուրքիայում սկսեց զերազանցել դրա մատակարարմանը, և 1970-ական թվականների վերջին, էլեկտրաէներգիայի մշտական պակասը սկսեց արգելակել արդյունաբերության զարգացումը: Նավթի ներկրումը սահմանափակ էր տարադրամի անբավարարության պատճառով: Իրավիճակն այն աստիճան բարդացավ, որ 1979 թ.-ին ավտոմեքենաների, բեռնատարների և տրակտորների համար նավթամթերքի մատակարարումը դարձավ նորմավորված: 1980-ական թվականների կեսերին, էլեկտրաէներգիայի դեֆիցիտի հիմնախնդիրը լուծելու նպատակով, Օզալի կառավարությունը մի շարք միջոցներ ձեռնարկեց արտադրական էներգետիկ հզորությունների ավելացման համար: Էլեկտրակայանների կառուցման ժամանակ սկսեցին լայնորեն կիրառել «կառուցիր-կառավարիր-փոխանցիր» սկզբունքը: Այս մոդելը նախատեսում էր էլեկտրակայանների շինարարություն արտասահմանյան կապիտալի և տեխնոլոգիաների կիրառումով: Ընդ որում, արտասահմանյան ներդրողները պետք է կառուցեին էլեկտրակայաններ, երաշխավորված եկամուտներով, կառավարեին դրանք բազմաթիվ տարիների ընթացքում, և վերջապես, հանձնեին կառավարության սեփականությանը, երբ ներդրումներն արդեն ամբողջովին կվերադարձվեին: Սակայն, ըստ այդ մոդելի նախագծի իրականացումը բախվեց բազմաթիվ հիմնախնդիրների հետ, այդ թվում նաև գնային ու իրավաբանական, ինչը դանդաղեցրեց դրանց իրականացումը:

Եթե 1960-1970-ական թվականներին էլեկտրաէներգիայի արտադրության մեջ շեշտը դրվում էր ջերմային էլեկտրակայանների կառուցման վրա, որոնք աշխատում էին հեղուկ վառելիքով /նավթ/, ապա 1980-1990-ական թվականներին ավելի հաճախ սկսեցին կիրառել էներգիայի սեփական աղբյուրներին առավելություն տալու կողմնորոշման սկզբունքը. հենվելով լիգնիտի, հիդրոռեսուրսների, երկրաջերմային, արևային և քամու էներգիաների, ինչպես նաև բնական գազի վրա, որպես բնապահպանորեն մաքուր վառելիքի նախապատվելի տեսակ: 1980-ական թվականների վերջերից, երկրում սկսվեց հիդրոէլեկտրակայանների լայնածավալ շինարարություն: Հիդրոշինարարության առանցքը դարձավ այսպես կոչված ԳԱՊ-ը /հարավ-արևելյան Անատոլիայի հիդրոէներգետիկ ծրագիրը/: ԳԱՊ նախագծի շրջանակներում, որը համարվում է Թուրքիայում երբեմնի նախագծված ջրային ու հիդրոէներգետիկ տնտեսության զարգացման ամենահավակնոտ նախագծերից մեկը /նախագծի ընդհանուր արժեքն է 32 մլրդ. դոլար/, պլանավորվում էր Տիգրիս և Եփրատ գետերի վրա կառուցել 22 ամբարտակներ, 19 հիդրոէլեկտրակայաններ /7,5 գեգավատ ընդհանուր հզորությամբ/, թունելների ցանց և ոռոգման ջրանցքներ: Նախատեսվում է, որ այդ նախագծի իրականացումը 25 %-ով կավելացնի Թուրքիայի ոռոգելի հողերը և 45 %-ով՝ էլեկտրաէներգիայի արդյունաբերական հզորությունները: Համաշխարհային բանկը հրաժարվեց ֆինանսավորել նախագիծը, որովհետև Թուրքիան համաձայնության չեկավ Սիրիայի և Իրաքի հետ, Եփրատի ջրերի բաժանման հացի շուրջ: Թուրքիան ստիպված էր

սեփական միջոցներով իրականացնել նախագիծը, ինչը զգալիորեն ծգծգեց դրա կատարումը: Կային նաև հիմնախնդիրներ, որոնք կապված էին քրդական զինված խմբավորումների և իրավապաշտպան կազմակերպությունների գործողությունների հետ: 2005 թ.-ի վերջին 8 հիդրոէլեկտրակայանների շինարարությունն ավարտված էր /այդ 8 հիդրոէլեկտրակայաններից 2005 թ.-ի ընթացքում արտադրեցին 18,7 մլրդ. կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա/: Սպասվում է, որ ամբողջ նախագիծը կավարտվի 2010 թ.-ին:

1980-ական թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի պակասը լրացվում էր Բուլղարիայից և Խորհրդային Միությունից ներկրման հաշվին: 1984 թ.-ին Թուրքիան և Խորհրդային Միությունը համաձայնվեցին կառուցել էլեկտրահաղորդման երկրորդ գիծը, որը հնարավորություն կտար ավելացնել էլեկտրաէներգիայի խորհրդային մատակարարումը: Միաժամանակ, 1980-ական թվականներին, Թուրքիան սկսեց արդիականացնել էլեկտրաբաշխիչ ցանցը և 1985 թ.-ին երկրի գյուղերի մոտ 70 %-ը ստանում էր էլեկտրաէներգիա: Հինգերորդ Հնգամյա Պլանը /1984-1989 թթ./ նախատեսում էր մինչև 1989 թ.-ը ամբողջովին ավարտել գյուղերի էլեկտրաֆիկացումը: 1990-ական թվականների կեսերին բոլոր գյուղերն արդեն էլեկտրաֆիկացված էին:

1990-ական թվականներին Թուրքիան գործնականում արդեն ապահովել էր երկրի էլեկտրաէներգիայի պահանջները, հիմնականում սեփական արտադրության հաշվին /էլեկտրաէներգիայի ներկրումը կազմել է Թուրքիայի ընդհանուր կարիքի 1 %-ը/: Չնայած նրան, որ թուրքերը միշտ ձգտել են անկախ լինել հարևանների կողմից էլեկտրաէներգիայի ցանկացած մատակարարումից, երկիրը մինչ օրս էլեկտրաէներգիա է ներկրում, ճիշտ է՝ փոքր քանակի: 2003 թ.-ի դեկտեմբերին Թուրքիան սկսեց Թուրքմենստանից /Իրանի միջոցով/ տարեկան ներկրել 300 մլն. կիլովատ/ժ էլեկտրաէներգիա: Նախատեսվում է ներկրման ծավալը կրկնապատկել մինչև 600 մլն. կիլովատ/ժ: Թուրքմենստանից ներկրված էլեկտրաէներգիայի մեկ կիլովատ/ժ-ի համար Թուրքիան վճարում է 3,35 ցենտ: Դա ավելի ցածր գին է, քան Թուրքիան վճարում է Բուլղարիայից ներկրված էլեկտրաէներգիայի համար: Բուլղարիայից Թուրքիան էլեկտրաէներգիա էր ներկրում 1998 թ.-ին ստորագրված «Էլեկտրաէներգիա ներդրումների փոխարեն» երկկողմանի համաձայնության շրջանակներում: 2003 թ.-ից Թուրքիան միակողմանի կերպով հրաժարվեց Բուլղարիայից էլեկտրաէներգիայի ներկրումից, դա բացատրելով այն հանգամանքով, որ Բուլղարիան չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները կապված ճանապարհների ու ամբարտակների շինարարության հետ, ինչը նախատեսված էր էլեկտրաէներգիայի առևտրի երկկողմանի համաձայնագրով: Իր հերթին, բուլղարական կողմը մեղադրում էր թուրքական «Զեյլան» ընկերությանը «Լեռնային Առդա» ՀԷԿ-ի կասկադի շինարարության պարտավորությունները չկատարելու մեջ: Սակայն, դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Բուլղարիան էլեկտրաէներգիա արտահանող էր հանդիսանում շնորհիվ «Կոզլոդույ» ԱԷԿ-ի, որը երկրի սեփական պահանջարկը գերազանցող էլեկտրաէներգիա էր արտադրում: Բուլղարիան բազմաթիվ տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի գլխավոր արտահանող էր հանդիսանում Հարավ-Արևելյան Եվրոպայի /Ալբանիա, Սերբիա, Չերնոգորիա, Ռումինիա, Հունաստան/ մի շարք դեֆիցիտային շուկաների համար: ԵՄ-ին անդամակցության ստանձնած պարտավորությունների շրջանակներում Բուլղարիան փակեց «Կոզլոդույ»-ի վեց բլոկներից չորսը, ինչը հանգեցրեց դեպի հարևան երկրները էլեկտրաէներգիայի արտահանման զգալի կրճատմանը: Ըստ բուլղարական իշխանությունների կանխատեսումների, 2007 թ.-ին, Բուլղարիայի կողմից էլեկտրաէներգիայի արտահանման ծավալները պետք է պակասեին հինգ անգամ՝ 7,6 մլրդ. կիլովատ/ժ-ից մինչև 1,5 մլրդ. կիլովատ/ժ: Բացի Թուրքմենստանից, Թուրքիան էլեկտրաէներգիա ներկրում է նաև Ռուսաստանից /Վրաստանով/ և Իրանից: Ենթադրվում էր, որ Ռուսաստանը կարող էր էլեկտրաէներգիայի զգալի ծավալներ մատակարարել թուրքական շուկա: Սակայն վերջին տարիներին Ռուսաստանը կա սահմանափակում է արտասահման էլեկտրաէներգիայի արտահանումը՝ ներքին էներգասպառման արագ աճի պատճառով: Այնպես որ Թուրքիան ստիպված է հույսը դնել էլեկտրաէներգիայի արտադրության ու բաշխման սեփական հնարավորությունների վրա: Ի տարբերություն նավթի ու գազի տեղափոխմանը, Թուրքիայի տարածքով էլեկտրաէներգիայի տարանցման հոսքեր չկան: Թուրքիայի էլեկտրացանցերի համակարգը դեռևս արևմտաեվրոպական էլեկտրացանցերի հետ չունի սինխրոնիզացված փոխկապվածություն: Հետևաբար սահմանափակված են նաև էլեկտրաէներգիայի առևտրի հնարավորությունները: Ներկայումս Բուլղարիայի երկու գծերի հետ կապը հանդիսանում է շահագործվող, սակայն ոչ սինխրոն ռեժիմի: 2003 թ.-ին Թուրքիան ստորագրեց աթենքյան Հուշագիրը, Հարավարևելյան Եվրոպայում քնական գազի և էլեկտրաէներգիայի տարածաշրջանային շուկայի ստեղծման մտադրության մասին և մասնակցեց համապատասխան համաձայնագրի ստորագրման բանակցությունների գործընթացին: Այդ հանդիպումները նոր խթան էին ապահովում 1995 թ.-ին սկսված ԵՄ-ի էլեկտրաէներգիայի ներքին շուկային Ալժիրի, Մարոկկոյի և Թունիսի էլեկտրաէներգիայի շուկաները ինտեգրելու Բարսելոնյան գործընթացի առաջխաղացմանը, որի նպատակն է եվրո-միջերկրածովային էլեկտրաէներգետիկ օղակի ստեղծումը /Թուրքիա-Հունաստան, Ալժիր-Իսպանիա, Ալժիր-Ֆրանսիա/: 2004 թ.-ի հուլիսին Թուրքիան և Հունաստանը պայմանավորվեցին էլեկտրահաղորդման 16-միլ երկարության գծի շինարարության մասին, որը կապելու էր այդ երկու երկրները, որն օգնելու էր Թուրքիայի էլեկտրական ցանցը եվրոպականի հետ ինտեգրացիային:

Թուրքիան հանդիսանում է աշխարհի ամենարագ աճող էլեկտրաէներգիայի շուկաներից մեկը: 1995-2004 թթ.-ին ընթացքում էլեկտրաէներգիայի սպառման տարեկան աճի տեմպը միջին հաշվով կազմել է 6,6 %: Երկրում էլեկտրաէներգիայի օգտագործումը նախորդ տասնհինգ տարիների ընթացքում եռապատկվել է: Մինչև 2001 թ.-ի ֆինանսական ճգնաժամը /այդ ճգնաժամի արդյունքում 2001 թ.-ին Թուրքիայում ՀԱԱ-ը կրճատվեց 9,4 %-ով/ ենթադրվում էր, որ էլեկտրաէներգիայի սպառման աճի տեմպերը կպահպանվեն նաև հաջորդ 15 տարիների ընթացքում: Այդ սպասումներին համապատասխան էլ իրականացվում էր լրացուցիչ արտադրական հզորությունների շինարարությունը: Այդ պատճառով, մի պահ, երկրում հայտնվեցին արտադրական հզորությունների ավելցուկներ: ՄԱՀ-ի և Համաշխարհային Բանկի վարկերով Թուրքիայի տնտեսությունը կայունացվեց, և սկսած 2006 թ.-ից դիտվում է տնտեսական աճ: Թուրքական իշխանությունները սպասում են, որ երկարաժամկետ հեռանկարում արտադրա-

կան հզորությունների նկատմամբ պահանջարկը էապես կավելանա:

Ճգնաժամային 2001 թ.-ի վերջում Թուրքիայում էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր հաստատված հզորությունը կազմել է 28 332 ՄՎտ /2000 թ.-ի նույնատիպ ցուցանիշի նկատմամբ աճը կազմել է 4%/: Միևնույն տարում Թուրքիայում արտադրվել է 122,7 մլրդ. կիլովատ/ժ էլեկտրաէներգիա, որի 80,3 %-ը բաժին էր ընկնում ջերմակայաններին[3], 19,6-ը՝ հիդրոէլեկտրակայաններին: Սակայն էլեկտրաէներգիայի սպառումը բնակչության մեկ շնչի կողմից նվազել էր մինչև 1870 կիլովատ/ժ-ի: /Տես՝ աղյուսակ 4/:

Աղյուսակ 4. Էլեկտրաէներգիայի արտադրությունը և սպառումը Թուրքիայում 2000-2001 թթ. (մլն. կիլովատ/ժամ)

	2000	2001	Աճը (%)
Նախանշված հզորությունը /ՄՎտ/	27 264	28 332	4
Համախառն արտադրությունը	124 922	122 725	-2
Հիդրոէներգիա	30 879	24 010	-22
Ջերմաէներգիա	93 934	98 563	5
Երկրաջերմային+քամու	101	109	7
Ներմուծում	3 791	4 579	21
Արտահանում	437	433	-1
Համախառն սպառում	128 276	126 871	-1
Սպառումը մեկ շնչի հաշվով (կիլովատ/ժամ)	1 968	1 870	-5

Աղբյուրը՝ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն

Ներկայումս Թուրքիան համեմատաբար լավ ներուժ ունի էլեկտրաէներգիայի արտադրության համար: 2005 թ.-ի վերջում Թուրքիայում էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր նախանշված հզորությունը հասել է 38 820 ՄՎտ, իսկ միջին արտադրական հզորությունը՝ շուրջ 220 մլրդ. կիլովատ/ժ-ի: Միևնույն տարում էլեկտրաէներգիայի օգտագործումը կազմել է 161 մլրդ. կիլովատ/ժ /ի համեմատություն 2004 թ.-ի 150,7 կիլովատ/ժ ցուցանիշի, աճը կազմել է 7 %/: Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մոտ 70 %-ը բաժին էր ընկնում ՋԷԿ-երին և գործնականում մնացած մասը՝ ՀԷԿ-երին: Էլեկտրաէներգիայի արտադրության առումով, Թուրքիան հիմնականում կենտրոնացած է բնական գազի հավելուրդային օգտագործման վրա /2003 թ.-ին արտադրական հզորությունների 40 %-ը աշխատում էին գազի վրա, 28 %-ը՝ հիդրո, 24 %-ը՝ ածխի և 7 %-ը՝ նավթի վրա/: Համաձայն պաշտոնական կանխատեսումների, 2005-2020 թթ.-ի ընթացքում էլեկտրաէներգիայի տարեկան պահանջարկը պետք է աճի 7,7 %-ով՝ բարձր պահանջարկի պարագայում, կամ 6 %-ով՝ ցածրի դեպքում: Դա նշանակում է, որ մինչև 2020 թ.-ը կպահանջվեն 40 000 ՄՎտ նոր արտադրական հզորություններ՝ փոքր աճի պարագայում, կամ 56 000 ՄՎտ՝ արագ աճի դեպքում: Համաձայն բարձր աճի կանխատեսումների, 2010 թ.-ին էլեկտրաէներգիայի պահանջարկը կկազմի 242 մլրդ. կիլովատ/ժ, իսկ 2020 թ.-ին՝ 499 մլրդ. կիլովատ/ժ, իսկ ցածր աճման պարագայում 2010 թ.-ին այդ պահանջարկը կկազմի 216 մլրդ. կիլովատ/ժ, իսկ 2020 թ.-ին՝ 406 մլրդ. կիլովատ/ժ:

Ըստ Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության պլանների 2005-2010 թթ.-ի ընթացքում արտադրական հզորությունների ստեղծման մեջ հիմնական շեշտը կդրվի էլեկտրակայանների շինարարության վրա, որոնք կաշխատեն բնական գազով: Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ բնական գազի նշանակությունը կավելանա նաև 2011-2015 թթ.-ին, իսկ այնուհետև 2016-2020 թթ.-ին փոքր-ինչ կպակասի: 2011-2015 թթ.-ի ժամանակահատվածում գերակա նշանակություն ձեռք կբերի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը, կավելանան էլեկտրակայանների հզորությունները, որոնք աշխատում են լիգնիտով, և կկառուցվեն նոր ատոմային էլեկտրակայաններ: Հիդրոէներգետիկ հզորությունների ընդլայնման գերակա նշանակությունը կպահպանվի նաև 2016-2020 թթ.-ի ընթացքում: Այս ժամանակահատվածում զգալիորեն կընդլայնվեն այն էլեկտրակայանների հզորությունները, որոնք աշխատում են տեղական լիգնիտի և ածխի օգտագործմամբ, ինչպես նաև ներկրված ածխի վրա /տես՝ աղյուսակ 5/:

Աղյուսակ 5. Էլեկտրաէներգիա արտադրության լրացուցիչ հզորությունների նկատմամբ պահանջմունքները, 2005-2020 թթ., ՄՎտ

Աղբյուրները	2005-10	2011-15	2016-20
Գորշ ածուխ /լիգնիտ/	0	4 520	5 520
Քարածուխ	0	0	1 200
Ներմուծված ածուխ	0	0	4 500
Բնական գազ	2 800	6 000	5 450
Հիդրո	542	6811	7 782
Քամու	500	625	625
Ատոմային	0	4500	0
Ընդամենը	3 842	22 456	25 077

Աղբյուրը՝ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն, 2004 թ. նոյեմբեր

Պահանջարկի ու առաջարկի նոր նախագծմանը համապատասխան, որոնք վերանայվել են 2006 թ.-ի փետրվարին, նախատեսվում է, որ էլեկտրաէներգիայի սպառման աճը առանձնապես բարձր կլինի 2005-2015 թթ.-ի միջև ընկած տասնամյակի ընթացքում՝ միջին հաշվով կազմելով տարեկան 8,5 %: Դա նշանակում է, որ մոտակա տարիների ընթացքում արտադրական հզորություններ արտադրողների կողմից էլեկտրաէներգիայի առաջարկի ու դրա նկատմամբ պահանջարկի միջև անհամապատասխանության պարագայում, Թուրքիային կրկին սպառնում է էլեկտրաէներգիայի դեֆիցիտը: Հաշվի առնելով էլեկտրաէներգիայի սպառման աճը և վերլուծելով շահագործման մեջ գտնվող, կառուցման փուլում գտնվող, ինչպես նաև արդեն շինարարական լիցենզիա ստացած էներգաօբյեկտների հզորությունները, որոշ փորձագետներ եկել են եզրակացության, որ էլեկտրաէներգիայի անբավարարություն Թուրքիան կարող է լինել 2009-2012 թթ.-ի ընթացքում: Իհարկե, կարելի է խուսափել էլեկտրաէներգիայի պակասից նոր հզորությունների կառուցման միջոցով: Սակայն, Թուրքիայի

անհանգստությունը կարելի է հասկանալ: Սկսած 2001 թ.-ից, ՄԱՀ-ի կայունացման ծրագրի պահանջով, պետությունը ստիպված էր հրաժարվել էներգետիկ սեկտորի մեջ մասշտաբային ներդրումներ կատարելուց /պետության ներդրումային ծրագրերից հանվեցին նոր գեներացնող օբյեկտների շինարարության նախագծերը/: Բացի այդ, կառավարական միջոցների անբավարարության պատճառով, պետպատվերի շրջանակներում իրականացվող էլեկտրակայանների շինարարությունները կատարվում են զգալի ծգձգումներով: Չնայած Թուրքիայի կառավարությունը 2001 թ.-ից սկսել է իրականացնել երկրի էներգետիկ շուկայի աստիճանական ազատականացման ծրագիրը, մասնավոր սեկտորի համար խաղի կանոնները դեռևս բավարար չափով կայուն չեն, ինչը նույնպես նվազեցնում է մասնավոր սեկտորում էներգետիկ նախագծերի իրականացման դինամիկան: 2008-2012 թթ.-րի ժամանակահատվածում թուրքական պետական գեներացնող ընկերությունը պլանավորել է հետևյալ հիմնական ՋԷԿ-երի կառուցումը, որոնք աշխատում են լիգնիտի հիման վրա՝ «Afsin Elbistan C» /1400 ՄՎտ/, «Soma–C» /600 ՄՎտ/, «Cayrhan-B» /600 ՄՎտ/, «Tuncbilek C» /300 ՄՎտ/ և «Seyitcmer» /150 ՄՎտ/: Հետագայում /մինչև 2020 թ.-ը/ նախատեսվում է «Afsin Elbistan»-ի C բլոկի հզորությանը համարժեք D, E և F բլոկների շինարարությունը:

Գլխավոր հիմնախնդիրն այն է, որ արտադրական հզորությունների ավելացումը պահանջում է միլիարդավոր դոլարների ներդրումներ: Ներկայումս հիմնական երկընտրանքը, որի առջև կանգնած է Թուրքիան, այն է, թե ինչպես ներգրավել կապիտալը նոր արտադրական հզորությունների մեջ և միաժամանակ կառավարել վիթխարի արտաքին պարտքը: Արտաքին վարկի հաշվին էներգետիկ սեկտորի ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորումը կվաթթարացնի իրավիճակը արտաքին պարտքի սպասարկման ոլորտում: Էներգետիկ սեկտորում նախագծերի իրականացման նպատակով թուրքական կառավարությունը քայլեր է ձեռնարկում մասնավոր սեկտորի թուրքական և օտարերկրյա ներդրողների խրախուսման համար: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ հարցերի զգալի մասը դեռևս մնում է չլուծված (նախ և առաջ խոսքը գնում է ներդրողներին պետության ֆինանսական երաշխիքների, ինչպես նաև շուկայում հասկանալի և թափանցիկ խաղի կանոնների մասին): Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության գնահատականների համաձայն, էներգիայի նկատմամբ երկրի աճող պահանջմունքների բավարարման համար էներգետիկ ենթակառուցվածքը ավելի քան $128 մլրդ. ներդրումների կարիք է զգում: Այդ գումարի երեք քառորդը հարկ է ուղղել էլեկտրաէներգիայի արտադրությանը իսկ մնացած մասը՝ ածխի և նավթի հետախուզմանն ու արդյունահանմանը, խողովակաշարերի շինարարությանը և այլ նպատակների (տես աղյուսակ 6): Նախատեսվում է, որ հիմնական ներդրումները էներգետիկայում պետք է ապահովվեն մասնավոր սեկտորի կողմից: Բայց որքանով է մասնավոր հատվածը պատրաստ դրան, որքանով են օտարերկրյա ներդրողները շահագրգռված այդպիսի ներդրումների հարցում, ինչ աստիճանով են պետության կողմից ձեռնարկվող միջոցները արդյունավետ՝ այդ հարցերը արդիական են մնում առ այսօր: Եվ չնայած թուրքական կառավարությունը հայտարարում է, որ վճռական է պլանավորված ժամկետներում նոր հզորությունների գործարկման ծրագրի իրացման հարցում, սակայն նրա աշխատանքի նախորդ փորձը այդպիսի հույսեր չի ներշնչում: Թուրքիան մի երկիր է, որը ունի բազմաթիվ, տասնամյակներով չլուծված հիմնախնդիրներ և բացի այդ կանգնած է նոր քաղաքական և տնտեսական մարտահրավերների առաջ: Տնտեսության ոլորտում հիմնական կարճաժամկետ մարտահրավերները, որոնց առջև կանգնած է Թուրքիան հետևյալներն են.

- տնտեսության վերակազմման փխրուն ծրագիրը,
- մեծ ստվերային տնտեսությունը (գնահատվում է պաշտոնական տնտեսության մակարդակի 30-100%-ի չափով),
- եկամուտների մեծ ճեղքվածքը, հատկապես երկրի քաղաքային և գյուղական շրջանների միջև,
- մեծ և անարդյունավետ պետական սեկտորը և մասնավոր ներդրումների ցածր մակարդակը,
- գործազրկության մեծ մակարդակը, ընդ որում նոր աշխատատեղերի ստեղծումը հետ է մնում բնակչության աճի տեմպերից,
- արտաքին և ներքին մեծ պարտքի բեռը:

Աղյուսակ 6. Թուրքիայի էներգետիկ սեկտորի ներդրումային կարիքները /2005-2020 թթ./

Սեկտորը	Ներդրումները /ԱՄՆ մլն. դոլար/
Ածխի հետախուզում և արդյունահանում	5,109
Նավթ	16,000
Բնական ռեսուրսներ	2,700
Ջուր (ESI)	6,093
Գեներացիա (EUAS)	458
Նոր գեներացնող հզորություններ	91,276
Փոխանցում	938
Բաշխում	6,000
Ընդամենը	128,574

Աղբյուրը էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն

2.2. Ջերմաէներգետիկա

Սովորական ջերմային էլեկտրակայաններում (դրանց թիվը Թուրքիայում 161-ն է) արտադրվում է Թուրքիայում թողարկվող էլեկտրաէներգեիայի մեծ մասը (2005 թվականին ջերմաէլեկտրակայանները ապահովել են երկրում թողարկված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի 75,48%-ը): Անցած քսան տարիներին գազով աշխատող էլեկտրակայանների թիվը էապես ավելացել է և հիմա դրանցում արտադրվում է ջերմաէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին (2005 թվականին գազով աշխատող ջերմաէլեկտրակայաններում արտադրվել է 70,96 մլրդ. կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի 43,8%-ը): Վերջին տարիներին գազով աշ-

խատող ջերմաէլեկտրակայանները լուրջ հիմնախնդրի առաջ են կանգնած կապված բնական գազի գնի բարձրացման հետ: Այսպես, 2006 թվականի հունիսին, երկու այդպիսի էլեկտրակայաններ դադարեցրեցին գործառնությունները "AK Enerji" օպերատորի հետ, նշելով, որ բնական գազի գինը վերջին տարվա ընթացքում ավելացել է 50%-ով, այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի սակագինը սպառողների համար չի փոխվել: Թուրքական իշխանությունները հույս ունեն, որ էլեկտրաէներգիայի շուկայի այդ ընթացիկ հիմնախնդիրները կլուծվեն բաշխիչ ցանցերի մասնավորեցումից հետո:

Ածխով աշխատող ջերմաէլեկտրակայանները նույնպես մնում են էլեկտրաէներգիայի արտադրության կարևոր աղբյուր: Բնական գազի գների ավելացման հետ կապված, իշխանությունների հետաքրքրությունը Թուրքիայի ներքին ածխային ռեսուրսների շահագործման նկատմամբ նորից մեծանում է: Կառավարությունը պլանավորում է արդեն մոտակա տարիներին "Afsin-Elbistan"-ի շրջանում կառուցել ածխով աշխատող երկու նոր էլեկտրակայաններ (յուրաքանչյուրը 1200 ՄՎտ հզորությամբ): Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության գնահատականներով, գորշ ածխի պաշարները "Afsin-Elbistan"-ի շրջանում կազմում են 3.3 մլրդ. տոննա, այսինքն Թուրքիայի ներքին պաշարների ընդհանուր ծավալի 40%-ը:

2.3. Վերականգնվող էներգետիկա

Էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործումը կարևոր նշանակություն ունի Թուրքիայի համար, էներգակիրների ներկրման նվազեցման տեսանկյունից: 2004 թ.-ի դեկտեմբերին, Արդյունաբերության և էներգիայի խարհրդարանական հանձնաժողովը հավանություն տվեց վերականգնվող էներգետիկայի զարգացումը խրախուսող օրինագծին: Թուրքիայի վերականգնվող էներգետիկայի ներուժը գնահատվում է տարեկան 35 մլն. TOE /տես աղյուսակ 7/:

Աղյուսակ 7. Վերականգնվող էներգետիկայի ներուժը

Մեգավատ	
Քամու էներգիայի տնտեսական ներուժը	10 000
Տնտեսապես օգտագործվող հիդրոէներգիան	35 000
Երկրաջերմային	35 000
Արևային	տարեկան 35 մլն. TOE

Աղբյուրը էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն

Թուրքիայում գործում են 145 հիդրոէլեկտրակայաններ, որոնց արտադրական հզորությունները կազմում են 12,6 ԳՎտ /2005 թ.-ին հիդրոէլեկտրակայաններն ապահովում էին 45 մլրդ. կիլովատ/ժ կամ երկրում արտադրված էլեկտրաէներգիայի ամբողջ ծավալի 24,48 %-ը/: Գործող կայանների հաշվառումով, գումարային հիդրոէներգետիկ ներուժը գնահատվում է 35 000 ՄՎտ սահմաններում /տարեկան 128 մլրդ. կիլովատ/ժ/, այսինքն այնքան, որքան ներկայումս կազմում է երկրում էլեկտրաէներգիայի արտադրության նախանշված հզորությունը: Էլեկտրակայանների ենթադրվող քանակը կարող է կազմել շուրջ 700 միավոր: Խնդիրն այն է, որ հիդրոռեսուրսների հիմնական պաշարները գտնվում են քրդաբնակ և հարավ-արևելյան անկայուն շրջաններում /Եփրատ և Տիգրիս գետերի ջրերը/: Բացի ֆինանսական միջոցների անբավարարությունը, հիդրոէլեկտրակայանների շինարարության և անխափան աշխատանքի համար այդ շրջաններում առկա են քաղաքական ռիսկեր /քրդական զինված խմբավորումների հարձակումները, ահաբեկչությունը և այլն/:

Թուրքիան ունի քամու, երկրաջերմային և արևային էներգիայի մեծ ներուժ, սակայն այդ ներուժը շատ թույլ է օգտագործվում, և մոտ ապագայում դժվար թե էական ներդրում ունենա Թուրքիայում էներգիայի արտադրության մեջ: Սակայն Թուրքիան ձեռնարկում է խրախուսիչ միջոցներ վերականգնվող էներգիայի օգտագործման ոլորտում, էներգակիրների ներկրման նվազեցման համար: 2001 թ.-ի հունվարին առանձնացվեցին քամու և երկրաջերմային էլեկտրակայանների շինարարության 17 նախագծեր: Նախատեսվում էր, որ այդ նախագծերի իրականացումը կկատարվի արտասահմանյան ներդրումների օգնությամբ, օգտագործելով «կառուցիր-կառավարիր-փոխանցիր» մոդելը: Ներկայումս, Թուրքիայում առկա երկու քամու էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմում է շուրջ 19 ՄՎտ /2005 թ.-ին էլեկտրաէներգիայի արտադրության մեջ քամու էներգետիկ համասարքերի օգտագործման մասնաբաժինը կազմել է 0,035 %/: Համաձայն մինչև 2020 թ.-ը էլեկտրաէներգետիկայի զարգացման ընդունված ծրագրի, նախատեսվում է օգտագործել քամու և երկրաջերմային էներգիայի ներուժի շուրջ 30%-ը, այսինքն համապատասխանաբար 10 ԳՎտ և 500-765 ՄՎտ:

2.4. Ատոմային էներգետիկան

Թուրքիայում ատոմային էներգետիկայի զարգացման հարցի քննարկումը ձգվում է մոտ 30 տարի: Սակայն, մինչ օրս Թուրքիայում գոյություն չունեն ատոմային էներգետիկայի հզորություններ: Այդ ժամանակահատվածում թուրքերը մի քանի անգամ փորձել են իրականացնել նման նախագիծ, սակայն այդ բոլոր պլանները հետաձգվել են տարբեր պատճառներով ֆինանսական, բնապահպանական, օրենսդրական, քաղաքական և այլն: 1980-ական թվականների ընթացքում, Թուրքիայի ռազմական կառավարությունը մշակել է միջուկային էներգետիկայի զարգացման ծրագիր, սակայն դրան վիճակված չէր իրականանալ: Այնուհետև, 1990-ական թվականների վերջում միջազգային երեք կոնսորցիումներ /կանադական AECL-ը, ամերիկա-ճապոնական «Westinghouse-Mitsubishi»-ը, ֆրանսա-գերմանական NPI-ը/ առաջարկություն ներկայացրեցին Akkuyu-ում /Թուրքիայի հարավային միջերկրածովային ափին/ Թուրքիայում առաջին ատոմային կայանի կառուցման մասին: 2000 թ.-ի հուլիսին, թուրքական կառավարությունը որոշեց հետաձգել 1300 ՄՎտ հզորությամբ ատոմային էլեկտրակայանի պլանավորված շինարարությունը /4 մլրդ. դոլար արժողությամբ/: Ըստ թուրքական զանգվածային լրատվամիջոցների տեղեկությունների, ատոմային էլեկտրակայանի շինարարության հետաձգումը կա-

տարվել է ֆինանսական դրդապատճառներով, թեև նախագծի ծախողման ոչ պակաս կարևոր գործոններից են նաև բնապահպանական, հակամիջուկային խմբերի ընդդիմադիր ելույթները և հարևան երկրների կոշտ դիրքորոշումները, առաջին հերթին Հունաստանի: Սակայն, այնուամենայնիվ, թուրքական իշխանությունները շարունակում են աշխատանքները երկրում ատոմային էլեկտրակայանների շինարարության հարցի լուծման ուղղությամբ: Նրանք համարում են, որ միջուկային էներգետիկայի զարգացումը կարող է նպաստել ոչ միայն երկրի կախվածության նվազմանը թանկ էներգակիրների ներկրումից, այլ նաև կօգնի երկրի բազմաթիվ այլ էներգետիկ հիմնախնդիրների լուծմանը, այդ թվում նաև էներգետիկ անվտանգության հարցի: 2004 թ.-ի նոյեմբերին, Թուրքիայի էներգետիկայի նախարար Գյուլերը հայտարարեց, որ Թուրքիայի 4 500 ՄՎտ ընդհանուր հզորությամբ ատոմային էլեկտրակայանները կսկսեն աշխատել արդեն 2012 թ.-ին: Ատոմային էներգիայի թուրքական գործակալության /TAEK/ նախագահ Օկտեյ Կակիրօղլուի պնդմամբ /2006 թ.-ի ապրիլ/, երկրի առաջին միջուկային համասարքը կկառուցվի Սինոպում /Սև ծովի մոտակայքում/: Ութ հավանական տարբերակների շարքում այս տեղն ընտրվել է հետևյալ չափանիշներից ելնելով ծովային ջերմաստիճանի տեսակը, այլ կլիմայական և եղանակային պայմանները: Նախապես ենթադրվում էր, որ 100 ՄՎտ հզորությամբ պիլոտային ռեակտորի շինարարությունը պետք է ավարտվի 2009 թ.-ին, որից հետո, մինչև 2012 թ.-ը, շահագործելի պետք է դառնան 5 000 ՄՎտ ընդհանուր հզորությամբ 3 էլեկտրակայաններ /այդ հզորությունները հնարավորություն կտային առաջիկա 15 տարիների ընթացքում ապահովել երկրի էլեկտրաէներգիայի պահանջմունքների զգալի մասը/, իսկ նախատեսված երեք ատոմային էլեկտրակայանների շինարարության համար անհրաժեշտ է իրականացնել 8 մլրդ. դոլարի ներդրումներ: Սակայն, այս պլանները ևս փոփոխվեցին և ներկա պահին նախատեսվում է մեկ ատոմային կայանի շինարարություն մինչև 2014 թ.-ը /1 800 ՄՎտ հզորությամբ/: Այդ ատոմային էլեկտրակայանի շինարարության վրա նախատեսվում է ծախսել 2,7 մլրդ. դոլար: Շրջակա միջավայրի պաշտպանները, ինչպես նաև Ժողովրդական Հանրապետական կուսակցությունը, հանդես են գալիս Սինոպում ատոմային էլեկտրակայանի շինարարության դեմ՝ հղում կատարելով նախագծի բարձր արժեքի և անվտանգության հիմնախնդիրների վրա: Ըստ պաշտոնական տվյալների, Թուրքիայում ուրանի պաշարները գնահատվում են շուրջ 10 000 տոննա, ինչը բավարար է այն 50 տարիների ընթացքում օգտագործելու համար /By Allan Cove for Southeast European Times in Istanbul - 14/04/06, Turkey launches nuclear energy project/:

3. Թուրքիայի էներգա-տարանցիկ քաղաքականության փոփոխությունները

Հյուսիսային ծովի ածխաջրածնային ռեսուրսների աստիճանական նվազումը մեծացնում է ԵՄ-ի կախվածությունը էներգետիկ հումքի ներկրումից: ԵՄ-ն ներկրում է օգտագործվող նավթի շուրջ 90 %-ը և գազի 40 %-ը: ԵՄ-ի գազի ներկրման մինչև 40 %-ը ներկայումս մատակարարվում է

Ռուսաստանից: OPEK-ի անդամ երկրները մատակարարում են ԵՄ-ի նավթի ընթացիկ ներկրման 45 %-ը: ԵՄ-ի նոր անդամ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, նավթի ներկրումից կախված են 90-94 %-ով և գազի ներկրումից 60-90 %-ով, որի հիմնական մասը մատակարարվում է Ռուսաստանից: Բնական է, որ ստեղծված իրավիճակում ԵՄ-ն ձգտում է բազմակողմ դարձնել էներգառեսուրսների աղբյուրներն ու մատակարարման ուղիները, իսկ ԵՄ-ի անդամ երկրները ավելի ու ավելի հաճախ են քննարկում միասնական էներգետիկ քաղաքականության վարման հարցը, այդ թվում նաև մատակարարման համապատասխան ուղիների ընտրության ժամանակ: Այս առումով Թուրքիայի աշխարհագրական դիրքը յուրահատուկ է: Թուրքիան գտնվում է նավթա-գազային հոսքերի խաչմերուկում էներգառեսուրսներով հարուստ Մերձավոր Արևելքի, Կասպից ծովի ավազանի և Ռուսաստանի /համաշխարհային նավթային ու գազային ռեսուրսների երեք չորրորդը տեղակայված է Թուրքիայի հետ հարևան տարածաշրջաններում/ մի կողմից, և մյուս կողմից, Եվրոպայի էներգառեսուրսների խոշոր սպառողների միջև: Իր հերթին Եվրոպական Միությունը Թուրքիայի տարածքը դիտարկում է որպես Մերձավոր Արևելքի, Ռուսաստանի, Կասպիական ավազանի և Կենտրոնական Ասիայի էներգառեսուրսների տեղափոխման այլընտրանքային ուղի:

Ելնելով իր ռազմավարական տեղակայման առավելություններից, Թուրքիան ձգտում է գբաղեցնել «Եվրասիական էներգետիկ Միջանցքի» դիրք, իսկ նրա տարանցման քաղաքականությունն ուղղված է Ռուսաստանից, Կասպիական ավազանից և Մերձավոր Արևելքից դեպի համաշխարհային շուկաները նավթի և գազի տարանցման առանցքային դերակատար-երկրի իրականացմանը: Դեպի արևմտյան շուկաները ածխաջրածինների տարանցման հաշվին Թուրքիան հուսով է ստանալ զգալի տարանցիկ եկամուտներ և միաժամանակ բարձրացնել իր քաղաքական նշանակությունը: Այսպիսով, Թուրքիան մտադիր է համակշռել էներգակիրների ներկրումով պայմանավորված երկրի կախվածությունը քաղաքական ու տնտեսական ռիսկերից, ինչպես նաև հրապուրել արտասահմանյան ներդրողներին Թուրքիայի տարածքում էներգետիկ օբյեկտների շինարարության համար, քանի որ սեփական ֆինանսական ռեսուրսները դրա համար խիստ անբավարար են: Մյուս կողմից, էներգետիկ տարանցումը կարող է դառնալ գլխավոր առավելություններից մեկը, որը եթե չապահովի Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին, ապա զգալիորեն կարող է ազդել այդ խնդրի շուրջ տարվող բանակցությունների վրա: Այսպիսով, էներգառեսուրսների մատակարարման աղբյուրների և ուղիների դիվերսիֆիկացման տեսակետից, Թուրքիայի տարանցիկ քաղաքականության նպատակները զգալի չափով համապատասխանում են Եվրոպական Միության էներգետիկ ռազմավարության նպատակներին:

Սակայն, դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ եթե մի կողմից Թուրքիայի համար էներգակիրների տարանցումը նշանակում է լուրջ եկամուտների հոսք և երկրի քաղաքական կշռի աճ, ապա մյուս կողմից, լրացուցիչ խնդիրների և ռիսկերի աղբյուր, որոնք կապված են տարանցման մեջ շահագրգիռ կողմերի վարքից: Էներգակիրների մատակարար երկրներում ծագած սոցիալ-քաղաքական և տնտեսական բախումնային իրավիճակների հետևանքները կարող են անմիջականորեն անդրադառնալ հենց

Թուրքիայում տիրող իրավիճակի վրա, այդպիսով Թուրքիային վերածելով իր իսկ տարանցիկ կարգավիճակի պատանդի:

3.1. Նավթային տարանցումը

Թուրքիան կարևոր դեր է կատարում գլոբալ էներգետիկ անվտանգության մեջ: Թուրքական Բոսֆոր և Դարդանել նեղուցները հանդիսանում են նավագնացության գլխավոր դարպասները Սև և Միջերկրական ծովերի միջև լցանավերի շարժման համար /միջազգային նավագնացության համար նեղուցները բացվել են համաձայն 1936 թ.-ի Մոնտրեի պայմանագրի/, այդպիսով համաշխարհային նավթային շուկան միացնելով նավթի ռուսական և կասպիական արտադրողների հետ: Համաշխարհային նավթի օրական սպառման ընդհանուր ծավալի շուրջ 3,7 %-ը տեղափոխվում է թուրքական նեղուցների միջոցով: Վերջին տասնամյակի ընթացքում նեղուցների միջոցով կատարվող նավթային փոխադրումների ծավալը կտրուկ ավելացել է: Եթե 1996 թ.-ին նեղուցների միջոցով տեղափոխվել է 30 միլիոն տոննա նավթ և նավթամթերք, ապա 2004 թ.-ին այդ ցուցանիշը հասել է 143,5 տոննայի /օրական շուրջ 3 մլն. բարել/:

Նեղուցներով արտահանվող ռուսական նավթի գերակշռող մասը նախ տեղափոխվում է սևծովյան Նովոռոսիյսկ նավահանգիստը, իսկ այնուհետև նեղուցների միջոցով դեպի Միջերկրական ծով և դեպի համաշխարհային շուկա: Կասպիական նավթը, մինչև նեղուցներով անցնելը, նախ տեղափոխվում է Բաքու-Նովոռոսիյսկ /Հյուսիսային ուղի/, Բաքու-Սուպսա /Արևմտյան ուղի/ և Թենգիզ-Նովոռոսիյսկ /Կասպիական խողովակաշարային Կոնսորցիում/ խողովակաշարերով: Բոլոր նշված ուղիները ենթադրում են նավթի տեղափոխում նեղուցներով:

Բոսֆոր նեղուցի փոքր լայնությունը ոչ միայն նավերի շարժման հաճախակի կասեցումներ է առաջացնում, այլ նաև բնապահպանական ու անվտանգության խնդիրներ է առաջացնում: 1998 թ.-ին Թուրքիան խստացրեց նեղուցներով տարանցման կարգը, մասնավորապես, բնապահպանական հիմնավորումով արգելեց լցանավերի անցումը գիշերային ժամանակահատվածում: Միաժամանակ, նավերի շարժը հեշտացնելու և կառավարելու համար կառուցելով ռադարային համակարգ /արժեքը 45 մլն. դոլար/, Թուրքիան փորձեց ավելացնել նեղուցների թողունակությունը և անվտանգությունը: Սակայն, միևնույն է, որոշ փորձագետներ գտնում են, որ թուրքական նեղուցներն իրենց ոչ տարանցիկ հզորությունների լրիվ ծավալով են օգտագործվում, և որ տրանսպորտային հոսքերի համարժեք կառավարման պարագայում, կարելի է զգալիորեն ավելացնել նեղուցների թողունակությունը:

Հաշվի առնելով նեղուցների սահմանափակ հնարավորությունները և ելնելով մի շարք քաղաքական-տնտեսական նկատառումներից, 1990-ական թվականների վերջերին Թուրքիան որոշ շտկումներ կատարեց իր տարանցման քաղաքականության մեջ նավթի տեղափոխման հիմնական շեշտը տեղափոխելով խողովակաշարերի վրա: Այդ գործում Թուրքիան ստացավ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի աջակցությունը, որոնք խիստ շահագրգռված էին կասպիական ածխաջրածիններ տեղափոխելիս ընթացքում ռուսական տարածքները շրջանցելու խնդրում:«British Petrolium» նավթային ընկերության հովանու ներքո՝ 2006 թ.-ին ավարտվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարությունը /երկարությունը 1776 կմ և թողունակությունը օրական 1 մլն. բարել կամ տարեկան 50 մլն. տոննա նավթ/, որի շահագործումը ուժեղացրեց Թուրքիայի դիրքերը, որպես ադրբեջանական նավթի տարանցման կարևոր կենտրոնի: Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը, Բարեկամություն նավթամուղից հետո, /Ռուսաստան-Կենտրոնական Եվրոպա/ իր երկարությամբ աշխարհում երկրորդն է: Այս խողովակաշարը շրջանցելով թուրքական Բոսֆոր և Դարդանել նեղուցները, անմիջական մուտք ունի դեպի միջերկրածովային թուրքական Ջեյհան նավահանգիստը /այդ նավահանգիստը հնարավորություն է տալիս ընդունել մինչև 300 հազ. տոննա բեռնատարողությամբ լցանավեր, այն դեպքում երբ թուրքական նեղուցներով կարող են անցնել միայն 100-150 հազ. տոննա բեռնատարողությամբ լցանավեր/: Այսպիսով, Բաքու-Ջեյհանը դարձավ առաջին խողովակաշարը, որի օգնությամբ հնարավոր դարձավ կասպիական նավթը տեղափոխել համաշխարհային շուկաներ՝ շրջանցելով Ռուսաստանը և նեղուցները:

Թուրքական միջերկրածովային Ջեյհան նավահանգիստը երկար տարիներ հանդիսանում էր իրաքյան նավթային արտահանման հիմնական ելքը: Կիրկուկ-Ջեյհան նավթամուղի թողունակությունը, որը շահագործման էր հանձնվել 1976 թ.-ին, կազմում է օրական 1,6 մլն. բարել /տարեկան 75-80 մլն. տոննա/:

Գոյություն ունեն նաև այլ նախագծեր, որոնք կոչված են տեղափոխել ռուսական և կասպիական նավթը՝ շրջանցելով գերծանրաբեռնված Բոսֆոր և Դարդանել նեղուցները: Այդ ուղիներից մեկը նախատեսում է նավթի տեղափոխում Նովոռոսիյսկ, որտեղից Սև ծովի միջոցով դեպի թուրքական Սամսուն նավահանգիստը, իսկ այնուհետև խողովակաշարի միջոցով դեպի Ջեյհան: Բացի Թուրքիայից, Սամսուն-Ջեյհան խողովակաշարի շինարարության նախագծով շահագրգռված էին «Eni» նավթային ընկերությունը և հնդկական «Indian Oil Corporation Lt» նավթային ընկերությունը: 700-կիլոմետրանոց Սամսուն-Ջեյհան խողովակաշարի շինարարության նախագիծն առաջարկվել էր իտալական «Eni» ընկերության և նրա թուրքական գործընկեր «Calik Group»-ի կողմից, իսկ հնդկական «Indian Oil Corporation Lt» ընկերությունը հայտնել էր շինարարությանը մասնակցելու իր ցանկությունը: 2007 թ.-ի ապրիլի 24-ին, Ջեյհանում տեղի ունեցավ խողովակաշարի Սամսուն /Սև ծով/ - Ջեյհան /Միջերկրական ծով/ նոր ուղու կամ այսպես կոչված Տրանս-Անատոլիական նավթամուղի /TAH/ հիմնադրման արարողությունը, որի թողունակությունն է տարեկան 60 մլն. տոննա նավթ: Նախատեսվում է, որ նավթամուղը կսկսի աշխատել 2013 թ.-ին: Ենթադրվում է, որ Սամսուն-Ջեյհան գիծը, որը կարող է նեղուցները շրջանցելով ապահովել ռուսական ու ղազախական նավթի տեղափոխումը դեպի միջերկրածովային ափ, զգալիորեն կբեռնաթափի Բոսֆորով նավերի շարժը /համարվում է, որ TAH-ի նման շրջանցող ուղիները, հնարավորություն կտան թուրքական նեղուցները բեռնաթափել շուրջ 50 %-ով/ և կավելացնի նեղուցներով նավագնացության անվտանգությունը:

Այսպիսով, ի նկատի ունենալով գոյություն ունեցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Կիրկուկ-Ջեյհան խողովակաշարերի հզորությունները, շահա-

գործմանը հանձնվող ТАН-ը հնարավորություն կտա Ձեյհանին 2015 թ.-ին տարեկան բաց թողնել մինչև 200 մլն. տոննա հում նավթ: Իսկ եթե այդ հզորություններին ավելացնենք թուրքական նեղուցներով տեղափոխվող նավթի ծավալները, ապա 2012 թ.-ին արդեն գլոբալ նավթային հոսքերի շուրջ 6-7 %-ը կարող է անցնել Թուրքիայով: Սակայն նման թողունակություն կարելի է իրականացնել միայն բոլոր երեք նավթամուղերի առավելագույն բեռնվածության և նեղուցներով լցանավերի անխափան շարժման դեպքում: Մեր, ինչպես և տարածաշրջանային էներգետիկ խնդիրներով զբաղվող բազմաթիվ այլ փորձագետների մոտ, տարակուսանք է առաջանում թուրքական տարանցիկ հզորությունների առավելագույն բեռնվածության հնարավորության, մասնավորապես Կիրկուկ-Ձեյհան և ТАН խողովակաշարերի առթիվ:

2003 թ.-ի մարտի վերջից, պարբերական ահաբեկչական գործողությունների ու անօրինական ներփորվածքների պատճառով, Կիրկուկ-Ձեյհան նավթամուղն աշխատում է երկարատև ընդմիջումներով և ցածր բեռնվածությամբ /ներկայումս խողովակաշարի բեռնվածությունը չի գերազանցում իր ընդհանուր թողունակության 3 %-ը/: Հարկ է նշել, որ Կիրկուկ-Ձեյհան նավթամուղի կայուն շահագործումը կախված է ոչ միայն Իրաքում իրավիճակի կարգավորումից, այլ նաև Թուրքիայի և Իրաքում քրդական վարչակազմի միջև իրավիճակի շուրջ հարաբերությունների զարգացումից իսկ ընդհանուր առմամբ թուրք-ամերիկյան հարաբերություններից: Եվրասիայում տեղի ունեցող նոր աշխարհաքաղաքական փոփոխությունները վկայում են, որ այս առթիվ զարգացումների սցենարները ավելի շուտ կընթանան Թուրքիայի ցանկություններին հակառակ հունով:

ТАН-ի բեռնվածության հետ կապված իրավիճակը որոշ առումով համարվում է հակասական: Այդ ուղու աշխատունակության համար կարևորը դրա ապահովումն անհրաժեշտ հումքով, այսինքն հում նավթի երկարաժամկետ մատակարարումների առկայությունը: Մյուս կողմից, տարածաշրջանում սաստկանում է մրցակցությունը նոր տրանսպորտային ուղիների օպերատորների միջև: Տվյալ ուղիով նավթի հիմնական մատակարարներ կարող են հանդես գալ Ղազախստանը և Ռուսաստանը: Ռուսական նավթային ընկերությունները ակտիվ շահագրգռվածություն չեն ցուցաբերում ТАН-ի նկատմամբ, ռուսական շրջանցող «Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս» նախագծի առկայության հիմնավորմամբ, որը հանդիսանում է նախորդի մրցակիցը: ТАН խողովակաշարով ղազախական նավթի տեղափոխումը նույնպես անորոշ է: Թենգիզ-Նովոռոսիյսկ /որի հզորությունները մտադրություն կա ընդլայնելու/ և Բաքու-Թբիլիսի-Ձեյհան գործող նավթամուղերի առկայության պայմաններում: Ծանրակշիռ հիմքեր չկան ենթադրելու, որ Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նախագծի իրականացման, հնարավոր այլ «շրջանցող» նախագծերի դեպքում, ղազախական նավթի պոտենցիալ ազատ ծավալները, որոնք կարող են հայտնվել 2015-2020 թթ.-երին, կլցվեն հատկապես ТАН-ի մեջ:

3.2. Գազային տարանցումը ԵՄ-ի էներգետիկ ռազմավարության համատեքստում

Թուրքիան ձգտում է դառնալ նաև խոշոր գազա-տարանցման երկիր մի կողմից Մերձավոր Արևելքի և Կասպիական ավազանի, և մյուս կողմից Եվրոպայի միջև: Հարկ է նշել, որ եվրոպացիներին ավելի շուտ հետաքրքրում է գազի, քան նավթի տարանցումը: Եվրոպան կախված է Ռուսաստանից, Նորվեգիայից և Ալժիրից խողովակաշարերով բնական գազի մատակարարումից: Թեև Եվրոպան տարբեր աղբյուրներից ներկրում է նաև հեղուկ գազ, դրանց ծավալները դեռ այնքան մեծ չեն, որպեսզի նվազեցնեն աշխարհամասի կախվածությունը բնական գազի խողովակաշարային մատակարարումից: 2000 թ.-ի նոյեմբերին, ԵՄ-ի Հանձնաժողովի կողմից հրատարակված Green Paper փաստաթղթում /Կանաչ քարտեզ/4 խոսք է գնում անվտանգ ու բազմավեկտոր ուղիներով գազի անխափան մատակարարման մասին: Թուրքիայի դերը, որպես էներգետիկ միջանցքի, ճանաչվել է ԵՄ-ի Հանձնաժողովի կողմից, ինչը Թուրքիային նոր հնարավորություններ է ընձեռել տարանցման քաղաքականության շրջանակներում: Ստեղծված իրավիճակում Թուրքիան ձգտում է դառնալ «չորրորդ միջանցք» գազի խողովակաշարերի համար, որոնք ուղղված են դեպի Եվրոպա: Ենթադրաբար, նոր աղբյուրներից բնական գազի եվրոպական աճող ներկրման շուրջ 70 %-ը դեպի Եվրոպա կարող է մատակարարվել Թուրքիայի տարածքով: Այդ նպատակով նա ակտիվորեն սատարում է նոր գազամուղերի շինարարության նախագծերը, որոնք նախատեսում են արդյունահանող երկրներից բնական գազի արտահանումը Եվրոպայի սպառողին մատակարարել Թուրքիայի տարածքով:

Ներկայումս Թուրքիան արագ տեմպերով արդիականացնում է երկրի գազային ենթակառուցվածքները: Արդիականացման ծրագրերն ընդգրկում են լրացուցիչ կոմպրեսորային ու գազաչափիչ կայանների ստեղծում, ստորգետնյա գազի պահեստարանների շինարարություն, տրանսպորտային համակարգերի արդիականացում և ընդլայնում, այդ թվում նաև

ձյուղավորումների շինարարություն, Մարմարյա ծովի ափին գտնվող ներկրման տերմինալի արդիականացում:

Թուրքական իշխանությունների համար կարևոր նպատակ է հանդիսանում նաև երկրի գազա-տրանսպորտային համակարգի միացումը եվրոպական համակարգին: Բնական գազի արտահանումը Թուրքիա-Հունաստան և Հունաստան-Իտալիա ուղղություններով ԵՄ-ն դիտարկում է «Մերձկասպյան երկրներ-Միջին Արևելք-Մերձավոր Արևելք-Եվրոպական Միություն» միջանցքի շրջանակներում: Այդ նախագծի իրականացումը կարևոր գործոն կհանդիսանա Հարավ-Եվրոպական Գազային Օղակի նախագծի իրացման համար, որը Թուրքիայի ու Հունաստանի միջոցով հնարավորություն կտա փոխգործակցություն ստեղծել Կասպիական ավազանի գազի տարբեր աղբյուրների և Հարավային Եվրոպայի ու Բալկանների սպառողների միջև:

2003 թ.-ի վերջում, Հունաստանը և Թուրքիան համաձայնագիր ստորագրեցին 186-միլանոց Անկարա-Ալեքսանդրոպոլիս գազամուղային միջմիակցողի շինարարության մասին /երկու երկրների գազային համակարգերի միացման համար/: 2005-2006 թթ.-երին ԵՄ-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող այս նախագիծը, Եվրոպական Միության առաջնահերթություններից էր: Նախագիծն իրականացվում էր ԵՄ-ի Հանձնաժողովի կողմից մշակված INOGATE ծրագրի, ինչպես նաև «Հարավ-Եվրոպական գազային օղակի» նախագծի շրջանակներում, որի նպատակն է Կասպիական տարածաշրջանից, Մերձավոր Արևելքից և Միջերկրական ծովի հարավից դեպի Եվրոպա բնական գազի մատակարարումը: Նախագիծն արժեցավ շուրջ 250 մլն. դոլար: Բնական գազի մատակարարումը Թուրքիայից Հունաստան սկսվեց 2006 թ.-ից տարեկան 0,25 մլրդ.խոր.մ. նախնական ծավալով, տարեկան 0,75 մլրդ.խոր.մ. ուրվանշված ավելացումով:

2002 թ.-ի հոկտեմբերին ստորագրված պայմանագրով, թուրքական «Botas»-ը, հունական «Depa»-ն և իտալական «Edison Gaz»-ը համաձայնվել են համագործակցել Հունաստան-Իտալիա գազային միջկապակցման զարգացման հարցում: Նախագիծը ներառում է վերգետնյա և ստորջրյա խողովակաշարի շինարարություն 504 կմ ընդհանուր ծգվածությամբ: Տվյալ միջկապակցման շինարարությունը սկսվեց 2005 թ.-ի նոյեմբերի 4-ին: Խողովակաշարի թողունակությունը կկազմի տարեկան 16 մլրդ.խոր.մ. բնական գազ:

Այսպիսով, Անկարա-Ալեքսանդրոպոլիս միջկապակցողը հնարավորություն կտա բնական գազը Թուրքիայի տարածքով տեղափոխել Հունաստան, իսկ այնուհետև ստորջրյա խողովակաշարով՝ Իտալիա:

3.3. Գազային նախագծերը

<u>Ռուսական նախագծերը</u>: Ռուսաստանն ավանդաբար հանդիսանում է ամենախոշոր գազի մատակարարը Թուրքիային: Եթե նավթի մատակարարմամբ Թուրքիան կախված է տարբեր երկրներից, ապա գազի ներկրման առումով, ներկայումս երկիրը գրեթե 70 %-ով կախված է Ռուսաստանից: 2004 թ.-ին Թուրքիան օգտագործել է 22,3 մլրդ.խոր.մ. գազ, որից 14,5 մլրդ.-ը կամ 65 %-ը կազմել է ռուսական գազը: 2005 թ.-ին դեպի Թուրքիա կա-

տարված բնական գազի մատակարարման մեջ Ռուսաստանի մասնաբաժինը կազմում է 69 % /25,8 մլրդ. խոր.մ.-ից 18 մլրդ.խոր.մ./: 2006 թ.-ին Ռուսաստանից բնական գազի ներկրման հարցում Թուրքիայի պայմանագրային պարտավորությունները կազմել են շուրջ 850 մլրդ.խոր. ֆուտ /36 մլրդ/խոր.մ./: Ռուսաստանից գազային կախվածության նվազման հարցը հանդիսանում է Թուրքիայի ռազմավարական նպատակը: Թուրքիան տեսանելի հեռանկարում մտադիր է 30 %-ով կրճատել Ռուսաստանից գազային կախվածությունը և ավելացնել այն գազի մասնաբաժինը, որը մատակարարվում է գազ արդյունահանող այլ երկրներից: Սակայն, որանո՞վ է հասանելի այդ նպատակը: Չէ որ դրված նպատակը հակասության մեջ է գտնվում Ռուսաստանից Բուլղարիայի տարածքով և «Երկնագույն հոսքով» գազի ներկրման արդեն պայմանագրով ամրագրված ծավալների հետ:

MAJOR PIPELINE PROJECTS

1997 թ.-ի վերջում Թուրքիայի և Ռուսաստանի միջև միջկառավարական համաձայնագիր ստորագրվեց վառելիքա-էներգետիկ ոլորտում համագործակցության մասին /25 տարի ժամկետով/: Համաձայն այդ համաձայնագրի, սկսած 2008 թ.-ից Ռուսաստանը պարտավոր է Թուրքիային տարեկան մատակարարել 30 մլրդ.խոր.մ. բնական գազ: Այդ համաձայնագրի իրականացման շրջանակներում կառուցվել է «Երկնագույն հոսք» անդրսևծովյան գազամուղը[5]: Նախագիծը լրացնում է Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի և Բուլղարիայի տարածքներով Ռուսաստանից դեպի Թուրքիա արդեն գործող ցամաքային գազատրանսպորտային միջանցքը /այսպես կոչված Անդր-Բալկանյան խողովակաշարը/: Այս խողովակաշարի թողունակությունը կազմում է տարեկան 494 մլրդ.խոր. ֆուտ -14 մլրդ.խոր.մ./:

Ներկայումս «Երկնագույն հոսք» գազամուղը օգտագործում է իր հզորության երրորդ մասից ավելի պակաս /2005 թ.-ին ստորգետնյա ուղիով տեղափոխվել է ընդամենը 5 մլրդ.խոր.մ. գազ/: Նախագծային հզորությանը նախատեսվում է գազամուղը դուրս բերել 2010 թ.-ին: 2004 թ.-ին գազամու-

ղով մատակարարվել է 3,2 մլրդ.խոր.մ., իսկ 2005 թ.-ին՝ 5 մլրդ.խոր.մ. գազ: 2006 թ.-ին «Երկնագույն հոսք» գազամուղով մատակարարման պայմանագրային պարտավորությունները կազմել են 8 մլրդ.խոր.մ. /282 մլրդ.խոր. ֆուտ/: Տվյալ գազամուղով ռուսական գազի մատակարարումները տարեկան պետք է ավելանան 71 մլրդ.խոր. ֆուտով /2 մլրդ.խոր.մ./, մինչև խողովակաշարը հասնի իր առավելագույն տարողությանը: 1997 թ.-ին, երբ ստորագրվեց թուրք-ռուսական միջկառավարական համաձայնագիրը էներգետիկ-վառելիքային ոլորտում համագործակցության մասին, թուրքական գազային շուկան շատ հեռանկարային էր ներկայացվում. նրա տնտեսությունը դինամիկ կերպով զարգանում էր, և վառելիքի այդ տեսակի ավելի շատ ծավալներ էին պահանջվում: Սակայն 2001 թ.-ի ճգնաժամը զգալիորեն սառեցրեց Թուրքիայի ախորժակը գազի նկատմամբ, քանի որ պարզ դարձավ, որ իր շուկան ընդունակ չէ «մարսել» պայմանագրերով նախատեսված գազի ծավալները, որոնք մատակարարվում էին մի քանի երկրներից: Ուստի Անկարան սկսեց համառորեն փնտրել ստորագրված պայմանագրերի պայմանների փոփոխման ուղիներ:

2003 թ.-ի մարտից, Թուրքիան վեց ամսով կանգնեցրեց «Երկնագույն հոսքով» գազի ներկրումը՝ հիմնվելով պայմանագրի այն կետի վրա, որի համաձայն կողմերից յուրաքանչյուրը կարող է մինչև վեց ամիս ժամկետով կանգնեցնել մատակարարումը: Թուրքական իշխանությունները այդ քայլը բացատրեցին հղում կատարելով ներքին թույլ պահանջարկի վրա և հայտնեցին Ռուսաստանից այս ուղիով բնական գազի ներկրման ծավալների ուզների վերանայման իրենց մտադրությունների մասին: Սակայն, Անկարան չկարողացավ ռուսական կողմից էական զիջումների հասնել գնի և ներկրվող «երկնագույն վառելիքի» ծավալների առումով, քանի որ պայմանագրի պայմանները նման փոփոխություններ չէին նախատեսում:

Նախատեսվում է, որ 2010 թ.-ին Թուրքիայի կողմից գազի ներկրման ավելի քան 31 %-ը Ռուսաստանից կմատակարարվի Սև ծովի հատակով «Երկնագույն հոսք»-ի միջոցով, 27 %-ը Ռուսաստանից Բուլղարիայի տարածքով, շուրջ 19 %-ը Իրանից, մոտ 13 %-ը Ադրբեջանից Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով, իսկ մնացածը Ալժիրից և Նիգերիայից: Այսպիսով 2010 թ.-ին, Թուրքիայի գազային կախվածությունը Ռուսաստանից կկազմի գրեթե 60 %:

Ադրբեջանական և անդրկասպյան նախագծերը: Թուրքիայի տարանցիկ և ընդհանուր առմամբ էներգետիկ քաղաքականության մեջ, առանձնահատուկ տեղ է գբաղեցնում Կասպիական ավազանը, որի ածխաջրածինները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն Եվրոպայի էներգետիկ անվտանգության համար, այլև Թուրքիայի համար, որպես մատակարարումների այլընտրանքային աղբյուրի: Իր եվրասիական քաղաքականության մեջ Թուրքիան ձգտում է օգուտ քաղել Կասպիական ավազանում էներգետիկ մրցակցությունից: Երկրի ապահովումը էներգառեսուրսների հուսալի մատակարարումներով, հանդիսանում է Անկարայի ակտիվ եվրասիական քաղաքականության պատճառներից մեկը: Սակայն դրա հետ մեկտեղ, Թուրքիան ձգտում է օգուտ քաղել նաև կասպիական ածխաջրածինների արտահանման ուղիների պայքարում, առաջարկելով տարանցման իր ծառայությունները: Ընդհանուր ուրվագծերով Կասպիական տարածաշրջանում Թուրքիայի ռազմավարությունը հանգում է հետևյալին.

- դառնալ տարածաշրջանի նավթագազային սեկտորի ազդեցիկ ներդրողներից մեկը,
- ընդլայնել բազմակողմ տնտեսական փոխադարձ կապերը տարածաշրջանի երկրների հետ,
- ապահովել նավթի և գազի անվտանգ հոսքը դեպի արևմտյան շուկաներ, այդ մրցակցային ուղղության վրա հանդես գալով արտահանման գլխավոր ուղու դերակատարմամբ:

Անդրկասպյան նախագծերը Ադրբեջանի և Թուրքմենստանի հետ, ըստ թուրքական իշխանությունների մտահղացումների, բացի էներգառեսուրսներով երկրի ներքին պահանջմունքի բավարարումը, կոչված են հիմքեր ձևավորել Թուրքիայի տարանցման ռազմավարության իրականացման համար: Հարկ է նշել, որ 1990-ական թվականներին, Միացյալ Նահանգները աջակցում էին Թուրքիային Կասպիական-Կենտրոնական-Ասիական տարածաշրջանից դեպի Եվրոպա բնական գազի տեղափոխման համար տարանցման կենտրոն դառնալու ձգտումներին, ինչը լրացուցիչ ազդեցություն հաղորդեց Թուրքիայի տարանցման քաղաքականությանը:

Գազա-տարանցման քաղաքականության շրջանակներում Թուրքիան մտադիր է դեպի Եվրոպա վերարտահանել «Շահ-Դենիզ» ադրբեջանական հանքավայրից ստացվող բնական գազի մի մասը, որի հետ կապված բանակցություններ են վարվում հունական DEPA պետական գազային ընկերության հետ: Այդպիսով Թուրքիան հուսով է օգտագործել Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը ոչ միայն ներքին պահանջարկը բավարարելու, այլև դեպի Եվրոպա ադրբեջանական գազը փոխադրելու համար: Հարավկովկասյան խողովակաշարը /Բաքու-Թբիլիսի-Էրզրում/ սկսեց շահագործվել 2006 թ.-ի վերջում: Գազամուղն անցնում է Բաքու-Թբիլիսի-Ցեյհան նավթամուղին զուգահեռ և Էրզրումի մոտ միանում է Թուրքիայի գազատրանսպորտային ցանցին: Միջկառավարական համաձայնագիրը և ադրբեջանական «Շահ-Դենիզ» հանքավայրից գազի մատակարարման մասին «առք ու վաճառքի» պայմանագիրը Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվել են 2001 թ.-ին: Համաձայն այդ պայմանագրի, սկսած 2006 թ.-ից Ադրբեջանը պետք է բնական գազ մատակարարի Թուրքիային հետևյալ ծավալներով. 70 մլրդ.խոր. ֆուտ /2 մլրդ. խոր. մ./ 2006թ.-ի, մինչև 177 մլրդ.խոր. ֆուտ / 5 մլրդ. խոր. մ./ 2007թ.-ի և շուրջ 233 մլրդ.խոր. ֆուտ /6,6 մլրդ. խոր. մ./ 2009թ.-ի ընթացքում: Նախագծի իրականացման երկրորդ փուլում, որը կսկսվի 2010 թ.-ից Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով գազի մատակարարումը կարելի է հասցնել տարեկան 700 մլրդ.խոր. ֆուտի /մոտ 20 մլրդ.խոր.մ./: Թուրքիան հուսով է, որ այդ գազի հիմնական մասը կարելի կլինի թուրքական տարանցման միջոցով մատակարարել եվրոպական երկրներ: TPAO-ի մասնաբաժինը այս նախագծում կազմում է շուրջ 10 %:

Անդրկասպյան նախագիծը /Թուրքմենստան-Թուրքիա-Եվրոպա/ նախատեսում է թուրքմենական գազի տեղափոխումը Կասպից ծովով /Թուրքմենբաշի-Բաքու/, Ադրբեջանով և Վրաստանով դեպի Թուրքիա, իսկ այնուհետև Եվրոպա: Գազի մատակարարման մասին շրջանակային համաձայնագիրը Թուրքիայի և Թուրքմենստանի նախագահների միջև ստորագրվեց 1998 թ.-ի հոկտեմբերի 29-ին Անկարայում: Ըստ այդ համաձայնագրի, Թուրքմենստանը պարտավորվում է 30 տարիների ընթացքում Թուրքիային մատակարարել 16 մլրդ.խոր.մ. բնական գազ և թուրքական

տարածքով եվրոպական շուկա մատակարարել ևս տարեկան 14 մլրդ.խոր.մ. գազ: 1999 թ.-ի մայիսի 21-ին պայմանագիր ստորագրվեց «առք ու վաճառքի», ինչպես նաև Թուրքմենստանի հետ 1050-միլանոց գազամուղի շինարարության մասին, որն անցնելու էր Կասպից ծովի հատակով, Ադրբեջանով և Վրաստանով դեպի Թուրքիա, որի արժեքն է 2-2,4 մլրդ. դոլար: Գազի հնարավոր մատակարարումները գնահատվում են տարեկան 565-1060 մլրդ.խոր. ֆուտ /16-30 մլրդ.խոր.մ./: Ամերիկյան «Bechtel» ընկերության գլխավորությամբ կոնսորցիումը ներառում է «General Electric»,«Shell» և «PSG International» ընկերությունները: Սակայն, ներկայումս չի դիտվում առաջխաղացում անդրկասպյան նախագծի իրականացման մեջ: Համենայն դեպս, այդ նախագծի իրականացումը անորոշ ժամկետով հետաձգվել է: Այս նախագիծը արգելափակվում է մի շարք գործոններով, այդ թվում թուրքմենական գազի գնի շուրջ տարաձայնություններով, Կասպից ծովի իրավական կարգավիճակի անորոշությամբ, կասպիական գազի տեղափոխման ուղիների ընտրության մեջ ռուսական և չինական վեկտորների ուժեղացմամբ, կասպիական ածխաջրածինների տեղափոխման ամերիկյան պլաններում Թուրքիայի դերի ու նշանակության նվազմամբ և այլն:

Կասպից ծովի հյուսիսային հատվածների ակտիվ իրացման հետ կապված, 1990-ական թվականների վերջում, Անկարան շահագրգռված էր նաև Ակտաու-Բաքու գազամուղի շինարարության մեջ, որի միջոցով կարելի կլինի գազախական գազը Կովկասով մատակարարել Թուրքիա /այս նպատակով կարելի էր օգտագործել Հարավ-Կովկասյան գազամուղը/: Սակայն այս նախագիծը ևս իր հետագա զարգացումը չստացավ:

Նաբուկկո /Nabucco/: Եվրոպան շահագրգռված է բնական գազի մատակարարման ուղիների դիվերսիֆիկացման մեջ: Այդ պատճառով նա սատարում է իր համար ոչ ավանդական աղբյուրներից գազի ներկրման տարբեր նախագծերը: Այդ նախագծերից մի մասը նախատեսում է բնական գազի տարանցումը Թուրքիայով: Այդ նախագծերի իրականացումը դեպի Եվրոպա, գազի մատակարարման այլընտրանքային ուղի կստեղծի /որը կոչում են «չորրորդ ճյուղ»/ ի հավելումն արդեն գոյություն ունեցող երեք հիմնական ուղիների /Ռուսաստան-Եվրոպա, Նորվեգիա-Եվրոպա, Ալժիր-Եվրոպա/: Ներկայումս քննարկվում են երկու նման նախագծեր. «Նաբուկկոն» կասպիական և մերձավորարևելյան գազի տեղափոխման համար, և «Անդրկասպյանը», որը հնարավորություն կտա Թուրքմենստանին գազի իր հսկայական հանքավայրերը միացնել եվրոպական գազային համակարգի հետ:

«Նաբուկկո» գազամուղի նախագիծը դասվում է ԵՄ-ի առաջնահերթ նախագծերի շարքին: Այն նախատեսում է Թուրքիայի, Բուլգարիայի, Ռումինիայի, Հունգարիայի և Ավստրիայի տարածքներով բնական գազի տեղափոխումը Կասպիական և Կենտրոնական-Ասիական տարածաշրջանից դեպի Եվրոպա: Ենթադրվում է, որ այս խողովակաշարը զգալիորեն կնվազեցնի Եվրոպա գազի մատակարարման անվտանգությունը: Նախագծի ֆինանսական ու իրավաբանական հիմնավորումը մշակվել է 2004 թ.-ի վերջին «Nabucco Company Pipeline Study GmbH»- հիմնադրումից հետո, որի մեջ ընդգրկվել են «Botas» /Թուրքիա/, «Bulgargaz» /Բուլգարիա/, «Transgaz» /Ռումինիա/, MOL /Հունգարիա/ և OMV /Ավստրիա/ ընկերություններ: Խողովակաշարի հանձնումը շահագործման պլանավորված է 2012 թ.-ին: Խողովակաշարի երկարությունը կազմելու է 3400 կմ, իսկ նախագծի արժեքը գնահատվում է 5 մլրդ. եվրո: Տարեկան այս խողովակաշարով Իրանից, կասպիական և մերձավորարևելյան երկրներից դեպի Եվրոպա կարելի կլինի տեղափոխել 25-ից 30 մլրդ.խոր.մ. բնական գազ: Հաճածայն թուրքական կողմի հայտարարությունների, երկրի խողովակաշարային համակարգը Կասպից ծովի և Մերձավոր Արևելքի երկրներից դեպի Եվրոպա բնական գազով մատակարարելու համար պատրաստ կլինի արդեն 2008 թ.-ին:

Որպես այս նախագծի իրականացումը բարդացնող գործոններ շարունակում են մնալ. թուրքական տարածքին մոտեցող իրանական գազամուղերի փոքր հզորությունը, գազի մատակարարման սկզբի շուրջ բարդ իրավիճակը, քաղաքական ռիսկերի բարձր աստիճանը, ինչը կապված է բազմաթիվ երկրների տարածքներով խողովակաշարի անցման հետ, բավարար քանակի գազի առկայության և այլ խնդիրներ: Այս նախագծի մրցակիցը «Երկնագույն հոսքն» է /կան «Երկնագույն հոսքը» մինչև Իտալիա շարունակելու մտադրություններ/:

Իրանական նախագծեր: 1996 թվականին, Իրանը և Թուրքիան ստորագրեցին 23 տարի ժամկետով, ընդհանուր ծավալով 8 տրիլիոն խորանարդ մետր (226.4 մլրդ. խորանարդ մետր) կամ տարեկան 10 մլրդ. խորանարդ մետր իրանական բնական գազի: 1999 թվականի վերջից սկսած Թուրքիա մատակարարման համաձայնագիր: Պայմանագրի գինը կազմեց $23 մլրդ.: 2002 թվականի հունվարի վերջին, Իրանը և Թուրքիան պաշտոնապես բացեցին 2 577 կիլոմետր երկարություն ունեցող Թավրիզ (Հյուսիսային Իրան) – Անկարա գազամուղը: Շինարարության ավարտի ծգձգման վրա ազդեցին Իրանի նկատմամբ կիրառվող ամերիկյան սանկցիաները և թուրքական կողմի ֆինանսա-տնտեսական դժվարությունները: Այսպիսով, Իրանը դարձավ Թուրքիայի մեծությամբ երկրորդ գազի մատակարարը: Պլանավորվում է, որ իրանական բնական գազի արտահանումը Թուրքիա կհասնի տարեկան 350 մլրդ. խորանարդ ֆուտի (10 մլրդ. խորանարդ մետր) սկսած արդեն 2007 թվականից: Իրանի հետ պայմանագիրը նախատեսում է, որ իրանական կողմը իր գազը մատակարարում է մինչև իրանա-թուրքական սահմանը: Պայմանագիրը, ինչպես և Ռուսաստանի դեպքում, ստորագրված է "վերցրու կամ վճարիր" պայմաններով: Հարկ է նշել, որ բնական գազի ներմուծման "վերցրու կամ վճարիր" կոնտրակտային պայմանները նշանակում են, որ Թուրքիան, դրանց չկատարման դեպքում, տեսականորեն կարող է այդ երկրներին տարեկան վճարել մինչև $1 մլրդ. տուգանքներ:

2002 թվականի հունիսին, Թուրքիան դադարեցրեց Իրանից բնական գազի ներմուծումը, պատճառաբանելով գազի որակի հետ կապված հիմնախնդիրները: Այդ գազամուղի աշխատանքը բախվում է նաև այլ բարդությունների հետ՝ իրանական կողմի "տեխնիկական հիմնախնդիրներ" (օրինակ, 2006 թվականի հունվարի 19-ին Իրանը նվազեցրեց բնական գազի հոսքերը կապված Թավրիզում ցուրտ եղանակի հետ), Թուրքիայի ներքաղաքական իրավիճակով (Թուրքիայում արգելված Քրդական բանվորական կուսակցության գործունեությունը Ագրի նահանգի սահմանային Գյուրբուլաղ ուղեկալից մեկուկես կիլոմետր դեպի արևելք, Իրանից դեպի Թուրքի-

ա ընթացող գազամուղի վրա 2006 թվականի օգոստոսին իրականացրեցին պայթյուն/ և այլն:

Այլ նախագծերը: Թուրքիան քննարկում է նաև այլ գազախողովակաշարերի շինարարության հնարավորությունները: Դրանցից առաջինը կապված է Եգիպտոսից գազի ներմուծման հետ: Եգիպտոսը, վիթխարի գազի պաշարներով (նրա գազի պաշարները գերազանցում են ադրբեջանականը), իրենից ներկայացնում է Թուրքիայի համար գազի հնարավոր ևս մեկ աղբյուր: Գազը Եգիպտոսից, պոտենցիալ առումով, կարող է Թուրքիա մատակարարվել խողովակաշարով, Միջերկրական ծովի հատակով, կամ հեղուկ բնական գազի փոխադրումների համար հատուկ կառուցված տանկերների օգնությամբ: Այդպիսի տանկերների սպասարկման համար միջերկրածովյան «Said» նավահանգստի մոտ Թուրքիան կառուցել է $1.2 մլրդ. արժողությամբ տերմինալ և վերագազավորման կայան Aliaga-ում (Իզմիրի մոտ): Եգիպտոսը և Թուրքիան, դեռևս 1996 թվականին, ստորագրել են նախնական համաձայնագիր՝ հեղուկ բնական գազի արտահանման համար: Խողովակաշարի շինարարության տնտեսական հիմնավորումը (խոսքը գնում է Միջերկրական ծովի հատակի խողովակաշարով 4 մլրդ խորանարդ մետր գազի մատակարարումների մասին) շատ արագ կասկածի տակ դրվեց: Ինչպես վերը հիշատակվել է, Թուրքիան արդեն ստորագրել է այնպիսի քանակությամբ գազի ներմուծման պայմանագրեր, որոնք գերազանցում են նրա ներքին պահանջարկը բազմաթիվ տարիների ընթացքում:

Հեռանկարում Թուրքիան հույս ունի դառնալ դեպի Եվրոպա եգիպտական գազի համար տարանցիկ երկիր: Այդ նպատակով Թուրքիան համագործակցում է «Mashreq»-ի երկրների հետ Սիրիայի, Իրաքի միջոցով մինչև ԵՄ Եգիպտոսից բնական գազի փոխադրման նախագծում /Անդրարաբական գազամուղ/: Վերջին անգամ, 2006 թվականի մայիսին, Թուրքիայի, Եգիպտոսի, Հորդանանի, Լիբանանի և Սիրիայի էներգետիկայի նախարարները քննարկել են «Անդրարաբական գազամուղ»ի հնարավոր ընդլայնումը դեպի Կիպրոս և Թուրքիա: Մինչև ներկա պահը ոչ մի որոշակի նախագիծ համաձայնեցված չէ: Այդ նախագծի իրացումը կապված է բազմաթիվ քաղաքական ռիսկերի հաղթահարման հետ:

Թուրքիան հետաքրքրվում է նաև իրաքյան բնական գազի պաշարների զարգացմամբ, որոնք գլխավորապես տեղաբաշխված են Հյուսիսային Իրաքում: Իրաքյան բնական գազը Թուրքիա կարող է մատակարարվել Քիրքուք-Ջեյհանին զուգահեռ խողովակաշարի շինարարության միջոցով: Իրաք-Թուրքիա գազամուղի շինարարության նախագիծը նախատեսում է տարեկան 10 մլրդ. խորանարդ մետր բնական գազի փոխադրում: Բայց հիմնախնդիրն այնէ, որ իրաքյան գազի հանքավայրերը դեռև չեն շահագործվում, իսկ իտալական «ENI-Agip» և ֆրանսիական «Gaz de France» ընկերությունների կողմից նախաձեռնված նախագիծը հետաձգված է մինչև իրաքյան հիմնախնդրի լուծումը:

Թուրքական իշխանությունների քննարկման ներքո է գտնվում նաև մինչև Ջեյհան «Երկնագույն հոսք» գազամուղի ընդլայնումը, որտեղից էլ դեպի "Ashkelon" Իսրայելը ռուսական բնական գազով մատակարարելու նպատակով: «Գազպրոմը» հետաքրքրվում է Թուրքիայի միջոցով բնական գազը Լիբանան և Իսրայել փոխադրելու հարցով, Թուրքիային առաջարկե-

լով համագործակցություն Սևծովյան Սամսուն նավահանգստից դեպի Ջեյհան գազամուղի շինարարության հարցում: Թուրքիայի արտաքին գործերի նախարարության տվյալներով ենթադրվում է, որ 2010 թվականին 4 մլրդ. խորանարդ մետր գազ կուղղվի դեպի Ջեյհան: Թուրքական իշխանությունները պլանավորում են Ջեյհանում կառուցել հեղուկ բնական գազի արտադրության գործարան /ՀԲԳ/: Ենթադրվում է, որ բնական գազը Ջեյհանից կմատակարարվի գլխավորապես Միջերկրածովյան տարածաշրջանի երկրներ, հատկապես Իսրայել: Քննարկվում է մատակարարումների երկու տարբերակ այդ երկիր՝ ՀԲԳ կամ ստորջրյա գազամուղի շինարարություն մինչև Աշկելոն: Որոշ ռուս փորձագետներ հոռետեսորեն են վերաբերում այդպիսի նախագծերին: Նրանք մտահոգություն ունեն, որ գազային էքսպանսիայի նման ռազմավարության պարագայում, Ռուսաստանը կկորցնի Թուրքիայի առանցքային շուկան, իսկ Իսրայելում ռուսական գազը ստիպված կլինի մրցակցել եգիպտական, ալժիրական, սաուդյան գազի հետ, որոնք ավելի էժան են ի հաշիվ ավելի մոտ տարածությունների:

4. Էներգետիկ շուկայի ազատականացումը

4.1 Ազատականացման հիմնական ուղղությունները և ընթացքը

Թուրքիայի համար եվրոպական ռազմավարությունը /հանրության կողմից ընդունվել է 1998 թ.-ի մարտին/ նախատեսում էր որոշակի բնագավառներում, այդ թվում նաև էներգետիկայի, համագործակցության ամրապնդում և օրենսդրության ներդաշնակեցում: Այս կապակցությամբ Թուրքիայի սահմանադրության մոդիֆիկացիան, որը ճանապարհ հարթեց պետական ձեռնարկությունների մասնավորեցման և միջազգային արբիտրաժային ընթացակարգերի համար, կարևոր և անհրաժեշտ քայլ եղավ: Չնայած Թուրքիան կատարեց որոշ քայլեր եվրոպականի հետ էներգետիկ սեկտորի նորմատիվային բազայի ներդաշնակեցման համար, այնուամենայնիվ 2000 թվականի նոյեմբերին եվրոպական հանձնաժողովը հաղորդեց, որ ձեռնարկված քայլերը անբավարար և սահմանափակ են եղել: Հանձնաժողովի կողմից առաջարկված օրենսդրական փոփոխությունների 120 պայմաններից կատարվել էին ընդամենը 16-ը:

Թուրքիայի էներգետիկ շուկայի ազատականացման համար ուժեղ ազդակ դարձավ 2000-2001 թվականների ֆինանսական ճգնաժամը: Որպեսզի հաղթահարվեին ճգնաժամի հետևանքները, Թուրքիան դիմեց Միջազգային Արժույթի Հիմնադրամի ֆինանսական օգնությանը: Իր հերթին ՄԱՀ-ը Թուրքիային ներկայացրեց առաջարկությունների փաթեթ, որը նախատեսում էր նաև բազմաթիվ պետական, այդ թվում և էներգետիկ ձեռնարկությունների մասնավորեցում (Թուրքիայի էներգետիկայի հատվածում ավանդաբար իշխում էին պետական ձեռնարկությունները): Միջազգային արժույթի հիմնադրամը և Համաշխարհային Բանկը պահանջում էին Թուրքիայից արագացնել էներգետիկ օբյեկտների մասնավորեցումը, բերելով հետևյալ փաստարկները. անհրաժեշտ է ավելացնել արտադրության արդյունավետությունը և փոքրացնել ճնշումը պետական բյուջեի ծախսային մասի վրա: Այսպիսով, Թուրքիայի էներգետիկ օբյեկտների մասնավորեց-

ման ծրագիրը մշակվել է ըստ ՄԱՀ-ի առաջարկությունների: Մասնավորեցման ծրագիրը ընդգրկեց ածխի, նավթային, էլեկտրաէներգետիկ և գազի արդյունաբերության ճյուղերը և նախատեսում է համապատասխան օրենքների ընդունում, ինչպես նաև էներգետիկ շուկայի վերահսկման համար պետական կարգավորող մարմնի ստեղծում:

2001 թվականի նոյեմբերի հաղորդագրության մեջ Եվրոպական Հանձնաժողովը հաստատեց, որ Թուրքիան հասել է որոշակի հաջողություններ էներգետիկայի ոլորտում բարեփոխումների իրականացման գործում հատկապես այն մասով, որը վերաբերում է էներգիայի ներքին շուկային /ընդհանուր կանոնների սահմանում էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համար՝ Դիրեկտիվ հրահանգ 96/92/EC, և գազի ներքին շուկայի համար՝ Դիրեկտիվ հրահանգ 98/30/EC/: Թուրքիան ընդունել է երկու վճռորոշ օրենք՝ էլեկտրաէներգիայի շուկայի մասին օրենքը[6] և գազի շուկայի մասին օրենքը[7], այդ երկու սեկտորներում սահմանելով նոր կառուցվածքներ և խաղացողների կարգավիճակը: Թուրքիան ստեղծել է նաև կարգավորող պետական մարմին /Energy Market Regulatory Authority/՝ էլեկտրաէներգիայի և գազի շուկայի վերահսկման համար: Հաղորդագրության մեջ նշվում էր նաև, որ Թուրքիայի ամբողջ նավթային պաշարները զգալի աստիճանով համարժեք էին Միության կողմից պահանջվող մակարդակին /90 օր[8]: Սակայն, թուրքական էներգետիկ օրենսդրությունը դեռևս չէր համապատասխանում ԵՄ-ի ստանդարտներին: Սկսած վերջին հաղորդագրությունից, ոչ մի առաջխաղացում չի եղել մատակարարումների անվտանգության, էներգիայի օգտագործման արդյունավետության բնագավառում և այլն: 2002 թ.-ի հոկտեմբերի հաղորդագրության մեջ ընդգծվում էր, որ Թուրքիան էական հաջողություններ է արձանագրել ԵՄ-ի պահանջների հետ իր էներգետիկ օրենսդրության հետագա համապատասխանեցման ուղղությամբ, հատկապես էներգիայի ներքին շուկայում: 2004 թ.-ի հաղորդագրության մեջ նշվում է, որ լիարժեք համապատասխանեցումը մնում էր սահմանափակ և անհամաչափ էներգետիկ քաղաքականության տարբեր բնագավառներում: 2005 թ.-ի նոյեմբերի հաղորդագրության մեջ նշվում է, որ թեև Թուրքիայի ջանքերը շարունակվում են ԵՄ-ի ստանդարտների և նորմերի հետ էներգետիկ օրենսդրության ներդաշնակեցման ուղղությամբ, այնուամենայնիվ օրենսդրությունը պետք է կիրառվի ավելի արդյունավետորեն, հատկապես էներգետիկ շուկայի ազատականացման, գների թափանցիկության ապահովման, լիցենզիաների տրամադրման և էներգիայի ու վերականգնվող էներգետիկայի արդյունավետ օգտագործման համար միջոցների ձեռնարկման ուղղությամբ: Պետությունը դեռևս կառավարում է էներգետիկ շուկայի որոշակի ասպեկտները, մասնավորապես, դեռ հանված չեն էլեկտրաէներգիայի արտահանման ու ներկրման սահմանափակումները մասնավոր սեկտորի համար:

Էներգետիկ արդյունավետության առումով հարկ է նշել, որ էներգաօգտագործման արդյունավետության աճը ու Թուրքիայի տնտեսության էներգաինտենսիվության նվազումը հանդիսանում են ԵՄ-ի պայմաններից մեկը: Թուրքիայում էլեկտրաէներգիայի տեխնիկական ու ոչ տեխնիկական ցանցային կորուստների մակարդակը շատ բարձր է՝ 18,6 %, ինչը գործնականորեն երեք անգամ գերազանցում է արևմտյան երկրների համապատասխան մակարդակը: Էներգախնայման պոտենցիալ հնարավորությունները գնահատվում են 40%: Այսպիսով, Թուրքիան էներգախնայման լուրջ ծրագրի իրականացման կարիք ունի, որը կընդգրկի ինչպես տուգանքային պատժամիջոցների կիրառումը էլեկտրաէներգիայի անլեգալ օգտագործման համար, այնպես էլ բաշխիչ և փոխանցող ենթակառուցվածքների արդիականացումը՝ տեխնիկական կորուստները կրճատելու նպատակով:

Ինչ վերաբերում է էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործմանը (Թուրքիան ունի էներգիայի վերականգնվող աղբյուրների չօգտագործված մեծ պաշար), ապա որոշակի առաջխաղացում է նշվել ձեռք բերված արդյունքների մասին, Եվրոպական Հանձնաժողովի 2005 թվականի զեկույցում: Էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման խթանման նպատակով, 2004 թվականի մարտին, Համաշխարհային Բանկը Թուրքիային տրամադրեց $200 մլն. գումարի չափով փոխատվություն: 2005 թվականի մայիսին Թուրքիայում ընդունվեց օրենք "էլեկտրաէներգիայի արտադրությունում էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման մասին": Օրենքը նախատեսում է որոշակի մեխանիզմների ներդրում, էներգիայի վերականգնվող ռեսուրսների հիման վրա աշխատող էլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի ավելի մրցունակ գների ձևավորման համար /մինչև 2011 թվականը/:

Վերջին տարիներին Թուրքիան միացել է էներգետիկայի բնագավառում մի շարք միջազգային համաձայնագրերի: 2001 թվականին Թուրքիան վավերացրել է էներգետիկ Խարտիան, իսկ 2005 թվականի հունվարի 1-ին ընդունել է ԵՄ-ի էկոլոգիական ստանդարտները: Թուրքիան վավերացրել է նաև կլիմայի գլոբալ փոփոխության Կիոտոյի համաձայնագիրը:

Թուրքական էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացը և դրա կոնվերգենցիան միասնական եվրոպական էներգետիկ շուկայի հետ, նախատեսում է պետության կառավարման ներքո գտնվող էներգետիկ ընկերությունների խոշորամասշտաբ մասնավորեցում: Մասնավորեցման ծրագրի համաձայն, Թուրքիայի էներգետիկ շուկայի ամբողջական ազատականացումը պետք է ավարտվի մինչև 2011 թվականը: Սկսած 2006 թվականից, իշխանությունները պլանավորում են վաճառել ջերմաէներգետիկայի և հիդրոէներգետիկայի գեներացնող հզորությունները 16 000 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Մասնավոր հատվածի համար բացվել են նաև գորշ ածխի հանքերը: Էլեկտրաէներգիայի Բաշխման Թուրքական Ընկերությունը (TEDAS), որը մենաշնորհ դիրք ունի էլեկտրաէներգիայի բաշխման շուկայում, նախատեսվել էր մասնավորեցնել 2004 թվականի ապրիլին: TEDAS-ի վերակառուցման հիման վրա ստեղծվեցին 21 մարզային բաշխիչ ընկերություններ: Նախատեսվում էր, որ արտադրության սպասարկման միջոցների մասնավորեցումը կավարտվի 2006 թ.-ի հուլիսի ընթացքում, մինչև 2011 թ.-ը, այն դեպքում, երբ բաշխիչ ցանցի մասնավորեցման գործընթացը 2005-2006 թթ.-երի ընթացքում: Սակայն, բաշխիչ ընկերությունների մասնավորեցման գործընթացը չավարտվեց նախատեսված ժամկետում և այն երկարացվեց մինչև 2009-2010 թթ.-երը: 21 շրջանային բաշխիչ ընկերություններից 20-ի մասնավորեցման պաշտոնական գործընթացը սկսվեց 2006 թ.-ի օգոստոսին: Իշխանությունները հավանություն տվեցին նաև էլեկտրաէներգիայի նոր սակագներին: Գեներացնող ու բաշխիչ ընկերությունների մասնավորեցման ընթացքի ու նախապատրաստման ծգծգումները հիմնականում կապված են շահագրգռության բա-

ցակայության, ինչպես նաև արևմտյան ներդրողների տնտեսական ու քաղաքական անվստահության հետ:

Պատշաճ կերպով առաջ չի ընթանում նաև գազային սեկտորում ապակարգավորման ծրագիրը: Սպասվում էր, որ այդ գործընթացի ավարտին երկրում ստեղծված կլինի գազի բարձր մրցունակ և դինամիկ շուկա: Այդուհանդերձ, մինչ օրս այդ ուղղությամբ շարժումը կաղում է, մասնավորապես, քանի որ ծգծվեցին փոփոխությունների շուրջ խորհրդարանական լումները, որոնք պետք է թուլացնեին արտասահմանյան դերակատարների սահմանափակումները Թուրքիայի գազի սեկտորում: 2004 թ.-ի մարտին Թուրքիայի էներգետիկ շուկայի կարգավորման պետական գործակալությունը սպառնաց «Botas»-ին տուգանքային պատժամիջոցներ կիրառել շուկայում տարեկան 10-տոկոսանոց մասնաբաժնի վաճառքով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու համար: Սակայն, 2004 թ.-ի հունիսին Թուրքիայի էներգետիկայի նախարարությունը առաջարկեց կրճատել գազային պայմանագրերի մասնաբաժինը, որոնք մինչև 25 %-ով 2009 թ.-ին պետք է փոխանցվեն մասնավոր սեկտորին՝ նախատեսված 80 %-ի փոխարեն: Այս առումով իրենց դերը կատարեցին Ռուսաստանը և Իրանը, որոնք հրաժարվեցին «Botas»-ի հետ գազի արտահանման պայմանագրի պայմանների փոփոխություններից: Այսպիսով, եթե Թուրքիայի գազի սեկտորի կարգավորման իրավական շրջանակները հիմնականում համապատասխանում են ԵՄ-ի պահանջներին, ապա դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ երկրում չստեղծվեց արդյունավետ գործող գազի շուկա:

4.2 ԵՄ-ից Թուրքիայի էնեգետիկայի հատվածի կախվածության հիմնախնդիրը

Թուրքիայի որոշակի շրջանակներ, այսպես կոչված "ավելի ուժեղ Թուրքիայի" կողմնակիցները, գտնում են, որ էներգետիկայի հատվածի ազատականացման քաղաքականությունը չի համապատասխանում պետության շահերին, այլ ավելի շուտ բխում է բազմազգ ընկերությունների և նրանց հետ համագործակցող ոչ մեծ թվով թուրք ներդրողների շահերից: Նրանց հաստատմամբ, գլոբալ ուժերի օրակարգում դրված է Թուրքիայի սահմանների փոփոխության հարցը, ինչին նպաստում է արտաքին դերակատարներին երկրի էներգետիկայի դանդաղ փոխանցումը: Ելնելով դրանից նրանք հանգում են եզրակացության, որ երկիրը կանգնած է լավ պլանավորված ազգային և անկախ էներգետիկ և նավթային քաղաքականություն իրականացնելու հրամայականի առջև, որի համաձայն էներգիայի նկատմամբ իր պահանջմունքները Թուրքիան պետք է գլխավորապես բավարարի ներքին ռեսուրսների հաշվին, իսկ դրա համար անհրաժեշտ է.

– արագացնել նավթի և այլ էներգառեսուրսների որոնումները Թուրքիայի սահմանների շրջանակներում,

– բարելավել բոլոր տեսակի էներգառեսուրսների օգտագործումը (այդ թվում տեղական քարածխի և գորշ ածխի),

– հատուկ ուշադրություն դարձնել նոր և վերականգնվող ազգային էներգառեսուրսներին /երկրաջերմային, արևային, քամու/ որոնք ներկայումս հարկ եղած ծնով չեն օգտագործվում,

– իրականացնել միջուկային էներգետիկայի ազգային և անկախ քաղաքականություն, որը հիմնված է նոր տեխնոլոգիաների և ուրանի սեփական ռեսուրսների վրա, եթե նույնիսկ դրանք ունեն ավելի ցածր որակ, քան արտաքին ռեսուրսները, իսկ ժամանակի հետ կենտրոնանալ տորիումի սեփական հարուստ պաշարների և միջուկային էներգիայի արտադրության մեջ տորիումի կիրառման հեռանկարների ուսումնասիրման վրա,

– էներգառեսուրսների ներկրման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել աղբյուրների դիվերսիֆիկացման վրա, կանխարգելել ցանկացած կախվածություն միակ երկրից կամ արտաքին ռեսուրսի մեկ տեսակից,

– զարգացնել համագործակցությունը պետական ու մասնավոր սեկտորի միջև էներգիայի պահանջարկի առավել լավ բավարարման համար, այդ ընթացքում խուսափելով արտասահմանյան ներդրողների հսկիչ ներկայությունից,

– էներգետիկ օբյեկտները մասնավորեցնել միայն այն դեպքում, եթե դա ծառայում է քաղաքացիների ու պետության շահերին,

– բարելավել էլեկտրաէներգիայի փոխանցման ու բաշխման ընթացիկ պայմաններն ու անվտանգությունը, կանխարգելել էլեկտրաէներգիայի անօրինական օգտագործումը, որը համընդհանուր ծնով տարածված է Թուրքիայի արևելքում:

Սախկինում Թուրքիան մշակում և օգտագործում էր զարգացման հնգամյա պլաններ: Ներկայումս Թուրքիան մշակել և իրացնում է յոթնամյա ծրագիր, որպես 9-րդ Զարգացման Պլան: Այդ պլանը էական փոփոխություններ է նախատեսում էներգետիկ քաղաքականության մեջ: Համաձայն այդ պլանի, միջուկային էներգետիկայան կընդգրկվի էլեկտրաէներգիայի արտադրության ռեսուրսների մեջ, բնական գազի օգտագործումը կավելանա 28 %-ից մինչև 34 %, նավթամթերքի օգտագործումը էներգիայի արտադրության մեջ կնվազի 37 %-ից մինչև 31 %, էլեկտրաէներգիայի օգտագործման աճը տարեկան միջին հաշվով կկազմի 8,1 %, կավարտվի գեներացնող հզորությունների և բաշխիչ ցանցերի մասնավորեցումը, կավելանա նոր և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործումը:

Այսպիսով, 9-րդ Զարգացման Պլանը, թվում է, պարունակում է իրատեսական, չափավոր և լավագույն մղումներից բխող ծրագիր: Սակայն, վերը բերված մոտեցման կողմնակիցները վստահ են, որ տվյալ պետական պլանի իրացումը անհնար է մի շարք օբյեկտիվ պատճառներով: Գլխավոր պատճառն այն է, որ ԵՄ-ն այլևս թույլ չի տա Թուրքիային հետևել "խառը տնտեսության" քաղաքականությանը: Դրա փոխարեն, տնտեսական քաղաքականության մեջ նրան ստիպում են ամբողջությամբ անցնել ազատական-շուկայական տնտեսության սկզբունքներին, իսկ այդպիսի պայմաններում 9-րդ Զարգացման Պլանի նպատակները և խնդիրները չեն իրականացվի: Բացի այդ, արդեն կա նախորդ տարիների դառը փորձը: ԵՄ-ին կողմնորոշված թուրքական կառավարությունը, որը խոստացել էր էլեկտրաէներգիայի արտադրության մեջ 2002 թվականին վերադառնալ ներքին ռեսուրսների օգտագործմանը, ի վիճակի չեղավ պահել իր խոստումը: 2002 թվականին արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի 26%-ը ստացվել է բնական գազի օգտագործմամբ, իսկ 2006 թվականին այդ ցուցանիշը կազմեց 44%: Ճիշտ այդպես էլ ածխի կշիռը 2002 թվականի 35%-ից իջավ մինչև 20% 2006 թվականին: Այդ ամենը ցույց է տալիս,

որ թուրքական կառավարությունը ի վիճակի չէ արդյունավետ և խելամիտ կառավարել էներգետիկայի հատվածը, եզրակացնում են տվյալ մոտեցման կողմնակիցները: Որպես դրա ապացույց նրանք բերում են ընդարձակ խավարումների դեպքերը, որոնք վերջին շրջանում դիտվում են Թուրքիայի որոշ շրջաններում (երբեմն և մեծ քաղաքներում), որը հիշեցնում է 70-ական և 80-ական թվականները, երբ երկիրը տուժում էր էլեկտրաէներգիայի անբավարարությունից:

1.Թուրքիայում տարեկան արտադրվում է 2.2-2.5 մլն. տոննա նավթ և շուրջ 700 մլն. խորանարդ մետր բնական գազ, որից մոտավորապես 70%-ը բաժին է ընկնում Թուրքական Պետական Նավթային Ընկերությանը (TPAO): Թուրքական Պետական Նավթային Ընկերությունը ստեղծվել է 1954 թվականին: TՀAO-ի նպատակն է՝ սեփական աղբյուրներից բավարարել նավթի և բնական գազի նկատմամբ Թուրքիայի պահանջմունքները: Ներկայումս TՀAO-ն երկրի ներսում և արտասահմանում արդյունահանման հաշվին ապահովում է հում նավթի նկատմամբ Թուրքիայի ընդհանուր պահանջմունքների ընդամենը 10%-ը և բնական գազի նկատմամբ Թուրքիայի պահանջմունքների 2%-ը: Սակայն TPAO-ն ունի ավելի հավակնոտ նպատակներ՝ դառնալ համաշխարհային էներգետիկ ընկերություն և 2010 թվականին ու 2020 թվականին ապահովել նավթի և գազի նկատմամբ Թուրքիայի պահանջմունքների համապատասխանաբար 35%-ը և 50%-ը:

2. Թուրքիայի գազի սեկտորում առաջատար դերը պատկանում է «Botas» նավթագազային խողովակաշարային ընկերությանը: «Botas»-ը հիմնադրվել է 1974 թ.-ին թուրքական նավթագազային TPAO ընկերության կողմից որպես օպերատոր, Թուրքիայի տարածքով մինչև Իսկանդերուն, իրաքյան նավթի տեղափոխման համար: Ընկերության զուտ գազային գործունեությունը սկսվեց 1987 թ.-ին, ինչը կապված էր ԽՍՀՄ-ից գազի մատակարարման սկզբի հետ: 1995 թ.-ին «Botas»-ը դուրս եկավ TPAO-ի կազմից և վերակազմավորվեց որպես ինքնուրույն պետական ձեռնարկություն: Բացի նավթի, նավթամթերքի ու գազի տեղափոխումն ու բաշխումը, ընկերության գործունեությունը ընդգրկում է նաև բոլոր տեսակի խողովակաշարերի շինարարությունը, հետախուզա-որոնման աշխատանքները, հորատումը, ածխաջրածնային հումքի արդյունահանումը, պահեստավորումը և վերամշակումը: Ընկերությունը մենաշնորհային իրավունքներ ունի բնական գազի և ՀԲԳ-ի ներկրման, ներկրված գազի բաշխման /բացառությամբ քաղաքային գազի/, ներկրված գազի գնագոյացման, Թուրքիայում արդյունահանված գազի վաճառքի գնագոյացման վրա: 2001 թ.-ի մայիսի 2-ին Բնական գազի շուկայի կարգավորման մասին օրենքի ընդունումից հետո /թիվ 4646/ «Botas»-ը զրկվեց մենաշնորհային իրավասություններից: Այդպիսով, օրենսդրական հիմքեր ստեղծվեցին Թուրքիայի բնական գազի շուկան երրորդ անձանց առջև բացելու համար:

3. Ջերմային էլեկտրակայանների կողմից էլեկտրաէներգիայի արտադրության մեջ ածխի, լիգնիտի և ներկրված ածխի մասնաբաժինը կազմել է 31,3 %, նավթամթերքինը 7,2 %, բնական գազինը 40,4 %:

4. «Էներգետիկ մատակարարումների անվտանգության Եվրոպական ռազմավարության նկատմամբ»

5. 866 մղոն երկարությամբ /1213 կմ/, 3,2 մլրդ. դոլար արժողությամբ և տարեկան 16 մլրդ.խոր.մ. գազ հզորությամբ 565 մլրդ.խոր. ֆուտ/ «Երկնագույն հոսք» գազամուղի շինարարությունը ավարտվեց 2002 թ.-ի հոկտեմբերին: Տվյալ գազամուղով բնական գազի հոսքերը սկսվեցին 2003 թ.-ի փետրվարին: «Երկնագույն հոսք» գազամուղը նախատեսված է Սև ծովի ավազանով դեպի Թուրքիա ռուսական բնական գազի մատակարարման համար՝ շրջանցելով երրորդ երկրները: «Երկնագույն հոսքի» շինարարության ժամանակ «Գազպրոմի» հիմնական գործընկերը իտալական ENI ընկերությունն էր:

6. 2001 թ.-ի փետրվարին օրենք ընդունվեց էներգետիկայի շուկայի մասին, համաձայն որի այդ ոլորտի պետական ընկերությունները պետք է վերակազմավորվեն: Նախ, պետական էլեկտրաէներգետիկ TEAS ընկերությունը /Turkish Electricity Generation and Transmission Corporation/ պետք է վերակազմավորվի գեներացիայի /Turkish Electricity Generation Company/, բաշխման /Turkish Electricity Transmission Company/ և առևտրի /Turkish Electricity Trading and Contracting Company/ առանձին ընկերությունների: Երկրորդը, առևտրային ու գեներացնող ընկերությունները պետք մասնավորեցվեն, այն դեպքում , երբ բաշխումը պետք է մնա պետության ձեռքերում: Երրորդը, օրենքի համաձայն նորաստեղծ կարգավորման մարմինը պետք է վերահսկողություն իրականացնի էլեկտրաէներգիայի թուրքական շուկայի նկատմամբ, հաստատի սակագները, տրամադրի լիցենզիաներ և կանխի շուկայում անբարեխիղճ մրցակցությունը: 2002 թ.-ի մայիսին էներգետիկայի նախարարությունը վեց էլեկտրակայանների /Orhaneli, Hamitabat, Catalagzi, Coma A-B, և Ergil/ և ինը բաշխիչ ցանցերի ակտիվները փոխանցեց երկրի մասնավորեցման վարչակազմին: Ընդհանուր առմամբ, սակայն, այս ոլորտի առաջխաղացումը տեղի էր ունենում շատ դանդաղ, քան նախատեսված էր 2001 թ.-ի օրենքով: Օրենքը կրում է հովանոցային բնույթ, հաջորդող օրենսդրական ակտերը պետք է որոշեն դրա գործնական կիրառման մեխանիզմը:

7. Ֆինանսական առումով երկրում կայուն ու թափանցիկ գազային շուկայի ստեղծման նպատակով, 2001 թ.-ի մայիսի 2-ին գործողության մեջ մտավ «Բնական գազի շուկայի մասին» օրենքը: Նախատեսվում էր, որ օրենքը զգալիորեն կվերածնի երկրի գազային սեկտորը: Համաձայն այդ օրենքի մինչև 2009 թ.-ը պետք է չեղյալ հայտարարվի «Botas»-ի մենաշնորհը ընկերությունը առանձին միավորների բաժանելու ճանապարհով. ներկրման, տրանսմիսիայի, պահեստավորման ու բաշխման: Այս կողմից, պետք է մասնավորեցվեն առանձին բաղկացուցիչները, բացառությամբ տրանսպորտի /կպահպանվի մենաշնորհը մագիստրալային գազամուղային համակարգի բոլոր պոտենցիալ սպառողներին ծառայություն մատուցելու ոլորտի վրա/: Համաձայն օրենքի, ուժի մեջ նրա մտնելուց հետո մինչև 2009 թ.-ը ընկած ժամանակահատվածում «Botas»- հաջորդաբար պետք է մրցույթային վաճառքի հանի գազի գնման ներկրման պայմանագրերով նախատեսված իրավունք/պարտավորությունների տարեկան առնվազն 10%-ը, որպեսզի վերջին հաշվով ընկերության մասնաբաժինը 100%-ից հասնի 20%-ի:

8. 2003 թ.-ի դեկտեմբերին օրենք ընդունվեց, որը կարգավորում էր նավթային շուկան: Թուրքիան բարեփոխումներ սկսեց նավթային շուկայում: Համաձայն ընդունված օրենքի, նավթավերամշակող գործարանների թուրքական Turpas կորպորացիան և Թուրքիայում նավթամթերքների մանրածախ առևտրի խոշորագույն POAS ընկերությունը պետք է մասնավորեցվեին: 2005 թ.-ի հունվարի 1-ից գործողության մեջ մտավ նավթի շուկայի մասին օրենքը: Այս օրենքը ևս համաձայնեցված էր ԵՄ-ի ստանդարտների հետ: Նոր օրենքը նախատեսում է նավթամթերքների նկատմամբ գների ու ներկրումների սահմանափակումների վերացումը:

Օգտագործված գրականություն

1. An Energy Overview of the Republic of Turkey, Fossil Energy International, (7 January 2003), http://www.fe.doe.gov/international/turkover.html.

2. Sasley, B., Turkey`s Energy Policy in the Post-Cold War Era, Middle East Review of International Affairs, Vo.2, No.4 (1998).

3. Peimani, H., Turkey and Caucasus: Pipeline politics play their course, Asia Times Online, (1 May 2002), http://www.atimes.com/c-asia/DE01Ag04.html.

4. Candar, C., Turkey, the United States and Iraq, Center for Strategic and International Studies, (6 March 2002), http://www.csis.org/turkey/event020306.htm.

5. Energy - Through Great Cooperation, Not the 'Great Game', PULSE of Turkey No.3 (13 May 1998), http://www.turkpulse.com/energy.htm.

6. http://globalization.icaap.org/content/v3.1/03_stern.html

7. Kursat Ozkan, General Electric Turkey

8. European strategy for Turkey, (adopted by the Communication of 4 March 1998), http://europa.eu/scadplus/leg/en/lvb/e40113.htm

9. EUROPEAN ENERGY POLICY, INTERNAL ENERGY MARKET, ENERGY EFFICIENCY, RENEWABLE ENERGY, NUCLEAR ENERGY, SECURITY OF SUPPLY, EXTERNAL DIMENSION AND ENLARGEMENT,

http://europa.eu/scadplus/leg/en/s14000.htm#GAZELEC

10. Turkey - Energy, http://countrystudies.us/turkey/65.htm

11. Газовый рынок Турции, По материалам выступлений Zeki Cakan, министра энергетики и природных ресурсов Турции, и Fuat Celepci, заместителя генерального управляющего фирмы BOTAS Ольга Виноградова, Обозреватель, Нефтегазовая вертикаль, http://www.ngv.ru/article.aspx?articleID=23257

12. www.botas.gov.tr

13. www.enerji.gov.tr

14. "Лукойл" построит в Турции НПЗ мощностью 10 миллионов тонн нефти в год, Финам, 10.07.2006,

http://finance.rol.ru/news/article0F228/default.asp?news=61992

15. Мевлут Катик, Пауза с "Голубым потоком": Турция стремится к энергетической независимости,

http://eurasianet.org/russian/departments/business/articles/eav050103ru.shtml

16. Дмитрий Верхотуров, Россия и Турция на пороге "газовой войны", http://www.apn.ru/opinions/ article9593.htm

17. Turkey launches nuclear energy project, By Allan Cove for Southeast European Times in Istanbul-14/04/06, http://www.setimes.com/cocoon/setimes/xhtml/en_GB/features/setimes/features/2006/04/14/feature-03

18. http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkey2005/content /russia/322-323.htm

19. Турецкий берег: транзиты, Александр КРЫЛОВ, доктор исторических наук, 20 октября 2004,

http://www.novopol.ru/article693.html

20. И.И. Стародубцев, Энергетическая стратегия Турции, Институт Ближнего Востока, http://www.iimes.ru/rus/stat/2006/20-07-06.htm

21. Игорь Торбаков, Турция может извлечь выгоду из энергетической конкуренции на Каспии "Eurasianet" http://www.eurasianet.org/

22. Луиза Игнатьева, Верховный суд Анкары поставил крест на турецких амбициях "Татнефти", ИД "Коммерсант", Казань, ¹100 от 4.06.2004

23. Turkey Country Analysis Brief, July 2005, www.eia.doe.gov/emeu/cabs/turkey.pdf

24. European Commission: Turkey 2005 Progress Report; COM (2005) 561 final,

http://europa.eu.int/comm/enlargement/report_2005/pdf/package/sec_1426_final_en_progress_report_tr.pdf

25. Clingendael International Energy Programme (CIEP), Institute for International Relations: "Study on Energy Supply Security and Geopolitics - Final Report", The Hague, Netherlands, January 2004 (study produced for the European Commission DG Energy and Transport)

26. EU-Turkey relations in the field of energy, Directorate General External Policies of the Union, EXPO/B/KM/2006,

27. www.europarl.europa.eu/meetdocs/2004_2009/documents/fd/d-tr20060425_06/d-tr20060425_06en.pdf

28. ENERGY SECTOR, www.turkey-now.org/db/Docs/A-%20Energy%20May%202006.pdf

29. TURKEY'S ENERGY STRATEGY, Ministry of Foreign Affairs The Republic of Turkey, www.mfa.gov.tr/NR/rdonlyres/BF0C35F9-181A-48C8-BC71-FB0BEBE1EBE2/0/strategy.pdf -

34. Ali Külebi, The strategic implications of our energy need, http://www.turkishdailynews.com tr/article.php?enewsid=58266

35. "Energy Corridor: Turkey" By Nilgün Ş. ACIKALIN, Head of Transit Petroleum Pipelines Department Ministry of Energy and Natural Resources Republic of Turkey, International Energy Agency Roundtable on Caspian Oil&Gas Scenarios, 14-15 April 2003, Florence, ITALY

30. Brenda Shaffer, Turkey's Energy Policies in a Tight Global Energy Market,

31. Energy Policies of IEA Countries-Turkey-2005 Review, International Energy Agency, 2005,

32. Library of Congress - Federal Research Division, Country Profile: Turkey, January 2006

33. Ogutcu, Mehmet. "Turkey's Energy Policies In the Context of Eurasian Geopolitics." Event Report, Kennedy School of Government Caspian Studies Program, 2002.

36. Murat Arsel Kamil Kaygusuz, Energy Politics and Policy in Turkey, environment.uchicago.edu/ studies/pdfs/ArselEnergy.pdf

37. Turkey's Energy Policy In the Post-cold War Era, By Brent Sasley, Middle East Review of International Affairs Vol. 2, No. 4 (December 1998).

Առևտրա-տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև

Միխայիլ Աղաջանյան

Բաժին 1. Երկկողմանի առևտրա-տնտեսական հարաբերությունների խորհրդային շրջանը

Ռուս-թուրքական առևտրա-տնտեսական հարաբերություններն ունեն երկարատև պատմություն և բազմիցս վերապրել են վերելքի ու անկման շրջաններ: Երկու ավանդական աշխարհաքաղաքական ախոյանների տնտեսական կապերի վերելքերն ու անկումները հատկապես պայմանավորվել են տրամաչափորեն հակադիր ազգային շահերով, որոնց հետամուտ են եղել երկու տերությունները: Ռուսաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական հակասությունները երկկողմանի հարաբերությունների որոշակի ժամանակահատվածներում, այնուամենայնիվ նրանց չէր խանգարում զարգացնել ու խորացնել երկու երկրների «դատապարտվածության» օբյեկտիվ պարամետրերը փոխշահավետ առևտրատնտեսական կապեր ձևավորելու համար: Երկու երկրների սահմանակցումը և օբյեկտիվորեն առկա տնտեսությունների փոխադարձ լրացումը մշտապես, հատկապես նորագույն պատմության ընթացքում, նրանց մղում էին առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը: Դա նկատվում էր ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ 1990-ականների սկզբներին Ռուսաստանի անկախության ձեռքբերումից հետո:

Երկկողմանի տնտեսական կապերի խորհրդային շրջանը նույնպես հաստատեց երկրների հարաբերությունների «վերելքների ու անկումների» ավանդական դինամիկան: Քաղաքական հարաբերությունների սառեցումը անխուսափելիորեն ազդում էր երկկողմանի տնտեսական կապերի վրա: Սակայն, մոտավորապես 1970-ական թվականների միջնամասում Ռուսաստանի և Թուրքիայի միջև «քաղաքականություն-տնտեսություն» համակարգում կոշտ պայմանավորվածությունը դարձավ ավելի նվազ արտահայտված և, չնայած իրենց արտաքին քաղաքական նպատակային դրույթների տրամաչափորեն հակադիր դրվածքին /հատկապես ազգային անվտանգության ապահովման ոլորտում հակադիր ռազմա-քաղաքական դաշինքներում նրանց ընդգրկումը/, երկրները կարողացան հաստատել ու պահպանել տնտեսական համագործակցության համեմատաբար արդյունավետ մակարդակ:

Բացի հանրահայտ փաստերն այն մասին, որ խորհրդային Ռուսաստանը 1920 թ.-ին անհատույց ֆինանսական օգնություն հատկացրեց ժամանակակից Թուրքական հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի կառավարությանը /ի դեպ, որի մասին առանձնահատուկ նշվում էր 1990-ական թվականների սկզբներին Ռուսաստանի և Թուրքիայի միջև անմիջական հարաբերությունների հաստատումից հետո ընկած շրջանում/, ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև հարաբերական քաղաքական կայունության նախապատերազմյան շրջանում կարելի է հիշատակել այն, որ 1934 թ.-ին ԽՍՀՄ-ը Թուրքիային 8 մլն. դոլար արժողությամբ անտոկոս վարկ տրամադրեց և աջակցություն ցուցաբերեց Կայսերի քաղաքում, երկրում առաջին տեքստիլ կոմբինատի /1935 թ./, իսկ ավելի ուշ Նազիլի քաղաքում այլ տեքստիլ կոմբինատի շինարարության մեջ /1937 թ./:

Ընդհանուր առմամբ մինչպատերազմյան շրջանում թուրք-խորհրդային հարաբերությունների տնտեսական հիմքը բավական թույլ էր, իսկ երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերը կրում էին սահմանափակ բնույթ:

1926 թ.-ի ապրիլին սկսվեցին առևտրային բանակցություններ, որոնց արդյունքում 1927 թ.-ի մարտին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրվեց Առևտրի ու նավագնացության մասին պայմանագիրը: Համաձայն այս պայմանագրի ԽՍՀՄ-ին տրամադրվում էր առավելագույն բարենպաստության ռեժիմ:

Խորհրդային կառավարության կողմից Թուրքիային տրամադրված վերոնշյալ վարկը տրվել էր 20 տարի ժամկետով՝ խորհրդային արտադրության նորագույն տեսակների սարքավորումների ձեռքբերման համար՝ ապրանքային մատակարարման վճարումով: Խորհրդային վարկի հաշվին Թուրքիան մատակարարվում էր Կայսերիի ու Նազիլիի տեքստիլ կոմբինատների համար նախատեսված սարքավորումներով, որոնք կառուցվում էին խորհրդային օգնությամբ, ինչպես նաև բեռնատարներով, ավտոբուսներով /Անկարայի քաղաքապետարանի համար/, կատարվում էին նաև որոշ ռազմական պատվերներ: Թուրքիա ուղարկվեցին խորհրդային մասնագետներ, իսկ ԽՍՀՄ-ում իրականացվում էր թուրքական տեխնիկական կադրերի ուսուցում, կազմակերպվեցին նաև տնտեսական ղեկավար աշխատողների փոխադարձ ուղևորություններ:

1937 թ.-ի նոյեմբերին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև կնքվեց նոր Պայմանագիր առևտրի ու նավագնացության մասին, ինչպես նաև Առևտրային ու Վճարային համաձայնագրեր:

ԽՍՀՄ-ի և Թուրքիայի տնտեսական համագործակցության աշխուժացումը սկսվեց 1960-ական թվականների վերջերից և 1970-ական թվականների սկզբներից, երբ Խորհրդային Միությունը հանձն առավ աջակցել Թուրքիայում մի շարք կարևորագույն տնտեսական օբյեկտների շինարարությանը, իսկ տասնամյակի ավարտին սկսեց նավթի, նավթամթերքի ու ագռտային պարարտանյութերի համեմատաբար խոշոր չափերի մատակարարումը:

1967թ.-ի մարտին ստորագրվեց Համաձայնագիր սարքավորումների, նյութերի մատակարարման ու ծառայությունների մատուցման մասին, Թուրքիայում որոշ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման համար ու դրանց վճարման պայմանների վերաբերյալ: Համաձայնագրի արդյունք հանդիսացավ Խորհրդային Միության կողմից Թուրքիայի տարածքում 12 խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը, այդ թվում ք. Իսկենդերունում խոշորագույն մետալուրգիական կոմբինատի /տարին 2,2 մլն. տոննա պողպատ հզորությամբ/, ք. Խեդեշեքիրում ալյումինի գործարանի /տարին 60 հազ. տոննա ալյումին/, ք. Ալիաղայում նավթավերամշակող գործարանի /տարին 5 մլն. տոննա նավթ/, ծծմբաթթվային գործարանը ք. Բանդիրմայում /տարին 120 հազ. տոննա արտադրանք/, որոնք կազմեցին Թուրքիայի արդյունաբերության պետական սեկտորի հիմքը և մինչ օրս իրենց տեսակի մեջ հանդիսանում են խոշորագույ-

նը ամբողջ տարածաշրջանում:

1972 թ.-ին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ընդունվեց Հռչակագիր բարիդրացիական հարաբերությունների սկզբունքների մասին, իսկ 1977 թ.-ի մարտին կնքվեց թուրք-խորհրդային Համաձայնագիրը գիտատեխնիկական ու տնտեսական համագործակցության մասին:

1970-ական թվականների վերջում և 1980-ական թվականների սկզբում, ԽՍՀՄ-ի և Թուրքիայի երկկողմանի առևտրում մեքենաների ու սարքավորումների մասնաբաժինը զերազանցում էր քառորդ մասը, իսկ նավթի ու նավթամթերքի մասնաբաժինը կազմում էր Թուրքիա խորհրդային արտահանման գրեթե կեսը: Փոխարենը խորհրդային Միությունը Թուրքիայից գնում էր պարենամթերք ու սպառողական ապրանքներ, առաջին հերթին ընկույզ, կիտրոն, ինչպես նաև ծխախոտ:

Այդ ժամանակաշրջանի թուրք-խորհրդային առևտրա-տնտեսական կապերի վիճակը և դրանց նոր իմպուլսի հաղորդման փորձերը բավական ցայտուն ներկայացված են Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Ա. Ռոդիոնովի հիշողություններում[1]:

1984 թ.-ին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրվեցին Տնտեսական, առևտրային ու գիտատեխնիկական համագործակցության զարգացման երկարաժամկետ ծրագիրը /10 տարի ժամկետով/, Թուրք-խորհրդային համաձայնագիրը ապրանքափոխանակության մասին /1986 – 1990 թթ. ժամանակահատվածի վերաբերյալ/: 1986 թ.-ի հուլիսին երկկողմանի համաձայնագրեր ստորագրվեցին ԽՍՀՄ Պետպլանի ու Թուրքիայի Պետական պլանային կազմակերպության միջև, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում համագործակցության մասին:

1980-ական թվականների կեսերին ԽՍՀՄ-ում «վերակառուցման» տարիները նշանավորվեցին տնտեսական կապերի հերթական աշխուժացումով, մասնավորապես երկու երկրների միջև առևտրային փոխանակությամբ: Վերելքը կապված էր 1987 թ.-ից սկսված Թուրքիա ռուսական բնական գազի մատակարարման հետ,[2] մի խողովակաշարով, որն անցնում էր դեռևս այն ժամանակ ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող Ուկրաինայի ու Մոլդովայի, ինչպես նաև Ռումինիայի ու Բուլղարիայի տարածքներով: Շատ շուտով գազը դարձավ խորհրդային, իսկ այնուհետև նաև ռուսական արտահանման գլխավոր ապրանքը: Արդեն 1989թ.-ին դրա մասնաբաժինը Թուրքիա կազմում էր ամբողջ մատակարարման 36%-ը: Վրաստանի միջոցով Թուրքիա մատակարարվող նավթի, նավթամթերքի, ածխի ու էլեկտրաէներգիայի հետ մեկտեղ, նշված տարում էներգակիրների տեսակարար կշիռը կազմում էր 70%, ևս 11%-ը ընկնում էր քիմիական ապրանքների վրա, առաջին հերթին ամոնիակի, իսկ մոտավորապես 7%-ը սև մետաղների, այդ թվում 3%-ը կազմում էր ջարդոնի մասնաբաժինը: Մեքենաների ու սարքավորման մասնաբաժինը նվազեց մինչև 2%:

1987 թ.-ին դեպի Թուրքիա բնական գազի մատակարարման սկիզբը, նոր լիցք հաղորդեց երկու երկրների միջև գործարար համագործակցության զարգացմանը, վերջինիս հնարավորություն տվեց որոշակի առումով լուծել էներգակիրների անբավարարության հիմնախնդիրը, իսկ ԽՍՀՄ-ին և հետագայում նաև Ռուսաստանին խթանել դեպի ներքին շուկա թուրքական ապրանքների ու ծառայությունների մուտքը:

Ինչպես նշում են փորձագետները, հատկապես այդ շրջանում /1980-ա-

կան թվականների երկրորդ կեսին/ ձևավորվեց երկու երկրների երկկողմանի առևտրատնտեսական կապերի հումքային բնույթը, «որն, ըստ էության, քիչ փոփոխությունների ենթարկվեց արդեն անկախ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հետագա տասնամյակների առևտրում»[3]:

1980-ական թվականների վերջերի մի շարք համաձայնագրեր կարգավորում էին ռուսական գազի և այլ էներգակիրների մատակարարման դիմաց թուրքական ապրանքով վճարումների կարգը, ինչը Թուրքիային թույլ տվեց ոչ միայն զգալիորեն ավելացնել իր արտահանումը, այլ նաև էապես այն դիվերսիֆիկացնել: 1980-ական թվականների վերջերից երկրների միջև առևտրում կայուն միտում նկատվեց: Եթե ԽՍՀՄ-ի կողմից մատակարարումն իր բնույթով մնաց «հումքային», ապա ԽՍՀՄ-ին Թուրքիայի մատակարարման դիվերսիֆիկացիան ընդգրկեց նաև տեխնոլոգիական սարքավորման բավական լայն սեգմենտ: 1989 թ.-ին առևտրային հաշվեկշիռը առաջին անգամ թեքվեց հօգուտ Թուրքիայի: Բացի ավանդական պարենամթերքը /կիտրոն, ընկույզ, չամիչ/ Թուրքիան ավելացրեց մորթեղենի, տրիկոտաժի, կոշկեղենի մատակարարումը, սկսեց մատակարարել դեղորայք, օճառ և լվացող միջոցներ, ինչպես նաև մեքենաներ ու սարքավորումներ: 1980-ական թվականների վերջերից երկկողմանի արտաքին տնտեսական կապերի վիճակագրությունը սկսեց ընդգրկել նաև թուրքական շինարարական կազմակերպությունների կապալային աշխատանքների զգալի սեգմենտ ԽՍՀՄ-ում, իսկ հետագայում նաև Ռուսաստանում առևտրային, առողջապահական, մշակութային հաստատությունների ու բնակելի շենքերի կառուցում: Այդ աշխատանքների ծավալն արդեն 1990-ական թվականներին հասավ շոշափելի չափերի:

Հատկապես ռուսական գազի կանոնավոր ու կայուն մատակարարումը և Ռուսաստանում թուրքական կազմակերպությունների կողմից տարբեր օբյեկտների շինարարական ծառայությունները վերացնել գործընկերներին հնարավորություն տվեցին վստահորեն ու բավական կարճ ժամկետներում լուրջ փոփոխությունների բացասական հետևանքները, որոնք հանակել էին Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Ռուսաստանի անկախ զարգացման առաջին տարիներին արտաքին առևտրի պետական մենաշնորհից հրաժարումը, պետական արտաքին տնտեսական միավորումների ֆինանսական թուլացումը և դեպի արտաքին շուկա բազմաթիվ, սակայն սկզբնական շրջանում բավական անփորձ ու փոքր հզորության մասնավոր կազմակերպությունների մուտքը, հանգեցրեցին արտաքին առևտրափոխանակության լրջագույն անկմանը, տնտեսական համագործակցության կտրուկ նվազմանը, նախկին կապերի ու պարտավորությունների խախտմանը:

Այդ բացասական գործընթացների ազդեցությունը իրենց վրա լիովին կրեցին ռուս-թուրքական կապերը[4]: Խախտվեցին գազի վճարումների և թուրքական ապրանքների գնման պարտավորությունները, սառեցվեցին թուրքական ապրանքների գնման ու շինարարական ծառայությունների վճարման բանկային վարկերը, որպես ծանրակշիռ գործընկերներ կորսվեցին ռուսական պետական ներմուծողները: Սակայն, արդեն 1994 թ.-ին հաջողվեց վերականգնել առևտրա-տնտեսական հարաբերությունների նախկին ծավալները[5]:

Տնտեսական կապերի ամրապնդման հիմնապատկերի վրա երկու

երկրների քաղաքական հարաբերությունները 1990-ականների սկզբներին կրում էին փոխադարձ «կասկածամտության» որոշակի ծանրություն, որը հիմնականում սկիզբ էր առնում ԽՍՀՄ-ից և հետագայում ինքնիշխան Ռուսաստանից, վերջիններս մտավախություն ունեին, թե Թուրքիան կփորձի խորհրդային պետության փլուզումն օգտագործել իր նպատակների համար, որոնք անհամատեղելի են ռուսական պետականության տարածքային ամբողջականության հետ: Խնդիր էր առաջացել ԽՍՀՄ-ի, իսկ այնուհետև նաև Ռուսաստանի թուրքալեզու հանրապետությունների և Թուրքիայի միջև կապերը մտցնել փոխշահավետ բնույթի իրավա-քաղաքական շրջանակների մեջ: Այսպես, օրինակ, թուրք հեղինակները գտնում են, որ Թուրքիայի և Ռուսաստանի ներկայիս հարաբերությունների առաջին տարիները եղել են «առավել ջերմ», «առանձնանում էին զգալի փոփոխություններով», հաշվի առնելով այն, որ Խորհրդային Միության փլուզումը ժամանակի առումով համընկավ այդ շրջանի հետ: 1991 թ.-ի մարտի 5-ին Թուրքիայի և ԽՍՀՄ-ի նախագահներ Թ. Օզալը և Մ. Գորբաչովը Մոսկվայում Պայմանագիր ստորագրեցին Թուրքիայի ու Խորհրդային Միության միջև բարեկամության ու համագործակցության մասին: Այն երաշխավորում էր, որ «Թուրքիան իր շահերի համար չի օգտագործի ԽՍՀՄ-ում տեղի ունեցող փոփոխությունները»: 16-րդ և 17-րդ հոդվածները նախատեսում էին Թուրքիայի կապերի ընդլայնում ԽՍՀՄ-ի դաշնային հանրապետությունների հետ, որոնց թվում էին «Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը և Ադրբեջանը»: Թուրք հետազոտողները գրում են, որ այդ երկու հոդվածներով «Մոսկվան սատարեց Խորհրդային Միություն կազմող հանրապետությունների հետ կապերի հաստատումը»: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, 1992 թ.-ի մայիսի 25-ին ստորագրվեց նոր համաձայնագիր Ռուսաստանի Դաշնության և Թուրքական Հանրապետության միջև հարաբերությունների հիմունքների մասին: Ինչպես նշում են որոշ հեղինակներ, երկու համաձայնագրերն էլ նախատեսում էին «բարեկամ երկրներից յուրաքանչյուրի կողմից հարգանք, մյուս կողմի տարածքային ամբողջականության ու քաղաքական անկախության նկատմամբ, տարածաշրջանի հիմնախնդիրների շուրջ փոխադարձ խորհրդատվություններ, որոնք ներառում են նաև ռազմական խնդիրները, լայն համագործակցության հաստատում տնտեսական ու մշակութային ոլորտներում, համատեղ գործողություններ ահաբեկչության դեմ»: Այդ փաստաթղթերին հաջորդեցին բազմաթիվ այլ համաձայնագրեր, որոնք նախատեսում էին համագործակցություն երկու երկրների միջև տնտեսության, մշակույթի, գիտության և այլ բնագավառներում[6]:

Բաժին 2. Ռուս-թուրքական առևտրա-տնտեսական հարաբերությունները

«Սառը պատերազմի» ավարտից ի վեր աշխարհի և ոչ մի երկիր իր դիրքորոշումն ու դերը չի փոփոխել այնպես արագ, ինչպես դա կատարել է Թուրքական հանրապետությունը վերջին երկու տասնամյակների ընթացքում[7]: ԽՍՀՄ-ի փլուզման պահից Թուրքիան համայնավարական Ռուսաստանի դեմ Արևմուտքի աշխարհառազմավարական «անջրպետի» իր

դերը փոխարինեց աշխարհառազմավարական «կամուրջի» դիրքորոշմամբ, որը համապատասխանում էր աշխարհաքաղաքական նոր իրողություններին և մասնավորապես ենթադրում էր Թուրքիայի բաց լինելը երկկողմ ու բազմակողմ մակարդակների վրա փոխշահավետ տնտեսական նախագծերի իրականացման համար:

Թուրք հետազոտողները, որոնք որոշակի փուլում ներգրավվել էին երկրի նոր արտաքին քաղաքական օրակարգի ձևավորման մեջ, սկսեցին շեշտադրում կատարել Թուրքիայի աշխարհաքաղաքական ազդեցության ընդլայնման օբյեկտիվ գործոնի վրա և երկրի այն հավակնությունների վրա, որ Թուրքիան կարող է կատարել տարածաշրջանի «գլխավոր տարանցիկ» ուղու որակապես այլ աշխարհատնտեսական դեր, որը անփոխարինելի «ծառայություն» կարող է մատուցել Արևմուտքին ու Արևելքին նրանց միջև տնտեսական կապերի հաստատման ու ապահովման համակարգում: Բացի ամենը, տվյալ հարցի փաստարկման համար նշված հետազոտողները բերում են հետևյալ գործոնը. «Ռուսաստանի հավասարակշռումը հարավ-արևելյան ամբողջ գոտում /նկատի է առնված Մեծ Եվրոպայի հարավ-արևելքը ծանոթ. հեղ./, որն ընդգրկում է նաև Կովկասը»[8]:

Աշխարհառազմավարական հարցերում Թուրքիայի դիրքորոշումը մտածված «դիֆերսիֆիկացիայի» հավակնություն ունի մի կողմից, փոխշաղկապելով տարածաշրջանի գլխավոր դերակատարների ազգային մղումները, իսկ մյուս կողմից, ընդգծելով երկրի «անփոխարինելի» դերը նման փոխկապակցման մեջ «նյութական բազայի» ապահովման առումով /առաջին հերթին տնտեսական տարանցիկ տեսակետից/: Օրինակ, Սև ծովի խնդրի նկատմամբ Թուրքիայի դիրքորոշումը կրում է առավել «ռուսամետ» բնույթ, իսկ Թուրքիայի դիրքորոշումն արդեն Կովկասի խնդրում, պարունակում է Ռուսաստանին «հավասարակշռելու» անհրաժեշտության սկզբունքը, ինչը չի կարող չհամընկնել արտատարածաշրջանային այլ դերակատարների շահերի հետ:

Անցած դարավերջին ռուսական և թուրք հեղինակները փաստում էին, որ 20-րդ դարի վերջին տասնամյակը արմատապես փոխեց ռուս-թուրքական հարաբերությունների բնույթը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո դրանք ձեռք բերեցին նոր նշանակություն, հարաբերությունների բովանդակությունն ինքնին որակապես փոփոխվեց. Ռուսաստանն արդեն ԽՍՀՄ-ի մասշտաբի գերտերություն չէր, իսկ Թուրքիան ամբողջ աշխարհին մեծ հաջողությամբ համոզում էր, որ Ռուսաստանի հետ մեկտեղ, ինքը իր բազմամիլիոն բնակչության ու համեմատաբար զարգացած տնտեսության բազմաթիվ ցուցանիշներով նույնպես հանդիսանում է եվրասիական տարածքի խոշոր տերություններից մեկը: «21-րդ դարում Եվրասիայի աշխարհաքաղաքական շարժման ընթացքում ձևավորվում են ծանրության երկու բևեռներ Ռուսաստան-Թուրքիա առանցքի շուրջ...Եվրասիականությունը թերևս նոր գաղափար չէ Ռուսաստանի ու Թուրքիայի համար, սակայն այն առիթ է ստեղծում լավատեսության համար»[9]:

20-րդ դարի վերջում, Թուրքիայում երկրի նշանակության գնահատականները կրում էին լավատեսական, իսկ որոշ փորձագետների կարծիքով, որոշակիորեն ավարտուն բնույթ: Երկրում ֆինանսա-տնտեսական ճգնաժամի նախօրյակին այնտեղ հայտարարություններ էին հնչում Թուրքիայի տարածաշրջանային առաջատարի կարգավիճակի մասին: արտա-

տարածաշրջանային մասշտաբների դրա ընդլայնման ներուժով: Այս հայտարարությունները առավել համոզիչ հնչում էին 1998 թ.-ին սկսված տնտեսական ճգնաժամներից առաջ, որոնք ի հայտ էին եկել տարբեր պատճառներով և պահպանվել էին 2000 թվականի սկզբերին: Լավատեսությունն ու բարձր ինքնագնահատումը նախաճգնաժամային շրջանի թուրքական վերնախավի ներկայացուցիչների արտահայտությունների բնորոշ գծերն էին: Նման ինքնագնահատման նշաններ դեռևս կարելի էր նկատել մասնավոր սեկտորի ամենախոշոր կազմակերպության Թուրքիայի արդյունաբերողների, առևտրի պալատների ու բորսաների միության նախագահի ամենամյա զեկույցի դրույթներում /1999 տարվա ամփոփում/: Դրանում, մասնավորապես, ընգծվում էր, որ «Թուրքիան վերածվել է տարածաշրջանային ուժի Բալկանների, Սերձավոր Արևելքի ու Եվրասիայի տարածքում, նրա աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական նշանակությունը ամբողջ աշխարհում աստիճանաբար աճում է: Այդ իրողության բացահայտ վկայություններն են մեր մասնակցությունը G-20 նոր ձևաչափում[10], Կասպիական ավազանի բնական գազի ու նավթի Թուրքիա և նրա միջոցով դեպի արտաքին շուկաներ տեղափոխման խողովակաշարերի կառուցման համաձայնագրերը, Հելսինկիի խորհրդաժողովի ժամանակ ԵՄ-ին լիիրավ անդամակցությանը մեր թեկնածության ընդունումը առանց նախապայմանների...Թևակոխելով 21-րդ դար մենք բախվում ենք ոչ միայն լուրջ դժվարությունների, այլև օժտված ենք կարևորագույն առավելություններով ու հնարավորություններով: Ուստի, ես խորապես համոզված եմ, որ մեր օրերում, երբ գլխապտույտ արագությամբ զարգանում են գիտությունն ու ինֆորմատիկան, Թուրքիան օգտագործելով իր մրցունակ տնտեսական կառուցվածքը, խրախուսելով անհատական նախաձեռնությունը, բարձր արտադրողականությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և արտահանման կողմնորոշումը, կկարողանա իր երկրում զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաները, ընդլայնել Ինտերնետի օգտագործումը, կդառնա ամբողջ աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունների էլ ավելի ակտիվ անդամը»[11]:

Հարկ է նշել, որ հաջորդած երկու-երեք տարիների ընթացքում Թուրքիայի տնտեսության մեջ ու ֆինանսներում ծագած անբարենպաստ երևույթները այդպես էլ հնարավորություն չտվեցին թուրքական փորձագետներին վերջնականապես որոշել, թե որքանով են կայուն ու անդառնալի երկրի տնտեսական ծեռքբերումները, արդյո՞ք կանխավ չափազանցված չէ երկրի հաջողությունների գնահատականը 21-րդ դարի սկզբում[12]:

Գլուխ 1. Ռուս-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունները 1991թ.-ից մինչև 2000թ.-ը

1990-ական թվականներին Թուրքիայի ու Ռուսաստանի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը նշանավորվեց համագործակցության գործնականում բոլոր բաղկացուցիչների ակտիվ դինամիկայով, որոնցից կարևորներն էին առևտուրը /նորմատիվային ու «մաքքային»/, շինարարությունը և ներդրումային գործունեությունը:

1. Առևտրային հարաբերությունները

1990-ական թվականների ընթացքում Թուրքիայի ու Ռուսաստանի միջև ապրանքափոխանակության դինամիկան ցուցաբերեց բավական կայուն աճի միտում, ընդհուպ մինչև 1998 թ.-ը /Ռուսաստանում ֆինանսա-տնտեսական ճգնաժամի տարին/, ըստ որում, ապրանքային փոխանակման ծավալով /առանց «մաքքային» առևտրի հաշվառման/ Ռուսաստանը Թուրքիայի առևտրային գործընկերների շարքում գրավեց երրորդ-չորրորդ տեղերը:

1990-ական թվականներին երկկողմանի առևտրի ծավալների աճի առանցքային գործոն հանդիսացավ 1984 թ.-ին ստորագրված թուրք-խորհրդային համաձայնագիրը Թուրքիա բնական գազի մատակարարման մասին, համաձայն որի /ինչպես նաև, ըստ ԽՍՀՄ-ի այլ միջազգային պայմանագրերի/ Ռուսաստանի Դաշնությունը հանդես էր գալիս որպես իրավահաջորդ: Թուրքիա բնական գազի մատակարարումը, որը 1987 թ.-ից սկսվել էր 0,4 մլրդ. խոր.մ. ծավալով, 1994 թ.-ին հասավ նախագծային հզորությանը 6 մլրդ. խոր.մ:

Եթե 1991 թ.-ին երկու երկրների միջև առևտրային փոխանակությունը կրճատվեց մինչև 751 մլն. դոլար, ապա արդեն 1992 թ.-ին նախնական պարտավորությունների կատարման հաշվին, այն աճեց մինչև 1,1 մլրդ., իսկ 1993 թ.-ին մինչև 1,7 մլրդ: 1994 թ.-ին այն կրկին կրճատվեց մինչև 1,4 մլրդ. դոլարի, իսկ 1995 թ.-ին աճեց 56 %-ով կամ մինչև 2,2 մլրդ. դոլար: Ինչպես և նախկինում, ռուսական արտահանման հիմքը կազմում էր գազը, իսկ ներկրմանը սպառման ապրանքներն ու շինարարական ծառայությունները:

1990-ական թվականների կեսերից մինչև 2000 թ.-ը Թուրքիայի հետ առևտրային շրջանառության ցուցանիշները /ըստ Ռուսաստանի Դաշնության Պետական մաքսային կոմիտեի տվյալների/ տարեցտարի ենթարկվեցին էական տատանումների:

Ռուսաստանի առևտուրը Թուրքիայի հետ
/ռուսական արտաքին տնտեսական վիճակագրություն, մլն. դոլար/

	1996	2000	1996 - 2000
Ապրանքաշրջանառությունը	2281	3447	12915
Ռուսաստանի արտահանումը	1686	3098	10334
Ռուսաստանի ներմուծումը	595	349	2581
Հաշվեկշիռը	1091	2749	7753

Թուրքիայի առևտուրը Ռուսաստանի հետ
/թուրքական արտաքին տնտեսական վիճակագրություն, մլն. դոլար/[13]

	1996	2000	1996 - 2000
Ապրանքաշրջանառությունը	3433	4492	18621
Թուրքիայի ներմուծումը	1921	3864	12488
Թուրքիայի արտահանումը	1512	628	6133
Հաշվեկշիռը	-409	-3236	-6355

Այսպես, 1996 թ.-ին առևտրային շրջանառության արժեքը կազմել է 2,3 մլրդ. դոլար, 1997 թ.-ին այն աճել է մինչև 2,8 մլրդ.-ի, սակայն 1998 թ.-ին նվազել է մինչև 2,4 մլրդ.-ի, և 1999 թ.-ին իջել է մինչև 1,9 մլրդ-ի: Նման անկումը բացատրում են Ռուսաստանի ֆինանսական ճգնաժամով և մասամբ նաև Թուրքիայում անկայուն ներքաղաքական իրավիճակով: Ընդհանուր առմամբ 1996-2000 թթ.-ին Ռուսաստանի արտաքին առևտրում Թուրքիայի տեսակարար կշիռը կազմել է 2 %: Ըստ թուրքական տվյալների, 1996-2000 թթ.-ին երկրի արտաքին առևտրի միայն 5,1 %-ն էր բաժին ընկնում Ռուսաստանին, այդ թվում 4,7 %-ը արտահանման, 5,4 %-ը ներկրման և 6,2 %-ը առևտրային հաշվեկշռի բացասական սալդոյին[14]:

Մինչև 1994 թ.-ը պահպանվում էր թուրքական ապրանքների մատակարարմամբ ռուսական գազի վճարի դիմաց մասնակի մարման պրակտիկան, ինչը բավական նպաստեց դեպի թուրքական ապրանքների Ռուսաստան արտահանման զարգացմանը: Սակայն, 1994 թ.-ին Ռուսաստանը՝ հղում կատարելով երկրում ընդհանուր տնտեսական փոփոխությունների վրա, թուրքական կողմին դիմեց համաձայնագրի համապատասխան կետի փոփոխման առաջարկությամբ գազի մատակարարման դիմաց վճարումները կատարել բացառապես ազատ փոխարժեքային տարադրամով: Դրան անմիջապես հաջորդեց գազի դիմաց թուրքական ապրանքների գնման ռուսական կողմի հրաժարումը: Թուրքական կողմն իր հերթին ստիպված էր հաշտվել նոր իրավիճակի հետ:

Ռուսաստանից թուրքական ներկրման հիմնական հոդվածներն էին էներգակիրները, մետաղագլոցը, քիմիական պարարտանյութերը, անտառն ու սղոցանյութերը: Թուրքիայի արտահանումը Ռուսաստան ներկայացված էր սպառման ապրանքների լայն սպեկտրով, այդ թվում տեքստիլ արտադրանքով, պատրաստի հագուստով, պարենամթերքով, ավտոտրանսպորտային միջոցներով և այլն: Պարենամթերքի մի շարք տեսակներ, այդ թվում միս-կաթնամթերքային արտադրանքը, որը կարող էր ներկա լինել թուրքական արտահանման կառուցվածքում, այդ ժամանակահատվածում արգելված էր ներմուծել Ռուսաստան:

Բացի արտահանման ու ներմուծման ավանդական հոդվածները, երկու կողմերը ձգտում էին ապրանքափոխանակության մեջ ներառել նոր ապրանքներ: Մասնավորապես, կողմերը մեծ հաջողություն համարեցին 1993 թ.-ին սկսված ռազմատեխնիկական համագործակցությունը: 1993-1995 թթ.-ի ընթացքում Թուրքիային մատակարարվեց ռազմատեխնիկական բնույթի տարբեր արտադրանք՝ 114 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ:

Ռուսաստանի արտաքին առևտրի համակարգի ազատականացումը՝ երկրում սպառողական ապրանքների խիստ պակասի հետ մեկտեղ, Ռուսաստանում թուրքական արտադրանքի անկասկած մրցունակությունը՝ իր համեմատաբար էժան գներով պայմանավորված, երկու երկրների աշխարհագրական մոտիկությունը, հնարավորություն տվեցին թուրքական բազմաթիվ ընկերությունների ամրանալ ռուսական ծավալուն շուկայում:

Ռուսաստան Թուրքիայի արտահանման հիմնական հոդվածները /մլն. դոլար/

Ապրանքի անվանումը	1996	1997	1998	1997/1998 դինամիկան, %
Ավտոտրանսպորտային միջոցներ	118	96	20	-79
Էլեկտրակենցաղային ապրանքներ	77	78	47	-39
Պլաստմասե արտադրանք	68	95	69	-27
Լվացող միջոցներ	85	94	69	-26
Տրիկոտաժե հագուստ և պիտույքներ	191	368	215	-41
Տեքստիլ հագուստ և պիտույքներ	168	219	110	-50
Կոշկեղեն	68	116	90	-23
Կաշվե արտադրանք	16	40	34	-14
Հրուշակեղեն, մակարոնեղեն	98	140	80	-43
Շաքար և շաքարե հրուշակեղեն	71	66	42	-36
Բուսական յուղ	7	19	29	50
Պտուղ և բանջարեղեն	24	43	40	-7
Ցիտրուսային պտուղներ	43	40	40	0
Այլ պարենամթերք	14	20	21	5
Կահույք	18	17	12	-27
Ներկեր, լաքեր	16	23	17	-23
Այլ	413	576	412	-28
Ընդամենը	1493	2050	1347	-34

Ռուսաստանից Թուրքիայի ներկրման հիմնական հոդվածները /մլն. դոլար/

Ապրանքի անվանումը	1996	1997	1998	1997/1998 դինամիկան, %
Բնական գազ *	521	637	503	-21
Նավթամթերք	179	107	87	-19
Քարածուխ	160	150	182	21
Սեմեստաղյա արտադրանք, մետաղագլոց, մետաղաջարդված	351	583	585	0,1
Ալյումին և արտադրանք	41	74	107	44
Ցինկ և ցինկե արտադրանք	17	43	46	7
Պղինձ և պղնձե արտադրանք	13	41	44	9
Սղոցանյութեր	65	56	74	32
Թուղթ, ստվարաթուղթ	105	61	85	40
Պոլիպրոպիլեն	24	20	26	30
Կաշվե հումք*	29	32	23	-30
Հանքային պարարտանյութեր	57	25	81	59
Արևածաղկի սերմեր	140	61	85	40
Այլ	198	284	224	-21
Ընդամենը	1900	2174	2152	-1

* 1999 թ.-ին Ռուսաստանը արգելք մտցրեց դեպի Թուրքիա կաշվե հումքի արտահանմանը

Ռուսաստան արտահանում իրականացնող
թուրքական առևտրային ընկերությունների քանակը

Տարին	Ընդհանուր քանակը	100 հազ. դոլար արժողությամբ մատակարարումը գերազանցող ընկերությունների քանակը
1994	1819	637
1995	2129	895
1996	2774	1023
1997	2939	1234
1998	2400	1050

1998 թ.-ի կեսերին մոտ 400 թուրքական ընկերություններ իրենց ներկայացուցչություններն ունեին Ռուսաստանում և ավելի քան 100 ռուսական ընկերություններ Թուրքիայում /1999 թ.-ի կեսերի դրությամբ թուրքական ներկայացուցչությունների քանակը Ռուսաստանում կրճատվեց մինչև 250-ի, իսկ ռուսականներինը Թուրքիայում՝ մինչև 40-ի/:

Ռուսական շուկայում թուրքական ապրանքների ներկայության ընդլայնմանը նպաստեց նաև այն, որ 1991-2000 թթ.-ին Ռուսաստան արտահանման մեջ Թուրքիան օգտվում էր արտոնյալ /պրոֆերենցիալ/ համակարգից. մինչև 1995 թ.-ը թուրքական ապրանքների, ինչպես նաև այլ զարգացող երկրների ապրանքների ներկրման տուրքերը ընդհանուր մակարդակից ցածր էին 50 %-ով, իսկ 1995 թ.-ից մինչև 1999 թ.-ի սկիզբը 25%-ով:

Այսպիսով, երկկողմանի առևտրի աճը ապահովվում էր ինչպես Ռուսաստան թուրքական արտահանման աճի, այնպես էլ ՈԴ-ից Թուրքիա ապրանքների ներկրման հաշվին, ըստ որում երկկողմանի պաշտոնական առևտրի հաշվեկշիռը ընդհուպ մինչև 1997 թ.-ը հանգում էր ռուսական կողմի առավելությանը: Մինչև 1997 թ.-ը երկու երկրների առևտրի հաշվեկշռի շեղումն աստիճանաբար նվազելով մոտեցավ զրոյի: Ամենայն հավանականությամբ, երկկողմանի հարաբերություններն իրենց վրա կրեցին տարադրամի փոխարժեքի բարձրացման քաղաքականության ազդեցությունը, որը վարում էր Ռուսաստանը մինչև 1998 թ.-ը: Այդ քաղաքականության արդյունքում տեղի ունեցավ ներկրվող ապրանքների էժանացում ռուսական շուկայում, որը նպաստեց ներկրման աճին, այդ թվում նաև Թուրքիայից:

1998 թ.-ի երկրորդ կեսին ռուսական տնտեսությանը հասցված ճգնաժամը, որը հանգեցրեց ռուբլու բազմակի արժեզրկմանը, պայմանավորեց Ռուսաստան Թուրքիայից արտահանման ծավալների կտրուկ նվազմանը /1998 թ.-ին մինչև 35 % և 1999 թ.-ին մինչև 70%/:

Բացի այդ, 1999 թ.-ի ապրիլից էապես կրճատվեց այն ապրանքների ցանկը, որոնք զարգացող երկրներից Ռուսաստան ներկրման ժամանակ օգտվում էին արտոնյալ համակարգից: Միևնույն ժամանակ Թուրքիայի ներքին շուկա ավանդաբար ներկրվող ապրանքների էժանացումը հանգեցրեց թուրք ներկրողների ակտիվության բարձրացմանը, որի արդյունքում 1998 թ.-ին ներկրման ֆիզիկական ծավալը նույնիսկ որոշ առումով գերազանցեց 1997 թ.-ի ցուցանիշը, չնայած որոշ հոդվածներով արժեքային ցուցանիշները նվազեցին:

2. Մաքոքային առևտուրը

Մինչև 1998 թ.-ի կեսերը երկկողմանի առևտրային հարաբերությունների կարևոր բաղկացուցիչը հանդիսանում էր այսպես կոչված «մաքոքային» առևտուրը:

«Մաքոքային» առևտրի ծագումն ու զարգացումը բացատրվում է անցումային շրջանի տնտեսական յուրահատկությամբ, որի մեջ Ռուսաստանը մուտք գործեց 1990-ական թվականների սկզբին: Առևտրի նշված տեսակը /բացի Թուրքիան, դրա մեջ ընդգրկվեցին նաև Չինաստանը, Հարավային Կորեան, Լեհաստանը և այլ երկրներ/ որոշակի դրական դեր կատարեց դատարկված ռուսական սպառողական շուկան հագեցնելով բավական քանակի մատչելի գների ապրանքներով: Սակայն, ցածր գները, որը և մեծամասամբ պայմանավորում էր թուրքական արտադրանքի էժանությունը, թուրքական ապրանքի համար ցածրորակ կայուն կերպարի խնդիր ստեղծեցին: Ըստ որում, թուրքական հեղինակավոր ընկերությունների համար դժվարացավ գնորդին սեփական արտադրանքի արժանի որակը հասցեյու խնդիրը:

Ըստ պաշտոնական տերմինաբանության «մաքոքային» առևտուրը Ռուսաստանում ստացավ «չկազմակերպված» անվանումը: Թուրքիայից ներկրում էին և շարունակում են ներկրել կաշվե արտադրանք, մորթեղեն, կոշկեղեն, հագուստ և սպառման այլ ապրանքներ: Նման գնումների ծավալի որոշումը գեթ մոտավոր հավաստիությամբ գործնականում անհնար է:

«Մաքոքային» առևտուրը առաջին շրջանում կարևոր դեր կատարեց Ռուսաստանի ներքին շուկան լայն սպառման ապրանքներով հագեցման խնդրում, զբաղվածություն ապահովեց տասնյակ, եթե ոչ հարյուր հազարավոր ռուսաստանցի քաղաքացիների համար: Դրա հետ մեկտեղ, ներկրված համեմատաբար էժան ապրանքների մուտքը շուկա խորացրեց ռուսական թեթև արդյունաբերության ճգնաժամը, զրկեց պետությանը մաքսային եկամուտների զգալի հոսքերից:

Ռուսաստանի և Թուրքիայի առևտրատնտեսական համագործակցության երկկողմանի օրակարգում 1990-ական թվականների կեսերին հրատապ դարձավ «մաքոքային առևտրի» տեղափոխումը փոխշահավետ բնույթի շրջանակների մեջ, որտեղ թուրքական ընկերությունների շահերը հակասության մեջ չէին մտնի «մաքոքային տեսականու» ռուսական արտադրողների շահերի հետ: Այսպես, 1996 թ.-ի վերջին ռուսական տնտեսական մամուլը գրում էր Թուրքիայի հետ «մաքոքային առևտրով» պայմանավորված մի շարք հիմնախնդիրների կարգավորման Ռուսաստանի ցանկության մասին. «Հաշվի առնելով Թուրքիայից «մաքոքային ներկրման» մեծ ծավալները /տարին շուրջ 5 մլրդ. դոլարի/ թույլ է տալիս եզրակացնել, որ Ստամբուլը վերածվել է Ռուսաստանի արտաքին առևտրային գլխավոր գործընկերներից մեկի մրցակցելով Գերմանիայի և Չինաստանի հետ: «Մաքոքային առևտուրը» խիստ ծեռնտու է թուրքական տնտեսությանը, ուստի Ստամբուլը պատրաստվում է էլ ավելի պարզեցնել արտահանման գործառույթները թուրքական մասնակիցների համար: Իսկ Ռուսաստանի համար թուրքական ներկրման այդ հսկայական հոսքը էլ ավելի է վերածվում մի գործոնի, որը խանգարում է արդյունաբերական ոլորտների զարգացմանը: Մաքսային տուրքերի բարձրացմամբ միայն հնարավոր

չէ լուծել խնդիրը, և անհրաժեշտ է համալիր ու համակարգային մոտեցում, որը կշոշափի և հարկման ոլորտը, և ռուսական արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ թուրքական ներդրումների հոսքը»[15]:

Թուրքիայի համար «մաքոքային առևտուրը» արտահանման ու Ռուսաստանի հետ պաշտոնական առևտրում առկա առևտրային հաշվեկշռի մշտական դեֆիցիտի փոխհատուցման կարևորագույն տարր հանդիսացավ:

Ռուսաստանի մաքսային օրենսդրության քիչ թե շատ վերջնական ձևավորումը և դրա հետ կապված երկրի սահմաններում մաքսային հսկողության խստացումը, տեղական արտադրության որոշ աշխուժացումը, պատճառ հանդիսացան, որ «մաքոքային առևտուրն» աստիճանաբար կորցրեց իր նշանակությունը: Առևտրի տվյալ տեսակի շրջանակներում թուրքական ապրանքների մատակարարման ծավալների նվազումը սկսվեց դեռ 1997 թ.-ից /այդ տարի նկատվեց մատակարարման ծավալի նվազում 7-8 %-ով/: Այդ կապակցությամբ թուրքական իշխանությունները որոշ միջոցներ ձեռնարկեցին, որոնք ուղղված էին «մաքոքային» գործառույթների ծավալների սատարմանը, ինչպես նաև «մաքոքային առևտրի» տեղափոխմանը ավելի քաղաքակիրթ հունի մեջ: Մասնավորապես, որոշում կայացվեց Ռուսաստանի մի շարք խոշոր քաղաքներում տարածքային թուրքական առևտրի կենտրոնների ստեղծման մասին /առաջինը բացվեց Դոնի-Ռոստովում 1999 թ.-ի գարնանը/: 1998 թ.-ի ռուսական ֆինանսատնտեսական ճգնաժամը որոշ ժամանակով մասնակիորեն արդիականացրեց «մաքոքային առևտրի» նշանակությունը:

ՄԱՀ-ի /ՄԲՓ/ համար նախապատրաստված Թուրքիայի Կենտրոնական Բանկի հաշվետվության մեջ բերված որոշ գնահատականներով «մաքոքային» բիզնեսը 1990-ական թվականների միջին մասում, յուրաքանչյուր տարի Թուրքիային ապահովում էր 8-10 մլրդ. դոլարի արժութային հասույթ: Ըստ Մանր արտադրողների միության գնահատականների, համապատասխան եկամուտները կազմել էին տարեկան 20-25 մլրդ. դոլար[16]:

2000 թվականի սկզբներին, «մաքոքային առևտրից» ստացված հսկայական դիվիդենտներով պայմանավորված թուրքական կողմի լավատեսական տրամադրություններն այն աստիճան զգալի էին, որ դա որոշ հայտնի թուրքական փորձագետների առիթ տվեց խոսել Թուրքիայի «մաքոքային» հիմնական գործընկերների հետ առևտրային կապերի խորացման նախապատվության մասին ԵՄ-ի հետ առկա մաքսային միության հիման վրա արտաքին առևտրային ամբողջ քաղաքականության կառուցման փոխարեն: Թուրքիայում գոյություն ունի քաղաքական ու տնտեսական լոբբի, որը հիմնվելով նման տեսակի առևտրի գոյության վրա, պնդում է, որ թուրքական տնտեսությունը ավելի կշահի, եթե համաձայնագրեր հաստատի ազատ առևտրի մասին այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Ռուսաստանը, Իրանը, Չինաստանը և Հնդկաստանը[17]:

3. Ռուսական էներգակիրների մատակարարումը Թուրքիա

2001 թ.-ին Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը հայտարարեց, որ «ռուս-թուրքական հարաբերությունների շարժիչ ուժը որոշ առումով հանդիսանում է էներգետիկան»[18]:

1986 թ.-ից սկսած ԽՍՀՄ-ից, իսկ հետո նաև Ռուսաստանից, նավթի գնումները Թուրքիայի կողմից տատանվում էին թուրքական ամբողջ նավթի ներկրման արժեքի 1,1 – 4,3 % սահմաններում /միայն 1990 թ.-ին մինչև 10,4 %-ի աճ դիտվեց/: Ռուսաստանից Թուրքիայի ներկրած նավթի արժեքները 1993, 1994 և 1995 թթ.-ին համապատասխանաբար կազմեցին 126,3 մլն., 27,3 և 182,5 մլն. դոլար:

1990-ական թվականներին նավթի թուրքական ներկրումը գազի ներկրումից տարբերվում էր այդ նավթի մատակարարման աղբյուրների պարբերական փոփոխություններով: Պարսկական ծոցի ճգնաժամը և Իրաքի նկատմամբ տնտեսական էմբարգոն հանգեցրեցին նրան, որ դեպի Թուրքիա նավթի մատակարարման Իրաքի առաջատարությունը փոխարինվեց Սաուդյան Արաբիայի առաջատարությամբ: Ռուսաստանը նավթի թուրքական ներկրման մեջ, օրինակ 1993 և 1994 թթ.-ին, ուներ համապատասխանաբար 5 և 1,1 % մասնաբաժին՝ այդպիսով զբաղեցնելով չորրորդ և հինգերորդ տեղերը:

1990-ական թվականների կեսերից ռուսական էներգակիրների Թուրքիա մատակարարման հիմնական հոդվածը՝ բնական գազն էր /1997 թ.-ին - 637,7 մլն. դոլ., 1999 թ.-ին 609 մլն. դոլար/, դրան հաջորդում էր քարածուխը /1997 թ.-ին – 154,2 մլն. դոլ., 1999 թ.-ին 165 մլն. դոլար/ և նավթամթերքը /1997 թ.-ին – 107,5 մլն. դոլ., 1999 թ.-ին 366,5 մլն. դոլար/:

- Ռուս-թուրքական գազային համագործակցությունը

ԽՍՀՄ-ից Թուրքական Հանրապետություն բնական գազի մատակարարման առաջին համաձայնագիրը ստորագրվել է 1984 թ.-ին, որը գործում է 1987 թ.-ից 25 տարի ժամկետով: Այսպես կոչված Տրանսբալկանյան գազամուղն անցնում է Ուկրաինայի, Ռումինիայի և Բուլղարիայի տարածքներով դեպի Թուրքիայի եվրոպական հատվածը, իսկ այնտեղից՝ դեպի Անկարա: Գազամուղի արդիականացման ու ենթակառույցների տեխնիկական կատարելագործման շնորհիվ, նրա նախնական թողունակությունը 6 մլրդ.խոր.մ.-ից այժմ հասել է մինչև 14 մլրդ.-ի: Օրինակ, 2003 թ.-ին Տրանսբալկանյան գազամուղով Թուրքիա մուտք է գործել 11,4 մլրդ.խոր.մ. բնական գազ[19]:

Եթե 1996 թ.-ին ռուսական գազի սպառողների ցանկում Թուրքիան գտնվում էր 11-րդ տեղում, ապա 1997 թ.-ին նա տեղափոխվեց 6-րդ տեղը /6,7 մլրդ.խոր.մ./ զիջելով Գերմանիային /32,5 մլրդ.խոր.մ./, Իտալիային /14,2 մլրդ.խոր.մ./, Ֆրանսիային /10,9 մլրդ.խոր.մ./, Չեխիային /8,4 մլրդ.խոր.մ./, Սլովակիային /7,0 մլրդ.խոր.մ./:

1997 թ.-ի վերջին սկսվեց ռուս-թուրքական գազային համագործակցության նոր ժամանակաշրջան: Կարելի է փաստել, որ ռուս-թուրքական «գազային երկխոսության» ինտենսիվացմանը նպաստեց այլ էներգակիրի /նավթի/ տեղափոխման ուղիների շուրջ երկու երկրների միջև առկա զգալի հակասությունը, ինչպես նաև դեպի համաշխարհային շուկաներ կասպյան տարածաշրջանի նավթի տեղափոխման ուղիների վերաբերյալ արտատարածաշրջանային հիմնական դերակատարների շահերի 1990-ական թվականների կեսերին ստեղծված դասավորությունը: Ռուսական շահերի տեսանկյունից լավագույնը հանդիսացող նախագծի իրականացումը, այն է՝ գոյություն ունեցող ռուսական նավթուղիների համակարգով դեպի Նովոռոսիյսկ, իսկ

այնուհետև ծովով դեպի լայն միջազգային շուկա նավթի տեղափոխման նախագիծը, բավական բարդացավ Բոսֆորով ու Դարդանելով նավթատար նավերի շարժման սահմանափակմանն ուղղված Թուրքիայի դեմարշով:

1990-ական թվականների կեսերից մշտապես աճում էին տարածայնությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև նեղուցների հիմնախնդրի շուրջ: Սուր տարածայնություններ դրսևորվեցին մի կողմից Ռուսաստանի, Հունաստանի և Կիպրոսի, իսկ մյուս կողմից Թուրքիայի միջև 1998 թ.-ի օգոստոսին Լոնդոնում կայացած Միջազգային ծովային կազմակերպության նիստի ժամանակ: Պաշտպանելով Սևծովյան նեղուցների ռեժիմի հետ կապված իր դիրքորոշումները, Թուրքիան շեշտը դնում էր դրանց սահմանափակ հնարավորությունների և այն գործոնների վրա, որոնք կապված են Ստամբուլի բնակչության վիճակի, շրջապատող միջավայրի հետ: Ռուսաստանը չէր վիճարկում նեղուցներում անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, սակայն շարունակում էր պնդել նավարկության ռեժիմի մեղմացման և առաջին հերթին տեխնիկական միջոցներով այդ հիմնախնդրի լուծման վրա: Ռուսաստանի պահանջները մասամբ բավարարվեցին 1998 թ.-ին, երբ Թուրքիան որոշ չափով մեղմացրեց նեղուցներով նավագնացության Ռեգլամենտը: Այնուամենայնիվ, ռուսական կողմը շարունակում էր պնդել Թուրքիայի կողմից նեղուցներում նավարկության սահմանափակումների հետևանքով հասցված կորուստների անթույլատրելիության վրա, և որպես իր դիրքորոշման հիմնավորում բերում էր նավարկության սահմանափակումների հետ կապված սեփական կորուստների գնահատականները. 1994-2000 թթ.-ին այն կազմել էր 800 մլն. դոլար[20]:

Ռուսական կողմը նեղուցներով տրանսպորտի շարժման կարգի փոփոխությունների բնապահպանական մոտիվացիան համարելով խիստ տարակուսելի, համոզված է, որ առաջին հերթին դրանք ուղղված էին նրան, որպեսզի շեղեն կասպիական նավթի տեղափոխման շեշտադրումը ի օգուտ Թուրքիայի տարածքի: Քանի որ սևծովյան նեղուցների հիմնախնդրի պարզաբանումը դիվանագիտական ճանապարհով կրում էր բավական լարված բնույթ և բավարար արդյունքներ չէր տալիս, ռուսական ղեկավարությունը, ամենայն հավանականությամբ, որոշեց հիշել Թուրքիայի հետ քաղաքական հարաբերությունների կարգավորման հին փորձը տնտեսական համագործակցության ընդլայնման ճանապարհը[21]:

1997 թ.-ի դեկտեմբերին այցով Թուրքիա ժամանեց ռուսական վարչապետ Վ. Չերնոմիրդինը: Պաշտոնապես այցի նպատակը տնտեսական համաձայնագրերի ծավալուն փաթեթի ստորագրումն էր, այդ թվում նաև՝ ի հավելումն արդեն գործողի, Սև ծովի ջրային տարածությամբ դեպի Թուրքիա, ռուսական բնական գազի մատակարարման նոր համաձայնագիրը, որը հեռանկարում՝ 2007 թ.-ից, պետք է ապահովեր մատակարարման տարեկան 16 մլրդ.խոր.մ. ծավալ: Այդ նախագիծը ստացավ «Երկնագույն հոսք» անվանումը:

Գազամուղի երթուղին է. Իգոբիլնոյե /Ստավրոպոլի երկրամաս/ - Արխիպո-Օսիպովկա /Սև ծովի ռուսական ափ, Կրասնոդարի երկրամաս/ - Սամսուն /Սև ծովի թուրքական ափ/ - Անկարա: Գազամուղի ընդհանուր երկարությունը 1213 կմ է, որի ռուսական տեղամասի ցամաքային հատվածը Իգոբիլնի քաղաքից մինչև Արխիպո-Օսիպովկա գյուղը 373 կմ է, ծովային հատվածը մինչև «Դուսուսու» տերմինալը, որը տեղակայված է

Սամսունից 60 կմ հեռավորության վրա 396 կմ, իսկ թուրքական կողմի ցամաքային հատվածի երկարությունը՝ 444 կմ /Սամսունից մինչև Անկարա/:

Երկրների միջև ստորագրված միջպետական համաձայնագրի շրջանակներում «Գազպրոմը» պայմանագիր է կնքել թուրքական «Բոթաշ» ընկերության հետ 25 տարվա ընթացքում «Երկնագույն հոսք» գազամուղով դեպի Թուրքիա 365 մլրդ.խոր.մ. գազի մատակարարման մասին: Գազամուղի շինարարության ավարտից հետո[22] թուրքական կողմը ի դեմս «Բոթաշի» պահանջեց վերանայել գները և զգալիորեն նվազեցնել վառելիքի մատակարարման պլանավորված ծավալները:

«Երկնագույն հոսք» նախագծի իրացման ավարտի պահին Ռուսաստանի և Թուրքիայի գազային հարաբերությունները բախվեցին մի հիմնախնդրի հետ: Թուրքիայի կողմից առաջնային էներգակիրների սպառման տեմպերի աճի նախնական հաշվարկները չափից դուրս լավատեսական գտնվեցին: Այսպես, արդեն 1998-2000 թթ.-ին, համաձայն Թուրքիայի Պետական վիճակագրական ինստիտուտի տրամադրած տվյալների, առաջնային էներգակիրների սպառման տարեկան միջին աճի տեմպերը նվազեցին 5,4 %-ով, 1994-1997 թթ.-րի 6,8 %-ի փոխարեն[23]:

4. Շինարարության ոլորտը

Երկկողմանի տնտեսական կապերի կարևոր կողմերից է միմյանց տարածքներում շինարարական պատվերների կատարումը: Ռուսաստանում թուրքական շինարարական ընկերությունների գործունեությունը նկատելիորեն ակտիվացավ 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին: Դրան մեծ չափով նպաստեց համաձայնությունն այն մասին, որ Թուրքիա մատակարարված բնական գազից ստացված հասույթի մի մասը ռուսական կողմը կօգտագործի ԽՍՀՄ-ի, իսկ հետագայում արդեն Ռուսաստանի տարածքում սոցիալական ու արտադրական նշանակության մի շարք օբյեկտների թուրքական կապալառու ընկերությունների ուժերով շինարարության ֆինանսավարման համար: Արևելյան Գերմանիայից խորհրդային զորքերի դուրս բերման հետ միաժամանակ, զինծառայողների ընտանիքների համար նախկին ԽՍՀՄ-ի սահմաններում բնակարանային համալիրների արագ կառուցման անհրաժեշտություն առաջացավ: Ընդորում, նման աշխատանքների համար հայտարարված մրցույթների զգալի մասը շահեցին թուրքական ընկերությունները:

Թուրքական ընկերությունների ակտիվության գագաթնակետը 1994-1997 թթ.-ն էին, երբ Ռուսաստանի տարածքում աշխատում էին մինչև 80 շինարարական ընկերություններ, այդ թվում այնպիսի խոշորները, ինչպիսիք էին «Էնկան», «Ալարկոն», «Բայթուրը» և այլն:

Ռուսաստանում թուրքական կապալառուների պատվերների փաթեթը 1990-ական թվականների կեսերին գնահատվում էր 5-6 մլրդ. դոլար: Մոսկվայում, Ստավրոպոլի երկրամասում և Ռուսաստանի այլ շրջաններում, տարբեր օբյեկտների շինարարությունների վրա աշխատում էին ավելի քան 10 հազ. թուրք շինարարներ, ինժեներներ և տեխնիկներ24:

1998 թ.-ի հուլիսի դրությամբ, թուրքական 138 ընկերություններ աշխատում էին շինարարական 533 նախագծերի իրականացման վրա, որոնց ընդ-

հանուր արժեքը կազմում էր 9246 մլն. դոլար, ընդ որում 100 մլն. դոլար և ավելի արժողությամբ 22 նախագծեր, 10 մլն. դոլար և ավելի արժողությամբ 347 նախագծեր: 1990-1997 թթ.-ին Ռուսաստանում իրականացվում էր Թուրքիայի արտասահմանյան բոլոր շինարարական աշխատանքների 42 %-ը: Ռուսաստանը Թուրքիայի համար դարձավ շինարարական թիվ 1 շուկան:

Երկիրը	%
Ռուսաստան	42,0
Լիբիա	13,0
Պակիստան	5,9
Ղազախստան	5,3
Թուրքմենստան	4,3
Գերմանիա	3,7
Ադրբեջան	3,7
Սաուդյան Արաբիա	3,6
Այլ	18,5[25]

1998 թ.-ի ռուսական ֆինանսատնտեսական ճգնաժամը նեղացրեց համագործակցության տվյալ տեսակի զարգացման հնարավորությունները: Ակնհայտորեն 1999 թ.-ի ավարտին իրականացման ընթացքի մեջ էին գտնվում ավելի քան 570 նախագծեր:

Ռուսական շուկայում թուրքական շինարարական ընկերությունների նման լայնածավալ ներկայությունը պետք է բացատրել աշխատանքների համեմատաբար բարձր որակով և ցածր արժեքներով, ինչը հնարավորություն էր տալիս շահել օբյեկտների շինարարության մրցույթները ռուսական և արևմտյան ընկերությունների հետ բավական կոշտ մրցակցության պայմաններում:

Թուրքիայում ռուսական ընկերությունների շինարարական գործունեությունը սահմանափակվում էր ենթակառուցվածքային բնույթի ոչ մեծ ծավալի նախագծերով: 1992 թ.-ից մինչև 1999 թ.-ը ռուսական ընկերություններին հաջողվեց պատվերներ ստանալ հետևյալ աշխատանքների իրականացման համար. Չերեզբյոյ-Կապիկուլե երկաթգծի էլեկտրիֆիկացիան, երեք կամուրջների շինարարությունը Անկարայի շրջակա շրջանաձև ավտոմայրուղու վրա և Դերիներ գետի վրա կառուցվող ՀԷԿ-ի կառուցման մի շարք աշխատանքները: Ստացված պատվերների ընդհանուր արժեքը կազմում էր մոտ 100 մլն. դոլար: Թվարկված շինարարական կապալները փոխանցվեցին ռուսական ընկերությունների մասնակցությամբ կոնսորցիումներին կամ թուրքական պետական մարմինների որոշմամբ, կամ ենթակապալառության պայմանների հիման վրա, այսինքն մինչև 2000 թ.-ը ռուսական ընկերություններին չէր հաջողվում Թուրքիայում ստանալ կապալառու պատվերներ մրցույթային վաճառքի արդյունքների հիման վրա:

5. Երկկողմանի ներդրումները

Երկկողմանի տնտեսական հարաբերությունների հեռանկարային կողմերից էին ուղղակի ներդրումները, որոնք իրականացվում էին թուրքական

գործարարների կողմից Ռուսաստանում և ռուսական գործարարների կողմից Թուրքիայում: 1990-ական թվականների առավել նշանակալի ներդրումային թուրքական նախագծերն էին չորս «Ռամտորգ» սուպերմարկետների բացումը /մոտ 85 մլն. դոլար/ և «Էֆես-Պիլզներ» գարեջրի գործարանի հանձնումը Մոսկվայում /70 մլն. դոլար/, ինչպես նաև Կոկա-Կոլայի արտադրության գործարանի շինարարությունը, ածիկի արտադրության գործարանը Ռոստովում և թուրքական առևտրի կենտրոնի շինարարությունը Մոսկվայում /մոտ 40 մլն. դոլար/:

1995 թ.-ի դրությամբ ռուսական տնտեսության մեջ ներդրված թուրքական կապիտալի ծավալը կազմում էր ընդամենը 12,7 մլն. դոլար, որը կազմում էր ռուսական տնտեսության մեջ արտասահմանյան ներդրումների միայն 1,3 տոկոսը[26]:

Սակայն, արդեն 1999 թ.-ի ավարտին Ռուսաստանում թուրքական ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալը գնահատվում էր 250 մլն. դոլար արժողությամբ:

Թուրքիայում ռուսական ներդրումները խիստ աննշան էին. 1999 թ.-ին դրա մասնաբաժինը կազմում էր Թուրքիայում ընդհանուր արտասահմանյան ներդրումների մոտ 0,25 տոկոսը: Ռուսական ներդրողների ոլորտային նախապատվություններն էին զբոսաշրջությունը, տրանսպորտային ծառայությունները, սպասարկման ոլորտի այլ օբյեկտները:

Երկկողմանի առևտրատնտեսական հարաբերություններում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման համար 1997 թ.-ի դեկտեմբերին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեցին Երկակի հարկման կանխարգելման մասին համաձայնագիրը և Փոխադարձ խրախուսման ու ներդրումների պաշտպանության մասին համաձայնագիրը:

6. Զբոսաշրջությունը

Ռուսաստանի հետ զբոսաշրջության զարգացման խնդիրը Թուրքիայի իշխանությունների առջև կանգնեց 1991 թ.-ին: Արդեն 1993 թ.-ին ռուսաստանցիների տուրիստական արտասահմանյան ուղևորությունների ընդհանուր ծավալում Թուրքիան հայտնվեց երկրորդ տեղում, իսկ 1994 թ.-ին գրավեց առաջին տեղը: Թուրքիայի տուրիզմի նախարարության տվյալներով 1994 թ.-ին առավել քանակով զբոսաշրջիկներ են ժամանել ԱՊՀ-ից /առաջին հերթին Ռուսաստանից/ 1,430 մլն. մարդ: Երկրորդ տեղում էր Գերմանիան 994,3 հազ. մարդ, երրորդ տեղում Անգլիան 568,3 հազ. մարդ[27]:

Հիշատակելով այս ցուցանիշները, պետք է նշել, որ այդ տարիներին «մաքոքների» հոսքը Ռուսաստանից Թուրքիա նույնպես ներառվում էր այդ պետության տուրիստական վիճակագրության մեջ: Ռուսական «մաքոքները» Թուրքիա պաշտոնապես ժամանում էին «զբոսաշրջության նպատակով»: Թուրքիան երկար ժամանակ ընտրյալ երկիր էր հանդիսանում ռուսական «տնտեսական զբոսաշրջության» համար. 1990-ական թվականների միջնամասից թուրքական ապրանքները գնվում էին Ստամբուլ կատարված չարտերային կարճատև ուղևորության ժամանակ, որոնք վերավաճառվում էին ռուսական շուկայում[28]: Թուրքիայում ռուսական զբոսաշրջիկների համար առավել ակնառու առավելություններն էին ցածր

ճանապարհային ծախսը, վիզային արտոնությունները, էժան ու որակյալ հանգիստը:

Հեղինակները նշում են, որ գրեթե նույն ժամանակահատվածում Ռուսաստանի քաղաքացիներին հրապուրելու համար կոշտ մրցապայքար ծավալվեց տուրիստական ոլորտում: Այսպես օրինակ, որոշ ռուսական ՁԼՄ-ներ Թուրքիան ներկայացնում էին որպես երկիր, որտեղ զբոսաշրջիկների կյանքին վտանգ է սպառնում: Միջոցներ էին ձեռնարկվում նրանց այլ երկրներ ուղևորվելու դրդման համար: Միաժամանակ, ռուսական զբոսաշրջիկներին հրապուրելու համար, շատ ջանքեր էին գործադրում Հունաստանը, Իսպանիան, Իտալիան, Ֆրանսիան[29]: Թուրքական տուրիզմի դեմ ծավալվեց հզոր հակաքարոզչություն, սակայն, չնայած դրան, 1997 թ.-ին արտասահմանյան զբոսաշրջության մասնակից ռուսաստանցիների 13,5 տոկոսը /1048 հազ. մարդ/ նախապատվությունը տվեցին Թուրքիային[30]:

Գլուխ 2. Ռուս-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունները 2000 թվականից հետո

2000 թ.-ին նախագահ Վլադիմիր Պուտինի իշխանության գալուց հետո ռուս-թուրքական հարաբերությունների արմատական փոփոխությունների հիմքում շատ գործոններ են ընկած: Այդ շրջանում, տնտեսության ու արտաքին քաղաքականության ոլորտներում Ռուսաստանի և Թուրքիայի շահերը հիմնականում համընկնում էին[31]:

2000 թ.-ին Ռուսաստանում ղեկավարության փոփոխմամբ ու 2002 թ.-ի նոյեմբերին Թուրքիայում Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալուց ի վեր, կողմերը որոշեցին քաղաքական հարցերում պահպանված իրենց ավանդական տարածայնությունների վրա շեշտադրումներ չկատարել և երկու երկրների ջանքերը կենտրոնացնել տնտեսական մերձեցման վրա, որը երկկողմանի հարաբերությունների առաջընթացի զարգացման մեջ իրականացնում է մի քանի «ֆունկցիոնալ սյուժե».

1. կողմերն իրականացնում են աշխարհագրորեն անմիջական ցամաքային սահման չունեցող երկու հարևան երկրների միջև համագործակցության օբյեկտիվորեն նախանշված զարգացում, ուստիև անհրաժեշտ է այնպիսի տնտեսական նախագծերի մշտական որոնում, որոնք կկատարեն երկու փոխկապակցված ֆունկցիա կխորացնեն երկու երկրների անմիջական տնտեսական համագործակցությունը և կստեղծեն ինտեգրացիոն համագործակցության գոտի, որը կներառի նրանց միջև գտնվող բոլոր պետությունները, 2. քաղաքական տարածայնությունները ոչ միայն ավանդական, այլև ավանդաբար անլուծելի են երկկողմանի հարաբերություններում հիմնախնդիրների լիարժեք վերացման առումով /ակնառու օրինակ է սևծովյան նեղուցների խնդիրը/: Հետևաբար, «նախ տնտեսություն, ապա քաղաքականություն» տեսքով երկկողմանի «սյուժեն» հաղթական է երկու կողմերի համար, որոնք նախ հաստատում են «համագործակցության ու վստահության մթնոլորտ» որպես անհրաժեշտ հիմք փոխշահավետ քաղաքական որոշումների որոնման համար, 3. երկկողմանի տնտեսական համագործակցության միջոցով, որն ուղեկցվում է նրանց միջև գտնվող երկրների ներգրավմամբ, առավել իրատեսական է տարածաշրջանային

ուժերի հավասարակշռության հաստատումը և որոշիչ կամ գերակա ազդեցության սեփական գոտիների ուրվագծումը:

Նման դրությունը կտրուկ տարբերվում է 1990-ական թվականների սկզբներից, երբ Ռուսաստանը հետխորհրդային Եվրասիայում Թուրքիան առաջին հերթին դիտում էր որպես Միացյալ Նահանգների մերձավոր դաշնակցի և իր ռազմավարական ախոյանի: 1990-ական թվականներին Ռուսաստանը և Թուրքիան տրամագծորեն հակադիր դիրքորոշումներ էին գրավում մի շարք կարևորագույն հարցերի շուրջ, ինչպիսիք են Բոսնիան, Կոսովոն և Չեչնիան, ինչը բացատրվում էր Թուրքիայի սերտ պատմական կապերով տարածաշրջանի մահմեդական ժողովուրդների հետ և իր տարածքում կովկասյան ու բալկանյան խոշոր սփյուռքի ներկայությամբ: Թուրքիայի դիրքորոշումը ՆԱՏՕ-ում և Արևելյան Եվրոպայի սահմաններից դուրս, դեպի նախկին խորհրդային հանրապետություններ դաշինքի ընդլայնման սպառնալիքը, սրեցին Ռուսաստանի դժգոհությունը: Բոլոր այդ գործոնները հանգեցրին երկկողմանի հարաբերությունների լարվածության առաջացմանը: Ռուսաստանը նախապատվությունը տալիս էր Միացյալ Նահանգների, Եվրոպայի և ԱՊՀ-ի մերձավոր հարևանների հետ հարաբերություններին, այն դեպքում, երբ Թուրքիան մտահոգված էր ԱՄՆ-ի հետ ռազմավարական գործընկերությամբ, Հունաստանի ու Կիպրոսի հետ հարաբերությունների անկայունությամբ, և ջանքեր էր գործադրում ԵՄ-ին անդամակցության համար: Գրեթե 1990-ական թվականների ամբողջ ընթացքում Ռուսաստանը և Թուրքիան միմյանց նկատմամբ ցուցաբերում էին քաղաքական անվստահություն, սակայն առևտրային հարաբերությունները նրանց միջև ակտիվորեն զարգանում էին[32]:

Ամենայն հավանականությամբ, Ռուսաստանում և Թուրքիայում քաղաքական ղեկավարության հատկապես նշված փոփոխություններից հետո, երկկողմանի հարաբերություններում շեշտադրումը որոշակի ռազմավարական սկզբունքների որոնումից, որոնք ծանրաբեռնում էին այդ հարաբերությունների զարգացումը, վերջնականապես թեքվեց դեպի պրագմատիկ սկզբունքների որոնումն ու հաստատումը, որոնց առաջին շարքում էին փոխշահավետ համագործակցության տնտեսական առաջնայնությունները: Ինչպես այդ կապակցությամբ նշում են ռուսական փորձագետները, երբ խոսում են Ռուսաստանի ու Թուրքիայի փոխհարաբերությունների մասին, առաջինը, ինչը պետք է անմիջապես բացառել, դա ռազմավարության բացակայությունն է: 1990-ական թվականների միջնամասում թուրքերը սկսեցին գիտակցել, որ խորհրդային տարածքում իրենց կապերի 90 տոկոսը կողմնորոշված էին դեպի Ռուսաստան: Այս տեսակետից էլ պետք է գնահատել ընթացիկ հարաբերությունները Ռուսաստանի ու Թուրքիայի միջև, որոնք հիմնված են զուտ տնտեսական շահերի վրա: Միայն տնտեսությունն է կապել և շարունակում է կապել Ռուսաստանը և Թուրքիան: Դեռևս մինչ լուրջ էներգետիկ նախագծերը, ինչպիսին է «Երկնագույն հոսքը», Թուրքիան մաքրքային առևտրից ստանում էր 6-ից մինչև 15 մլրդ դոլար, ինչն ըստ էության տեսական ժամանակ պահպանում էր թուրքական տնտեսությունը[33]:

Այդ տեսակետից ցուցադրական է ռուսական շուկայի և ընդհանուր առմամբ սեփական տնտեսության զարգացման համար բարենպաստ նախադրյալների ստեղծման ռուսական ուղղության գնահատումը թուրքական կողմից, որը տրված է նախորդ դարավերջին փորձագիտական մա-

կարդակով: «Թուրք-ռուսական հարաբերությունների հիմնարար խնդիրները և դրանց լուծման առաջարկությունները» (Türkiye-Rusya ilişkilerindeki yapısal sorunlar ve çözüm önerileri. İstanbul, TÜSİAD, Haziran, 1999) գրքում /զեկույց-հետազոտություն/, որը հրատարակվել է Թուրք արդյունաբերողների ու գործարարների ընկերության նախաձեռնությամբ, /Türk Sanayicileri ve İşadamları Derneği այսուհետ՝ ԹՅՈՒՍԻԱԴ/, խոսվում է, որ «Չպետք է մոռանալ Ռուսաստանի Դաշնության բազմաքանակ բնակչությունը, նրա շուկայում ապրանքների ու ծառայությունների դեֆիցիտը, աշխարհագրական մոտիկությունը և այն փաստը, որ նա կարևոր շուկա է հանդիսանում թուրքական մասնավոր ձեռնարկատիրության համար: Երկկողմանի հարաբերությունների համար ռեկորդային 1997 թ.-ին Թուրքիայի բոլոր տարադրամային մուտքերի մոտ 15 %-ի աղբյուրը Ռուսաստանն էր: Ռուսաստանի տնտեսության մեջ տեղի էին ունենում արմատական փոփոխություններ, նաև այն ժամանակաշրջանում, երբ երկկողմանի հարաբերությունները որոշ բնագավառներում դժվարություններ ունեցան, ծագած նոր նախագծերը նոր շունչ հանդիսացան թուրք-ռուսական հարաբերություններում: Դրանց շարունակման հնարավորությունը զգալի չափով կախված է քաղաքական շփումների հուսալիությունից: Երկբևեռ աշխարհի փլուզման, գլոբալիզացիայի երևույթներն այնպես անդրադարձան թուրք-ռուսական հարաբերությունների վրա, որ հարյուրամյակների ընթացքում առաջին անգամ դրանցում, բացի քաղաքականությունը, համարժեք նշանակություն է ձեռք բերել նաև տնտեսությունը: Ռուսաստանում սպառման ապրանքների ու ծառայությունների ծագած դեֆիցիտը հանգեցրեց ռուսական շուկայում Թուրքիայի աճող հետաքրքրությանը»[34]:

Ոչ պակաս հետաքրքրական է նաև այն փաստը, որ դեռ 1999-2000 թթ.-ին Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքական հարաբերություններում պահպանվում էր ավանդական կասկածամտությունը: Այսպես, հիշատակված ԹՅՈՒՍԻԱԴ-ի զեկույց-հետազոտման մեջ խոսվում էր Ռուսաստանը որպես համագործակցության գործընկեր ճանաչելու մասին, սակայն որոշակի պայմաններից ելնելով. «Չնայած ազդեցության ոլորտների համար պայքարին, արդեն չկա որոշակի թեմա, որը կարող է մեր միջև քաղաքական հարաբերությունների զարգացման գործընթացի վրա ունենալ բացասական ազդեցություն...Քանի դեռ Ռուսաստանը չի հայտնվել քաոսում, քանի դեռ արտաքին քաղաքական կողմնորոշումներում չի դիմել արմատական փոփոխությունների, նա Թուրքիայի համար սպառնալիք չի ներկայացնի: Իսկ եթե դա տեղի ունենա, ՆԱՏՕ-ն, որի անդամ մենք հանդիսանում ենք 1952 թ.-ից, կկատարի իր պարտավորությունները, որոնք նախատեսված են 1949 թ.-ի Վաշինգտոնյան Պայմանագրի հինգերորդ հոդվածով»:

Միևնույն ժամանակ, սկսած 2000 թ.-ից թուրքական հեղինակները սկսեցին ընդգծել ռուս-թուրքական փոխշահավետ հարաբերությունների առաջընթաց զարգացման անշրջելիությունը, որոնցում առանձնահատուկ դեր են կատարում երկու երկրների գործարար շրջանակները. «1990-ական թվականներին ռուս-թուրքական հարաբերությունները պատմական հեռանկարի առումով մտան մի փուլ, որն ըստ էության կարելի է անվանել «ոսկե դար»: Այդ շրջադարձի առանցքային տարրը հանդիսանում է Ռուսաստանի նոր կերպարը, որն այլևս համակված չէ տարածքային ու գաղափարախոսական էքսպանսիոնիզմով և դրանից բխող ագրեսիվությամբ: Միարկե, Մոսկվան, որպես հզոր տերություն փորձում է վերականգնել իր նախկին ազդեցությունը աշխարհում: Եվ դա բոլորովին անհիմն դիրքորոշում չէ, քանի որ Ռուսաստանը օժտված է հզոր տերության բոլոր իրատեսական ու պոտենցիալ հատկանիշներով: Բայց եթե հաշվի չառնենք Կովկասում ռուսական գործողությունները, այդ խնդիրը չի հանգեցնում վերադարձ ուժային քաղաքականությանը: Այսպես թե այնպես, ազդեցիկ թուրքական շրջանակների գերակշռող մասը դադարել է Ռուսաստանն ընկալել որպես թշնամի: Ընդ որում, այդ փոփոխության մեջ կենտրոնական դեր են կատարել գործարար ընկերակցության առաջնորդները, որոնք լավ գիտակցում են, որ երկկողմանի առևտրով ստեղծվող փոխադարձ կախվածությունը վերացնում է թշնամության պահպանված հետքերը»[35]:

2000 թվականի սկզբներից սկսած Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններում «վերահսկելի լարվածության ու մրցակցության» սկզբունքները փոխարինվեցին համագործակցության զարգացման ու խորացման կոնկրետ քայլերի իրացման գերակայություններով[36]: Այդ համատեքստում, 2001 թ.-ի նոյեմբերի 16-ին Նյու-Յորքում երկու երկրների արտգործնախարարների կողմից ստորագրված Գործողությունների Եվրասիական Պլանով ձեռք բերվեց համաձայֆություն՝ քաղաքականության, անվտանգության /ահաբեկչության դեմ պայքար/ և տնտեսական գործընկերության զարգացման ոլորտներում համագործակցության մասին:

2001 թ.-ի նոյեմբերին ստորագրված Եվրասիայում համագործակցության զարգացման գործողությունների պլանը, փաստորեն Ռուսաստանի ու Թուրքիայի միջև հռչակեց հարաբերությունների նոր, ավելի պտղաբեր փուլ. երկկողմանի համագործակցությունից դեպի բազմապլան գործընկերություն: Բազմապլան գործընկերության հիմքերը ձևավորում են հատկապես համատեղ տնտեսական նախագծերը և առևտրատնտեսական կապերի խորացումն ընդհանուր առմամբ:

«Ռուսաստանի և Թուրքիայի միջև կապերում որակապես նոր է այն, որ հագեցած քաղաքական երկխոսությունը զարգանում է առևտրատնտեսական համագործակցության ծանրակշիռ հիմքի վրա»[37]:

1. Առևտրային հարաբերությունները

Տնտեսական առումով Ռուսաստանի համար ճգնաժամային 20-րդ դարի վերջին տարիներից հետո, 2000 թ.-ից, երկու երկրների միջև առևտրափոխանակությունը ցուցաբերում է հուսալի աճ: 2000 թ.-ի արդյունքներով ապրանքափոխանակությունը աճել է մինչև 3,4 մլրդ. դոլար /ըստ ռուսական կողմի տվյալների/: Ապրանքաշրջանառության վստահ աճը խթանող գործոններից մեկը հանդիսացավ 2000 թ.-ի հոկտեմբերի վերջին Ռուսաստանի վարչապետ Մ. Կասյանովի Թուրքիա կատարած պաշտոնական այցը: Բանակցությունների ընթացքում կողմերը հայտարարեցին խոշոր ներդրումային նախագծերի իրացման ու ապրանքաշրջանառության ծավալները մինչև 10 մլրդ. դոլարի հասցնելու շուրջ համագործակցության մտադրությունների մասին:

Թուրքիայի տեսակարար կշիռը Ռուսաստանի 2001-2002 թթ.-ի արտաքին առևտրում աճեց 2,7 %-ով: Դա նրան հնարավորություն տվեց ռուսա-

կան առևտրային գործընկերների ցանկում զբաղեցնել 13-15-րդ տեղերը: 2000-ական թվականների սկզբները երկկողմանի ապրանքաշրջանառության մեջ նշանավորվեցին, առանց «մաքրքային առևտրի» ու թուրքական կապալառուների շինարարական ծառայությունների հաշվառման, ռուսական արտահանումը Թուրքիա մշտապես ու զգալիորեն գերակշռեց ներկրմանը, որը կանխորոշեց զգալի դրական սալդոն, որը 20-րդ դարի վերջին 5 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ գերազանցեց 7,75 մլրդ. դոլարը, իսկ 2001-2002 թթ.-ին ևս 5,3 մլրդ. դոլար: Նման շոշափելի անհամաչափությունը, սակայն, արտացոլում էր զուտ առևտուրը, որն անցնում էր ռուսական մաքսային գրանցումով:

Քիչ այլ պատկեր էր ձևավորվում թուրքական արտաքին առևտրային վիճակագրության տվյալներով, որին հաջողվեց հաշվառել նաև դեպի Ռուսաստան չկազմակերպված արտահանման մի մասը: Այդ ամենը երկու երկրների արտաքին առևտրային վիճակագրության մեջ ընդունված հաշվարկման եղանակների տարբերության հետ մեկտեղ, կանխորոշեցին նրանց կողմից հրապարակված արտահանման ու ներկրման ցուցանիշների էական տարբերությունները:

Ռուս-թուրքական ապրանքաշրջանառությունը 2001-2006 թթ.-ին
/ըստ Ռուսաստանի Դաշնության Մաքսային ծառայության տվյալների/ մլն. դոլար

	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.
Ապրանքաշրջանառությունը	3767,4	4087,3	5738,1	8660,7	12573,5	17047,8
Արտահանումը	3246,3	3358,4	4807,7	7439,9	10841,4	14377,4
Ներմուծումը	521,1	728,9	930,4	1220,8	1732,1	2670,4
Հաշվեկշիռը	+2725,2	+2629,5	+3877,3	+6219,1	+9109,3	+11707,0

Ռուս-թուրքական ապրանքաշրջանառությունը 2001-2006 թթ.-ին
/ըստ Թուրքիայի Վիճակագրության պետական ինստիտուտի տվյալների/ մլն. դոլար

	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.
Ապրանքաշրջանառությունը	4359,8	5063,7	6818,9	10892,3	15282,7	20720,1
Արտահանումը	3435,7	3891,7	5451,3	9033,1	12905,6	17493,6
Ներմուծումը	924,1	1172,0	1367,6	1859,2	2377,1	3226,5
Հաշվեկշիռը	+2511,6	+2719,7	+4083,7	+7173,9	+10528,5	+14267,1

Թուրքիա ռուսական արտահանման ապրանքային կառուցվածքը 2002 թ.-ին ուներ հետևյալ տեսքը էներգակիրներ – 58 %, սև մետաղ – 19 %, ալյումին – 6 %, քիմիական արդյունաբերության արտադրանք – 3,5 %, փայտանյութ և ցելյուլոզե-թղթային արտադրատեսակներ – 3 %, մեքենաներ և սարքավորումներ – ընդամենը 4,5 %:

Այդ տարի դեպի Թուրքիա մատակարարվեց 11,8 մլրդ.խոր.մ. գազ, 1,5 մլն. տոննա նավթ, 1,3 մլն. տոննա նավթամթերք, 4,7 մլն. տոննա ածուխ, 2,1 մլն. տոննա պողպատե կիսաֆաբրիկատներ և 1,7 մլն. տոննա սև մետաղների ջարդոն, ինչպես նաև տարբեր տեսակի գլանվածք, 180 հազ. տոննա ալյումին և 64 հազ. տոննա ցինկ, ավելի քան 1 մլն. տոննա ազոտային պարարտանյութեր և 460 հազ.խոր.մ. չվերամշակված անտառանյութեր: Մեքենաների և սարքավորման խմբում զգալի տեղ զբաղեցրեցին էլեկտրական կոնդենսատորները և հաշվիչ մեքենաները, մոտ 5 հազ. մարդատար ավտոմեքենաները, ինչպես նաև ածելիներն ու էլեկտրոդները:

Ներկրման ապրանքային կառուցվածքում, դրա արժեքի ավելի քան քառորդ մասը բաժին ընկավ տեքստիլի, տեքստիլ արտադրանքի ու կոշկեղենի գնմանը, որից 15 %-ը կազմեց հագուստը, ևս 6 %-ը կաշվե և մորթի ապրանքները: Ներկրման մեջ կարևոր տեղ զբաղեցրեցին բանջարեղենը, մրգերը, ընկուզեղենը /14 %/, ծխախոտը /5,5 %/, քիմիական արտադրանքը /10 %/, առաջին հերթին պլաստմասսան և դրանից պատրաստված ապրանքները /4,5 %/: 2002 թ.-ին Թուրքիայից գնվում էր 202 հազ. տոննա գիտրուսայիններ և 36 հազ. տոննա խաղող, 73 հազ. տոննա տոմատ, 21 հազ. տոննա սոխ, 6 հազ. տոննա վարունգ:

Կարևոր է նշել, որ 2000 թ.-ին և հաջորդ տարիներին Ռուսաստանի և Թուրքիայի միջև երկկողմանի առևտրում պահպանվեց էական դիսբալանսը տեխնոլոգիական ու հումքային արտադրանքի տեսակարար կշռի ցուցանիշներով: Ինչպես նախկինում, Թուրքիա Ռուսաստանի արտահանումը իր հիմքում հանդիսանում էր «հումքային», այն դեպքում, երբ ռուսական ներկրումը Թուրքիայից ներառում էր տեխնոլոգիական սարքավորումների ու մեքենաների զգալի սեգմենտ: Այսպես, 2002 թ.-ին Թուրքիայից ռուսական ներկրման մեջ մեքենաների ու սարքավորման մասնաբաժինը կազմում էր 20 %: Երկկողմանի առևտրում այնպիսի ավանդական ապրանքի հետ մեկտեղ, ինչպիսին են մարտկոցները, Թուրքիան սկսեց մատակարարել նաև հեռախոսային կապի կոմուտատորներ, կենցաղային էլեկտրատեխնիկական սարքավորումներ, պոմպեր, սառնարաններ, օդորակիչներ, շինարարական ու սննդի սարքավորումներ, մալուխ և լարեր:

Ինչպես նշում են ռուսական փորձագետները, այս տվյալները թույլ են տալիս փաստել, որ երկու երկրների առևտրային հարաբերություններում Թուրքիան հանդես է գալիս որպես արդյունաբերական արտադրանքի ու պարենամթերքի, իսկ Ռուսաստանը էներգակիրների ու կիսաֆաբրիկատների մատակարար: Նման կառուցվածքը պետք է լիովին բավարարի Թուրքիային[38]:

2003թ.-ի տվյալներով պաշտոնական ապրանքաշրջանառությունը Թուրքիայի ու Ռուսաստանի միջև հասավ 6,8 մլրդ. դոլարի: Այդ տարի Ռուսաստանի ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում Թուրքիան զբաղեցրեց 14-րդ տեղը, առաջ անցնելով Ռուսաստանի այնպիսի առևտրային խոշոր գործընկերներից, ինչպիսիք են Ճապոնիան, Հնդկաստանը, Հարավային Կորեան: Թուրքիային բաժին հասավ ռուսական ապրանքաշրջանառության 3%-ը, իսկ այսպես կոչված «մաքրքային» ներկրման հաշվառումով մոտ 5%-ը: Ռուսաստանը Թուրքիայից ներկրման ու արտահանման մեջ համապատասխանաբար զբաղեցրեց 2-րդ և 8-րդ տեղերը: Ըստ որում, երկկողմանի առևտրում Թուրքիայի համար առևտրային դեֆիցիտը շարունակում էր աճել. 2003 թ.-ին այն կազմեց մոտ 3 մլրդ. դոլար:

Ռուսական արտահանման հիմքը Թուրքիա շարունակում էր հանդիսանալ էներգետիկ-վառելիքային արտադրանքը /ավելի քան 70 %/, մետաղը և մետաղյա արտադրանքը, քիմիական ապրանքները /մոտ 20 %/: Չնայած որ ռուսական մեքենաների ու սարքավորումների արտահանումը մնում էր նախկին 5-6 տարիների մակարդակի վրա /շուրջ 25 մլն. դոլարի/, 2004 թ.-ին հնարավորություններ ստեղծվեցին այդ խմբի ապրանքների մատակարարման ավելացման համար, ներառելով էներգետիկ սարքավորումը

«Թորուլ» ՀԷԿ-ի համար /«Ուժային մեքենաներ»-ի, նախկին «Էներգոմաշէքսպորտ»-ի կողմից, 12 մլն. դոլարի/, «Լադա-Նիվա» ավտոմեքենաներ /10-15 մլն. դոլարի/, ինչպես նաև լեռնահանքային սարքավորման առանձին տեսակների ու մալուխային արտադրանքի մատակարարումը:

2003թ.-ին Թուրքիայից ռուսական ներկրման մեջ գերակշռում էին տեքստիլը և պատրաստի հագուստը /29,5%/, մեքենաները և տրանսպորտային միջոցները /22,8%/, պարենամթերքը /14,7%/, քիմիական ապրանքները /14,7%/: «Մաքոքային» ներկրման հիմնական մասը /շուրջ 3 մլրդ. դոլարի/ կազմում էին պատրաստի հագուստը, տեքստիլը և կաշվե իրերը: 2003 թ.-ի տվյալներով, Թուրքիայի հետ առևտրում բացասական միտումների շարքում, փորձագետներն ավանդաբար նշում էին մեքենա-տեխնիկական արտահանման պահպանվող աննշան մասնաբաժինը Ռուսաստան կաշվե, տեքստիլ ու սննդի արդյունաբերության համար թուրքական մեքենաների ու սարքավորման մատակարարումների կտրուկ աճի պայմաններում /175-ից 311 մլն. դոլարի աճ 2002-2003 թթ.-ի ընթացքում/[39]:

2002-2003 թթ.-ի ամփոփիչ արդյունքերով ՌԴ-ի տնտեսական զարգացման ու առևտրի նախարարության փորձագետները նշում էին, որ թուրքական կողմը լուրջ մտահոգություն է հայտնում դեպի Ռուսաստան իր պաշտոնական արտահանման անկման կապակցությամբ և Ռուսաստանից էներգակիրների ստացման ու Թուրքիայից պարենամթերքի և լայն սպառման ապրանքների մատակարարման բարտերային համածայնագրերի տարբեր տեսակներ է առաջարկում: Սակայն, Թուրքիայի հետ առևտրի ոլորտում ռուսական կողմի հիմնական խնդիրը հանդիսանում է սեփական արտահանման հետագա աճի ապահովումը՝ ի հաշիվ մեքենաների, սարքավորումների ու պատրաստի արտադրանքի մատակարարման[40], նկատի ունենալով դրա կառուցվածքի բարելավումը, որը ներկայումս գրեթե 60-70 %-ով կազմված է էներգակիրներից և հումքային ապրանքից /բնական գազ, քարածուխ, նավթ և նավթամթերք, մետաղ, փայտանյութ, քիմիական արտադրանք/[41]:

Թուրքական հեղինակները երկկողմանի առևտրում ընդգծում են Ռուսաստան մատակարարված ծավալների առավելապես որակի մասին՝ ի տարբերություն Ռուսաստանի ընդհանուր քանակային առավելության: 1990-ական թվականների սկզբներին լինելով առավել համակշռված երկու երկրների միջև առևտուրը սկսեց Թուրքիայի համար ավելի ձեռնտու բնույթ ստանալ: Այդ միտումը մտահոգություն առաջացրեց Մոսկվայում, որը դրսևորվեց նաև 2004 թ.-ի վերջում Անկարա կատարված այցի ընթացքում նախագահ Վ. Պուտինի ունեցած հայտարարության մեջ: Նա նկատեց, որ թուրք գործարարները ակտիվությամբ ու ձեռներեցությամբ առաջ են անցել իրենց ռուս գործընկերներից[42]:

Երկկողմանի առևտրում առկա հստակ անհամամասնության կապակցությամբ, ռուսական կողմի մտահոգությունները /«տեխնոլոգիականություն-հումք» առումով/ 2000-ական թվականների սկզբներին սկսեցին ստանալ իրենց տեսանելի արտահայտությունը դիվանագիտական ներկայացուցիչների, բարձրաստիճան պաշտոնյաների և երկրի ղեկավարության հայտարարություններում: Այսպես օրինակ, 2003 թ.-ի դեկտեմբերի 26-ին Թուրքիայում աշխատանքային այցով գտնվող ՌԴ-ի արտաքին գործերի նախարարի տնտեսական հարցերով տեղակալ Ա. Դենիսովը իր թուրք

գործընկեր Ա. Կըլըչի հետ քննարկեց ռուս-թուրքական երկկողմանի տնտեսական հարաբերություններին դիվանագիտական աջակցության հարցերը: Ա. Դենիսովը ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին տրված իր հարցազրույցում նշեց, որ «եթե այսպես կոչված տեսանելի առևտրին գումարել ոչ ֆորմալ «մաքոքային» առևտուրը, որը ներկայումս քաղաքակիրթ տեսք է ստացել, ծառայությունների ոլորտի ինդուստրիան զբոսաշրջությունը, իսկ այս տարի Թուրքիա են այցելել շուրջ 1 մլն. ռուսաստանցի քաղաքացիներ, ապա կարելի է ասել, որ այդ դաշտում խաղն ընթանում է «մեկ դարպասի վրա» հօգուտ Թուրքիայի»: Ըստ որում, փոխնախարարը նշեց երկկողմանի համագործակցության ևս մեկ ոլորտ՝ ավտոմոբիլային փոխադրումները, որտեղ թուրքական տրանսպորտային ընկերությունները կատարում են գերակշռող դերակատարություն, ստանալով 200 մլն. դոլարի ավելցուկ[43]:

Այնուհետև, թուրքական «Հյուրիեթ» թերթի մոսկովյան գրասենյակի թղթակցին տրված հարցազրույցում /2004 թ.-ի փետրվարի 21-ին/, այն հարցին, թե «Ռուսաստանի ու Թուրքիայի միջև տնտեսական հարաբերություններում առկա է անհամակշռություն հօգուտ Ռուսաստանի, որը հասնում է մի քանի մլրդ. դոլարի, և ի՞նչ կարող է առաջարկել Ռուսաստանը համակշռման ձեռքբերման համար», ՌԴ-ի ԱԳՆ-ի պաշտոնական ներկայացուցիչ Ա. Յակովենկոն նշել է, որ «Դա այնքան էլ այդպես չէ: Ըստ ունեցած հաշվարկների, ի հաշիվ «մաքոքային» առևտրի /շուրջ 3 մլրդ. դոլար/, զբոսաշրջությունից ստացված շահույթի /շուրջ 1 մլրդ. դոլար/ և ռուսական տարածքներով ավտոտիտիոդրումների /շուրջ 200 մլն. դոլար/ Թուրքիան դեռևս առավելություններ ունի»[44]:

2005 թ.-ի հունվարի 12-ին ՌԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատի կոնգրես-կենտրոնում տեղի ունեցավ ռուս-թուրքական և թուրք-ռուսական գործարար խորհուրդների համատեղ նիստը: Միացյալ խորհրդի աշխատանքին մասնակցեցին Առևտրա-արդյունաբերական պալատի նախագահ Ե. Պրիմակովը, Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը, ՌԴ-ի արդյունաբերության ու էներգետիկայի նախարար Վ. Խրիստենկոն, Թուրքիայի պետական նախարար Կ. Թյուզմենը, ռուս-թուրքական գործարար խորհրդի նախագահ Ա. Լեբեդևը, թուրք-ռուսական գործարար խորհրդի նախագահ Թ. Գյուրը և այլոք:

Ե. Պրիմակովը նշեց, որ «եթե 1990 թ.-ին համատեղ ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև կազմում էր 1,5 մլրդ. դոլար, ապա 2004 թ.-ին այդ գումարն ավելացել է մինչև 11 մլրդ. դոլար, և առկա են հեռանկարներ մոտակա ժամանակահատվածում ապրանքաշրջանառությունը հասցնել 15 մլրդ. դոլարի: Թուրքիա ռուսական արտահանման 65-70 %-ը կազմում են էներգակիրները, և ուստի Ռուսաստանի և Թուրքիայի առևտրա-արդյունաբերական պալատների հիմնական խնդիրներից մեկն է փոփոխել ապրանքաշրջանառության կառուցվածքը»[45]:

Ռուս-թուրքական առևտրատնտեսական համագործակցության հեռանկարները, Սոչիում կայացած ռուս-թուրքական հանդիպման արդյունքում /2005 թ.-ի հուլիսի 18/ Վ. Պուտինի կողմից նշվեցին հետևյալ կերպ. «Դա, իհարկե, համագործակցություն է բարձր տեխնոլոգիաների ոլորտում և, անտարակույս, դա համատեղ նախաձեռնված գործունեություն է, ինչպես ռուսական ներդրողների գործունեություն Թուրքիայում, այնպես էլ թուրքական կապիտալ ներդրումներ ռուսական տնտեսության մեջ: Ներկայումս

թուրքական ուղղակի ներդրումները ռուսական տնտեսության մեջ կազմում են 1,5 մլրդ. դոլար, և ռուսական ներդրողները պատրաստ են Թուրքիայի տարածքում մասնավորեցման նախագծերում էլ ավելի ակտիվ մասնակցության: Մենք հուսով ենք, որ Թուրքական Հանրապետության կառավարությունը, կառավարության ղեկավարը կանեն ամենը, որպեսզի ռուսական կապիտալը շարժվի դեպի իրենց երկրի տնտեսությունը: Կստահ ենք, որ դա բխում է և ռուսական, և թուրքական կողմերի շահերից»[46]:

Ըստ թուրքական վիճակագրության տվյալների 2004 թ.-ին ռուս-թուրքական առևտրի ծավալը կազմել է 10,9 մլրդ. դոլար /«մաքրքային» առևտրի հաշվառումով 14,7 մլրդ. դոլար/: 2004 թ.-ին Թուրքիան Ռուսաստանի հետ «մաքրքային» առևտրի շնորհիվ ստացավ շուրջ 4 մլրդ. դոլարի շահույթ:

Ապրանքաշրջանառության աճի տեմպը պահպանեց իր արագ զարգացման միտումը նաև հաջորդ տարում, երբ միայն 2005 թ.-ի 9 ամիսների ընթացքում երկկողմանի առևտրի ծավալը հասավ նախորդ տարվա տարեկան ցուցանիշին:

Ըստ ռուսական գնահատականների, 2005 թ.-ին երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը հասավ 12,6 մլրդ. դոլար ծավալի /ըստ թուրքականի 15,3 մլրդ. դոլար/: 2006 թ.-ի առաջին վեց ամսվա ընթացքում այդ երկրների միջև առևտրի ծավալը կազմեց 9,3 մլրդ. դոլար, որի աճը 2005 թ.-ի միևնույն ժամանակահատվածի համեմատ կազմեց 35,3 %: Ռուսաստանը թուրքական ներկրման մեջ Գերմանիայից հետո գրավեց երկրորդ տեղը /9,3 %/ և ութերորդը արտահանման մեջ /2,9 %/: Ռուսաստանի ապրանքաշրջանառության մեջ Թուրքիան զբաղեցրեց վեցերորդ տեղը: Պաշտոնական առևտրի սալդոն հոգուստ Ռուսաստանի 2005 թ.-ին կազմեց 9 մլրդ. դոլար /ռուսական մաքսային վիճակագրության տվյալներով/:

Թուրքիա կատարած ռուսական արտահանման մոտ 70 %-ը ընկնում էր էներգակիրներին: Խոշոր ապրանքախմբեր կազմեցին սև և գունավոր մետաղները, անտառանյութը, քիմիական արտադրանքը: Մեքենաների ու սարքավորումների մասնաբաժինը ռուսական արտահանման մեջ շատ աննշան էր: Թուրքիայից ներկրման մեջ գերակշռում էին մետաղյա արտադրանքը /շուրջ 30 %/, սպառման ապրանքները, պարենամթերքը: Մեքենաների ու սարքավորումների մասնաբաժինը կազմում էր 15%[47]:

2004-2005 թթ.-ի ժամանակահատվածը նշանավորվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև ակտիվ քաղաքական երկխոսությամբ, ընդ որում, ամենաբարձր մակարդակի վրա, որը մասնավորապես հանգեցրեց երկկողմանի առևտրի ինտենսիվացման անհրաժեշտության հռչակմանը և դրա հետ կապված երկու երկրների միջև ապրանքաշրջանառության հեռանկարային ծավալների որոշմանը: 2004 թ.-ի դեկտեմբերի 5-6-ին Անկարայում և 2005 թ.-ի հունվարի 10-12-ին Մոսկվայում կայացած ռուս-թուրքական բարձր մակարդակի բանակցությունների ընթացքում համաձայնություններ ձեռք բերվեցին 2005 թ.-ին երկկողմանի ապրանքաշրջանառության ծավալը հասցնել 15 մլրդ. դոլարի մակարդակի, իսկ 2007 թ.-ին 25 մլրդ. դոլարի: Ըստ 2006 թ.-ի արդյունքների Ռուսաստանի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը գերազանցեց 20 մլրդ. դոլարը:

Կողմերը վստահություն են հայտնում, որ 2007 թ.-ի տվյալներով երկրների միջև ապրանքաշրջանառությունը կհասնի նախատեսված 25 մլրդ. դոլարի մակարդակին, և, որ ամենակարևորն է, երկկողմանի ապրանքաշրջանառության աճը կպահպանի իր միտումը: 2008 թ.-ին ապրանքաշրջանառությունը պետք է աճի մինչև 26 մլրդ. դոլար[48]:

2006 թ.-ի արդյունքներով Թուրքիան Ռուսաստանի հետ ապրանքաշրջանառությամբ զբաղեցնում էր 7-րդ տեղը, արտահանմամբ 6-րդը և ներկրմամբ 16-րդ տեղը: Ռուսաստանն իր հերթին Թուրքիայից ներկրմամբ զբաղեցնում էր առաջին, իսկ արտահանմամբ 7-րդ տեղերը[49]:

2007 թ.-ի հուլիսի տվյալներով արտահանման գծով Թուրքիայի գլխավոր գործընկերների ցանկում Ռուսաստանը գրավում էր 6-րդ տեղը. Գերմանիա /983 մլն. դոլ./, Մեծ Բրիտանիա /751 մլն. դոլ./, Իտալիա /571 մլն. դոլ./, Ֆրանսիա /486 մլն. դոլ./, Իսպանիա /408 մլն. դոլ./ և Ռուսաստան /398 մլն. դոլ./: Թուրքիայի ներկրման միևնույն ամսվա տվյալներով Ռուսաստանը զբաղեցնում էր առաջին տեղը 2,205 մլրդ դոլարով: Նրան հաջորդում էին Գերմանիան /1,448 մլրդ./, Չինաստանը /1,113 մլրդ./, Իտալիան /962 մլն./, Շվեյցարիան /904 մլն./[50]:

Ըստ ՈԴ-ի Դաշնային մաքսային ծառայության տվյալների, 2007 թ.-ի հունվար-հուլիս ամիսների ընթացքում երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 11,723 մլրդ. դոլար, որից Ռուսաստանի արտահանումը 9,560 մլրդ., իսկ ներկրումը 2,163 մլրդ. դոլար: 2006 թ.-ի միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ երկու երկրների ապրանքաշրջանառությունը աճել է 130 %-ով[51]:

2. Հարաբերությունները էներգետիկայի ոլորտում

2000 թ.-ից հետո գազի ոլորտում համագործակցությունը պահպանել է իր առաջատար դիրքերը ոչ միայն երկկողմանի առևտրա-տնտեսական կապերի էներգետիկ սեկտորում, այլև երկու երկրների տնտեսական հարաբերությունների ընդհանուր ծավալում: Դրա հետ մեկտեղ, արդի փուլում, լինելով երկու երկրների տնտեսական կապերի լոկոմոտիվը, ռուս-թուրքական երկխոսությունը գազի ոլորտում ծանրացած է կանխավ չափազանցված սպասումների և էներգակիրների տեղափոխման ու դիվերսիֆիկացման հարցի շուրջ ներկայիս քաղաքական կոնյունկտուրայի բեռով: Նշվածն իրեն առանձնահատուկ դրսևորեց ռուս-թուրքական «Երկնագույն հոսք» գազի նախագծի կապակցությամբ: Առաջինի կանխավ չափազանցված սպասումների վերաբերյալ կարելի է նշել հետևյալը:

Համաձայն նախնական պայմանագրի, «Բոթաշ» թուրքական ընկերությունը, որը մասնակցում էր գազամուղի թուրքական հատվածի շինարարությանը և հանդես էր գալիս որպես գազի գնորդ, ենթադրում էր, որ «Երկնագույն հոսք» գազամուղով դեպի Թուրքիա գազի կոմերցիոն մատակարարման արդեն առաջին իսկ տարում /2003 թ./[52], հազար խորանարդը 110 դոլար արժողությամբ և «take or pay» պայմաններում կգնի 4 մլրդ. խոր. մ. գազ, այսինքն կվճարի գազի համար, եթե նույնիսկ այն իրեն հարկավոր չէ: Հետագայում, մինչև 2010 թ.-ը նախատեսվում էր տարեկան ներկրումն ավելացնել 2 մլրդ.խոր.մ.-ով, հասցնելով այն մինչև 16 մլրդ. խոր.մ-ի: Պայմանագրի գործողության 25 տարիների ընթացքում «Գազպրոմը» նախատեսում էր ստանալ 25 մլրդ. դոլար:

Ժամանակին հրապարակված «Գազպրոմի» նախնական գնահատա-

կաններով /օրինակ, «Գազէքսպորտ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Յու. Կամարովի կողմից/ «տեսանելի հեռանկարում թուրքական շուկայում պահանջարկը բնական գազի նկատմամբ պետք է կտրուկ աճի, և աճի միջին տարեկան տեմպը կարող է երեք անգամ գերազանցել Արևմտյան Եվրոպայի նույնանման ցուցանիշը»: Համաձայն այն ժամանակվա կանխատեսումների, 2005 թ.-ին Թուրքիան գազի սպառումը կհասցնի 45 մլրդ.խոր.մ-ի, իսկ 2010-ին 54,5 մլրդ.խոր.մ-ի: Նույն կանխատեսումներով գազի մատակարարումը, ինչպես արևելյան ուղղությամբ /Սև ծովով/, այնպես և արևմտյան ուղղությամբ հնարավորություն կտա դեպի Թուրքիա ռուսական գազի արտահանումն ավելացնել մինչև 30 մլրդ.խոր.մ. 2008 թ.-ից, իսկ 2010 թ.-ին Ռուսաստանը կարող է բավարարել Թուրքիայի գազի պահանջարկի շուրջ 60 %-ը[53]:

Արդեն 2003 թ.-ի ապրիլին «Բոթաշը» դադարեցրեց գազի ընդունումը հայտարարելով, որ նա համաձայն չէ պայմանագրի պայմանների հետ և հիմնվելով տնտեսական ճգնաժամի վրա, պահանջեց իջեցնել գազի գինը մինչև 70 դոլար խոր. մ.-ի համար, գրեթե երկու անգամ կրճատել մատակարարման ծավալները և նույնիսկ սպառնաց «Գազպրոմի» դեմ հայց ներկայացնել Միջազգային արբիտրաժ: Իր հերթին, «Գազպրոմը», թուրքական կողմի գործողությունները համարեց նախապես ստացված միջպետական համաձայնությունների և ստորագրված պայմանագրերի կոպիտ խախտում և հայց ներկայացրեց Միջազգային արբիտրաժ:

Տևական ու դժվարին բանակցությունների ընթացքում երկու կողմերը հասան համաձայնության: Մասնավորապես, «Գազպրոմը» համաձայնվեց վերանայել գնի բանաձևը, միասնականացնել դեպի Թուրքիա գազի մատակարարման գործող պայմանագրերը այնպես, որպեսզի դրանք նկատելի չտարբերվեն եվրոպական երկրների հետ առկա նմանատիպ համաձայնագրերից, և դադարեցնել արբիտրաժային քննությունները: Նա նաև պատրաստակամություն ցուցաբերեց տրամադրել հասույթի մի մասը թուրքական գազային ենթակառուցվածքների զարգացմանը:

Դրանից հետո «Բոթաշը» հայտարարեց 2003 թ.-ի օգոստոսի 1-ից գործող պայմանների հիման վրա գազի ընդունման վերսկսման մասին և պարտավորվեց մինչև 2003 թ.-ի ավարտը նվազագույնը գնել 800 մլն.խոր.մ. գազ, որը հնարավորություն կտար խույս տալ «take or pay» բանաձևով վճարումներից: Համաձայն «Գազպրոմի» և «Բոթաշի» նոր պայմանագրի գազի մատակարարման պլանավորված գրաֆիկը ենթադրում էր. 2004 թ.-ին 4 մլրդ.խոր.մ. գազի մատակարարում և հետագայում մինչև 2010 թ.-ը մատակարարումը պետք է ավելանար տարեկան 2 մլրդ.խոր.մ.-ով, մինչև տարեկան 16 մլրդ.խոր.մ. ցուցանիշը: Կողմերը համաձայնվեցին բոլոր վիճելի հարցերը լուծել արտադատական կարգով[54]:

Ինչպես նշվեց, 2003 թ.-ին 16 մլրդ.խոր.մ. թողունակությամբ գազամուղով մատակարարումների ծավալը տարեկան կազմում էր ընդամենը 2 մլրդ.խոր.մ:

Երկրորդի էներգակիրների տեղափոխման ու դիվերսիֆիկացման հարցերի քաղաքական կոնյունկտուրացման կապակցությամբ նշենք, որ էներգակիրների ներկայիս դեֆիցիտի, դրանց բարձր գների և դրանց նկատմամբ մուտքի ու հոսքերի վերահսկման դաժան պայքարի պայմաններում, էներգակիրներ արտադրողի ու ընդունողի միջև հարաբերություններում ի

սկզբանե դրված են հակասական բնույթի տարրեր: Էներգակիրների մեծ պաշարներով օժտված արտադրողը մշտապես ձգտելու է առավելագույնի հասցնել դրանց վաճառքից ստացված օգուտը և միաժամանակ որպես առաջին նպատակի ապահովման միջոց, փորձելու է առավելագույնս վերահսկել դրանց տեղափոխումը: Էներգակիրների բացառապես սպառող հանդիսացող երկրները, որոնք մշտապես զգում են դրանց պակասը, իրենց հերթին փորձելու են իրենց «բնական» հեռավորությունը փոխհատուցել, օգտագործելով տարանցիկ երկրի իրենց առավելությունները սեփական տնտեսության կայունության պահպանման համար դրսից ներմուծվող էներգառեսուրսների դիվերսիֆիկացիայի անհրաժեշտության սկզբունքի վրա միաժամանակյա շեշտադրմամբ: Հնարավոր է, որ նման բնույթի դասական սյուժե է հանդիսանում Ռուսաստանի ու Թուրքիայի միջև գազի շուրջ ժամանակակից երկխոսությունը:

Թուրքիան ավելի ու ավելի համառորեն հայտարարում է էներգակիրների մատակարարման ոլորտում Ռուսաստանից լիարժեք կախվածության անթույլատրելիության մասին: Ձգտելով ազատվել բնական գազի մատակարարման մեկ երկրի մենաշնորհից Թուրքիան ածխաջրածնային հումքի ստացման այլընտրանքային աղբյուրների որոնման նպատակով ակտիվ քայլեր է ձեռնարկում Ադրբեջանի, Թուրքմենստանի, Իրանի, Եգիպտոսի ու Կատարի ուղղությամբ[55]:

Ինչպես նշում են ռուսական փորձագետները, աշխարհաքաղաքական խաղի ներկայիս փուլում օգտագործելով մրցակցող կողմերի միջև հավասարակշռության ավանդական քաղաքականությունը, Թուրքիային հաջողվեց նվազեցնել դեպի ներքին շուկա ռուսական գազի նոր չափաբաժնի մուտքի քաղաքական հետևանքները սահմանափակելով Ռուսաստանի ձգտումները զուտ իր առևտրային շահերի պաշտպանությամբ: Սակայն, այդ խաղում սպասվում են այլ փուլեր ևս, որոնց ընթացքում Թուրքիան կարող է բախվել գազի անբավարարությանը: Հատկապես դա են վկայում «Բոթաշի» նախնական հաշվարկները 2015 և 2020 թթ.-ին առումով, երբ պահանջարկի նկատմամբ առաջարկի գերակայության երկարատև ժամանակահատվածից հետո Թուրքիան կբախվի հակառակ երևույթի հետ 1984 թ.-ի Ռուսաստանի հետ գազի շուրջ առաջին երկկողմանի համաձայնության գործողության ժամկետի ավարտման հետևանքով, երբ ներկրման հոսքերը կնվազեն 6 մլրդ.խոր.մ-ով: Բացառված չէ, որ մինչ այդ կնվազի Ռուսաստանի կախվածությունը էներգետիկ արտահանումից: Այդ դեպքում ռազմավարական առավելությունները կլինեն Ռուսաստանի կողմը: Ուստի կարևոր է, որպեսզի ցանկացած պարագայում յուրաքանչյուր փուլը պահպանի կառուցողական բանակցությունների փուլի բնութագրերը, այլ ոչ թե էներգետիկ պայքարի[56]:

Ներկայումս ռուսական գազի մատակարարումը Թուրքիա իրականացվում է «Գազէքսպորտ» ՍՊԸ-ի և «Բոթաշ» ընկերության, ինչպես նաև «Գազէքսպորտ» ՍՊԸ-ի և «Թուռուսգազ» ԲԸ ռուս-թուրքական ընկերության միջև պայմանագրերի շրջանակներում /«Գազպրոմ» ԲԲԸ-ի մասնաբաժինը կազմում է 45%/:

Գազի մատակարարումը Թուրքիա
/Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված պայմանագրերը/

	Պայմանագրի ավարտի տարին	Գազի մատակարարման ծավալը /մլրդ.մ³/		
		2005 թ.	2010 թ.	2020 թ.
Ռուսաստան /Արևմտյան ուղի	2012	6,0	6,0	–
Ռուսաստան /«Թուրուսգազ»/	2020	8,0	8,0	–
Ռուսաստան /«Երկնագույն հոսք»/	2027	8,0	16,0	16,0

2006 թ.-ին Թուրքիա է արտահանվել 19,9 մլրդ.խոր.մ. ռուսական գազ: Ներկայումս Թուրքիան ռուսական գազի գնումների ծավալով զբաղեցնում է երրորդ տեղը[57]:

Գազի ոլորտում կողմերը փորձում են դուրս գալ համագործակցության նոր հեռանկարային շուկաներ: Նման ծրագրերը կապվում են ինչպես Թուրքիայում գազի բնագավառի զարգացման օբյեկտիվ նախադրյալների հետ /ինչպես հայտնի է, գազի բնագավառը սերտորեն կապված է տնտեսական համագործակցության այլ ոլորտների հետ, օրինակ, շինարարության ու էներգետիկայի ոլորտների գազատրանսպորտային ենթակառուցվածքների, գազաբաշխիչ կետերի, ջերմաէլեկտրակայանների ենթակառուցվածքների շինարարություն և այլն/, այնպես էլ դեպի երրորդ երկրների շուկաներ դուրս գալու հեռանկարի հետ:

Թուրքիայի տարանցիկ ներուժի արժեքը կայանում է ոչ միայն իր եվրոպական վեկտորի իրացման մեջ: Մերձավոր Արևելքի երկրները և Իսրայելը կարող են օգտագործել Անկարայի տարանցիկ հնարավորությունները, մասնավորապես գազի գծով բացելով ևս մեկ հեռանկարային ուղղություն: Առավել ևս, տվյալ թեման այս կամ այն ակտիվությամբ շոշափվում է Թուրքիայում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Իսրայելում և Ռուսաստանում: Ժամանակին ռուս-թուրքական նախագծի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերեց Բ. Նեթանյահուի իսրայելական կառավարությունը: Մոսկվայում, Անկարայում և Երուսաղեմում ակտիվորեն քննարկվում էր գազամուղի ճյուղի երկարացման հնարավորությունը դեպի հարավ՝ Իսրայել, և դրա հետ կապված հեռանկարները: 2002 թ.-ի մայիսին «Գազպրոմի» պատվիրակությունը այցելեց Իսրայել ռուսական գազի մատակարարման բանակցությունների նպատակով: Նույն տարվա դեկտեմբերին «Ստրոյտրանսգազ» ընկերության առաջին փոխնախագահ Ե. Լավրենտևը հաղորդեց. «Ռուսաստանը մնում է թուրքական շուկա գազի գլխավոր մատակարարը և հնարավորություն ունի այդ երկիրն օգտագործել որպես տարանցիկ, ընդհուպ մինչև Իսրայել մատակարարման համար: Հաշվարկն արված է հեռանկարի, դեպի Թուրքիա գազի մատակարարման կայունության վրա, ուր կտրուկ աճում է ներքին սպառումը, և ավելի հեռու դեպի Ասիա և Մերձավոր Արևելք»[58]:

Ռուսաստանի և Թուրքիայի միջև ակտիվ քաղաքական երկխոսության 2004-2005 թթ.-ի ժամանակահատվածում էլ ավելի էր շեշտադրվում Թուրքիայի ու Իսրայելի միջով Ռուսաստանից գազի մատակարարման հնարավորությունը /տարեկան 4-6 մլրդ.խոր.մ. ծավալով/: Ծրագրերում առկա էր նաև Թուրքիայի տարածքում Աղի լճի մոտակայքում ստորգետնյա պահեստարանի շինարարության հարցը[59] 5 մլրդ.խոր.մ. ծավալով[60]:

2002 թ.-ին փոքր-ինչ նվազեցին Ռուսաստանից Թուրքիա մատակարարվող նավթի գնային ծավալները. 776 մլն. դոլարից մինչև 706 մլն. դոլար: 2003 թ.-ին դրանք զգալիորեն ավելացան – 850 մլն. դոլար /4,3 մլն. տոննա/:

2003 թ.-ին նավթամթերքի մատակարարումը կազմեց 1,9 մլն. տոննա /500 մլն. դոլար/: 2002-2003 թթ.-ի ընթացքում քարածխի մատակարարումը 162 մլն. դոլարից աճեց 235 մլն. դոլարի: 2005 թ.-ին «Թաթնավթ» ընկերության գծով Թուրքիային մատակարարվեց 5 մլն. տոննա նավթահումք:

2000-ական թվականների սկզբներին ռուս-թուրքական նավթային երկխոսությունը զգալիորեն ծանրացած էր սևծովյան նեղուցներով նավթի փոխադրման հարցի շուրջ երկրների միջև պահպանվող հակասություններով: Թուրքիան շարունակում էր փաստարկել նեղուցներով նավթային լցանավերի շարժման սահմանափակման անհրաժեշտության և բնապահպանական նպատակով իր կողմից վերահսկողության լրացուցիչ միջոցների ներմուծման իր դիրքորոշումը: Այսպես օրինակ, 2004 թ.-ի սկզբի տվյալներով, նույնիսկ թուրքական նախկին սահմանափակումների հաշվառումով, Բոսֆորով և Դարդանելով օրական անցնում էր շուրջ 14 ռուսական լցանավ, իսկ միայն 2002-2003 թթ.-ի ընթացքում նեղուցներով ռուսական նավթային տեղափոխումների ծավալը աճեց 25 %-ով և կազմեց 77 մլն. տոննա[61]: Բնական է, որ նման դիրքորոշումը շահավետ չէր Ռուսաստանին, սակայն պետք է նշել, որ 2004 թ.-ից հետո Ռուսաստանի ու Թուրքիայի միջև բարձր մակարդակով տարվող քաղաքական երկխոսության հնտենսիվացումից հետո, նավթի տեղափոխման ուղիների հետ կապված հիմնախնդիրները զգալիորեն սքողվեցին և կողմերը փորձեցին համակշռել նշված հակասությունները գազային համագործակցության խորացմամբ, չնայած որ, ինչպես վերը նշվեց, գազի ուղղությամբ դա կատարվում էր գերազանցապես ռուսական կողմի զիջումների հաշվին:

Նավթի ու նավթամթերքի մատակարարումների դիվերսիֆիկացման Թուրքիայի հետագա նախագծերը զգալի չափով նվազեցրեցին Ռուսաստանի ու Թուրքիայի միջև առևտրա-տնտեսական կապերի ընդհանուր կառուցվածքի տվյալ սեգմենտը: Այսպես օրինակ, 2006 թ.-ին փորձագետները նշում էին, որ Բալթիական խողովակաշարային համակարգի /ԲԽՀ/ շինարարության ավարտի հետ կապված, Ռուսաստանը պակասեցրեց իր կախվածությունը հարավ-արևմտյան ուղղությունից: Նովոռոսիյսկից ուղևորվող լցանավերը անցնում են թուրքական երկու նեղուցներու՝ Բոսֆորով և Դարդանելով: Թուրքական կողմից մշտապես ի հայտ են գալիս տարածայնություններ ռուսական լցանավերի տարանցիկության առթիվ: Այնպես, որ արտակարգ իրավիճակներում նավթային հոսքերը մասամբ կարող են վերակողմնորոշվել դեպի հյուսիսային խողովակ, ինչը Ռուսաստանին հավելյալ առավելություններ է տալիս թուրքական նեղուցներով տարանցման շուրջ Անկարայի հետ բանակցություններում[62]:

Էներգետիկ ոլորտում երկու երկրների փոխշահավետ համագործակցության հավանական հեռանկարային բնագավառներից մեկը կարող է դառնալ էլեկտրաէներգետիկան:

Ռուս-թուրքական ու թուրք-ռուսական գործարար խորհուրդների 2005 թ.-ի հունվարի 12-ի համատեղ նիստի ժամանակ, որին մասնակցում էր այդ ընթացքում Մոսկվայում գտնվող Ռ. Էրդողանը, ՈԴ-ի արդյունաբերության

ու էներգետիկայի նախարար Վ. Խրիստենկոն նշեց, որ «Վառելիքաէներգետիկ համալիրի ոլորտները վճռորոշ դեր են կատարում Ռուսաստանի և Թուրքիայի միջև երկկողմանի հարաբերություններում»: Համագործակցության կարևոր ուղղությունների շարքում Վ. Խրիստենկոն նշեց էլեկտրաէներգետիկան. «Դա առավել նվազ զարգացած, բայց, ըստ իս, համագործակցության առավել հեռանկարային բնագավառն է: Թուրքիայում ընթանում են էլեկտրաէներգետիկայի մասշտաբային բարեփոխումներ, որը նման է Ռուսաստանում առկա իրավիճակին»: Վ. Խրիստենկոն նաև հաղորդեց, որ «Ռուսաստանը շահագրգռված է թուրքական տարածքի բաշխիչ ցանցերում ներդրումներ կատարելու մեջ, շահագրգռված է էլեկտրաէներգիայի երկկողմանի մատակարարման հնարավորության օգտագործման, ինչպես նաև դեպի երրորդ երկրներ դրանց մատակարարման մեջ»[63]:

3. Հարաբերությունները շինարարության ոլորտում

Թուրքական կողմի խոստովանությամբ, շինարարա-կապալային սեկտորը Թուրքիայում հանդիսանում է տնտեսության գործունեության կարևոր բնագավառը: Արտադրված հավելյալ արժեքի մեծությունը և զբաղվածության ստեղծված ծավալը, ինչպես նաև տարադրամային շահույթը հնարավորություն են տալիս այդ սեկտորը դասել ազգային տնտեսության առաջատար ոլորտների շարքին: Շինարարական սեկտորի մասնաբաժինը, երկրում ընդհանուր զբաղվածության մեջ /բացառությամբ գյուղատնտեսությանը վերաբերվող հատվածի/ հաշվի չառնելով ճգնաժամային ժամանակահատվածները, հասնում է 10-11 %-ի: ՀՆՊ-ում դրա ուղղակի մասնաբաժինը կազմում է 6 %, իսկ հարակից սեկտորների հետ այն մոտենում է 30 %-ին: Տարադրամային շահույթները, որոնք գոյանում են շինարարական ծառայությունների մատուցման ու շինանյութի արտահանման արդյունքում, չեն իջնում Թուրքիայի ընդհանուր արտահանման 10%-ից:

Դեպի արտաքին շուկա թուրքական շինարարա-կապալային ծառայությունների ելքը սկսվեց Լիբանանից 1970-ական թվականների սկզբներին, որին հետևեց Սաուդյան Արաբիան: 1970-1980-ական թվականներին արտասահմանյան աշխատանքների ավելի քան 90%-ը կատարվում էր արաբական երկրներում: Ելնելով այն բանից, որ 1990-ական թվականներին Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի երկրները տնտեսական դժվարություններ ու քաղաքական անորոշության մեջ էին, թուրքական կապալառուները վերակողմնորոշվեցին դեպի ԱՊՀ, Արևելյան Եվրոպայի ու Ասիայի երկրները, մասնավորապես խոշոր նախագծեր իրականացվեցին Ռուսաստանում, Ուկրաինայում, Կովկասում, Կենտրոնական Ասիայի հանրապետություններում, Գերմանիայում, Պակիստանում և Հեռավոր Արևելքում: 1972-2005 թթ.-րի ժամանակահատվածում արտասահմանում իրականացված աշխատանքները համամասնական առումով բաշխվեցին հետևյալ կերպ.՝ Լիվիային բաժին ընկավ 23%-ը, Ռուսաստանին 20%-ը, Սաուդյան Արաբիային 10%-ը, Թուրքմենստանին 4%-ը, Ղազախստանին 6%-ը, Պակիստանին 3%-ը, Իրաքին 4%-ը, ՄԱԷ-ին 2%-ը, Ուզբեկստանին 2%-ը և այլ երկրներին 23%-ը[64]:

2000թ.-ից հետո շարունակվեց թուրքական շինարարական ընկերությունների ակտիվ գործունեությունը Ռուսաստանի տարածքում: Ռուսաստանի ու Թուրքիայի տնտեսական համագործակցության տվյալ սեգմենտում փորձագետները նշում են թուրքական բիզնեսի շատ բարձր կառուցվածքայնությունը, որի շահերին սատարում են տարբեր գործարար ասոցիացիաներ ու միավորումներ:

2001թ.-ին թուրքական շինարարական ընկերությունների կողմից իրականացված աշխատանքների ծավալը կազմեց ավելի քան 350 մլն. դոլար: 2003-2004թթ.-ին թուրքական շինարարական ընկերությունները ավելի քան 1 մլրդ. դոլար արժողությամբ կապալային պայմանագրեր ստորագրեցին:

Մինչև 2004 թ.-ը թուրքական շինարարական ընկերությունների կողմից Ռուսաստանի ամբողջ տարածքում կառուցվեց շուրջ 800 օբյեկտ /Ռուսաստանի տարածքում թուրքական շինարարական ընկերությունների գործունեության աշխարհագրությունը լայնածավալ է. Մոսկվա և Մոսկվայի շրջան, Սանկտ-Պետերբուրգ, Թաթարստան, Բաշկիրիա, Սվերդլովսկի, Վլադիմիրի, Ռոստովի շրջաններ, Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասեր, Յակուտիա, Չուկոտկա/: 2004թ.-ի տվյալներով ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմեց շուրջ 12,3 մլրդ. դոլար, իսկ իրականացվածներինը՝ շուրջ 7 մլրդ. դոլար:

2006 թ.-ի տվյալներով թուրքական ընկերությունները Ռուսաստանում իրականացնում էին 17 մլրդ. դոլար ընդհանուր արժողության կապալային աշխատանքներ[65]:

2006 թ.-ին թուրքական կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների ծավալով Ռուսաստանը այլ երկրների ցանկում զբաղեցնում էր առաջատար դիրք 22% մասնաբաժնով: Այդ տարվա ընթացքում թուրք շինարարները Ռուսաստանում շուրջ 2,7 մլրդ. դոլար ընդհանուր արժողության պայմանագրեր ստորագրեցին /71 նախագիծ/: Այսպիսով, վերջին 15 տարիների ընթացքում ստացված ու իրացված նախագծերի ծավալը կազմեց ավելի քան 20 մլրդ. դոլար[66]:

Ռուս-թուրքական տնտեսական կապերում առկա դիսբալանսը բնորոշ է նաև շինարարության ոլորտին: 2004թ.-ին ռուսական ընկերությունները Թուրքիայում ունեին միայն 400 մլն. դոլարի շինարարական պայմանագրեր:

Ռուսական շինարարական ընկերությունների ունեցած պայմանագրերը էներգատրանսպորտային ոլորտի հետ կրում էին հարակից բնույթ, այսինքն օբյեկտների շինարարությունը կապված էր էներգետիկ նախագծերի իրականացման և Թուրքիայի տարածքում տրանսպորտային ենթակառուցվածքների շինարարության հետ:

Ռուսական կողմը նշում է, որ ռուսական կազմակերպությունների ու ընկերությունների կողմից Թուրքիա մեքենա-տեխնիկական արտադրանքի մատակարարման ծավալների զգալի ավելացման սահմանափակ հնարավորությունների հաշվառումով /երկրի տնտեսության սերտ կապվածությունը արևմտյան տեխնիկական և այլ ստանդարտներին ու գործընկերներին, Թուրքիայի տարածքում արևմտյան կապիտալով ստեղծված այլ մեքենաշինական ընկերությունների կողմից առկա բարձր մրցակցությունը, ԵՄ-ի երկրների համար ներկրման սակագների բացակայությունը, արտադրանքի սերտիֆիկացման երկարատև ժամկետներն ու կազմակերպչական դժվարությունները և այլն/, արտահանման կառուցվածքի բարելավման հիմնական ուղղությունը հանդիսանում է Թուրքիայում գերազան-

ցապես էլեկտրաէներգետիկայի, նավթա-գազային ու տրանսպորտային շինարարության օբյեկտների կառուցումը[67]:

2000-ական թվականների սկզբին, ռուսական ընկերությունները Թուրքիայում շինարարական պայմանագրեր ունեին շուրջ 350 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ: Դրանցից էին Չերքեզչոյ-Կապզկույե երկաթգծի էլեկտրիֆիկացիան /14,0 մլն. դոլար/, երեք կամուրջների կառուցումը /60,0 մլն. դոլար/, ամբարտակի և «Դերիներ» ՀԷԿ-ի կառուցումը /40,0 մլն. դոլար/[68], Իսկենդերունի մետալուրգիական գործարանի /3,0 մլն. դոլար/ և Սեյդիշեքիրի ալյումինի համալիրի արդիականացումը, Իմրանլի-Կայսերի /40,0 մլն. դոլար/, Սամսուն-Անկարա /150,0 մլն. դոլար/ գազամուղների շինարարությունը, գազապահեստարանի շինարարության ինժինիրինգային աշխատանքները /4,5 մլն. դոլար/, Ստամբուլում «Մելեն» նախագծի ջրատարերից մեկի կառուցումը /շուրջ 50,0 մլն. դոլար/:

2002 թ.-ին ստորագրվեցին պայմանագրեր Թուրքիայի հյուսիս-արևելքում Բերտա գետի վրա ամբարտակների ու «Բայրամ» /69 ՄՎտ/ և «Բաղլիկ» /58 ՄՎտ/ ՀԷԿ-երի շինարարության[69], ինչպես նաև «Օրխանելի» ՋԷԿ-ի կապիտալ վերանորոգման համար: Ռուսական կողմն առաջարկում է իր շինարարական ընկերությունների ակտիվ մասնակցությունը երկկողմանի տնտեսական համագործակցության ևս մեկ հարակից Թուրքիայի շրջանների ու քաղաքների գազաֆիկացման ոլորտում:

Շինարարության բնագավառում անհամամասնության վերացումը հանդիսանում է թուրքական կողմի բոլոր մակարդակների մշտական քննարկման առարկա, ի նկատի ունենալով ռուսական կազմակերպությունների էլ ավելի լայն մասնակցության ապահովումը Թուրքիայում օբյեկտների շինարարության մեջ ինչպես երկկողմանի, այնպես էլ մոցդայնային հիմունքների վրա: Այդ առթիվ աշխատանք է տարվում տարբեր բնագավառներում Թուրքիայի հետ համագործակցությունն ակտիվացնելու ուղղությամբ, այն է. էներգետիկայի բնագավառում /նավթա և գազամուղերի կառուցում, գազաբաշխիչ կայանների, ՋԷԿ-ի, ՀԷԿ-ի, ԷՀԼ-ի շինարարություն և այլն/, տրանսպորտային շինարարության մեջ /երկաթգծերի, մետրոյի շինարարություն ու արդիականացում, երկաթգծերի տարբեր տեղամասերի էլեկտրիֆիկացում, կամուրջների, թունելների և անցումների շինարարություն/, նախկինում, դեռևս խորհրդային աջակցությամբ կառուցված օբյեկտների արդիականացում և ընդլայնում /Իսկենդերունի մետալուրգիական գործարան, Սեյդիշեքիրի ալյումինի գործարան և այլն/[70]:

Ռուսական էներգետիկ «ֆլագմանների» ծրագրերում առկա են Թուրքիայի տարածքում խոշոր օբյեկտների կառուցումը և շինարարական ներուժի առումով հեռանկարային նախագծերում մասնակցությունը: Այսպես օրինակ, մինչև 2010 թ.-ը «ԼՈՒԿՈՅԼ» ընկերությունը նախատեսում էր Թուրքիայի սևծովյան ափին կառուցել նավթավերամշակման գործարան, որում ներդրումների ծավալը կազմում է 2,5-3 մլրդ. դոլար, ինչպես նաև բացել իր ԱԼԿ-երի ցանցը[71]:

ՌԱՕ «ԵԷՍ Ռոսիի»-ն հայտարարում էր Թուրքիայի մի շարք տարածքային պետական էլեկտրացանցային ընկերությունների ձեռքբերման աճուրդում իր մասնակցության պատրաստակամության մասին[72]:

Ռուսական կողմն առաջարկում է նաև ռուսական ընկերությունների մասնակցությունը ատոմային էներգետիկայի զարգացման թուրքական

ծրագրի իրականացմանը «հաշվի առնելով ԱԷԿ-երի շինարարության ու անվտանգ շահագործման Ռուսաստանի հարուստ փորձը»[73]:

Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարակից վերջին նախագծերից /շինարարա-արդյունաբերական/ մեկը դարձավ Թուրքիայում մետալուրգիական համալիրի կառուցման նախագիծը: Նախագծին մասնակցում են Մագնիտոգորսկի մետալուրգիական կոմբինատը և թուրքական «Աթաքաշ Գրուպ» հոլդինգը: Նախատեսվում է կառուցել մետալուրգիական համալը տարեկան 2,6 մլն. տոննա արտադրողականությամբ: Այստեղ հիմնական տեղը կգբաղեցնեն թիթեղային ու ցինկապատ, ինչպես նաև պոլիմերային ծածկով գլանվածքը: Նախագծի իրացման ժամկետը 3 տարի է, իսկ մոտավոր արժեքը 1,1 մլրդ. դոլար[74]:

4. Երկկողմանի ներդրումները

2001 թ.-ին թուրքական կուտակված ներդրումների ընդհանուր ծավալը Ռուսաստանում կազմում էր շուրջ 600 մլն. դոլար:

2002 թ.-ի տվյալներով Ռուսաստանի տարածքում առավել խոշոր թուրքական ներդրումային ծրագրերն էին.

Ընկերությունը	Նախագիծը	Կապիտալ ներդրումների ծավալը /մլն. դոլար/
«Անադոլու Ինդաստրի Հոլդինգ»	- գարեջրի գործարան «Էֆես» Բիրուլյովոյում, Մոսկվա - ածիկի արտադրության գործարան	77,5 13
«Անադոլու Ինդաստրի Հոլդինգ»	- «Կոկա-կոլա»-ի գործարան Դոնի-Ռոստովում	27,5
«Էկուր Ինշաաթ» /«ԱՏԱ» հոլդինգի դուստր ընկերությունը/	- փայտամշակման գործարան Վիբորգում, Լենինգրադի մարզ	15
«Կոչ Հոլդինգ» / «Ռամ Թորեյն Թրեյդ» և «Էնկա»	- «Ռամստոր» սուպերմարկետների ցանց	220
«Էնկա»	- գործարար կենտրոն Պավելեցկու վրա և այլ օբյեկտներ Մոսկվայում	100
«Ռոդիկ»	- մի շարք շենքերի վերանորոգում Մոսկվայում	25
«Էնտեա»	- գործարար կենտրոն Մոսկվայում	15
«Թիմ-Տոբբ»	- թուրքական առևտրի կենտրոն Մոսկվայում	45
«Հիշե-Ջամ»	- ապակե տարայի գործարան Գորոխովեցում, Վլադիմիրի մարզ	26
«Անադոլու Ինդաստրի Հոլդինգ»	- գարեջրի գործարան «Էֆես» Դոնի-Ռոստովում	20

2000-ական թվականների սկզբում թուրքական կապիտալը ֆինանսավորում էր Ռուսաստանում հետևյալ խոշոր օբյեկտների կառուցումը. Մոսկվայի Ապստամբության հրապարակի գործարար կենտրոնը /80,0 մլն դոլար/, Մոսկվայի թիվ 31 հիվանդանոցը /38,0 մլն. դոլար/, սարքաշինական գործարանը Չելյաբինսկի մարզի Տրյոխգորնի քաղաքում /38,0 մլն.

դոլար/, Կենտրոնական կլինիկական հիվանդանոցը /ՈԴ-ի նախագահի գործերի կառավարչության ԿԿՀ-ը/ /80,0 մլն. դոլար/, Կոչուբենյան շաքարի գործարանը /Ստավրոպոլի երկրամասի Կոչուբենո գյուղում, Ստավրոպոլից 54 կմ դեպի հարավ/ /60 մլն. դոլար/[75]:

Հետագա տարիներին Ռուսաստանի տարածքում թուրքական ընկերությունների ներդրումային ակտիվությունն ուներ աճող միտում:

2002թ.-ի ավարտին թուրքական ներդրումների ընդհանուր ծավալը կազմեց շուրջ 700 մլն. դոլար: 2004 թ.-ի սկզբին ռուսական տնտեսության մեջ թուրքական ներդրումների կուտակային ծավալը կազմեց շուրջ 1,5 մլրդ. դոլար: Բացի առևտրի ոլորտի մեջ թուրքական կապիտալի ավանդական ներդրումները /այսպես, 2004 թ.-ին «Ռամստոր» սուպերմարկետների ցանցը աճեց մինչև 28 օբյեկտի ներդրումների 250 մլն. դոլար ծավալով/, թուրքական ներդրումների հիմնական ուղղություններից դարձան տեքստիլ, սննդի, ապակու, էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, քիմիական, փայտամշակման արդյունաբերությունները, շինարարական ու հարդարման նյութերի արտադրությունը և ծառայությունների մատուցումը /զբոսաշրջություն, բանկային սեկտոր/:

Որպես կանոն, դրանք ուղղակի ներդրումներ էին, և միայն աննշան մասը՝ ոչ ավել քան 100 մլն. դոլարը, կազմեցին արժեթղթերի տեսքով պորտֆելային ներդրումները, որոնք ձեռք էին բերվում ռուսական շուկայում հինգ թուրքական բանկերի կողմից՝ «Յաւիի Կրեդի Մոսկվա», «Գարանտա Բանկ Մոսկվա», «Ֆինանսբանկ Մոսկվա», «Զիրաատ Բանկ» և «Դենիզբանկ Մոսկվա»:

2000-ական թվականների կեսերին Ռուսաստանի տարածքում իրականացվող առավել խոշոր ներդրումային նախագծերն էին. Ռուսաստանի տարբեր քաղաքներում «Ռամստոր» 12 սուպերմարկետների ցանցը, «Վեստել» ապրանքանիշի հեռուստացույցերի հավաքման գործարանը Վլադիմիրի մարզի Ալեքսանդրով քաղաքում /2-րդ հերթափոխ/, «Ռոքլանդ» ապրանքանիշի կոշիկի ֆաբրիկան Մոսկվայի մարզի Սերպուխով քաղաքում, գարեջրի գործարանի ընդլայնումը Մոսկվայի մարզի Բիրյուլյովո քաղաքում, լվացող միջոցների գործարանը Մոսկվայի մարզի Կլին քաղաքում, առևտրա-գործարար կենտրոնը Մոսկվայի Պավելեցկայա ափափողոցում /«Էնկա», ընդլայնում/, կենցաղային էլեկտրատեխնիկայի գործարանը Մոսկվայի մարզի Կապուտնա քաղաքում, ուռուցքաբանական կենտրոնը Տոմսկ քաղաքում:

2006 թ.-ի սկզբին թուրքական ուղղակի ներդրումների ծավալը ռուսական տնտեսության մեջ կազմեց շուրջ 3 մլրդ. դոլար: Տվյալ փուլում առավել խոշոր իրացվող ներդրումային նախագծեր էին հանդիսանում հետևյալները. «Ռամստոր» սուպերմարկետների ցանցը /ընդլայնում/, սառնարանների ու լվացքի մեքենաների արտադրության գործարանի գործարկումը Վլադիմիրի մարզի Կիրժաչ քաղաքում /58 մլն. դոլար/: 2005 թ.-ին «Շերեմետևո» օդանավակայանի երրորդ տերմինալի շինարարության գլխավոր կապալառուն դարձավ «Էնկա» թուրքական ընկերությունը, որը համաձայնվեց կառուցել տերմինալը 26 ամիսների ընթացքում և տեղավորվել 400 մլն. դոլար արժեքի մեջ: Թուրքական «Թոֆաշ» ընկերությունը և ռուսական «Սեվերստալ ավտո»-ն 2006 թ.- հունվարին պայմանագիր ստորագրեցին Կազանի մոտ տարեկան 30 հազ. «Ֆիատ» ավտոմեքենաների հավաքման հոսքագծի շինարարության մասին:

2006 թ.-ի սկզբի դրությամբ թուրքական ներդրումների ծավալը Ռուսաստանում կազմեց 2,3 մլրդ. դոլար[76]:

Ռուսաստանի վերջին շրջանի ձեռքբերումները /2014 թ.-ի Ձմեռային Օլիմպիադայի անցկացումը Սոչիում/ թուրքական կողմը դիտարկում է որպես հեռանկարային խթան հյուսիսային հարևանի տարածքում իր ներդրումային ակտիվության հետագա ընդլայնման համար:

«Մենք հաղթեցինք Սոչիի հետ միասին», այսպիսին էր մրցույթում 2014 թ.-ի Ձմեռային Օլիմպիադայի անցկացման համար Ռուսաստանի հաղթանակի գնահատականը Թուրքիայում: Առաջիկա հինգ տարիների ընթացքում Թուրքիան մտադիր է Կրասնոդարի երկրամաս ներդրումներ կատարել ավելի քան 4 մլրդ. դոլարի չափով, որտեղ 2014 թ.-ին կանցկացվեն Ձմեռային Օլիմպիական խաղերը, որի մասին հայտարարեց թուրք-ռուսական գործարար խորհրդի նախագահ Թուրգուտ Գյուրը: Ինչպես հայտնի է, Սոչիում Օլիմպիական խաղերի նախապատրաստման ընթացքում Ռուսաստանը պատրաստվում է Կրասնոդարի երկրամասի սոցիալտնտեսական ու սպորտային ենթակառուցվածքների մեջ ներդնել 43 մլրդ. դոլարի պետական ու մասնավոր ներդրումներ: «Մեր նպատակը, - ընդգծեց Թուրգուտ Գյուրը, - այդ ներդրումային «թխվածքից» նվազագույնը 10 տոկոսի ստացումն է»[77]:

2001 թ.-ի դրությամբ, համաձայն Թուրքիայի գանձապետարանի տվյալների, Թուրքիայում գրանցված ռուսական ընկերությունների կապիտալի ընդհանուր ծավալը կազմում էր 50 մլն. դոլար: Առաջին հերթին դրանք տրանսպորտային փոխադրումներով, առևտրով ու զբոսաշրջությամբ զբաղվող ընկերություններ են:

Թուրքիայի տնտեսության մեջ ռուսական ներդրումների գումարային ծավալը 2002 թ.-ի վերջին գնահատվում էր շուրջ 100 մլն. դոլար: 2002 թ.-ին ստորագրվեց պայմանագիր և սկսվեցին Թուրքիայում առաջին ռուս-թուրքական համատեղ ներդրումային նախագծի իրականացման աշխատանքները Կիլիս քաղաքում /Գազիանթեպ նահանգ/ շամայլ գինիների գործարանի շինարարությունը /ռուսական ներդրումների ծավալը գնահատվում էր շուրջ 20 մլն. դոլար/:

2000-ական թվականների կեսերին ռուսական կապիտալի փորձերը Թուրքիայի տարածքում մասնակցել խոշոր ներդրումային նախագծերին ավարտվեցին անհաջողությամբ: Ռուսական ընկերությունները 2004 թ.-ի սկզբին մասնակցություն ունեցան թուրքական «Թյուրքաշ» նավթավերամշակման կոնցեռնի մասնավորեցմանը /«Թաթնավթ»-ի գլխավորությամբ ընկերությունների խմբի կողմից շահած 1,3 մլրդ. դոլար արժողությամբ մրցույթը թուրքական դատարանի որոշմամբ չեղյալ հայտարարվեց/, «Էրդեմիր» մետալուրգիական կոնցեռնի մասնավորեցմանը /2005 թ.-ի հոկտեմբերին կայացած աճուրդում հաղթեց թուրքական «ՕՅԱԿ» կոնցեռնը/, «Թելսիմ» հեռահաղորդակցական ընկերության մասնավորեցմանը /անարդյունավետ/:

2005 թ.-ին ռուսական «Ալֆա Գրուպ»-ը ձեռք բերեց թուրքական բջջային կապի խոշորագույն օպերատոր «Թյուրքսել»-ի արժեթղթերի փաթեթը /13,2 %, պայմանագրի ընդհանուր գումարը կազմեց 3,3 մլրդ. դոլար/: «Մետրոստրոյ» ԲԲԸ-ը «Ինգեռկոմ» ընկերության և երկու թուրքական շի-

նարարական ընկերությունների հետ կոնսորցիումով շահեց Բոսֆորի տակ թունելի շինարարության մրցույթը, որով պետք է անցնի ջրատարը /նախագծի արժեքն է շուրջ 120 մլն. դոլար/:

Վերջին ժամանակները ռուսական կողմը էլ ավելի համառորեն շեշտադրում է կատարում Թուրքիայում ռուսական կապիտալի ներդրման ոլորտների ընդլայնման անհրաժեշտության վրա[78]:

5. Զբոսաշրջությունը

Թուրքական տուրիզմի նկատմամբ պահանջարկն ավելի արագ է աճում, քան համաշխարհային տուրիզմի: 1980 թ.-ից մինչև 2005 թ.-ը ընկած ժամանակահատվածում Թուրքիա այցելած զբոսաշրջիկների քանակն ավելացել է 17,5 %-ով, իսկ զբոսաշրջությունից ստացված շահույթը 5,5 %-ով:

Թուրքիայի նպատակն է 2010 թ.-ին ապահովել 30 մլն. զբոսաշրջիկների այցելությունը երկիր և ստանալ 30 մլրդ. դոլարի շահույթ: Երկիր այցելած զբոսաշրջիկների քանակի մշտական աճը և զբոսաշրջությունից ստացված շահույթը բնագավառի կայուն զարգացման վկայություններն են: 2005 թ.-ին Թուրքիա են այցելել ավելի քան 21 մլն. զբոսաշրջիկ: Արտասահմանյան զբոսաշրջիկներից ստացված շահույթը կազմել է 18,1 մլրդ. դոլար: Արտահանման մեջ զբոսաշրջությունից ստացված շահույթի մասնաբաժինը կազմում է 25 %, իսկ Թծկ-ում՝ 5,7 %[79]:

Ռուսաստանի և Թուրքիայի միջև երկկողմանի առևտրատնտեսական կապերի ընդհանուր ծավալում թուրքական զբոսաշրջիկային բաղկացուցիչի գերակայության միտումը էլ ավելի ակնառու դարձավ: Այդ ժամանակահատվածից զբոսաշրջիկային ոլորտում կորցրեց իր դիրքերը տնտեսական /մաքոքային/ հատվածը և Ռուսաստանի ու Թուրքիայի միջև զբոսաշրջիկների փոխանակությունը ստացավ իր ամփոփական տեսքը: Ռուսական կողմը չի վիճարկում այն փաստը, որ ռուսական զբոսաշրջիկների համար թուրքական ընկերությունների կողմից տրամադրված ծառայությունների մակարդակն ու որակը, և ամենակարևորը հանգստի պայմանները գնահատման «որակ-արժեք» համակարգում, իր մրցունակությամբ մի կարգ ավելի բարձր է, քան իրենց տարածքում ռուսական կողմի ծառայություններն ու պայմանները: Թուրքական կողմի զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մակարդակը հանգեցնում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև զբոսաշրջիկների երկկողմանի հոսքի ցուցանիշների զգալի քանակային անհամամասնության: Զբոսաշրջիկների հոսքն ընթանում է միայն մեկ ուղղությամբ[80]:

2003 թ.-ին Թուրքիա են այցելել 1,6 մլն. ռուսաստանցի զբոսաշրջիկներ: 2004 թ.-ից Թուրքիան դարձավ ռուսաստանցիների տուրիստական ուղևորությունների հիմնական ուղղությունը. գերմանացիների հետ մեկտեղ շուրջ 1,7 մլն. ռուսաստանցի զբոսաշրջիկներ ներկայացնում են դեպի այդ երկիր արտասահմանյան զբոսաշրջիկների առավել բազմաքանակ հոսքը: Հետագա տարիներին, ռուսաստանցի զբոսաշրջիկների 1,7-1,9 մլն. քանակը «կայունացավ»: 2005 թ.-ին Ռուսաստանից Թուրքիա են այցելել 1,7 մլն. զբոսաշրջիկներ, որոնք, ըստ ռուսական կողմի գնահատականների, երկրում թողել են շուրջ 2 մլրդ. դոլար[81]:

2006 թ.-ին Ռուսաստանից զբոսաշրջիկների քանակն ընդհուպ մոտեցավ 2 մլն. ցուցանիշին:

Ըստ 2007 թ.-ին հուլիսի տվյալների, այն երկրների տասնյակի մեջ, որոնց քաղաքացիները որպես զբոսաշրջիկներ ժամանել են Թուրքիա, մտել են /ըստ նվազման կարգի/ Գերմանիան, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, Ֆրանսիան, Բելգիան, Ավստրիան, Իրանը, Բուլգարիան և Ուկրաինան: Գումարային առումով 2007 թ.-ի հուլիսին տվյալ երկրներից Թուրքիա ժամանած զբոսաշրջիկները կազմել են 65, 6%[82]:

Ամփոփում

Ռուս-թուրքական հարաբերություններն ունեն հարուստ պատմություն: Երկու տերությունների աշխարհաքաղաքական դիմակայությունը, մինչև Ռուսաստանում 1917 թվականի հեղափոխությունը այն ժամանակվա տարածաշրջանային ու միջազգային հարաբերությունների համակարգում, ուներ ավանդական ու օբյեկտիվ բնույթ: 1920-ական թվականներին Ռուսաստանի և Թուրքիայի հասարակական-քաղաքական համակարգերում տեղի ունեցան արմատական ձևափոխումներ, որոնք նպաստեցին երկու երկրների մերձեցմանը և թուրք-խորհրդային համագործակցության համար որոշակի նախադրյալների ստեղծմանը, մասնավորապես առևտրա-տնտեսական ոլորտում: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում ԽՍՀՄ-ը և Թուրքիան հայտնվեցին դիմակայող ռազմա-քաղաքական դաշինքներում, սակայն աշխարհագրական մոտիկությունը, սևծովյան տարածաշրջանում երկու երկրների օբյեկտիվ կախվածությունը միմյանցից, ընդհանուր առմամբ պահպանված փոխադարձ կասկածամտությունը երկկողմանի հարաբերություններում տարածքային հարցի հավանական վերակենդանացման համատեքստում, ստեղծեցին որոշակի «պատային» իրավիճակ, որի նվազագույն համակշռագերծումը կարող էր հանգեցնել երկրների համար անցանկալի հետևանքների ինչպես տարածաշրջանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Կողմերը խիստ անհրաժեշտություն զգացին զարգացնել փոխադարձ առևտրա-տնտեսական կապերը, և վերջիններիս տրվեց որոշակի զսպիչ նշանակություն, որն առավել օպտիմալն էր տվյալ ժամանակահատվածի համար երկկողմանի հարաբերությունների դիմակայումը որոշակիորեն կանխարգելելու նպատակով:

ԽՍՀՄ-ի փլուզումը սասանեց երկկողմանի հարաբերությունների կայունացած հավասարակշռությունը և հետխորհրդային առաջին տարիները կրիտիկական դարձան ռուս-թուրքական հարաբերությունների համար: Չնայած այն բանին, որ արդեն 1992 թ.-ի մայիսին ստորագրվեց ռուս-թուրքական Պայմանագիրը երկկողմանի հարաբերությունների հիմունքների մասին, Ռուսաստանը և Թուրքիան ընդհուպ մինչև 2000 թ.-ը գտնվում էին փոխադարձ աճող կասկածամտության իրավիճակում, որը հրահրվում էր ինչպես օբյեկտիվ բնույթի գործոններով /օրինակ, Թուրքիայի ակտիվությունը հետխորհրդային տարածքի թուրքական ուղղությամբ, չեչենական հակամարտությունը, քրդական հարցը/, ինչպես նաև սուբյեկտիվ բնույթի /մասնավորապես, երկրի ղեկավարների անձնական մակարդակի վստահության հաստատման ձախողումը/: Ռուսաստանի և Թուրքիայի երկկող-

մանի հարաբերությունների բնույթը, ընդհուպ մինչև երկու երկրներից յուրաքանչյուրում ներքաղաքական լանջաֆտի հերթական զգալի փոփոխությունը /Ռուսաստանում Վ. Պուտինի նախագահության սկիզբը և Արդարության ու զարգացման կուսակցության իշխանության գալը Թուրքիայում/, կարելի է ներկայացնել «քաղաքական մրցակցության առկայություն և տնտեսական գործընկերության հնարավորություն» բանաձևով: Հատկապես 2002 թ.-ից հետո ռուս-թուրքական հարաբերություններում ձևավորվեց նոր իրավիճակ, որում օբյեկտիվ բնույթի նախկին քաղաքական հիմնախնդիրները մղվեցին հետին պլան, իսկ Ռուսաստանի ու Թուրքիայի առաջին դեմքերի միջև փոխադարձ վստահության «անձային» մակարդակը համապատասխանեց երկկողմանի հարաբերություններում «բազմակողմ գործընկերության» մթնոլորտի ստեղծմանն նպաստակային դրյութին, իսկ հեռանկարում նաև «ռազմավարական գործընկերության»:

Որպես ռուս-թուրքական հարաբերություններում որակապես նոր փուլի պատճառային բացատրություն, փորձագիտական հանրությունը բերում է տարբեր փաստարկումներ, նրանց թերևս միավորում է այն, որ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև մերձեցմանը նպաստեց Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների սառեցումը: Կարևոր է այն, որ, ինչպես խորհրդային ժամանակաշրջանում, «հարկադրված հարևանների» երկկողմանի հարաբերությունները, առաջին հերթին առևտրատնտեսական ուղղության, նոր խթան ստացան, և «բազմակողմ գործընկերության» սկզբունքն ինքնին գործնականում ձևավորվեց ու զարգացավ բացառապես Ռուսաստանի ու Թուրքիայի համագործակցության տնտեսական ոլորտում: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ռուս-թուրքական հարաբերությունների համար ընդհանուր առմամբ բնորոշ է համագործակցության զարգացման որոշակի պարբերական պատկերը, որի էությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. «քաղաքական դիմակայության ժամանակահատվածին հաջորդում են քաղաքական կայունության շրջանները, իսկ վերջիններս էլ հաստատվում են հիմնականում տնտեսական մերձեցման հաշվին»:

Ռուս-թուրքական հարաբերությունների նոր փուլի վերջին հինգ տարիները ցույց տվեցին, որ երկկողմանի հարաբերությունների տնտեսական ոլորտն ինքնին, որն իր վրա է կրում «բազմակողմ գործընկերության» սկզբունքի հաստատման նյութականացման գործի հիմնական բեռը, զերծ չէ փոխադարձ հակասություններից, որոնք երբեմն ընդունում են զգալի բնույթ, և առևտրատնտեսական կապերին ուղեկից անհամաձայնություններից, որոնք առաջացնում են «բազմակողմ գործընկերների» լուրջ մտահոգությունը: Ռուսաստանի ու Թուրքիայի տնտեսական համագործակցությունը զգալի չափով կրում է սահմանափակ ոլորտային բնույթ, ծավալվում է որոշակի ոլորտների շուրջ և կրում է միակողմանի ուղղորդված բնույթ, հստակորեն բնորոշում է կողմերից յուրաքանչյուրի առավելությունները տնտեսական երկխոսության կոնկրետ ոլորտում՝ էներգառեսուրսների մատակարարում, շինարարա-կապալային գործունեություն, զբոսաշրջություն, ներդրումներ: Միևնույն ժամանակ, Թուրքիայի քաղաքական գործողություններից Ռուսաստանի կախվածության պահպանման հիմնապատկերի վրա, օրինակ սևծովյան նեղուցների առումով կամ շինարարության, զբոսաշրջության ու ներդրումների ոլորտներում Թուրքիայի հետ տնտեսական սերտ կապերի առումով, աճում է նաև թուրքական կողմի համապատասխան կախվածությունը Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումից: Ինչպես նշում է թուրքական կողմը, թուրք-ռուսական տնտեսական հարաբերությունները շատ զգայուն են քաղաքական տատանումների նկատմամբ, մինչդեռ Թուրքիայում հասարակության մի ստվար հատված իր գոյությունն ապահովում է այդ հարաբերությունների հաշվին: Այսօր շատ շատերը Թուրքիայում, շինարարական կապալառուներից մինչև խոշոր ընկերությունների ղեկավարները, կախված են Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններից:

Թուրքիայում կայացած վերջին խորհրդարանական ընտրությունների և Ռուսաստանում կայանալիք «լիովին կանխատեսելի» նախագահական ընտրությունների լույսի ներքո, ակնառու կերպով կարելի է ենթադրել երկու երկրների «բազմակողմ ընկերակցության» հարաբերությունների զարգացման քաղաքական վեկտորների պահպանումը: Ռուսաստանը և Թուրքիան կշարունակեն սատարել միմյանց, օրինակ միջազգային ֆորումներում կոոպտացիայի ժամանակ[83] և միջազգային կազմակերպություններում բարձր դիրքերի առաջադրման համար[84]:

Թուրքիան կձգտի հնարավոր սահմաններում առավելագույնս համատեղել ցանկալի մակարդակի վրա ԱՄՆ-ի հետ հարաբերությունների պահպանման, լիիրավ անդամի իրավունքներով ԵՄ-ին անդամակցության և իր արտաքին քաղաքականության «եվրասիական վեկտորի» զարգացման սկզբունքները[85], որի առանցքային մասերից մեկը հանդիսանում է Ռուսաստանը:

Հավելված

Ռուսաստանի և Թուրքիայի առևտրատնտեսական համագործակցության համատեղ մարմինները

1992թ.-ից գործում է Առևտրա-տնտեսական համագործակցության ռուս-թուրքական միջկառավարական խառը հանձնաժողովը: Թուրքական մասի նախագահն է պետնախարար Կ. Թյուգմենը /2003 թ.-ի հունվարից/, ռուսական մասի նախագահն է արդյունաբերության և էներգետիկայի նախարար Վ. Խրիստենկոն /2004 թ.-ի հուլիսից/: Հանձնաժողովի շրջանակներում աշխատում են 7 համատեղ աշխատանքային խմբեր /էներգետիկայի, առաջատար տեխնոլոգիաների, ներդրումների և կապալային ծառայությունների, տրանսպորտի և տրանսպորտային շինարարության, ստանդարտիզացման և մետրոլոգիայի, մանր և միջին գործարարության, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում համագործակցության հանձնաժողով/: 1990-ական թվականներին անցկացվել է Առևտրա-տնտեսական համագործակցության ռուս-թուրքական միջկառավարական խառը հանձնաժողովի չորս նիստ /վերջին նիստը տեղի է ունեցել 1999 թ.-ի նոյեմբերին Մոսկվայում/:

Ռուսաստանի տարբեր տարածքների հետ ուղիղ գործնական կապերի հաստատման համար Թուրքիայի Արտաքին տնտեսական կապերի կոմիտեի կողմից /DEIK/ ստեղծվել և աշխատում է թուրք-ռուսական գործարար խորհուրդը[86], որին մասնակցում են Ռուսաստանի ավելի քան 40 շրջաններ: Թուրք-ռուսական գործարար խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնում է S. Գյուրը /«LTG Foreign Trade Ltd.» ընկերության նախագահը/: 2004 թ.-ին ՌԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատի հովանու ներքո

ստեղծվեց թուրք-ռուսական գործարար խորհրդի գործընկերը՝ ռուս-թուրքական գործարար խորհուրդը[67]: Խորհրդի նախագահ նշանակվեց ՈԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատի հասարակական կապերի և տեղեկատվության կենտրոնի տնօրեն, Թուրքիայում Ռուսաստանի Արտակարգ և լիազոր նախկին դեսպան Ա. Լեբեդևը: 2007թ.-ից ռուս-թուրքական գործարար խորհրդի նախագահ է հանդիսանում Ա. Պալանկոևը /«Ակրոպոլ» ֆինանսա-արդյունաբերական խմբի ղեկավարը/: Ռուս-թուրքական գործարար խորհրդի նախագահի տեղակալն է Ն. Յակուբովը, խորհրդի անդամներն են Ն. Ախմետվալեևը /«Նավթագազային Իտերա ընկերություն» ՍՊԸ-ի գազի դեպարտամենտի տնօրեն/, Յու. Բգանը /ՈԴ-ի տնտեսական զարգացման ու առևտրի նախարարության «Տյաժպրոմէքսպորտ» արտաքին-տնտեսական միավորման նախագահի տեղակալ/, Ա. Շնիրևանդոն /ՈԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատի միջազգային մասնո-կենտրոնի ղեկավար/: Ռուս-թուրքական գործարար խորհրդի կորպորատիվ անդամներ են Ռուսական շուկայի այնպիսի խոշոր ընկերությունները, ինչպիսիք են, մասնավորապես «Գազէքսպորտ» ՍՊԸ-ը, «Նավթագազային Իտերա ընկերություն» ՍՊԸ-ը, «Վեստել-ԱՊՀ»-ը, «Ակրոպոլ» ՍՊԸ-ը, «Բենտուր Ինտերնեշնլ»-ը, «Ռամէնկա»-ը, «Եֆրեմով Կաուչուկ» ՍՊԸ-ը, «ՏԲՍՍ» ՍՊԸ-ը, «Ֆինանսբանկ» ՓԲԸ-ը:

Որպես ռուս-թուրքական առևտրա-տնտեսական համագործակցության ընդհանուր համակարգողներ հանդես են գալիս երկու երկրների այնպիսի կայացած բիզնես-ինստիտուտներ, ինչպիսիք են Թուրքիայի պալատների ու բորսաների միությունը, Արտաքին տնտեսական կապերի կոմիտեն /DEIK/, Արդյունաբերողների ու գործարարների թուրքական ասոցիացիան /TUSIAD/ և ՈԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատը, Արդյունաբերողների ու գործարարների ռուսական միությունը:

Ռուսաստանի և Թուրքիայի միջև առևտրա-տնտեսական համագործակցության աճի ոլորտում որպես ազդեցիկ լոբբիստական կազմակերպություն հանդես է գալիս Բարեկամության ու գործարարության ռուս-թուրքական ասոցիացիան /RUTID/: Ասոցիացիան ստեղծվել է 1998 թ.-ին Ստամբուլում դիվանագիտական կապերի, ինչպես նաև տնտեսության, սոցիալական ու մշակութային ոլորտներում Ռուսաստանի և Թուրքիայի միջև համագործակցության զարգացմանը աջակցելու նպատակով: 2006 թ.-ից Ասոցիացիայի գրասենյակ է գործում նաև Մոսկվայում: 2007 թ.-ի երկրորդ կեսի տվյալներով, Ասոցիացիայի կազմում ընդգրկված են 450 անդամներ, մշակույթի, գիտության, գործարար շրջանակների ականավոր գործիչներ: Ասոցիացիան կազմակերպում է թուրք գործարարների ուղևորություններ Ռուսաստանի տարբեր շրջաններ, այն ակտիվ դերակատարություն ունի ռուս-թուրքական գործարար խորհրդում, մասնավորապես Ռուսաստանի իշխանությունների ներկայացուցիչների և գործարար շրջանակների համար Ստամբուլում, Անթալիայում, Գազիանթեպում, Գեբզեում և Իզմիրում համատեղ ճանաչողական ու ներդրումային ֆորումների կազմակերպման մեջ:

1. Թուրքիայի վարչապետ Բ. Էջեվիտի պաշտոնական այցը տեղի ունեցավ 1978 թ.-ի հունիսի 21-25-ը: Մոսկվայում այդ այցին մեծ նշանակություն էր տրվում: Թուրքական կառավարական պատվիրակության այցից առաջ Ա.Ն. Կոսիգինի /ԽՍՀՄ-ի Մինիստրների խորհրդի նախագահ/ մոտ Կրեմլում տեղի ունեցավ խորհրդակցություն, որում հանգամանորեն քննարկվեցին թուրքական կողմի խնդրանքները, որոնք շարադրված էին խորհրդային Միության կատարվելիք այցի հետ կապված: Կոսիգինը շատ ուշադիր էր վերաբերվում յուրաքանչյուր խնդրանքի: Նա ընդգծում էր, որ «Բ. Էջեվիտի կողմից առաջ քաշված մեր երկրների միջև առևտրա-տնտեսական կապերի ընդլայնման հարցերը մեծ նշանակություն ունեն թուրք-խորհրդային փոխշահավետ հարաբերությունների համար, և մենք չենք կարող նրան ձեռնունայն թողնել: Թուրքիան խնդրում է մեզ իրեն նավթ վաճառել: Մենք կարող էինք տալ մեր համաձայնությունը, ասում էր Կոսիգինը, Թուրքիայից կերպին հացահատիկի գնման պայմաններով: Թուրքիան ունի առաջնակարգ տիֆտիկ: Մենք բուրդը գնում են արտարժույթով: Մենք կարող ենք համաձայնվել մատակարարել նավթ փոխարենը ստանալով տիֆտիկ: Պետք է ակտիվացնել Թուրքիային խորհրդային բնական գազի մատակարարման միջկառավարական համաձայնագրի նախապատրաստման աշխատանքները, որը կենթադրի ամերիկյան դոլարով միլիոններ արժեցող թուրքական ապրանքների պատասխան մատակարարումը: Մասնավորապես, այդ մատակարարման շրջանակներում կարելի կլինի ավելացնել թուրքական դեղորայքի ներկրումը ԽՍՀՄ: Թուրքական դեղամիջոցների որակը համապատասխանում է միջազգային ամենաբարձր ստանդարտներին: Պետք է ընդառաջ գնալ մեր դեսպանի հետ զրույցում առաջ քաշված խնդրանքին Օդեսա-Վարնա-Տրաբզոն լաստանավային փոխադրման վերաբերյալ: Ստամբուլում և Անկարայում մեր դեսպանության հարցը առաջին անգամ է բարձրացվում, նկատեց Կոսիգինը: Եթե Թուրքիայի մայրաքաղաքում կառուցենք մետրո, ապա դա Ասիայում առաջինը կլիներ: Եվ Էջեվիտն էլ հայրենիք կվերադառնար կոնկրետ արդյունքով: Մի խոսքով, եզրափակում է Կոսիգինը, Թուրքիայի հետ առևտրա-տնտեսական հարաբերությունների զարգացման շահը բացատրվում է ոչ միայն Խորհրդային Միության հետ նրա հարևանությամբ, այլև նրանով, որ թուրքերի կողմից արտադրվող ապրանքների ցանկը լիովին համապատասխանում է մեր պահանջներին:

Հատուկ ուշադրության արժանացան թուրք-խորհրդային առևտրի զարգացման հարցերը: Այդ առթիվ ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի նախարար Ն.Ս. Պատոլիչևը նշեց, որ վերջերս որոշում է կայացվել մեր երկրների միջև ապրանքափոխանակության ծավալը 1,7 անգամ ավելացնելու մասին: Դա արդեն ինչ-որ բան նշանակում է: Դրան Կոսիգինը պատասխանեց, որ «Այդտեղ ոչ մի էական բան չկա: Մենք պետք է առաջ գնանք: Նրանք շատ ապրանքներ ունեն, որոնցում մենք շահագրգռված ենք բուրդ, տեքստիլ, դեղորայք և այլ, ընդ որում որակյալ ապրանքներ: Ինչ-որ ժամանակ մենք Թուրքիայից գնում էինք մինչև 30 տոննա մրգ: Այժմ դա մոռացվել է: Պետք է ավելի շատ ցիտրուսայիններ ներկրել: Թուրքերից մենք կարող էինք գնել չուգուն, բարիտային հանքանյութ: Արժե մտածել Թուրքիայի հետ առևտրի հեռանկարային պլանների մասին» (А.А. Родионов, Турция - перекрёсток судеб. Воспоминания посла., М., «Меж.дународные отношения», 2006, с. 154-156).

2. 1984 թ.-ի սեպտեմբերին 25 տարի ժամկետով համաձայնագիր ստորագրվեց ԽՍՀՄ-ից դեպի Թուրքիա բնական գազի մատակարարման մասին:

3. Ф.А.Тринич, Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества // Сборник «Ближний Восток и современность», ИИиБВ, М., 2003, Выпуск 19, с. 266.

4. Դեռևս ԽՍՀՄ-ում սկսված, այնպիսի պայմաններում, երբ մի շարք դեպքերում ներքին շուկայի գները մի քանի անգամ ավելի ցածր էին համաշխարհայինից, արտաքին առևտրի համակարգի ապակենտրոնացման հետևանքներից մեկը եղավ ռուսական արտադրողների ձգտումը ամրապնդել արտաքին շուկաներում

ի հաշիվ իրենց արտադրանքի վրա դեմպինգային գների օգտագործման: Այդ կապակցությամբ 1990-ական թվականների կեսերին տեղի ունեցան հակադեմպինգային հետաքննություններ մի շարք ռուսական արտահանման ապրանքների նկատմամբ, որոնց արժեքը ճանաչվել էր անհամաչափ ցածր, ինչը հանգեցրեց դրանց նկատմամբ լրացուցիչ մաքսային տուրքերի ներդրմանը:

Ռուսական ապրանքները, որոնց նկատմամբ 1995 թ.-ից 2000 թ.-ը ներդրվել են հակադեմպինգային մաքսեր Թուրքիայում, դրանց չափերը.

Պողպատե պատրաստուկներ	24 դոլար/տ
Ցածր ճնշման պոլիէթիլեն	280 դոլար/տ
Պոլիվինիլքլորիդ	170 դոլար/տ
Արհեստական մանվածք	CIF-ի գնի 19 %-ը
Թիթեղային ապակի	35 դոլար/տ

(Турецкая Республика. Справочник, (отв. ред. Н.Ю. Ульченко, Е.И. Уразова), ИИИиБВ, М., 2000, с. 289).

5. Ф.А.Тринич, Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2003, Выпуск 19, с. 267.

6. Н.Г.Киреев, Среднесрочные и долгосрочные интересы Турции в отношениях с Россией // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 1997, Выпуск 4, с. 180 со ссылкой на Turkiye'nin Orta ve Uzun Vadeli Cikarlari Acisindan Turk–Rus iliskileri. Turan Aydэn, Olgan Bekar. Istanbul, TESEV, 1997.

7. Joshua W. Walker, Turkey's New Geopolitical Agenda, http://www.turkishpolicy.com/default.asp?show=summer_2006_walker.

8. Nezihi Çakar (General Nezihi Çakar (rtd.) is Senior Advisor to the President of Turkey), A Strategic Overview of Turkey, Journal of International Affairs, June - August 1998, Volume III, № 2, http://www.sam.gov.tr/perceptions/Volume3/June-August1998/ASTRATEGICOVERVIEWOFTURKEY.PDF.

9. Diyalog Avrasya. Istanbul, 2000, №1, p. 29.

10. Երկրների G-20 ֆորումի մեջ մտնում են աշխարհի խոշորագույն տնտեսությունները ունեցող 19 պետություններ և Եվրոպական Միությունը, որպես ԵՄ-ի անդամ-երկրների միացյալ ներկայացուցիչ /Ավստրալիա, Արգենտինա, Բրազիլիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իտալիա, Կանադա, Չինաստան, Մեքսիկա, Ռուսաստան, Սաուդյան Արաբիա, ԱՄՆ, Թուրքիա, Ֆրանսիա, Հարավային Աֆրիկա, Հարավային Կորեա, Ճապոնիա և Եվրոպական Միություն/: Ֆորումը հիմնվել է 1999 թ.-ին Բեռլինում: 2003 թ.-ին ՀԱԿ-ի նախարարական կոնֆերանսի բանակցությունների մասնակիցների մեքսիկական Կանկուն քաղաքում տեղի ունեցած երկրորդ հանդիպման ժամանակ ֆորումը վերջնականապես ձևավորվեց որպես G-20 բլոկ: G-20-ը ներկայացնում է երկրագնդի բնակչության երկու երրորդը, համաշխարհային ՀՆԱ-ի 90 %-ը և համաշխարհային առևտրի 80 %-ը:

11. 1999 Ekonomik Rapor. Ankara, TOBB, Mayis 2000, h. 111.

12. Н.Г.Киреев, Турция – экономический партнёр и политический соперник России в Евразии // Россия на Ближнем Востоке: цели, задачи, возможности (материалы конференции), ИИИиБВ, М., 2001, с. 83.

13. 2001-2002 թթ.-ին ռուսական ու թուրքական արտաքին առևտրական վիճակագրական ցուցանիշների միջև ճեղքումը զգալիորեն նվազեց, որը հավանաբար, առնվազն մասնակիորեն, բացատրվում է «մաքսքային» առևտրի կրճատումով:

14. Ф.А.Тринич, Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2003, Выпуск 19, с. 271.

15. Ռուսաստանը Թուրքիայի հետ առևտրի ընդլայնման հույս ունի, «Финансовые ведомости», 19.12.1996.

16. "Radikal" (Թուրքիա), 03.10.1997.

17. Sbu Hasan Unal, Turkey would be better off outside the EU, Financial Times, 17.12.2004.

18. Türkiye-Rusya ilişkilerindeki yapısal sorunlar ve çözüm önerileri. İstanbul: TÜSIAD, 1999, C. 132–140; Турецкий вестник (Մոսկվայում Թուրքական Հանրապետության դեսպանատան հրատարակություն), փետրվար 2001, № 2, с. 3.

19. Թուրքական «Ընթաց» պետական գազային ընկերության պաշտոնական կայքը, faaliyetler, 24.03.2004.

Համեմատության համար, «Երկնագույն հոսք» գազամուղով, որի թողունակությունը տարեկան կազմում է 16 մլրդ.խոր.մ. գազ, 2003 թ.-ին մատակարարվել է 2 մլրդ.խոր.մ. բնական գազ:

20. «Российская газета», 03.04.2001.

21. Н.Ю. Ульченко, Проект «Голубой поток» в системе российско-турецких отношений: ожидания и реальность // Турция в новых геополитических условиях (материалы круглого стола 2004г.), ИИИиБВ, М., 2004, с. 22.

22. Գազամուղի շինարարությունն արժեցավ 3,3 մլրդ. դոլար: Հավասարության սկզբունքով դրա մասնակիցներն էին «Գազպրոմ» ԲԲԸ-ը և իտալական "ENI" կոնցեռնը, որոնք 1999 թ.-ին ստեղծեցին «Blue Stream Pipeline Co» համատեղ ձեռնարկությունը ծովային հատվածի շինարարության համար: Նախագծում իր մասնաբաժնի ֆինանսավորման համար «Գազպրոմ»-ը 1,76 մլրդ. դոլարի վարկեր ներգրավեց: «Երկնագույն հոսք»-ով ռուսական բնական գազի կոմերցիոն մատակարարումը Թուրքիա սկսվեց 2003 թ.-ի փետրվարի 20-ից:

23 DIE. Türkiye İstatistik Yıllığı 2000. Ankara, 2001, C. 301.

24 Ф.А.Тринич, Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2003, Выпуск 19, с. 267.

25 Türkiye-Rusya ilişkilerindeki yapısal sorunlar ve çözüm önerileri. İstanbul: TÜSIAD, 1999, C. 126–129.

26 Н.Г.Киреев, Среднесрочные и долгосрочные интересы Турции в отношениях с Россией // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 1997, Выпуск 4, с. 192.

27Turkiye'nin Orta ve Uzun Vadeli Cikarlari Acısından Turk–Rus iliskileri. Turan Aydın, Olgan Bekar. Istanbul, TESEV, 1997.

28 Фиона Хилл, Омер Таспинар, Россия и Турция на Кавказе: сближение ради сохранения статус кво?, Russie.Nei.Visions № 8, Январь 2006, IFRI (Institut Français des Relations Internationales) Программа исследований по России и СНГ, Французский Институт Международных Отношений,
http://www.ifri.org/files/Russie/hiltaspinar_russe.pdf

29 Н.Г.Киреев, Турция – экономический партнёр и политический соперник России в Евразии // Россия на Ближнем Востоке: цели, задачи, возможности (материалы конференции), ИИИиБВ, М., 2001, с. 90.

30 Türkiye-Rusya ilişkilerindeki yapısal sorunlar ve çözüm önerileri. İstanbul: TÜSIAD, 1999, C. 129–132.

31 Фиона Хилл, Омер Таспинар, Россия и Турция на Кавказе: сближение ради сохранения статус кво?, Russie.Nei.Visions № 8, Январь 2006, IFRI - Institut Français des Relations Internationales (Программа исследований по России и СНГ, Французский Институт Международных Отношений),
http://www.ifri.org/files/Russie/hiltaspinar_russe.pdf

32. Ibid.

33. Виктор Надеин-Раевский, «Сдача Армении - потеря позиций России на Кавказе вообще»: интервью Виктора Надеина-Раевского, , 03.06.2006.

34 Н.Г.Киреев, Турецкая деловая элита о российско-турецких отношениях // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2000, Выпуск 9, сс. 78, 106.

35. Дуйгу Базоглу Сезер, От враждебности к управляемому соперничеству

(российско-турецкие отношения за десять лет) // Perceptions, 2001, № 1, http://old.russ.ru/politics/20011219-tur.html.

36. Назим Каферсой, Отношения между Турцией и Россией и фактор сепаратизма, http://www.turksam.org/ru/yazilar.asp?kat=1&yazi=163, 05.01.2006.

37. Тезисы к докладу на тему «Ситуация в регионе и российско-турецкие отношения», http://www.turkey.mid.ru/hron/hronika17.html (сайт посольства России в Турции).

38. Ф.А.Тринич, Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2003, Выпуск 19, с. 272.

39. М.К. Каримов, Современное состояние российско-турецких экономических связей // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2004, Выпуск 24, с. 337.

40. Ռուսական կողմը փորձում է դուրս գալ թուրքական շուկա տեխնոլոգիական արտադրանքով: Օրինակ, բանակցություններ են վարվում Ռուսաստանից Թուրքիա գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման շուրջ «Ռոստելմաշ» արտադրական միավորման «DON 680M» կոմբայններ:

41. Торгово-экономические связи между Россией и Турцией, http://www.economy.gov.ru., 19.12.2003.

42. Asim Oku, Russian-Turkish Economic Relations in the Post-Soviet Era (AIA Turkish section), http://www.axisglobe.com/article.asp?article=43, 19.04.2005.

43. Ռուսաստանի փոխարտգործնախարար Ա.Ի. Ղենիսովի բացառիկ հարցազրույցը ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին, http://www.turkey.mid.ru/hron/hronika13.html, 26.12.2003.

44. Информационный бюллетень МИД России, 24 февраля 2004г., www.mid.ru.

45. «Торгово-промышленные ведомости» (Газета Торгово-промышленной палаты РФ, 2005, январь №1-2 (306).

46. Информационный бюллетень МИД России, О встрече Президента России В.В. Путина с Премьер-министром Турции Р.Т. Эрдоганом, Сочи, 18 июля 2005 года, www.mid.ru.

47. Российско-турецкое торгово-экономическое сотрудничество, http://www.eer-magazine.com/ru/1381.html, (сайт журнала «Внешнеэкономические связи»).

48. Турецкий бизнес: от сырья к высоким технологиям, .doc (сайт Торгово-промышленной палаты РФ), http://www.tpprf.ru/img/uploaded/2006071717210985.doc, 03.07.2006.

49. http://www.rtbc.ru/index.php?theme=3 (сайт российско-турецкого делового совета).

50. Foreign Trade Statistics July/2007, (Институт статистики Турции – Turkstat), http://www.turkstat.gov.tr.

51. http://www.customs.ru/ru/stats/stats/popup.php?id286=324. (сайт ФТС РФ).

52. 1987 թ.-ից մատակարարման սկզբից ի վեր մինչև 2003 թ.-ը ընդհանուր առմամբ Ռուսաստանից Թուրքիա արտահանվել է շուրջ 106 մլրդ.խոր.մ. գազ, որը մատակարարվում էր երկու ուղղությամբ Տրանսբալկանյան գազամուղով և «Երկնագույն հոսք» գազամուղով:

53. Յուրի Կոմարով /«Գազպրոմ» ԲԲԸ-ի արտասահմանյան կապերի դեպարտամենտի պետ, «Գազէքսպորտ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն, արտաքին տնտեսական գործունեության գծով «Գազպրոմ»-ի վարչության նախագահի տեղակալ: «Գազպրոմ»-ի վարչությունում աշխատել է մինչև 2005 ապրիլը/, «Газпром» и внешние рынки газа, http://geo.web.ru.

54. Ըստ պայմանագրի նոր պայմանների «Գազպրոմ»-ը համաձայնվեց գների

իջեցմանը հազար խոր.մ. դիմաց 115-ից մինչև 75 դոլարի: «Խոսքը վերաբերվում է ոչ նրան, թե ի՞նչ գնով մենք կվաճառենք գազը մոտակա մի քանի տարիների ընթացքում, - իրավիճակը մեկնաբանեց «Գազպրոմ»-ի տեղեկատվական դեպարտամենտի պետի տեղակալ Ի. Պլոտնիկովը, - այլ խոսքը վերաբերվում է նրան, թե ի՞նչ գնով մենք կաշխատենք 20 տարի: Բացի այդ, խոսքը վերաբերվում է նրան, թե կգնա արդյոք Իրանի կամ Ադրբեջանի գազը թուրքական շուկա, թե այնտեղ վաճառվելու է ռուսական գազը, թեկուզ ոչ մեծ շահույթով» ("Независимая газета", 31.07.2003г.)

55. Եթե 2002 թ.-ին Թուրքիա գազի ներկրման Ռուսաստանի մասնաբաժինը գերազանցում էր 62 %-ը, ապա նշված երկրներից գազի մատակարարման համաձայնագրերի իրացման հետ մեկտեղ, «Բոթաշ»-ը պլանավորում էր այն պակասեցնել մինչև 43 %-ի (RTIB Yayinlari-8, Rusya' 03. Moskova, 2003, C. 27).

56. Н.Ю. Ульченко, Проект «Голубой поток» в системе российско-турецких отношений: ожидания и реальность // Турция в новых геополитических условиях (материалы круглого стола 2004г.), ИИИиБВ, М., 2004, с. 29.

57. «Коммерсант», 11.09.2007.

58. И.А.Новиков, Экономика Турции и углеводородные источники энергии // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2005, Выпуск 26, с. 168 со ссылкой на «Газпром» присматривается к Израилю, http://www.ko.ru/document.asp?d_no=4303&p=l., 28.05.2002.

59. «Թուզգելյու» - իր մեծությամբ երկրորդ լիճն է Թուրքիայում: Թուրքերենից թարգմանաբար նշանակում է Աղի լիճ: Գտնվում է Թուրքիայի կենտրոնական հատվածում, Կոնիա քաղաքից 105 կմ դեպի հյուսիս-արևելք և Անկարայից 150 կմ դեպի հարավ-արևելք:

60. 2005 թ.-ին Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի հետ հանդիպման արդյունքում /Սոչի, 18 հուլիսի/ Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը հայտարարեց «Մենք մտադիր ենք շարունակել էներգաթերկխոսությունը երկու երկրների միջև: Այսպես, Ռուսաստանը կշարունակի կատարել ծեռքբերված համաձայնությունները և ապահովել բնական գազի մատակարարումը Թուրքիա, այդ թվում օգտագործելով տրանսսևծովյան գազամուղի հզորությունները: Մեր համագործակցության օրակարգում առկա են այդ ոլորտի մի շարք այլ հեռանկարային նախագծեր: Մենք պետք է հասցնենք «Երկնագույն հոսք»-ը իր նախագծային հզորությանը տարեկան 16 մլրդ.խոր.մ. գազ: Մենք չենք բացառում նաև նոր գազամուղի շինարարությունը: Մենք չենք բացառում նավթամուղի շինարարությունը, ընդ որում տարբեր ուղղություններով: Մենք պատրաստ ենք Թուրքիայի տարածքում կառուցել խոշոր ատոմակայանային գազապահեստարաններ, պատրաստ ենք օգտագործել Թուրքիայի տարածքում առկա գազամուղները և մասնակցել նորերի կառուցմանը, որպեսզի մեր էներգառեսուրսները Թուրքիայի տարածքով տեղափոխենք երրորդ երկրներ, այդ թվում դեպի Հարավային Եվրոպա» (Информационный бюллетень МИД России, О встрече Президента России В.В. Путина с Премьер-министром Турции Р.Т. Эрдоганом, Сочи, 18 июля 2005 года, www.mid.ru).

61.«Профиль», Османское эго, http://www.turkey.mid.ru/rus_smi/rus_smi12.html, 01.03.2004 (сайт Посольства России в Турции).

62. От «Дружбы» к Балтике, «Транснефть» переориентирует нефтяные реки в обход Турции и Украины, «Независимая газета», 10.04.2006.

63. Россия заинтересована в инвестициях в турецкий ТЭК, http://www.polit.ru/monitor/2005/01/12/2.html.

64. http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/russia/index.htm (официальный правительственный сайт «Альманах Турция-2006»).

65. Б. Арынч: «Турция готова осуществлять совместно с Россией крупные проекты», http://russia-today.ru/2006/no_14/14_links.htm.

66. И.И.Стародубцев, Об участии турецких компаний в международном инвестиционном форуме «Сочи-2007», http://www.iimes.ru/rus/stat/2007/24-09-07.htm.

67. Российско-турецкие торгово-экономические связи, http://www.yartpp.ru /ved_turkey2.htm. (сайт Ярославской областной торгово-промышленной палаты), 08.09.2004.

68. Թուրքական «ԷՐԳ Ինշաաթ»-ի և ռուսական «ԿՕ Տեխնոտորոյէքսպորտ» ԲԲԸ-ի գլխավորությամբ միջազգային կոնսորցիումը կառուցում է կամարանման բետոնե ամբարտակ և 670 ՄՎտ հզորությամբ «Ղերիներ» ՀԷԿ-ը Վրաստանի սահմանին հարակից Արտվինի նահանգի Չորուխ գետի ափին: Այդ ամբարտակը իր բարձրությամբ աշխարհում երրորդն է:

69. Ռուսական «ԿՕ Տեխնոտորոյէքսպորտ» ԲԲԸ-ը թուրքական «ԷՐԳ Ինշաաթ»-ի, «ՎԵՄԲ»-ի /Գերմանիա/, «ԳԵ»-ի /Նորվեգիա/ հետ կոնսորցիումի կազմում հանձնայնեցրել ու պայմանագիր են ստորագրել ամբարտակների ու «Բայրամ» և «Բաղլիկ» ՀԷԿ-երի կառուցման շուրջ:

70. Торгово-экономические связи между Россией и Турцией, http://www.economy.gov.ru., 19.12.2003.

71. «ԼՈՒԿՕՅԼ»-ը համապատասխան առաջարկությամբ դիմել է թուրքական կողմին և ներկայումս դիտարկվում են գործարանի կառուցման երկու տարածք, այդ թվում նաև Մարմարիսում Թուրքիայի Միջերկրածովային ափին: Նախկինում «ԼՈՒԿ-օյլ»-ը պլանավորում էր կառուցել 2,5 մլրդ. դոլար արժողությամբ գործարան Թուրքիայի սևծովյան ափին գտնվող Զոնգուլդակ քաղաքի մոտակայքում: ՆԿԳ-ը, որի հզորությունը պետք է կազմի 8-10 մլն. տոնա, պետք է վերամշակի ռուսական և դազախական նավթը» («ЛУКойл» устремился в Турцию, http://www.expert.ru /news /2006/09/28/lukoil/).

72. Торгово-экономические связи между Россией и Турцией, http://www.istanbul-kuban.com/rus/rto.shtml.

73. Ռուսաստանի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունն աճեց 40%-ով, http://finance.rol.ru/news/article0E5C1 /default.asp?news =58817, 29.05.2006. 2007թ.-ի մայիսի 8-ին Մոսկվայում ստորագրվեց Հուշագիր ռուսական «Ատոմստրոյէքսպորտ» ընկերության և թուրքական «ԷՐԳ Ինշաաթ» ընկերության միջև: Հուշագիրն ամրագրում էր երկու կողմերի մտադրությունները հաստատել ռազմավարական համագործակցություն նպատակ ունենալով միավորել ջանքերը ռուսական ատոմային ոլորտի տեխնոլոգիաների, ապրանքների, սարքավորման ու ծառայությունների մուտքը դեպի Թուրքիայի ատոմային էներգետիկայի շուկա ապահովելու համար: Հուշագրի կարևոր նպատակներից մեկը դա Թուրքիայում ԿԱԷՊ տիպի ռեակտորային սարքերով ԱԷԿ-ի շինարարության առաջարկությունների նախապատրաստման գործողությունների և նախագծի հետագա իրականացման կոորդինացումն էր: Քանի որ «Ատոմստրոյէքսպորտ» ԲԲԸ-ի գործունեության հիմնական ուղղությունը հանդիսանում է արտասահմանում ԱԷԿ-երի կառուցման ու արդիականացման նախագծերի իրականացումը և դրանց շահագործման աջակցությունը, իսկ Թուրքիան մտադիր է սկսել առաջին ԱԷԿ-ի շինարարությունը, ապա ռուս-թուրքական համագործակցության զարգացումը էներգետիկ ոլորտում ձեռք է բերում առաջնահերթ նշանակություն, - նշված է Հուշագրում: (http://www.atomstroyexport.ru/about/news/2007/05/item146.html., 11.05.2007).

74. Металлурги России и Турции реализуют уникальный совместный проект, http://www.ruvr.ru/main.php?lng=rus&q=32008&cid=241&p=29.05.2007.

75. Проект строительства Кочубеевского сахарного завода не был реализован из-за разногласий сторон.

76. «Круглый стол» российских и турецких бизнесменов, (ՈԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատի կայքը).

77. Турецкий бизнес готов инвестировать в столицу Олимпиады-2014, http://www.ruvr.ru/main.php?lng=rus&q=39961&cid=214&p=16.08.2007 (сайт РГРК «Голос России»).

78. «Մենք առաջարկություններ ենք սպասում թուրք գործընկերներից Թուրքիայում ռուսական ներդրումների համար», մասնավորապես հայտարարեց ՈԴ-ի

Առևտրա-արդյունաբերական պալատի ղեկավար Ե. Պրիմակովը. (Турецкий бизнес от сырья к высоким технологиям, http://www.tpprf.ru/img/uploaded/ 200607 1717210985.doc, 29.06.2006 (ՈԴ-ի Առևտրա-արդյունաբերական պալատի կայքը).

79. http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitapiar/turkiye2006/russia/index.htm (официальный правительственный сайт «Альманах Турция-2006»).

80. М.К. Каримов, Современное состояние российско-турецких экономических связей // Сборник «Ближний Восток и современность», ИИИиБВ, М., 2004, Выпуск 24, с. 339.

81. «Круглый стол» российских и турецких бизнесменов, http://www.tpprf.ru /ru/main/news/news-torg/news_current.shtml?2006/06/20060629-25478.html (сайт Торгово-промышленной палаты РФ).

82. Number of Arriving-Departing Foreigners and Citizens, July 2007 (Институт статистики Турции – Turkstat), http://www.turkstat.gov.tr.

83. Օրինակ, երկուսից ավելի տարիներ առաջ /2005 թ.-ի ապրիլի 19-ին/ Ռուսաստանի /տնտեսական զարգացման ու առևտրի նախարար Գ. Գրեֆ/ և Թուրքիայի /պետնախարար Կ. Թյուզմեն/ միջև ռուս-թուրքական արձանագրություն ստորագրվեց Համաշխարհային առևտրային կազմակերպությանը Ռուսաստանի միացման մասին:

84. Հայտնի են Թուրքիայի պլանները 2009-2010 թթ.-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում զբաղեցնել ոչ մշտական անդամի տեղը:

85. 2004 թ.-ի վերջում ինչպես նշեց Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը «Մեր երկրների համար ընդհանուրը իրենց եվրասիական բնույթն է: Ուստի, եթե ոչ մեզ է վիճակված խաղալ տարբեր քաղաքակրթությունների միջև կամրջի դերը, ակտիվորեն աջակցել դեպի ապագան ուղղված հարաբերությունների հաստատմանը Եվրոպայի ու Ասիայի, Արևմուտքի ու Արևելքի միջև» (С. Лавров, Российско-турецкие отношения: новый этап, Газета «Turkish Daily News» (Турция), 5.12.2004).

86. Թուրքիայի արտաքին տնտեսական կապերի կոմիտեն /DEIK/ հանդիսանում է թուրքական մասնավոր սեկտորի կազմակերպություն, որը միավորում է Թուրքիայի Գործարար երկկողմանի խորհուրդները աշխարհի բազմաթիվ պետությունների երկրի ակտիվ առևտրատնտեսական գործընկերների հետ:

87. Ռուսաստանի Դաշնության ու Թուրքական Հանրապետության միջև բարեկամության ու բազմակողմ գործընկերության խորացման մասին 2004 թ.-ի դեկտեմբերի 6-ի Համատեղ հռչակագրի մեջ, որն ընդունվել է ՈԴ-ի նախագահի Թուրքիա կատարած այցի արդյունքում, կողմերը «հիմնվելով 1992 թ.-ի մայիսի 25-ի Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հիմունքների մասին Պայմանագրում ամրագրված սկզբունքների, այլ ռուս-թուրքական փաստաթղթերի վրա, այդ թվում 2001 թ.-ի նոյեմբերի 16-ի Եվրասիայում Ռուսաստանի ու Թուրքիայի միջև համագործակցության զարգացման գործողությունների պլանը», նշեցին «առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի և դրա աշխատանքային խմբերի առկա մեխանիզմների կարևորությունը երկկողմանի առևտրատնտեսական կապերի զարգացման համար» և հայտարարեցին, որ «կօգտագործվեն բոլոր ջանքերը այդ կառույցների պտղաբեր ու արդյունավետ կիրառման և երկարաժամկետ ռազմավարության մշակման համար, որը հաշվի կառնի երկկողմ առևտրա-տնտեսական կապերի բնույթը և գլոբալ տնտեսական միտումները»: Համատեղ հռչակագրում կողմերը հայտարարեցին գործարար շրջանակներին հետագա աջակցություն ցուցաբերելու մասին, «և այս համատեքստում հավանության է արժանի ռուս-թուրքական և թուրք-ռուսական գործարար խորհուրդների գործունեությունը, որոնք գործում են ՈԴ-ի Առևտրաարդյունաբերական պալատի և Թուրքիայի արտաքին տնտեսական կապերի կոմիտեի հովանու ներքո, և գործնական օգնություն են ցուցաբերում միջտարածքային տնտեսական կապերի հաստատման ու զարգացման համար»:

Թուրքիայի և Իրանի տնտեսական համագործակցությունը տարածաշրջանում

Սերգեյ Շաքարյանց

Ներածություն

Երկու հարևան երկրներ, որոնք հավակնում են հանդես գալ որպես տարածաշրջանային խոշոր տերություններ, ինչպես նաև որպես վերտարածաշրջանային ռազմավարական լրջագույն գործոններ: Հենց այսպես էին բնութագրվում Թուրքիայի և Իրանի քաղաքականությունը և տնտեսական ծրագրերը միջազգային դիտորդների կողմից 1991-2007 թթ.-երի միջև ընկած ժամանակահատվածում: Ըստ այդմ քչերն էին հաշվի առնում այն պարզ ճշմարտությունը, որ ռազմավարական գործոնների նկատմամբ «սեփականության» եռյակի լիարժեք «համալիրը», բացի շահավետ հեռահաղորդակցական դիրքը, իր մեջ ներառում է նաև տարբեր ռեսուրսներով բավարարման ինքնաբավությունը: Տվյալ հանգամանքն էլ հենց հնարավորություն էր տալիս Իրանին /թերևս այնժմ էլ հնարավորություն է տալիս/ որոշ չափով մեծամտությամբ վերաբերվել իր թուրք հարևանի ցանկություններին ու կարիքներին: Սակայն դա չի նշանակում, որ Թեհրանը մերժում էր Անկարային, օրինակ էներգակիրների կամ տրանսպորտային ոլորտում համագործակցության խնդրում: Դրա հետ մեկտեղ, ինչպես դիպուկ նկատել են Թուրքիայի կրտսեր գործընկեր և «եղբայր» պետության Ադրբեջանի փորձագետները դեռևս 2006 թ.-ի սեպտեմբերին, «Մինչ օրս Թուրքիան Իրանի հետ չունի ոչ միայն տնտեսական համագործակցության միջպետական մակարդակի որևէ համաձայնագիր, այլև երկու երկրների միջև չկա ինչ-որ փաստաթուղթ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» / 13.09.2006 թ.-ի «Զերկալո» թերթի Ռ. Միրկադիրովի հեղինակած «Ստեղծվել է Հարավային Ադրբեջանի Կոորդինացիոն կենտրոն» նյութը/:

Իրավիճակն իրոք որ խճճված էր, սակայն ադրբեջանցի հեղինակը որոշ չափով այն ծանրացնում էր: Թեհրանի և Անկարայի միջև գործում էին հիմնականում պայմանավորվածություններ, որոնք ձեռք էին բերվել այս կամ այն նախարարությունների, գերատեսչությունների կամ ընկերությունների մակարդակով: Սակայն ոչ կառավարական մակարդակով: Նշված երկրների միջև դիվանագիտական հարաբերություններն էլ իրականում վաղուց հաստատված են, թեկուզև դրանք առանձնահատուկ բնույթ ունեն: Սակայն տարբեր ժամանակաշրջաններում քաղաքական ոլորտում միմյանց ընդառաջ գնալու այս կամ այն ծգտումների հետ համահունչ, փորձեր էին ձեռնարկվում համակարգավորել նաև տնտեսական համագործակցությունը տալով դրան միջպետական բնույթ: Այսպես, առաջին փորձերը նկատվել են դեռևս 20-րդ դարի 1990-ական թվականներին, երբ Թուրքիայում առաջին անգամ իշխանության եկան «Ռեֆահ» կուսակցության /«Բարություն»/ իսլամիստները: Թեհրանի ու Անկարայի միջև փոխադարձ հետաքրքրության ճիշտ նույնպիսի բռնկում է նկատվում նաև վերջին 4-5 տարիների ընթացքում, երբ Թուրքիայում իշխանության է եկել մեկ այլ իսլամիստական ուժ Արդարության և զարգացման կուսակցությունը /ԱԶԿ/:

Այսպիսով, դժվար չէ հանգել նախնական հետևության, որ երկու երկրների միջև համագործակցության մակարդակը մշտապես կախված է ոչ թե Իրանից, այլ նրանից, թե որքանով են Թուրքիայի իշխանությունները պատրաստ կատարելու արտատարածաշրջանային ուժերի կամքը, քանի որ Անկարան ՆԱՏՕ-ի շրջանակներում կամ իր արտաքին պետական պարտքի հարցերով «կապված է» ԱՄՆ-ի հետ: Անտարակույս իր ազդեցությունն ուներ նաև Թուրքիայի այն կարգավիճակը, որ վերջինս հանդիսանում է Իսրայելի մահմեդական միակ հավատարիմ ու հետևողական դաշնակիցը: Այնուամենայնիվ, վերջին բոլոր տարիների ընթացքում գործել և գործում է առևտրատնտեսական համագործակցության թուրք-իրանական համատեղ Միջկառավարական հանձնաժողովը, որի շրջանակներում արդեն տեղի է ունեցել 19 նիստ:

Սակայն, միաժամանակ Թուրքիան և Իրանը եղել ու մնում են խոշոր միջազգային տարածաշրջանային բնույթի տնտեսական համագործակցության մեջ, չնայած նրան, որ ընդհանուր առմամբ Անկարան այսօր էլ Արևմուտքի ու Իսրայելի կողմից ենթակա է ազդեցության: Խոսքը վերաբերում է երկու երկրների մասնակցությանը Զարգացման համար Տարածաշրջանային Համագործակցության Կազմակերպությանը, որը հիմնադրվել է Իրանի, Թուրքիայի և Պակիստանի կողմից 1977 թ.-ին, ինչպես նաև դրա իրավահաջորդ հանդիսացող Տնտեսական Համագործակցության Կազմակերպությանը /ECO/, որը ստեղծվել է 1985 թ.-ին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՏՀԿ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է հենց Թեհրանում, և պետք չէ կարծել, թե դա Թուրքիայի ու Պակիստանի կողմից պարզապես գիջում էր հօգուտ Իրանի, այլ նաև ռազմավարական գործոնների համալիրի իրատեսական հաշվարկ, որով օժտված է Իրանը: Ինչպես հայտնի է, համաձայն 1996 թ.-ի սեպտեմբերի 14-ի Իզմիրի պայմանագրի, ՏՀԿ-ի մեջ ընդունվեցին նաև այլ երկրներ Ադրբեջանը, Աֆղանստանը, Միջին Ասիայի բոլոր հանրապետությունները: Այդպիսով Իրանի, որպես ՏՀԿ-ի կենտրոնի իրական նշանակությունը ավելի ու ավելի աճման միտում ունի: Ընդ որում, օրինակ նույն Միջին Ասիայում արդեն 2000-ական թվականների սկզբներին հասկացան, որ իր ներկայության աճի կայացած միտումների ու եղանակների պահպանման դեպքում ՏՀԿ-ի գործառույթային տարածքում հատկապես Իրանն է օժտված լրջագույն առավելություններով:

Այսպես, Ղազախստանի Կրթության ու գիտության նախարարության Ռ.Բ. Սուլեյմանովի անվան Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն քաղ.գիտ.դոկտ. Ս.Կ. Կուշկումբաևը 2003 թ.-ին իր «Կենտրոնական Ասիայում Ղազախստանի անվտանգության քաղաքականությունը. տարածաշրջանային ու միջազգային ասպեկտները» աշխատության մեջ խոսելով մոտ ապագայի մի շարք գործոնների մասին, նշում էր. «Կարծում ենք հեռանկարում տարածաշրջանային դասավորության մեջ Իրանի դերը զգալի կլինի: Դա կապված է Կենտրոնական Ասիայի երկրների ու Իրանի միջև առևտրատնտեսական շփումների ինտենսիվացման հետ: Թեհրանն ակտիվորեն ավելացնում է սեփական տնտեսական ներուժը և հավակնում է տարածաշրջանային առաջնորդի դերի: Իրանի տնտեսական հզորությունը և երկրի բնակչությունը գերազանցում են Կենտրոնական Ասիայի երկրների ընդհանուր բնակչությանն ու նրանց տնտեսական հնարավորությունները: Տարածաշրջանում իրենց ազդեցությունը ընդլայնելու ծգ-

տում ունեցող մահմեդական երկրների եռյակից Իրանն արդեն առաջ է անցել Թուրքիայից ու Պակիստանից: Թեհրանի նկատմամբ Վաշինգտոնի կիրառած մեկուսացման պրակտիկան, ըստ մեզ, հեռանկարային առումով և պրագմատիկ մոտեցումների պայմաններում ունակ չէ Կենտրոնական Ասիայի երկրներին հատուցել համագործակցությունից ստացված այն պոտենցիալ դիվիդենտները, որոնք պայմանավորված են տարածաշրջանային հաշվեկշռում Իրանի ունեցած իրական աշխարհատնտեսական ու աշխարհաքաղաքական դերով: Հետևաբար Անկարան, բնականաբար փորձում է հակազդել այդ փորձերին: Սակայն, եթե Թուրքիան չկարողանա իր «պատմամշակութային» ազդակցության ռազմավարությունը համալրել արդյունավետ տնտեսական մեխանիզմներով, ապա նա տարածաշրջանում կհայտնվի աշխարհաքաղաքական ետնապահի դիրքում: Իսլամաբադն ունի տարանցիկ հեռահաղորդակցման հնարավորություններ, և Պակիստանը կփորձի երկրի կշռին ու ազդեցությանը համարժեք տեղ զբաղեցնել: Այդ ռազմավարության իրականացումը իր վրա կկրի «աֆղանական» գործոնի զսպիչ ազդեցությունը և, որ ամենակարևորն է, պակիստան-հնդկական հարաբերությունների հիմնախնդիրների ազդեցությունը: Այսպիսով, անվտանգությունը Կենտրոնական Ասիայում հեռանկարում կշարունակի ենթարկվել ուժեղ ազդեցության և մշտական մարտահրավերների, ինչպես աշխարհամասի խոշորագույն տերությունների Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի, այնպես էլ ԱՄՆ-ի կողմից, որոնք կապված են Եվրասիայի տարածքների նկատմամբ աշխարհառազմավարական վերահսկողության համար պայքարի հետ: Կարծում ենք Մոսկվայի, Պեկինի, Թեհրանի և Վաշինգտոնի միջև հարաբերությունները գերազանցապես կորոշեն 21-րդ դարում Կենտրոնական Ասիայում միջազգային հարաբերությունների բնույթը»: Հավելենք միայն, որ տվյալ կանխատեսումները ավելի քան արդարացի են նաև Անդրկովկասի, ինչպես նաև ամբողջ Առաջավոր Ասիայի համար, եթե հաշվի առնենք, թե ինչպիսի էական լծակներ է գործադրում Իրանը ամբողջ մահմեդական աշխարհում, այդ թվում նաև Արաբական Արևելքում առաջնորդ դառնալու պայքարի նպատակներով:

Նշենք նաև մեկ այլ հետազոտողի՝ ռուսաստանցի Լ.Մ. Կուլագինայի կարծիքը արտահայտված «Արդի փուլում Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները» /1997 թ./ աշխատության մեջ: Այստեղ նշվում է, որ Թեհրանի կողմից իր ազդեցության տարածման հնարավորությունները, այդ թվում նաև Թուրքիայի վրա, խիստ անհանգստացնում են ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին. «Իրանը շարունակում է մեծ ուշադրություն դարձնել հարևան մահմեդական երկրների՝ Թուրքիայի և Պակիստանի հետ հարաբերություններին: Չնայած առկա տարաձայնություններին, Իրանը և Պակիստանը համագործակցում են աֆղանական հիմնախնդրի շուրջ, չնայած որ Պակիստանի կառավարությունը մտահոգված է Հնդկաստանի հետ Իրանի մերձեցմամբ: Այնուամենայնիվ առևտրատնտեսական ու ռազմական ոլորտներում Իրանի ու Պակիստանի համագործակցությունը հաջողությամբ զարգանում է: Վերջին շրջանում որոշ չափով բարդացել են հարաբերությունները Թուրքիայի հետ, քանի որ աճում է մրցակցությունը մահմեդական աշխարհում և հատկապես նախկին Խորհրդային Միության հանրապետություններում առաջնորդության համար: Թուրքիայի ազդեցությունը որոշվում է Միջին Ասիայի թուրքական ժողովուրդների հետ ազգային ու լեզվական մտերմությամբ, այն դեպքում, երբ Իրանինը մշակութային գործոնով: Երկու պետությունների միջև առկա են հակասություններ քրդական հիմնախնդրի շուրջ, ինչպես նաև թուրքական տարածքներում մի շարք իրանական կազմակերպությունների գործունեությամբ պայմանավորված: Սինևույն ժամանակ երկու երկրներն էլ շահագրգռված են պահպանել բարեկամական հարաբերությունները: Վերջին երկկողմանի համաձայնագրերը վկայում են, որ երկրները փոխադարձաբար դիմել են որոշակի զիջումների: Ստորագրված է մի փաստաթուղթ, որը նախատեսում է սերտ համագործակցություն նավթի, բնական գազի արդյունահանման ու վերամշակման, սահմանամերձ առևտրի, տրանսպորտի ու արդյունաբերության ոլորտներում: Իրանը թուրքական ապրանքների փոխանակմամբ Թուրքիային մատակարարում է 3-4 մլն. տոննա հում նավթ: Ստորագրված է պայմանագիր Թուրքիայի տարածքով գազամուղի շինարարության վերաբերյալ, որի միջոցով Իրանի նավթը կմատակարարվի Եվրոպայի երկրներին: Իրանի ու Թուրքիայի երկաթգծերը կմիացվեն Միջին Ասիայի երկաթուղիներին: Իրանի ու Թուրքիայի, ինչպես նաև Սիրիայի միջև, քրդերի վերաբերյալ համաձայնագիր է ստորագրվել»

Այսպիսով, Իրանի, ավելի քան Արևմուտքի հետ, սերտորեն կապված երկրներում դեռ անցած տարիներին կասկածներ չկային, որ եթե խուսափեն արտատարածաշրջանային ազդեցությունից, ապա Թեհրանի համար դժվարություն չի ներկայացնի մերձակա տարածքներում հաստատել ոչ միայն իր առաջնորդությունը, այլև իրական ռազմավարական տիրապետությունը: Եվ այն, որ համեմատաբար վերջերս Իտալիան խոստովանեց, որ Իրանն ըստ էության հանդիսանում է աշխարհի էներգետիկ «նյարդը», կենտրոնը /իհարկե, եթե հաշվի չառնենք Ռուսաստանը և նրա էներգառեսուրսները/, որը ԻԻՀ-ի հետ ավանդաբար և տևական ժամանակաշրջան սերտ հարաբերություններ կառուցող երկրներում գիտակցվել է ոչ այսօր և ոչ էլ երեկ: Նշենք, որ այս հայտարարությունը համաձայն ԻՌԻԲ գործակալության, արվել է 2008 թ.-ի հունվարի 9-ին ԻԻՀ-ում Իտալիայի դեսպանի կողմից «Դիր» նավթային բլոկում երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու և դրա հետագա մշակման համար պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ: Նա հայտարարեց, որ Իրանին և Իտալիային միավորում են ընդհանուր տնտեսական շահերը և երկու երկրների միջև փոխադարձ ապրանքաշրջանառությունը հասել է տարեկան 6 մլրդ. եվրոյի: Երկկողմանի համագործակցության կարևորագույն ոլորտը էներգետիկան է, և Իրանը, որպես էներգետիկ տերություն, կարևոր տեղ է զբաղեցնում համաշխարհային էներգետիկ շուկայում, խոստովանել է արևմտյան դիվանագետը: Ոչ պակաս կարևոր է նաև Իտալիայի դեսպանի այն միտքը, որ տնտեսական հարաբերությունները կարևոր գործոն են տարածաշրջանում քաղաքական լարվածության զսպման համար: Այդ կարծիքը ամբողջությամբ կարելի է վերագրել նաև Իրանի ու Թուրքիայի տնտեսական համագործակցությանը:

1. Իրավիճակը մինչև 2007 թվականը

2000-2001 թթ.-երից, իսկ առավել չափով 2003 թ.-ից տարածաշրջանում սկսվեցին էլ ավելի բարդ գործընթացներ: 2003 թ.-ի հոկտեմբերին իրանական «Զոմհուրիե էսլամի» թերթը հաղորդեց, որ Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլա Գյուլը ընդգծել է Իրանի հետ ամենաբարձր մակարդակով երկկողմանի կապերի ամրապնդման անհրաժեշտության մասին: Այն ժամանակ լիբանանյան «Ալ-Մուստակբալ» թերթին տրված հարցազրույցում Ա. Գյուլը շոշափեց Իրաքում իրավիճակի կայունացման գործում տարածաշրջանի պետությունների դերակատարության խնդիրը: Առանձնահատուկ շեշտելով Իրանի դրական ներդրումը, նա նշեց, որ Անկարան ողջունում է Թեհրանի հետ կապերի ամրապնդման և տարածաշրջանային ու միջազգային հիմնախնդիրների լուծման գործընթացում համագործակցության ցանկացած նախաձեռնություն: Նրա կարծիքով Իրանը, Թուրքիան և Սիրիան ինտենսիվորեն համագործակցում են Իրաքի խնդրի շուրջ, և նա առանձնահատուկ նշում է, որ բոլոր երեք երկրներն արդեն հայտարարել են, որ հանդես են գալիս պատերազմով քանդված երկրի տարածքային ամբողջականության օգտին: Խոսելով ընդհանուր առմամբ Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մասին, Ա. Գյուլը նշել է, որ Իրանի հետ համագործակցությունը Անկարայի տարածաշրջանային քաղաքականության առաջնահերթություններից է և կոչ է արել այսուհետ ընդլայնել Իրանի ու Թուրքիայի միջև երկկողմանի և տարածաշրջանային համագործակցությունը: Նրա խոսքերով, իրավիճակի վատթարացումը Իրաքում բացասականորեն կանդրադառնա ամբողջ տարածաշրջանի անվտանգության վրա: Նա գոհունակություն է հայտնել ահաբեկչության դեմ պայքարում Իրանի քայլերի առիթով: Իրանը և Թուրքիան կարողացել են մոտեցնել իրենց դիրքորոշումները քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտներում: Իրանի և Թուրքիայի միջև ապրանքափոխանակության վիճակագրական տվյալները ցույց են տալիս դրա ամենամյա աճը մոտ 30-60 %-ով, այն ժամանակ հայտարարել է Ա. Գյուլը: Իրանական թերթի համաձայն, Թուրքիայի ԱԳՆ-ի նախարարի, իսկ ներկայումս՝ այդ երկրի նախագահի տվյալ հայտարարությունները վկայում են այն, որ «Թուրքիան հրաժարվում է տարածաշրջանում ԱՄՆ-ի աջակիցը լինելու դերակատարումից»:

Արդեն 2003 թ.-ի դեկտեմբերի 8-ին, այն ժամանակ առկա իրավիճակի կապակցությամբ, Իրանը հանդես եկավ սենսացիոն հայտարարությամբ, եթե համատեղենք ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քայլերը ինչպես Թուրքիայի վերաբերյալ, այնպես էլ Անկարայի մասնակցությամբ Ադրբեջանի ու Իրաքի հետ «կապակցված» խողովակաշարային նախագծերի վերաբերյալ: Այն ժամանակ Անկարայում տեղի ունեցավ Թուրքիայի էներգետիկայի ու բնական ռեսուրսների նախարարի հանդիպումը «Իրանի նավթաքիմիական արդյունաբերություն» ընկերության գլխավոր տնօրենի հետ: Այդ հանդիպման ընթացքում, մասնավոր սեկտորին որոշ պետական օբյեկտների փոխանցման ծրագրի շրջանակներում, Թուրքիան Իրանին առաջարկեց իրենից ծեռք բերել «Իտքիմ» պետական նավթաքիմիական ընկերությունը: Իրանական կողմը՝ Նեյմաթ-զադեի գլխավորությամբ, արագ արձագանքեց այդ առաջարկին և հայտարարեց, որ ԻԻՀ-ն պատրաստ է գնել այդ նավթաքիմիական համալիրը անհրաժեշտ հետազոտություններից ու հաշվարկներից հետո: Թուրքական ու իրանական մասնագետների երկխոսության կարևոր ուղղություններից մեկը հանդիսացավ Թուրքիայի տարածքով իրանական գազի տարանցման թեման դեպի Եվրոպա: Իրանի գլխավոր նավթաքիմիկոսը հավելեց, որ Իրանը պատրաստ է էլ ավելի մեծ ծավալի գազ մատակարարել հարևան երկրին: Նշելով այն փաստը, որ երկու երկրների համագործակցության ընդլայնումը օգտակար կլինի ինչպես Իրանի, այնպես էլ Թուրքիայի համար, Նեյմաթ-զադեն հայտարարեց, որ Իրանի նպատակը Թուրքիայի հետ երկարաժամկետ հարաբերությունների հաստատումն է առևտրի ու նավթաքիմիայում փոխադարձ ներդրումների ոլորտներում: Ենթադրվում էր, որ երկու երկրների տնտեսական հարաբերությունների զարգացման մանրամասները էներգետիկայի, մասնավորապես գազի ու էլեկտրականության ոլորտում, կքննարկվեն Թուրքիայի էներգետիկայի նախարարի Իրան կատարվելիք այցի ընթացքում: 2003 թ.-ի վերջի դրությամբ Թուրքիայի արևմուտքում գտնվող Իզմիր քաղաքում «Իտքիմ» պետական նավթաքիմիական ընկերության 15 կարևոր ձեռնարկություններում աշխատում էր 4500 մարդ: 2002 թ.-ին այդ ընկերությունը 3,3 տրլն. թուրքական լիրայի վնասներ կրեց:

Այս հանգամանքը խիստ կարևոր է, քանի որ դա նշանակում է, որ Թուրքիան դեմ չէ թույլ տալ Իրանի «ներխուժումը» իր էներգավառելիքային համալիրի մեջ: Դատելով ամենից Թուրքիայի ամերիկյան դաշնակիցներն ու «տերերը» փոփոխություններ չզգացին թուրքական ղեկավար վերնախավի տրամադրություններում: Մինչդեռ 2004 թ.-ին դրան հաջորդեց շարունակությունը, երբ ապրիլ ամսին Թուրքիայի փոխվարչապետ Մեսուդ Պիլմազը ելույթ ունենալով «Ղուրբալաղ» մաքսային նոր համալիրի շինարարության հիմնադրման արարողության ժամանակ, որը տեղակայված է «Բազերգան» իրանական մաքսատան դիմաց, հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ է Իրանի հետ ցանկացած համագործակցության: Նա մատնանշեց Իրանի և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերությունները և կոչ արեց ընդլայնել երկու երկրների միջև առևտրային ու տնտեսական կապերը: Նշված արարողությանը ներկա էին Իրանի և Թուրքիայի մաքսային ծառայությունների ներկայացուցիչները, դեսպանները և հանձնակատարները, երկու երկրների մեջլիսների պատգամավորներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ: Նշելով «Ղուրբալաղ» մաքսային համալիրի նշանակությունը, Մ. Պիլմազը հայտարարեց դրա շինարարության արագ ավարտի անհրաժեշտության մասին: Ամեն տարի այդ մաքսակետով, երկու ուղղությամբ, սահմանը հատում են շուրջ 500 հազ. Իրանի և Թուրքիայի քաղաքացիներ, և նախկին համալիրը չէր կարողանում ապահովել ուղևորների նման հոսքը: Թուրքիայի կառավարությունը մտադրված էր այդ մաքսակետում կառուցել բարեկարգ շենք, որի շահագործմամբ կվերացվեին բոլոր մաքսային հիմնախնդիրները: Ինչպես հաղորդում էին իրանական և թուրքական ԶԼՄ-ները, այդ արարողության շրջանակներում երկու երկրների ներկայացուցիչները բանակցություններ վարեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Իրանական ղեկավարները արարողությանը մասնակցում էին թուրքական իշխանությունների հրավերով: Անկարայից հաղորդում էին, որ նրանց ցուցաբերվել է ջերմ ընդունելություն:

«Ղուրբալաղի» դիմաց տեղակայված «Բազերգան» մաքսային համալի-

րի շահագործումը սկսվել է 2000 թ.-ի սեպտեմբերին: Մաքսային համալիրի շենքը զբաղեցնում է 5500 ք.մ. մակերես: Դրա շինարարության վրա ծախսվել է 13 մլրդ. դոլար: Դա իրանական սահմանի ամենամեծ և գեղեցիկ համալիրներից մեկն է: «Բազերգան» մաքսային համալիրը գտնվում է Մակու քաղաքից 20 կմ դեպի արևմուտք: Սահմանը հատող ուղևորների, ինչպես նաև տարանցիկ բեռների տեղափոխման քանակով այս համալիրը Իրանի ցամաքային սահմանի 14 մաքսային համալիրների մեջ զբաղեցնում է առաջին տեղը:

Նույն տարում երկու կողմերը հետաքրքրություն ցուցաբերեցին նաև մեկ բջջային կապի ոլորտում համագործակցության նկատմամբ: Սեպտեմբերի կեսին Ստամբուլում տեղի ունեցավ հանդիպում Իրանի առևտրի նախարար Մոհամմադ Շարիաթմադարի և Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թ. Էրդողանի միջև: Ինչպես հաղորդեց ԻՌՆԱ գործակալությունը, հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին երկկողմ և տարածաշրջանային համագործակցության հարցեր և խնդիրներ: Թուրքիայի վարչապետը գոհունակություն է արտահայտել երկու երկրների հարաբերությունների զարգացման դրական միտումների առթիվ և հույս է հայտնել, որ երկու երկրների միջև առևտրի ծավալը մոտ ապագայում կհասնի 5 մլրդ. դոլարի: Էրդողանը հանդես եկավ դեպի Թուրքիա իրանական գազի մատակարարման հիմնախնդրի լուծման օգտին: դրա արտահանման գնի նվազման ճանապարհով /նշենք, որ Իրանը մշտապես դրան հակադրվում էր/: Իր հերթին, Իրանի առևտրի նախարարը հաղորդեց, որ 2003 թ.-ին երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալն աճել է 78 %-ով, իսկ 2004 թ.-ի 7 ամիսների ընթացքում աճը կազմել է 53 %: Շարիաթմադարիի խոսքերով, նման մակարդակը հանգեցնում է Իրանում ներդրումների ծախսերի աճին և խոչընդոտում է երկու երկրների մասնավոր սեկտորների համագործակցությունը: Հանդիպման ժամանակ քննարկվեց նաև երեք երկրների՝ Թուրքիայի, Իրանի և Պակիստանի դերակատարության հարցը ՏՀԿ-ում, որոնց գործունեության ակտիվացումը ՏՀԿ-ի շրջանակներում կարող է շատ արդյունավետ դառնալ այդ կազմակերպության նպատակների ձեռքբերման առումով: Այս առթիվ Իրանի առևտրի նախարարը հայտնեց Իրանի պատրաստակամությունը, որպես այդ ուղղությամբ կատարվող առաջին քայլ, Թեհրանում կազմակերպել երեք երկրների նախարարների խորհրդակցություն: Շարիաթմադարիին Թուրքիայի վարչապետին տեղեկացրեց, որ թուրքական «Թուրքսել» ընկերությունը պաշտոնապես սկսել է իր գործունեությունը Իրանում՝ որպես այդ երկրում բջջային կապի երկրորդ օպերատոր:

Սակայն այդ քայլին նախորդել էր Իրանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական ու գիտատեխնիկական համագործակցության Միջկառավարական հանձնաժողովի 18-րդ նիստը, որը տեղի էր ունեցել 2004 թ.-ի հուլիսի 27-ին Թեհրանում: Բանակցությունների ժամանակ իրանական և թուրքական պատվիրակությունները գլխավորում էին Իրանի և Թուրքիայի տրանսպորտի նախարարները: Նիստի ընթացքում ավարտին հասցվեց Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական բնական գազի տարանցման մասին պայմանագրի տեքստերի /այս նախագիծը այնուհետև տարածում կստանա «Nabucco» անվամբ/ և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում համագործակցության հարցերի շուրջ համաձայնեցման հուշագրի նախապատրաստումը, ինչպես նաև սկսվեց արտոնյալ առևտրի մասին պայմանագրի նախապատրաստումը: Բանակցությունների ընթացքում հատուկ ուշադրության արժանացան նավթի և նավթաքիմիայի, բնակարանային շինարարության, ինչպես նաև տրանսպորտի ոլորտներում երկկողմանի առևտրատնտեսական համագործակցության հարցերը: Մասնավորապես, քննարկվեցին ազատ առևտրատնտեսական գոտիների շրջանակներում /ԱԱՏԳ/ տնտեսական համագործակցության ակտիվացման, դեպի Թուրքիա իրանական տնայնագործական արտադրանքի արտահանման համար խոչընդոտների վերացման, սահմանամերձ երկաթուղային կայարաններում գնացքների պարապուրդի կրճատման, ծովային առևտրային նավահանգիստների նավամատույցներում լրացուցիչ ծառայությունների մատուցման և սահմանամերձ մաքսային մարմինների շուրջօրյա աշխատանքի անցման հարցերը: Հաղորդվեց նաև, որ 2004 թ.-ի հուլիսի 26-ին Թեհրանում փոխնախարարների մակարդակով տեղի ունեցավ մասնագետների նախնական հանդիպում միջկառավարական հանձնաժողովի սպասվող նիստի նյութերի նախապատրաստման համար: Իրանական պատվիրակությունը գլխավորում էր ԻԻՀ-ի տրանսպորտի և հաղորդակցական ուղիների նախարարի տնտեսական հարցերով տեղակալ Ահմադ Սադեկ Բոնաբը:

Սակայն որակապես նոր փուլ սկսվեց հատկապես 2005 թ.-ին: Հենց այդ ժամանակ Թեհրանը հիմնովին մտավ մահմեդական աշխարհում առաջնորդության համար մղվող պայքարի մեջ, առավել ևս, որ հենց այդ ժամանակ ԱՄՆ-ն որոշեց ծեռնամուխ լինել իր «Մեծ Մերձավոր Արևելք» ռազմավարական ծրագրի իրականացմանը, որն ուղղված է այդ թվում նաև տարածաշրջանի կայունացած սահմանների վերանայմանը, որի նպատակը ըստ էության հանդիսանում է իրանական պետականության ներկայիս տեսքի վերացումը: ԱՄՆ-ի պլանների մեջ էր մտնում արաբական հնազանդ ռեժիմների համախմբումը Թուրքիայի, որպես մահմեդական աշխարհի նոր առանցքի շուրջ: Այդ ժամանակ սրվեցին իրան-ամերիկյան հարաբերությունները, որի համար որպես հիմնապատկեր ծառայեցին ԱՄՆ-ի մշտական մեղադրանքները Իրանին, այդ թվում նաև Թեհրանի հասցեին արված Վաշինգտոնի այն մեղադրանքը, որ ԻԻՀ-ն ատոմային էներգետիկայի ոլորտի զարգացման միջոցով իրականում ձգտում է ծեռք բերել ատոմային զենքի արտադրության տեխնոլոգիաներ:

ԻՌՆԱ գործակալությունը նշում էր, որ ԱՄՆ-ի այդ ջանքերին պատասխանելով այդ թվականին Իրանի նախագահ ընտրված Մահմուդ Ահմադինեջադը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 60-րդ նստաշրջանի կուլուարներում Նյու-Յորքում հանդիպեց Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանին և նրա հետ քննարկեց իրան-թուրքական հարաբերությունների զարգացման ուղիները: Այդ հանդիպման ընթացքում, որին ներկա էին նաև Իրանի և Թուրքիայի ԱԳՆ ղեկավարները, Մ. Ահմադինեջադը նշեց երկկողմանի հարաբերությունների լայնածավալ հեռանկարները և հայտարարեց «Դեպի Եվրոպա գազի արտահանման համար Թեհրանն ունի բազմաթիվ այլընտրանքային տարբերակներ, սակայն Իրանի կառավարությունը նախընտրում է, որպեսզի խողովակաշարն անցնի Թուրքիայի տարածքով»: Իրանի նախագահը նաև շնորհակալություն հայտնեց Թուրքիայի կառավարությանը, իրանական ատոմային ծրագրին սատարելու համար, և նշե-

լով, որ իրանական գիտնականները հնարավորություն են ստացել միջուկային վառելիքային ցիկլի իրացման համար, հայտարարեց, որ «Մենք վճռականորեն որոշել ենք այդ տեխնոլոգիան օգտագործել խաղաղ նպատակներով: Միջուկային զենքի չտարածման պայմանագրով /ՄՉՉՊ/ նախատեսված մեր պարտավորությունների, ինչպես նաև միջազգային նորմերի և Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության հետ համագործակցության շրջանակներում»: Մ. Ահմադինեջադը նաև մատնանշեց հանածո վառելիքի պաշարների նվազման գործընթացը և ընդգծելով Իրանին անհրաժեշտ 20 հազ. ՄՎտ էլեկտրաէներգիայի ծավալը, հայտարարեց գլխավոր անակնկալը, որ «Իրանի Իսլամական Հանրապետությունը երբեք չի ձգտել զանգվածային ոչնչացման զենքի ձեռքբերմանը: Ընդ որում, հաշվի առնելով ատոմային էներգիայի նկատմամբ մահմեդական երկրների պահանջմունքը, մենք պատրաստ ենք նրանց փոխանցել միջուկային տեխնոլոգիաները»: Իրանի նախագահը խիստ քննադատության ենթարկեց նաև միջուկային տերություններին, որոնք հանդես են գալիս խաղաղ նպատակներով Իրանի կողմից միջուկային տեխնոլոգիաների ձեռքբերման դեմ:

Իր հերթին Թուրքիայի վարչապետը Մ. Ահմադինեջադի նախագահության տարիների առումով Թեհրանի և Անկարայի միջև մշակութային, քաղաքական ու տնտեսական կապերի էլ ավելի ընդլայնման ու ամրապնդման հույս հայտնեց: Ռ. Էրդողանը նաև հայտնեց Իրանի հետ առևտրի, տնտեսության ու էներգետիկայի ոլորտներում համագործակցության զարգացման Թուրքիայի շահագրգռվածության մասին: Ըստ որում, Թուրքիայի վարչապետը հրավիրեց Մ. Ահմադինեջադին պաշտոնական այցով այցելել Անկարա:

Այսպիսով, Իրանը գտավ այն միջոցը, որի օգնությամբ կարողացավ ստիպել մահմեդական աշխարհին, առաջին հերթին Թուրքիային, մտածել այն մասին, թե որքանով է մահմեդական պետություններին ձեռնտու գտնվել Թեհրանի նկատմամբ վարվող ամերիկյան քաղաքականության ազդեցության ներքո: Ատոմային էներգիայի արտադրության տեխնոլոգիաների տիրապետումը, հատկապես այն բանից հետո, երբ Պակիստանը միջուկային զենք ունի և պաշտոնապես դարձել է այսպես կոչված «միջուկային ակումբի» անդամ, բազմաթիվ մահմեդական մայրաքաղաքներում դարձել է սնեռուն գաղափար: Թուրքիան, այդ թվում, բազմիցս հայտարարել է այն մասին, որ դեմ չէ սկսել զարգացնել սեփական ատոմային էներգետիկայի ոլորտը: Իսկ այստեղ իրանական նախագահ Մ. Ահմադինեջադն ինքն է ամբողջ մահմեդական աշխարհին առաջարկում ըստ էության հրաժարվել Իրանի նկատմամբ վարվող ԱՄՆ-ի քաղաքականության նույնիսկ բանավոր աջակցությունից. հատկապես այդ իմաստն էր թաքնված իրանական առաջնորդի մահմեդական երկրներին խաղաղ բնույթի միջուկային տեխնոլոգիաների անհատույց փոխանցման առաջարկության մեջ: Եվ դատելով թուրքական վարչապետի արձագանքից, Անկարան անմիջապես կառչեց Մ. Ահմադինեջադի առաջարկությունից: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Թուրքիան հնարավոր է գործնականում էլ ավելի առաջ գնաց, քան 2005-2007 թթ.-ին պաշտոնապես հայտարարվում էր Անկարայից ու Թեհրանից:

Համաշխարհային Առևտրային Կազմակերպության /ՀԱԿ/ անդամ-երկրների առևտրի նախարարների 6-րդ Կոնֆերանսի շրջանակներում, 2005 թ.-ի դեկտեմբերի 19-ին, Հոնկոնգում տեղի ունեցավ ԻԻՀ-ի առևտրի նախարար Մասուդ Միր-Կազեմիի հանդիպումը Թուրքիայի արտաքին առևտրի պետնախարար Կուրշադ Թուզմենի հետ: Այն ժամանակ ԻՌՆԱ գործակալությունը հայտնում էր, որ հանդիպման ժամանակ Իրանի առևտրի նախարարը ու Թուրքիայի պետնախարարը քննարկել են երկկողմանի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ուղիները: Մ. Միր-Կազեմին նշել է Իրանից պրոպիլենի, ապակու և հայելիների ներկրման սահմանափակումների Անկարայի կողմից վերացման մեջ Թեհրանի շահագրգռվածության մասին: Նա նաև նշել է սահմանամերձ առևտրի ընդլայնման նպատակով սահմանային ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև թուրքական կողմից իրանական գյուղատնտեսական ապրանքների ու արտադրանքի ներկրման գների նվազեցման անհրաժեշտության մասին: ԻԻՀ-ի առևտրի նախարարության ղեկավարը ողջունեց իրանական տուրիստական ինդուստրիայի մեջ արված թուրքական ընկերությունների ներդրումները, մասնավորապես հյուրանոցների շինարարության, և նշեց, որ Իրանը և Թուրքիան կարող են Կենտրոնական Ասիայում համատեղ նախագծեր իրականացնել և կանխարգելել երկու երկրների միջև բացասական մրցակցությունը այդ տարածաշրջանում:

Իր հերթին Կ. Թուզմենը նշեց Իրանի կողմից թուրքական արդյունաբերական ապրանքների ներկրման գների նվազման մեջ Թուրքիայի շահագրգռվածության մասին: Թուրքիայի պետնախարարը նշեց նաև, որ մտադրված է քննարկել այս հիմնախնդիրները, ինչպես նաև ՏՀԿ-ի շրջանակներում թուրք-իրանական տարածաշրջանային համագործակցության հարցերը Թեհրան կատարվելիք իր այցելության ընթացքում, որը նախատեսված էր 2006 թ.-ի հունվարին, որը պետք է տեղի ունենար «Դ8» խմբի նիստի շրջանակներում:

Նախորդ տարում /20.03.2004 թ. – 21.03.2005 թ./ Իրանի ու Թուրքիայի միջև ապրանքափոխանակության ծավալը կազմել է ավելի քան 2 մլրդ. դոլար: Անցած տարվա ընթացքում Իրանը Թուրքիա է արտահանել 1,150 մլրդ. դոլար ընդհանուր արժողության ապրանք և ներկրել է 750 մլն. դոլարի ապրանք: Իրանական գբոսաշրջիկներից ստացված Թուրքիայի տարեկան շահույթը կազմել է ավելի քան 500 մլն. դոլար: Իրանական ապրանքների տարանցումը այն ժամանակ Թուրքիային տարեկան ապահովում էր 200 մլն. դոլարի շահույթ:

2006 թ.-ի կարևորագույն քայլը, ըստ ամենայնի, պետք է համարել Իրանի նախաձեռնությունը ՏՀԿ-ի շրջանակներում 1 մլրդ. դոլար կապիտալով Առևտրի ու համագործակցության բանկի ստեղծման վերաբերյալ, որի մասին հնչեցվել է 2006 թ.-ի մայիսի 5-ին Կարաչիում /Պակիստան/: Ինչպես այն ժամանակ նշեց Թուրքիայի պետնախարար Բաշիր Աթալայը Անկարան, Թեհրանը և Իսլամաբադը «կիանդիսանան Առևտրի ու զարգացման բանկի հիմնադիրները, որին այնուհետև կմիանան նաև ՏՀԿ-ի մյուս անդամները: Բանկի ձևավորման գործընթացը գտնվում է ավարտի փուլում»: Ըստ նրա, բանկը կարող է ֆինանսավորել կարևոր տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծեր, մասնավորապես երկաթուղային հաղորդակցության զարգացման մեջ: Կրկին պետք է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ որպես բանկի տեղակայման կենտրոն ընտրված էր ոչ

թե Թուրքիան, այլ տվյալ դեպքում Պակիստանը: Կարելի է ենթադրել, որ այս հարցում նշանակություն է ունեցել Իրանի դիրքորոշումը, որը բոլոր ջանքերով խոչընդոտում է տարածաշրջանում Անկարայի դիրքերի ամրապնդմանը:

Այնուհետև երկու երկրները քայլեր ձեռնարկեցին զբոսաշրջության ոլորտում համագործակցելու ուղղությամբ: 2006 թ.-ի հունիսին աշխատանքային այցով լինելով Իրանում, մշակույթի և զբոսաշրջության թուրքական նախարար Աթիլլա Կոչը հիարկե չէր թաքցնում, որ Անկարային առաջին հերթին հետաքրքրում է Իրանի այն տարածքը, որտեղ գերակշռող է թուրքալեզու բնակչությունը Արևելյան Ադրբեջանը, ուր նա ավելի վաղ էր հանդիպումներ անցկացրել, քան այցելել Թեհրան: Այսպես, նա հանդիպել էր այդ օստանի նահանգապետ Մոհամմադ-Կազեմ Մեմարզադեի հետ: Թավրիզ կատարած այցելության ընթացքում նա հանդիպել է տեղի գործարարների հետ և քննարկել զբոսաշրջության ոլորտում իրան-թուրքական համագործակցության ակտիվացման ուղիների հարցը: Իսկ Թեհրանում թուրքական նախարարը հայտարարել է, որ Անկարան շահագրգռված է Թուրքիայի և Իրանի ժողովուրդների պատմա-մշակութային ընդհանրության ու հոգևոր ժառանգության պահպանման ու ամրապնդման մեջ: Նրա խոսքով, չնայած երկու հարևան երկրների միջև քաղաքական ու տնտեսական համակարգերի տարբերություններին, անհրաժեշտ է ընդհանրության պահպանումն ու ամրապնդումը: Ա. Կոչը ընդգծեց, որ Անկարան շահագրգռված է զբոսաշրջության ոլորտում թուրք-իրանական համագործակցության ակտիվացմամբ:

Այնուհետև, իր վրա համընդհանուր ուշադրություն հրավիրեց թուրքական վարչապետ Ռ.Թ. Էրդողանի պաշտոնական այցը Իրան, 2006 թ.-ի դեկտեմբերի 2-3-ին: Թեհրանում նա բանակցություններ վարեց Իրանի նախագահ Մ. Ահմադինեջադի, Մահմեդական հանրապետական կարգի բարձրության որոշման ասամբլեայի նախագահ Ալի Աքբար Հաշեմի-Ռաֆսանջանիի /ԻԻՀ-ի նախկին նախագահ/ և ԻԻՀ-ի ԱԳՆ ղեկավար Մանուչեր Մոթթաքիի հետ: Երկու երկրների մամուլը նշում էր, որ թուրքական վարչապետի այցը հաջողված էր: Նշվում էր, որ երկկողմանի բանակցությունները շատ հագեցած էին, և դրանց գլխավոր արդյունք հանդիսացավ այն, որ Իրանը և Թուրքիան ձգտում ցուցաբերեցին կտրուկ բարձրացնել առևտրատնտեսական հարաբերությունների մակարդակը: Կողմերը համագամանորեն քննարկեցին երկկողմանի հարաբերությունների ամբողջ համալիրը, ինչպես նաև մի շարք կարևոր տարածաշրջանային հիմնախնդիրներ: Մասնավորապես, մեծ ուշադրություն դարձվեց երկու երկրների առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը, առաջին հերթին էներգետիկ ոլորտում: Կողմերը պայմանավորվեցին երկկողմանի ապրանքաշրջանառությունը ավելացնել առաջիկա երկու տարիների ընթացքում նախորդ 6 մլրդ. դոլարից հասցնելով 10 մլրդ. դոլարի: Այդ ավելացման մեջ զգալի մասնաբաժին ընկնում էր իրանական գազին:

Բնական է, որ բացի տնտեսական հարցերը, Իրանը և Թուրքիան շոշափեցին նաև տարածաշրջանի շրջանակներում քաղաքական ոլորտի փոխգործակցությանը: Բանակցությունների ընթացքում մանրակրկիտ քննարկման առարկա հանդիսացավ իրավիճակը Իրաքում և Լիբանանում: Թուրքական դիվանագիտական շրջանակներում նշում էին այդ հարցերի

շուրջ երկու երկրների միանման դիրքորոշումների մասին: Անկարան և Թեհրանը հաստատեցին իրենց դիրքորոշումը Իրաքի տարածքային ամբողջականության նկատմամբ, դեմ հանդես եկան Հյուսիսային Իրաքում ամերիկյան ռազմական հենակետի ստեղծմանը, պայմանավորվեցին ուժեղացնել իրենց գործողությունների կոորդինացումը իրաքյան տարածքում տեղակայված Քրդական Բանվորական Կուսակցության /ՔԲԿ/ գրոհայինների դեմ: Փորձագետները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել կողմերի հայացքների ընդհանրության վրա Թուրքիա, Իրան և Սիրիա եռակողմ համագործակցության հաստատման հարցի շուրջ, որի նպատակն է Իրաքում քաղաքացիական պատերազմի դադարեցումը և բոլոր շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության հիման վրա իրավիճակի կարգավորումը Լիբանանում, այդ թվում նաև «Հեզբոլլահ» խմբավորման ու դրան մոտ կանգնած լիբանանյան շիիթների «Ամալ» կուսակցության հետ: Իրանը շնորհակալություն հայտնեց Թուրքիային իրանական միջուկային գործի հիմնախնդրի լուծման դիվանագիտական ուղու հակվածության համար: Թուրքական դիվանագիտական շրջանակներում գնահատելով թուրքական վարչապետի այդ այցը Թեհրան, նշում էին այն փաստը, որ բարձր մակարդակի թուրք-իրանական շփումները արդեն ձեռք են բերել կանոնավոր բնույթ: Այդ գործընթացը խոչընդոտելու ԱՄՆ-ի փորձերը հաջողությամբ չեն պսակվել: Ավելին, այստեղ չեն բացառում, որ ԱՄՆ-ն ըստ էության ընդունելով Իրաքում իրականացված իր ուժային քաղաքականության սխալականությունը, կփորձի Անկարան օգտագործել որպես միջնորդ և Իրաքին հարակից երկրների գործողությունների կոորդինատոր այդ երկրում իրավիճակի կարգավորման համար: Նշանակո՞ւմ է արդյոք դա, որ 2006 թ.-ի վերջին Թուրքիան հավակնում էր «միջնորդի» դերակատարմանը ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերություններում, դժվար է ասել: Սակայն 2007 թ.-ի իրադարձությունները ցույց տվեցին, որ ընդհանուր առմամբ, Անկարայի հույսերն անհիմն չէին. չէ որ Իրանի և ԵՄ-ի միջև «ատոմային գործով» բանակցությունների առնվազն մեկ փուլը տեղի ունեցավ հենց Թուրքիայում:

Այն ժամանակ, ըստ Ռ. Էրդողանի կողմից դեկտեմբերի 3-ին Թեհրանում տրված մամլո ասուլիսի, Իրանի փոխնախագահ Փարվիզ Դավուդիի հայտարարեց, որ Թեհրանն ու Անկարան ձգտում են բարձրացնել երկկողմ ու բազմակողմ համագործակցությունը բոլոր ոլորտներում: Թուրքիայի վարչապետի հետ իր բանակցությունների արդյունքները բարձր գնահատելով, Փ. Դավուդին նշել է, որ կողմերը քննարկել են երկկողմ ու բազմակողմ համագործակցության հարցերի լայն շրջանակ: Նրա խոսքով, Իրանը և Թուրքիան ձգտում են ինտենսիֆիկացնել ու դիվերսիֆիկացնել գործընկերությունը տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների, առաջին հերթին ՏՀԿ-ի և «Մահմեդական ութնյակի» շրջանակներում: Որպես համագործակցության հեռանկարային բնագավառներ Իրանի փոխնախագահը նշեց ներդրումները, նավթագազային ու նավթաքիմիական սեկտորները, էներգետիկան, բանկային ոլորտը, զբոսաշրջությունը: Փ. Դավուդին նշել է նաև, որ բանակցությունների ընթացքում կարծիքներ են փոխանակվել Մերձավոր Արևելքում իրավիճակի, ինչպես նաև իրանյան միջուկային ծրագրի հարցերի շուրջ:

Հարաբերությունները 2007 թվականին. արմատական բեկո՞ւմ

Անցած տարվա հենց սկզբից, Իրանը և Թուրքիան միջազգային հանրությանը ակնառու կերպով հասկացնում էին, որ նախորդ տարիների տնտեսական մերձեցման բոլոր միտումները պատահական և իրավիճակային կոնյունկտուրային թելադրանք չէին: Իսկապես, 2005 թ.-ի վերջից և 2006 թ.-ի սկզբից պարզ դարձավ, որ Թուրքիա-ԵՄ բանակցությունները, այդ եվրոինտեգրացիոն կառույցին Անկարայի անդամակցության մասին, ծգձգվում են անորոշ հեռանկարով: Փաստորեն Թուրքիան և իր տնտեսությունը հայտնվեցին «կախվածության» փուլում, քանզի սկզբում թուրքական էլիտան որդեգրել էր հստակ կուրս, որ շատ շուտով հարկ չի լինի երկրին «նայել» դեպի Արևելք, առավել ևս դեպի Իրան: Այստեղից էլ այն թելադրանքի փորձերը Թեհրանին, օրինակ իրանական բնական գազը Թուրքիային մատակարարման ավելացման և այդ վառելիքի գների իջեցման պայմանների մասին:

Սակայն, տարբեր բնույթի իրադարձությունների ամբողջ շղթան, այդ թվում նաև ողբերգական հանգուցալուծումը հարևան Իրաքում, և անգլո-ամերիկացիների խոստումների ծգձգված քաշքշուկը ապշերոնյան խողովակաշարերը /Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում/ Կասպից ծովի հատակով Միջին Ասիայի նավթով ու գազով «լցնելու» վերաբերյալ, հանգեցրին նրան, որ Անկարան իրեն սկսեց ծայրահեղ անվստահ զգալ: Հավանաբար Թուրքիայում սկսեցին հասկանալ, որ, հնարավոր է, առանց ետ նայելու դեպի Արևմուտք կատարած շրջադարձը, այդ թվում նաև տնտեսական առումով, կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ Անկարան այլևս հնարավորություն չի ունենա ինքնուրույն քաղաքականություն իրականացնել, առավել ևս աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական: Այստեղից էլ բխում է այն պատրաստակամությունը, որով Թուրքիան մշտապես արձագանքում է Իրանից եկող իմպուլսներին, և այն համառությունը, որով թուրքական ղեկավար շրջանակները իրար ետևից «շրջվում էին» դեպի Թեհրանը, երբ նրանց վրա էր հասնում ԱՄՆ-ի և մյուս արևմտյան երկրների հերթական նենգությունը:

Այս առումով չի կարելի չհիշատակել այն մասին, որ Իրանում լավ հասկանում էին, թե ինչ է տեղի ունենում Թուրքիայի հետ և քաղաքական ու տնտեսական առումներով որ ճամփաբաժնին է կանգնած Անկարան: Պատահական չէր, որ 2007 թ.-ի հոկտեմբերի 22-ին ռուսական իրանագետ-փորձագետ, ժամանակակից Իրանի ուսումնասիրման կենտրոնի գլխավոր տնօրեն Ռաֆաել Սաֆարովը «Նորությունների ռուսական ծառայությանը» տված հարցազրույցում նշեց, որ Իրանը մեծ զգուշավորությամբ է հետևում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին: Կոնկրետ դեպքում նա մեկնաբանեց Թուրքիայի խորհրդարանի որոշումը, որը կառավարությանը իրավասություններ էր տալիս մեկ տարի ժամկետով Հյուսիսային Իրաքում ռազմական գործողություններ իրականացնելու համար: Ըստ նրա տեղեկությունների, Իրանը չի պաշտպանում Թուրքիայի որոշումը, այն համարում է «չարդարացված, միջազգային նորմերին անհամապատասխան և պատրաստվում է ընդունել փախստականների հոսքը»: Միայն առաջին հայացքից այս հարցը չի շոշափում Իրանի և Թուրքիայի տնտեսական շահերը: Իրականում թե այս որոշման և թե Հյուսիսային

Իրաքում /այսինքն, Իրաքյան Քուրդիստանում/ թուրքական զինված ուժերի «անդրսահմանային» հնարավոր լայնամասշտաբ ռազմական գործողությունների հետևանքները անպայմանորեն որոշակի վնաս կհասցնեն Թեհրանի շահերին, օրինակ կապված դեպի Թուրքիա գազի ու նավթի մատակարարման հետ, եթե հաշվի առնենք, որ թուրքերի նպատակը Հյուսիսային Իրաքում ակնհայտորեն հանդիսանում են Իրաքյան Քուրդիստանի նավթաբեր տարածքները: Առանցքային էր Ռ. Սաֆարովի հետևյալ արտահայտությունը «Իրանի նկատմամբ Թուրքիան հանդիսանում է ոչ ամենաբարեկամական երկիրը, այլ քաղաքական ընդդիմախոսն է ու տնտեսական մրցակիցը: Ցանկացած ժամանակ արևմտյան պետությունները թուրքական ներկայության միջոցով կարող են ներթափանցել Իրանի տարածք և այնտեղ կատարել իրենց «պիղծ» գործերը»:

Հետևաբար հասկանալի է, որ 2007 թ.-ի ընթացքում Թեհրանը հաճախ գործում էր «առաջ անցնելով» Անկարայից: Հենց այդպես կարելի էր գնահատել ԻԻՀ-ի ԱԳՆ ղեկավար Մ. Մոթթաքիի անցած տարվա փետրվարի 20-21-ի հայտարարությունը Թուրքիա կատարած 2-օրյա պաշտոնական այցի ժամանակ: Այս պաշտոնատար անձը գլխավորում է թուրք-իրանական առևտրատնտեսական համագործակցության Միջկառավարական հանձնաժողովի իրանական կողմը և, բնականաբար, արտահայտում էր Թեհրանի պաշտոնական դիրքորոշումը: Հատկապես նա, Անկարայում հնչեցրեց ԻԻՀ-ի ղեկավարության առաջարկը ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման նպատակով համատեղ նախագծերի իրականացման մասին: Եթե հաշվի առնենք, որ, բացի առևտրատնտեսական համագործակցության Միջկառավարական հանձնաժողովի համատեղ 19-րդ նիստի աշխատանքների շրջանակները, այցի ընթացքում Մ. Մոթթաքին ինտենսիվ բանակցություններ վարեց նաև Ռ. Էրդողանի, Թուրքիայի այն ժամանակվա արտգործնախարար Ա. Գյուլի և արդեն Թուրքիայի նախկին նախագահ Ահմեդ Նեջեթ Սեզերի հետ, ապա կարելի է հասկանալ, թե ինչպիսի էյֆորիա էր հաստատվել Անկարայում: Հանձնաժողովի ամփոփիչ, համատեղ արձանագրությունը թուրքական կողմից ստորագրեց պետնախարար Կ. Թուգմենը: Եթե հաշվի առնենք նաև այն, որ Իրանի արտգործնախարարի այցը Թուրքիա իրականանում էր Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտի Անկարա կատարած այցելությունից մի քանի օր անց, որն իր այցի ժամանակ հայտարարեց Իրանի նկատմամբ քաղաքական ու տնտեսական պատժամիջոցների ընդունման անհրաժեշտության մասին, որպեսզի թույլ չտան նրա վերածումը միջուկային տերության, ապա Մ. Մոթթաքիի տվյալ հայտարարության արժեքը արդեն դուրս է գալիս տարածաշրջանի սահմաններից:

Ընդ որում, նույնիսկ թուրքական ԶԼՄ-ները իրավիճակը ներկայացրեցին որպես Իրանի նախաձեռնություն: Պնդում էին, որ հենց Իրանն է առաջին քայլը կատարել դեպի Թուրքիա և մտադրություն հայտնել ընդլայնելու երկկողմանի համագործակցությունը: Եվ առաջարկություն է արել, որից, ինչպես ընդունված է ասել, Անկարային «դժվար էր հրաժարվել»: 2007 թ.-ի փետրվարի 21-ին կայացած համատեղ ասուլիսում Թուրքիայի ԱԳՆ ղեկավար Ա. Գյուլը հայտարարեց, որ բանակցությունները «դրական էին ու կառուցողական»: Նրա խոսքով, հանդիպման հիմնական թեման քաղաքականության ոլորտում երկու երկրների փոխհարաբերության հարցերի քննարկումն էր: «Երկու երկրների քաղաքական փոխհարաբերություններ-

րի շրջանակներում քննարկվել է իրաքյան հիմնախնդիրը, ինչպես նաև իրանական միջուկային ծրագիրը», - նշել է Թուրքիայի ԱԳՆ ղեկավարը: Իր հերթին Ս. Մոթթաքին հայտնեց, որ մեկնել է Անկարա առևտրատնտեսական համագործակցության իրանա-թուրքական Միջկառավարական հանձնաժողովի 19-րդ նիստին մասնակցելու համար: Նրա խոսքերով, նիստը պտղաբեր էր և դրա արդյունքներով կստորագրվի համատեղ արձանագրություն: Իրանի ԱԳՆ ղեկավարը հայտնել է, որ հանդիպման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև տարածաշրջանային կայունության ու անվտանգության հարցերին, պաղեստինյան, իրաքյան և լիբանանյան հիմնախնդիրներին: Երկու նախարարները կարծես թե «շրջանցեցին» ատոմային էներգետիկայի ոլորտում համատեղ նախագծերի մասին իրանական առաջարկությունը: Դա խոսում էր այն մասին, որ Թեհրանի առաջարկը Անկարային դրել լրջագույն երկընտրանքի առջև, ի՞նչ պատասխանել: Նույնիսկ այն դեպքում, երբ Թուրքիան վաղուց և անչափ շատ էր ուզում ունենալ միջուկային էներգետիկայի համալիրներ, Անկարայում հասկանում էին, որ շտապ արտահայտված «այոն» կվատացնի հարաբերությունները ԱՄՆ-ի և Իսրայելի հետ: Հենց սրանով էլ պայմանավորված էր ԱԳՆ ղեկավարների «լռությունը» համատեղ տրված մամլո ասուլիսում:

Իսկ որպեսզի ոչ ոք չկարծի, թե Իրանը մտադրված էր Թուրքիային իր կողմը գրավել միայն ատոմային էներգետիկայի ոլորտի առաջարկություններով, արդեն փետրվարի 26-ին իրանական ու թուրքական աղբյուրները նշեցին, որ «Իրան Խոդրոու» ավտոմոբիլաշինական խմբի գործադիր տնօրենի արտահանման ու միջազգային հարցերով տեղակալ Ալի-Ռեզա Միրզային առևտրատնտեսական համագործակցության իրանա-թուրքական Միջկառավարական հանձնաժողովի 19-րդ նիստի ամփոփիչ մասում նշեց, որ անց են կացվել լուրջ բանակցություններ՝ նվիրված դեպի Թուրքիա իրանական մարդատար «Սամանդ» ավտոմեքենաների արտահանմանը խանգարող խոչընդոտների վերացմանը: Առաջիկա 60 օրերի ընթացքում իրանական կողմը կսկսի այդ արտահանումը դեպի Թուրքիա: Ա-Ռ. Միրզային նշեց նաև, որ «Իրան Խոնդրոու» ԱԽ-ը պայմանագիր է ստորագրել թուրքական ընկերության հետ, որը պետք է իրականացնի իրանական «Սամանդ» ավտոմեքենաների վաճառքը, երաշխիքային նորոգումը, սպասարկումը, ինչպես նաև գովազդը: Համաձայն այդ պայմանագրի, իրանական ավտոմեքենաների արտահանման թույլատվության տրման պահից այդ ընկերությունը Թուրքիայի տարբեր քաղաքներում կբացի «Սամանդ» ավտոմեքենաների վաճառքի ու սպասարկման ֆիրմայի առևտրային 21 կենտրոններ: Իրանի և Թուրքիայի միջև գործարար համագործակցության նոր էջի՝ ավտոմոբիլաշինության և ավտոմոբիլների արտահանման բացումը բավական ցուցադրական էր: Հետևաբար, խոսքը գնում էր ոչ միայն այն մասին, որ ներթուրքական ավտոմոբիլային շուկայում իրանական ընկերությանը տեղ տրամադրվի «արևի տակ», որն արդեն հագեցած է եվրոպական, ճապոնական ու ամերիկյան ավտոմոդելներով: Եվ քանի որ Թուրքիան պատրաստակամությամբ որսաց Իրանի այս ուղերձը, ապա այդ ոլորտի համաձայնությունների նպատակը նա հանդիսանում էր այն բանի ցուցադրումը Արևմուտքին, որ Անկարան միշտ պատրաստ է «դեմքով շրջվել» դեպի Արևելք, այսինքն նպատակներն ավելի

շատ քաղաքական էին, քան տնտեսական:

Հետագայում Իրանը նորից հանդես եկավ բավական գայթակղիչ առաջարկով: 2007 թ.-ի մարտի 28-ին, Լահորում /Պակիստան/ Իրանի գլխավոր հյուպատոս Սաիդ Խարազին Պակիստանի Ջրային ու էներգետիկ ռեսուրսների կազմակերպության գլխավոր տնօրեն Թարիկ Համիդի հետ բանակցությունների ընթացքում հայտարարեց բնական գազի մատակարարման փոխարեն դեպի հարևան երկրներ, առանձնապես ՏՀԿ-ի մասնակից երկրներ, պատրաստի էլեկտրաէներգիա արտահանման սկսելու Թեհրանի պատրաստակամության մասին: Այնուհետև թուրքական աղբյուրները հաստատեցին, որ նման առաջարկություն Իրանը անմիջապես ուղարկել է նաև Թուրքիա: Դատելով ամենից, Թեհրանի այդ առաջարկը ևս դուր եկավ Անկարային, քանզի դրան հետևեց էներգետիկ ոլորտում երկու երկրների բավական ինտենսիվ մերձեցման գործընթացը: Ընդ որում, ըստ 2007 թ.-ի մայիսի 30-ի ԻՌՆԱ-ի հաղորդագրության՝ հղում կատարելով Թուրքիայի Պետական վիճակագրական վարչության տվյալների վրա, 2007 թ.-ի առաջին եռամսյակում Իրանի ու Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը աճել է 45,6 %-ով և կազմել է 1 687 486 հազ. ԱՄՆ դոլար: Նշված ժամանակահատվածում Իրան կատարված թուրքական արտահանման գումարը կազմել է 286 054 հազ. դոլար, իսկ Իրանից ներկրմանը 1 401 432 հազ. դոլար, ինչը, բնականաբար, 43,09 %-ով և 46,14%-ով ավելին է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Հաղորդագրության մեջ նշվում է, որ 2006 թ.-ին Իրանի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը աճել է 15,9 %-ով և կազմել է 6 681 696 հազ. ԱՄՆ դոլար:

Էներգետիկ ոլորտում Անկարայի ու Թեհրանի մերձեցման մասին էր խոսում 2007 թ.-ի հունիսի 18-ի թուրքական իշխանությունների հայտարարությունը այն մասին, որ Թուրքիան պլանավորում է երկու անգամ ավելացնել էլեկտրաէներգիայի ներկրումը Թուրքմենստանից՝ տարեկան մինչև 1,2 մլրդ. կՎտ/ժամ: Այս պլաններում իր տեղն ուներ նաև Իրանը: Անատոլիական գործակալության տվյալների վրա հղում կատարելով՝ ըստ ԻՌՆԱ-ի հաղորդագրության Թուրքիայի էներգետիկայի ու բնական ռեսուրսների նախարար Հիլմի Գյուլերը դրական է գնահատել Թուրքմենստան և Ղազախստան կատարած իր հերթական այցի արդյունքները: Ըստ Հ. Գյուլերի, Թուրքմենստանից էլեկտրաէներգիայի ներկրման կրկնակի ավելացման հարցը համաձայնեցվել է նաև Իրանի հետ, քանի որ էլեկտրաէներգիայի տարանցումը Թուրքմենստանից Թուրքիա պետք է իրականացվի Իրանի տարածքով: Նա նշել է, որ այս տարի Թուրքիան դառնալու է Եվրոպական էլեկտրաէներգետիկ համակարգի անդամ /UCTE/: Դրա հետ կապված Թուրքմենստանում քննարկվել են այդ երկրի տարածքում էլեկտրաէներգիայի արտադրության և դեպի Թուրքիա ու Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա էլեկտրաէներգիայի մատակարարման շուրջ համագործակցության հարցերը: Թուրքիայի հարևան երկրները նույնպես կարող են արտահանել իրենց էլեկտրաէներգիան դեպի Եվրոպա: Նրա խոսքերով, արդեն այսօր Թուրքիան էներգետիկ միջանցք է հանդիսանում դեպի Եվրոպա նավթի ու բնական գազի մատակարարման համար: Եթե դրան ավելանա նաև էլեկտրաէներգիան, ապա Թուրքիայի դերը, որպես Եվրոպայի ու Ասիայի միջև էներգետիկ կամրջի՝ էլ ավելի կմեծանա:

Ինչպես նշում էր ԻՌՆԱ-ն, համաձայն Անկարայում գտնվող տեղեկաց-

ված տնտեսական աղբյուրների, բանակցությունների ընթացքում քննարկվում էր նաև Իրանի տարածքով դեպի Եվրոպա թուրքմենական բնական գազի մատակարարման հարցը: Իրանական գործակալությունը նշում էր, որ նախկինում այս հարցն արդիական չէր ԱՄՆ-ի հակազդեցության և Թեհրանի ու Անկարայի միջև որոշակի քաղաքական հակասությունների պատճառով: Կասպից ծովի հատակով անցնող խողովակաշարով թուրքմենական գազի մատակարարման նախագծի իրականացման Թուրքիայի փորձերը նույնպես լրջորեն չեն դիտարկվում բարձր արժեքների, տեխնիկական դժվարությունների, Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ համաձայնեցված որոշման բացակայության և Թուրքմենստանի ու Ադրբեջանի միջև չկարգավորված հակասությունների պատճառով: Ղազախստանի ղեկավարության հետ բանակցությունների ընթացքում Թուրքիան մեծ հաջողությունների հասավ տարածաշրջանային համագործակցության էներգետիկ ոլորտում: Հ. Գյուլերը պլանավորում է ամրագրել ձեռք բերված հաջողությունները և պայմանավորվածությունները, որի հետ կապված հաջորդ, հավանական է նաև այս շաբաթ, նա այց կկատարի Իրան: Սպասվող իրանա-թուրքական մերձեցման նման գաղտնի մտադրությունների բացահայտումներ էին անում իրանական ԶԼՄ-ները:

ԻՈՆԱ-ի թղթակիցը նշում էր, որ էներգետիկայի ոլորտում Իրանի և Թուրքիայի երկկողմանի համագործակցության հարցերը բազմիցս քննարկվել են Իրանի նավթի նախարար Վազիրի-Խամանեի և էներգետիկայի նախարար Փարվիզ Ֆաթթահի վերջերս Թուրքիա կատարած այցերի ընթացքում: Այսպես, օրինակ 2007 թ.-ի հունիսին, ԻԻՀ-ի էներգետիկայի նախարարի Անկարա կատարած այցի ժամանակ քննարկվել են դեպի Թուրքիա իրանական էլեկտրաէներգիայի մատակարարման ավելացման, ինչպես նաև ջերմային ու հիդրոէլեկտրակայանների կառուցման ֆինանսական ու տեխնիկական համագործակցության հարցեր: Նշվում էր, որ անցած բանակցությունների ընթացքում նշված հարցերի շուրջ կողմերը հասել են լուրջ համաձայնությունների: Ըստ թուրքական մասնագետների կարծիքների, Հ. Գյուլերի այցը Իրան կարող էր կարևոր քայլ հանդիսանալ «Nabucco» միջազգային էներգետիկ նախագծի շրջանակներում, Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական գազի տարանցման հարցի լուծման ճանապարհին: Նախապես հաղորդվում էր, որ Թուրքմենստանը Ռուսաստանի ու Իրանի կողմից գտնվում է գազային շրջափակման պայմաններում: Այդ երկրները խաղարկում են թուրքմենական գազի հարցը և տարբեր դրդապատճառներով թույլ չեն տալիս թուրքմենական գազի տարանցումը իրենց տարածքներով: Իհարկե, Իրանը հերքում է Թուրքիային և Կովկասի հանրապետություններին թուրքմենական գազի վերավաճառման մասին ոչ պաշտոնական տվյալները: Այս պայմաններում Թուրքմենստանը /դեռ նախկին նախագահ Նիյազով-Թուրքմենբաշիի նախաձեռնությամբ/ ընդունել էր ազգային էլեկտրաէներգետիկայի զարգացման ծրագիր, որը նախատեսում էր բնական գազի մի մասի վերամշակումը էլեկտրաէներգիայի, էներգատար արտադրության զարգացումը և դեպի հարևան երկրները էլեկտրաէներգիայի արտահանման աճը /Իրան, Աֆղանստան և Թուրքիա/, որը շատ ավելի ձեռնտու է, քան գազի վաճառքը Ռուսաստանին, Ուկրաինային և Իրանին՝ ցածրացված գներով: Եվ նույնիսկ նման ցածր գներին Իրանը ստիպված եղավ համաձայնվել այն բանից հետո, երբ Նիյազովի հրամանով ամբողջովին դադարեցվեց թուրքմենական գազի մատակարարումը Իրանին:

Արդեն 2007 թ.-ի սկզբին Իրանը տեխնիկապես պատրաստ էր ապահովել թուրքմենական գազի տարանցումը դեպի Եվրոպա, սակայն նա դա չի անի այնքան ժամանակ, քանի դեռ չի ստացել նույնպիսի իրավունք «Nabucco» միջազգային էներգետիկ նախագծի շրջանակներում դեպի Եվրոպա Թուրքիայի տարածքով սեփական գազի տարանցման համար: ԻՈՆԱ-ն նշում էր, որ մինչև վերջերս Թուրքիան ոգևորված լինելով ԱՄՆ-ի հակաիրանյան քաղաքականությամբ և Ռուսաստանի գազային խաղարկումների օրինակով, առաջարկում էր իրանական գազը գնել իջեցված գներով ու այն վերավաճառել Եվրոպային այլ, ավելի բարձր գնով: Նման գնումների մասին պայմանագրեր Թուրքիան արդեն իսկ ստորագրել է Եգիպտոսի հետ: Իրանը կտրականապես դեմ էր դրան, ուստի գազի առանցքային հարցի հետ կապված որևէ դրական արդյունք կարող է ձեռք բերվել միայն Իրանի և Թուրքիայի միջև փոխադարձ լուրջ զիջումների արդյունքում:

«Nabucco» նախագծին և դրա հետ կապված Իրանի ու Թուրքիայի սպասումներին մենք դեռ կանդրադառնանք: Իսկ այժմ հետևենք Անկարային ու Թեհրանից ստացված դրամատիզմով լի հուլիսյան /նախորդ տարվա/ հաղորդագրումներին: Հուլիսի 9-ին Հ. Գյուլերը մամլո ասուլիսում հանգամանորեն կանգ առավ էներգետիկ ոլորտում Իրանի հետ հարաբերությունների վրա և պատասխանեց իրանական բնական գազի ներկրման հիմնախնդիրների հետ կապված լրագրողների հարցերին: Նա հայտնեց, որ ամառային պայմաններում բոլոր գազ արտահանողները ձգտում են անցկացնել պլանային վերանորոգման աշխատանքներ իրենց գազային օբյեկտներում, որպեսզի ձմռան ընթացքում խնդիրներ չառաջացնեն ներկրողների համար, երբ նրանք, առանձնապես բնական գազի, անխափան մատակարարման կարիք ունեն: Իրանը բացառություն չի կազմում և, կապված պլանային վերանորոգման աշխատանքների հետ, հուլիսի 7-ին դադարեցրեց, իսկ հուլիսի 8-ին վերականգնեց իր բնական գազի մատակարարումը Թուրքիա: Այս ընդհատումները որևէ խնդիր չստեղծեցին երկրի արդյունաբերական օբյեկտների ու բնակչության գազամատակարարման համար, քանի որ Թուրքիան ունի գազամատակարարման այլընտրանքային աղբյուրներ և բնական գազի պաշարներ: Ճիշտ այդպես Թուրքիան խնդիրներ չունեցավ նաև հունիսի 30-ին, երբ Ռուսաստանը տեխնիկական պատճառներով ժամանակավորապես ընդհատեց իր բնական գազի մատակարարումը ստորջրյա «Երկնագույն հոսք» գազամուղով, ինչպես նաև հուլիսին, երբ Ռուսաստանը միևնույն տեխնիկական պատճառներով ընդհատեց նաև Ուկրաինայով անցնող ցամաքային գազամուղով իր գազի մատակարարումը: Նա նշեց, որ ներկայումս Իրանը օրական Թուրքիային մատակարարում է շուրջ 20 մլն.խոր.մ. բնական գազ:

Հուլիսի 16-ին Իրանի պետական հեռուստատեսությունը հաղորդեց, որ օրերս կողմերը ստորագրել են Հուշագիր էներգետիկայի ոլորտում համագործակցության հարցերի շուրջ փոխըմբռնման մասին: Համաձայն պայմանավորվածության Իրանը յուրացման համար թուրքական ընկերություններին կփոխանցի Պարսկական ծոցում գտնվող բնական գազի Հարավային Պարս հանքավայրի մի քանի օբյեկտներ, իսկ Իրանը իր բնական գազը Թուրքիայի տարածքով կմատակարարի Եվրոպային: Իրանի նավ-

թի նախարար Կազեմ Վազիրի Խամանեի վրա հղում կատարելով հաղորդագրության մեջ նշվում է, որ համաձայն երկու երկրների միջև ձեռքբերված համաձայնագրի, Թուրքիան իրավունք կստանա բնական գազի Հարավային Պարս հանքավայրի 22-ից 24 փուլերի յուրացման համար, և այդ բնական գազը կվաճառի Իրանին: Բացի այդ, երկու երկրները կշարունակեն ամրապնդել համագործակցությունը նավթի և բնական գազի առևտրի ոլորտում: Կ.Վ. Խամանեն ասել է, որ Թուրքիայի կողմից տեխնիկա-տնտեսական հիմնավորման նախապատրաստման ավարտից հետո հետագա 4-6 ամիսներին Թուրքիան և Իրանը կստորագրեն պաշտոնական պայմանագիր այդ հանքավայրի շահագործման վերաբերյալ:

Հետաքրքիր է, թե ինչպես էին մեկնաբանվում էներգետիկայի ոլորտում իրանա-թուրքական հարաբերությունների իրավիճակը ռուսաստանյան ԶԼՄ-ում 2007 թ.-ի հուլիսի կեսի դրությամբ: Հուլիսի 13-ի լույս 14-ի գիշերը Թուրքիան և Իրանը գործնականում ավարտեցին Գազային ոլորտում համագործակցության հուշագրի դրույթների համաձայնեցման երկօրյա բարդ գործընթացը: Թուրքական կողմից փաստաթուղթը ստորագրեց էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Հ. Գյուլերը, իսկ իրանական կողմից նավթի նախարար Վազիրի Խամանեն: Երկու նախարարները Հուշագիրը գնահատեցին «որպես էներգետիկայի ոլորտում երկու երկրների համագործակցության կարևոր քայլ»: Փորձագետները ուշադրություն դարձրեցին, որ այդ հարցի շուրջ շփումներ տեղի էին ունենում նաև նախկինում, սակայն կոնկրետ արդյունքի ձեռքբերումը հաջողվեց միայն անկարյան ներկայիս բանակցությունների ընթացքում, հաղորդում էր ՈԴ-ի Մերձավոր Արևելքի ինստիտուտը: Մտադրությունների մասին այս փաստաթուղթը նախատեսում է թուրքական տարածքով դեպի Եվրոպա իրանական բնական գազի տեղափոխումը, ինչպես նաև Թուրքիայի մասնակցությունը Իրանի մի շարք գազային հանքավայրերի շահագործման, ընդլայնման ու արդիականացման մեջ, այդ թվում նաև Հարավային Պարսի երրորդ հերթափոխի: Դրա հետ մեկտեղ, թուրքական նախարարը փաստեց այդ ուղիով նաև թուրքմենական գազի տեղափոխման հնարավորությունը, որի մասին, ըստ իր խոսքերի, առկա է Աշգաբադի հետ նախնական պայմանավորվածություն:

Այսպիսով, ինչպես նշում էին ռուսական աղբյուրները, տվյալ Հուշագրի ստորագրումը թուրքերը դիտարկում են որպես պատեհաժամ ու արդյունավետ միջոց «Nabucco» նախագծի աշխուժացման համար, որի իրականացումը կասկածի տակ էր դրված «Հարավային հոսքի» վերաբերյալ ռուս-իտալական Համաձայնագրի ստորագրումից և հետագայում դրան Բուլղարիայի ու Հունաստանի միացումից հետո: Անկարան կարծում է, որ դա հնարավորություն կտա Թուրքիային ամրապնդել իր դիրքերը, որպես դեպի Արևմուտք էներգառեսուրսների տարանցման առանցքային երկրի: Իր հերթին Թեհրանը էներգետիկ հարցերով Անկարայի հետ փոխգործակցության մեջ տեսնում է ոչ միայն եվրոպական շուկա թուրքական տարածքով իրանական ածխաջրածնների իրական մուտքի, այլև սեփական դիրքերի ամրապնդման հեռանկարի տնտեսական հնարավորություն: Սակայն, թուրքական փորձագետները նշելով էներգետիկ ոլորտում Իրանի հետ համագործակցության ընդլայնման կարևորության մասին, այնուամենայնիվ հոռետեսորեն են գնահատում Հուշագիրը և ներկայիս փուլում դրա

իրականացման հեռանկարները: Նրանք դա անվանում են «հում փաստաթուղթ, որում կողմերն իրենց նույնիսկ իրավաբանորեն ոչնչի չպարտադրող մտադրությունները շարադրել են աղոտ տեսքով»: Մասնավորապես, ուշադրություն է դարձվում այն փաստի վրա, որ Հուշագիրը ստորագրած երկու կողմերն էլ հայտարարում են մի խողովակաշարով ոչ միայն իրանական, այլև թուրքմենական գազի տեղափոխման մասին, որը նախատեսվում է կառուցել Թուրքմենստանի հետ Իրանի սահմանից մինչև իրանա-թուրքական սահմանի վրա գտնվող կետը: Փորձագետները գտնում են, որ այդ դեպքում տեղին կլիներ փաստաթղթի ստորագրմանը հրավիրել նաև թուրքմենական կողմի ներկայացուցիչներին:

Միաժամանակ մատնանշվում է նաև, որ Հուշագրի տեքստում նույնիսկ ուրվագծված չէ թուրքերի համար առանցքային հարցի պատասխանը, թե ո՞վ է թուրքական տարածքից Եվրոպային վաճառելու գազը: Կլինի՞ դա արդյոք թուրքմենա-իրանա-թուրքական համատեղ ձեռնարկություն, թե թուրքական կողմը կբավարարվի միայն տարանցիկ տարածքի դերակատարմամբ: Ըստ որոշ տեղեկությունների, այդ նախագծի իրականացման դեպքում Իրանը պնդում է իր մենաշնորհային իրավունքը Եվրոպայի հետ ֆինանսական հաշվարկների վարման վրա:

Այդ փաստաթղթի շտապողական ստորագրումը Անկարայի կողմից որոշ վերլուծաբաններ կապում են երկրում նախընտրական կոնյունկտուրայով, կառավարության ու իշխող Արդարություն և զարգացում կուսակցության ձգտմամբ ցուցադրել իրենց էներգետիկ քաղաքականության արդյունավետությունը, որն ուղղված է դեպի Թուրքիա էներգառեսուրսների մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացմանը և դեպի Արևմուտք կասպիական ածխաջրատները տեղափոխող առանցքային երկրի դիրքերի ամրապնդմանը: Մյուս կողմից, մինչև վերջ չմշակված հարցերի առկայությունը խոչընդոտ չհանդիսացան Թեհրանի կողմից Հուշագրի ստորագրման համար: Այստեղ, որպես հավանական պատճառներից մեկը դիտարկվում է ԱՄՆ-ի կողմից Իրանին հավանական ռազմական հարվածի մասին կրկին հնչեցվող թեման: Իրանական կողմը հուսով է, որ ՆԱՏՕ-ի անդամ հանդիսացող և, չնայած առկա հակասությունները, դեռևս տարածաշրջանում ԱՄՆ-ի հիմնական դաշնակից հանդիսացող երկրի Թուրքիայի հետ համատեղ խոշոր էներգետիկ նախագծի առկայությունը լրացուցիչ զսպիչ գործոնի դեր կարող է խաղալ Վաշինգտոնի համար Իրանի դեմ ուժային գործողության մասին ամերիկացիների վերջնական որոշման կայացման խնդրում:

Հուշագրի հապճեպ ստորագրումը որոշ թուրքական մասնագետներ դիտարկում են նաև որպես «Անկարայի կեցվածքամոլական /բառացի թարգմ. թուրքերենից – ծան. հեղ./ ցուցադրում Ռուսաստանին, որը վերջին շրջանում պնդում է էներգառեսուրսների տեղափոխման Թուրքիան շրջանցող նախագծերի վրա»: Ըստ որում նրանք հավելում են, որ դեռևս այդ ցուցադրումը, որի նպատակահարմարությունը մեծ կասկածի տակ է, ամրագրված չէ իրական բովանդակությամբ: Նրանց կարծիքով, այդ ամենը խոսում է այն մասին, որ սպասվում է բարդ աշխատանքի մեծ ծավալ, այդ թվում նաև տեխնիկական մակարդակի, որպեսզի թուրք-իրանական Հուշագիրը իրոք հիմք դառնա նրանում շոշափված նախագծի իրականացման կոնկրետ գործողությունների համար: Հուշագրի իրականացման առումով

թուրքական փորձագետների հոռետեսության համար ոչ պակաս կարևոր պատճառ է նաև ընդհանուր առմամբ և առանձնապես էներգետիկ ոլորտում Անկարայի ու Թեհրանի համագործակցության նկատմամբ ԱՄՆ-ի խիստ բացասական վերաբերմունքը:

Ինչպես սպասվում էր, Վաշինգտոնը անմիջապես և կոշտ ծնով արձագանքեց թուրք-իրանական փաստաթղթի ստորագրմանը: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանատան մամուլի գծով ներկայացուցիչ Քեթրին Սալլոուն /Kathryn Sallow/ հայտարարեց, որ Իրանը չպետք է ներգրավված լինի դեպի Թուրքիա էներգառեսուրսների մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացման և դրանք դեպի Արևմուտք տեղափոխման Անկարայի քաղաքականության մեջ: Թեհրանը չի համագործակցում ՄԱԿ-ի ԱԽ-ի և ՄԱԳԱՏ-ի հետ, չի կատարում նրանց որոշումները: «Նման իրավիճակում մենք դեմ ենք Իրանի հետ ցանկացած համագործակցությանը, առավել ևս էներգետիկայի ոլորտում», - նշում էր բարձրաստիճան ամերիկյան դիվանագետը: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ռոսս Ուիլսոնը /Ross Wilson/ շտապ հանդիպում պահանջեց Թուրքիայի էներգետիկայի ու բնական ռեսուրսների նախարար Հ. Գյուլերի հետ թուրք-իրանական Հուշագրի ստորագրման հետ կապված բացատրություններ ստանալու համար:

Անհրաժեշտ է նշել, որ փաստաթուղթը ստորագրած կողմերը ևս անպատասխան չթողեցին դրա նկատմամբ ԱՄՆ-ի բացասական ռեակցիան: Թուրքիայի դիվանագիտական գերատեսչության ղեկավար Ա. Գյուլն ասաց, որ «Թուրքիան պարտավոր չէ որևէ մեկից թույլտվության հարցնել իր ազգային շահերի տեսակետից ձեռնտու գործողությունների համար»: Իսկ գազի ոլորտում Իրանի հետ համագործակցությունը շահավետ է թե Թուրքիայի, և թե Եվրոպայի համար – նշել է նախարարը: Իսկ թուրքական վարչապետ Ռ. Էրդողանը հույս հայտնեց, որ «Վաշինգտոնը կփոխի այդ հարցի շուրջ իր դիրքորոշումը, քանի որ, ինչպես ԱՄՆ-ն և Ռուսաստանը, Թուրքիան ևս մտածում է իր շահերի մասին, և դա իր իրավունքն է»:

Թուրքիայում Իրանի դեսպանատունն իր հերթին հայտարարեց «Թեհրանի վստահության մասին, որ Վաշինգտոնի ճնշման տակ Անկարան չի փոխի տվյալ գազային նախագծի և ընդհանրապես թուրք-իրանական համագործակցության վերաբերյալ իր դիրքորոշումը, որը համընկնում է երկու երկրների և ամբողջ տարածաշրջանի շահերին»: Վերլուծելով թուրք-իրանական Հուշագրի ստորագրման հետ կապված իրավիճակը, թուրքական քաղաքական ու դիվանագիտական շրջանակներում նշում են, որ դա Վաշինգտոնի կողմից Անկարայի ու Թեհրանի հարաբերությունների «սառեցման» ամենևին առաջին փորձը չէ: Սակայն, չնայած ամերիկացիների բոլոր ջանքերին, թուրք-իրանական շփումները, այդ թվում նաև բարձր մակարդակի, ձեռք են բերում կանոնավոր բնույթ: Ավելին, Հուշագրի ստորագրումը հաստատում է, որ այսօր դրանք սկսել են համալրվել այնպիսի կարևոր ռազմավարական ոլորտի համատեղ նախագծերով, ինչպիսին էներգետիկան է, ինչը Թուրքիայի և Իրանի հարաբերությունները դարձնում են տարածաշրջանային քաղաքականության ծանրակշիռ տարր: Իսկ ԱՄՆ-ի փորձերը խոչընդոտել այդ գործընթացը դեռևս հաջողությամբ չի պսակվում: Դրանից ելնելով, ներկայիս իրավիճակում բացառված չէ Անկարայի վրա ուժային ճնշման հավանականությունը և Թուրքիայի նկատմամբ պատժամիջոցների հարցի քննարկումը Վաշինգտոնի կողմից:

Չնայած այն ամենին, հուլիսի 18-ին Իրանը և Թուրքիան էներգետիկ ոլորտում համագործակցության ևս մեկ քայլ կատարեցին: Այդ օրը ԻԻՀ-ի էներգետիկայի նախարար Փարվիզ Ֆաթթահը էներգետիկ նոր օբյեկտների տեսչական ստուգման նպատակով ժամանեց Արևմտյան Ադրբեջան օստան: Դրանց կառուցման մասին որոշումը ընդունվել էր ԻԻՀ-ի նախագահ Մ. Ահմադինեջադի նախագահությամբ կայացած ԻԻՀ-ի կառավարության արտագնա նիստի ընթացքում: Նույն օրը Ուրմիա քաղաքում /նույն նահանգի վարչական կենտրոն/ տեղի ունեցավ Փ. Ֆաթթահի մամլո ասուլիսը, որի ժամանակ նա մի շարք կարևոր հայտարարություններ արեց երկրի էներգետիկայի զարգացման հեռանկարների վերաբերյալ: Նա նշեց, որ ներկայումս Իրանը էլեկտրահաղորդակցական գծերով կապված է բոլոր հարևան երկրների հետ: Ընդ որում, բոլոր այդ երկրների հետ Իրանը ակտիվորեն համագործակցում է էլեկտրաէներգետիկայի բնագավառում. կատարում է էլեկտրաէներգիայի փոխանակություն կամ իրականացնում է արտահանում, ինչպես նաև կառուցում կամ վերանորոգում է էներգետիկ օբյեկտներ /էլեկտրակայաններ, էլեկտրական ենթակայաններ, էլեկտրահաղորդակցման գծեր և այլն/: Օրինակ, Իրանը ոչ միայն արտահանում է իր էլեկտրաէներգիան Իրաք, այլև այնտեղ կառուցում է երկու ջերմային կայան: Նրա խոսքերով, ԻԻՀ-ի կառավարությունը որոշում է կայացրել դեպի հարևան երկրներ էլեկտրաէներգիայի արտահանման զգալի ավելացման մասին, քանի որ դա ավելի շահավետ է, քան հում նավթի և բնական գազի արտահանումը: Ընդ որում, էլեկտրաէներգիայի արտահանման ավելացումը կնպաստի տարադրամով պետական շահույթի աճին, նոր էներգետիկ օբյեկտների շինարարության խթանմանը և ազգային էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացմանը, այսինքն նոր աշխատատեղերի ստեղծմանը և ուղղված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում համագործակցության հարցերի շուրջ Իրանի ու Թուրքիայի միջև վերջերս ստորագրված հուշագիրը նախատեսում է դեպի Թուրքիա իրանական էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների մինչև 6000 ՄՎտ տարեկան ավելացում հիմնականում դեպի Թուրքիայի արևելյան շրջանները: Թուրքական կողմի խնդրանքով արտահանման ծավալը արդեն առաջին տարում կաճի մինչև 1000 ՄՎտ-ով: Այդ խնդրի լուծման համար Իրանն առաջին հերթին պետք է ավելացնի իր արտահանող էՀԳ-ների հզորությունները: Բացի այդ, էլեկտրաէներգիայի տեղափոխման ժամանակ կորուստների կրճատման համար անհրաժեշտ է կառուցել մի քանի էլեկտրակայաններ, Թուրքիայի հետ սահմանամերձ գոտում: Նա նաև նշել է, որ Իրանը մեծ հաջողությունների է հասել ամբարտակների ու ջրամբարների շինարարության ոլորտում: Ներկայումս Իրանում ընթանում է 85 ջրամբարների շինարարություն: Իրանական 1386 թվականին /21.03.2007 – 19.03.2008/ երկրում շահագործման կհանձնվեն 2 մլրդ.խորհ.մ. ջուր նախագծային հզորությամբ 15 ջրամբարներ:

Դրա հետ կապված իրանական աղբյուրները հիշեցնում են, որ, ինչպես հաղորդվել էր մի քանի տարի առաջ, Թուրքմենստանի կառավարությունը էներգատար արտադրության ապահովման ու էլեկտրաէներգիայի արտահանման աճի համար ևս սկսել էր էլեկտրաէներգիայի արտադրության ավելացման ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում հանրապետության տարածքում կառուցվել էին ջերմաէլեկտրակայաններ, որոնք հանքահան-

ված բնական գազի մի մասը վերամշակում էին էլեկտրաէներգիայի: Այդ օրագրի ընդունումը հիմնավորվում էր նրանով, որ ավելի շահավետ է արտահանել էլեկտրաէներգիան դեպի Աֆղանստան, Իրան, Թուրքիա, իսկ հեռանկարում նաև Պակիստան, քան անհշան գներով վաճառել բնական գազը Ռուսաստանին և Իրանին:

Ըստ ԻՌՆԱ-ի Աշգաբադից տրված հաղորդագրության, այնուհետև 2007 թ.-ի հուլիսի 24-ին, թուրքմենական «Զաման Թուրքմենիստան» շաբաթաթերթի վերջին համարում հրապարակված է հոդված նավթի և գազի ոլորտներում Իրանի և Թուրքիայի համագործակցության հեռանկարների մասին: Հոդվածում պնդում էին, որ վերջերս Անկարայում ստորագրված էներգետիկ ոլորտում Իրանի և Թուրքիայի միջև երկկողմանի համագործակցության հարցերի շուրջ Հուշագիրը հանդիսանում է թուրքական դիվանագիտության մեծ հաջողությունը: Մի կողմից, այդ փաստաթուղթը թույլ է տալիս Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական ու թուրքմենական բնական գազի տարանցումը, իսկ մյուս կողմից, լայն դարպասներ է բացում թուրքական ընկերությունների առջև դեպի իրանական նավթագազային հանքավայրերը: Այսպես, օրինակ, 2008 թ.-ից թուրքական «TPAO» ընկերությունը մուտքի հնարավորություն ստացավ մասնակցելու Պարսից ծոցի հյուսիսային մասում գտնվող իրանական խոշորագույն ծովային նավթագազային Հարավային Պարս հանքավայրի մշակմանը: Գազի պաշարներն այդ հանքավայրում գնահատվում են 1,5 տրլն.խոր.մ: Ընդ որում, թուրքական ընկերությունը պլանավորում է օրական հանքահանել 56 մլն.խոր.մ. գազ:

Այդ առնչությամբ իրանական աղբյուրները նշել են, որ ծովային նավթագազային Հարավային Պարս հանքավայրը համատեղ է Իրանի ու Կատարի համար: Այդ հանքավայրում բնական գազի ու նավթի հանքահանման քվոտաները որոշված չեն, ուստի և Իրանը, և Կատարը ձգտում են մշակել այդ հանքավայրը միմյանց գերազանցող տեմպերով: Նույնիսկ Կատարը այդ հանքավայրի մշակման տեմպերով ֆինանսական պատճառներով առաջ է անցել Իրանից: Թեհրանում գտնում էին, որ նոր թուրքական ներդրումների ընդգրկումը նախագծի մեջ Իրանին կօգնի կրճատել այդ ճեղքվածքը: Բացի այդ, դեպի Եվրոպայի շուկա բնական գազի ուղիղ մատակարարումը /Թուրքիայի տարածքով/ Իրանին կապահովի մեծ արտարժույթային շահույթով և Եվրոպայում քաղաքական ու տնտեսական ազդեցության աճով: Հանուն դրա Իրանը մեծ զիջումների գնաց Թուրքիային ու Թուրքմենստանին:

Արդեն հուլիսի 25-ին Խաղաղության և պատերազմի բրիտանական ինստիտուտը հանդես եկավ էներգետիկ ոլորտում թուրք-իրանական մերձեցման գնահատականով: «Թուրքիան և Իրանը աշխուժացնում են Եվրոպայի էներգետիկ հույսերը», - համարում էին բրիտանական փորձագետները, քանի որ Անկարան և Թեհրանը ստորագրել են համաձայնագիր, որը հնարավորություն է տալիս «Nabucco» խողովակաշարով Եվրոպա մատակարարել թուրքմենական գազ՝ շրջանցելով Ռուսաստանը: Սակայն, NBCA-ի վերլուծաբանները գտնում են, որ ԱՄՆ-ն և Ռուսաստանը կարող են խոչընդոտել այդ նախագծի իրականացմանը: Երկայնումս պաշտոնական Անկարան Աշգաբադի հետ քննարկում է իրանական տարածքով թուրքմենական գազի արտահանման ուղիները: Բրիտանացիները հիշեցնում են, որ Ռուսաստանից հետո Իրանը հանդիսանում է թուրքմենական բնական գազի երկրորդ սպառողը, որը մատակարարվում է նեբիտգաղյան հանքավայրե-

ից, որոնք տեղակայված են երկրի հարավարևմուտքում, և տեղափոխվում են տարեկան 8 մլրդ.խոր.մ. հզորությամբ Կորպեջե-Կուրտ-Կուի խողովակաշարով: Այս ուղին առավել ծնեռնտու է Անկարայի համար, որը արևմուտքից կարող է միանալ Թուրքմենստան-Իրան խողովակաշարային համակարգին, այդպիսով դառնալով թուրքմենական ածխաջրածնների սպառողն ու տեղափոխողը: Թուրքմենստան-Իրան-Թուրքիա խողովակաշարի շահագործումը հնարավորություն կտար մասամբ լուծել Եվրոպայի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրը՝ ստեղծելով գազի աղբյուր Ռուսաստանը շրջանցող «Nabucco» նախագծի իրացման համար:

31 մլրդ.խոր.մ. հզորությամբ «Nabucco» խողովակաշարի շինարարությունը, որը նախատեսված է սկսել հաջորդ տարի, պետք է ավարտվի 2011 թվականին, որից հետո գազը Թուրքիայից Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի տարածքներով կմատակարարվի Ավստրիային: Նախապես ենթադրվում էր, որ «Nabucco»-ն կսկսի աշխատել միայն Կասպից ծովի հատակով անցնող Անդրկասպյան խողովակաշարի կառուցումից հետո, որը հովանավորվում է ԱՄՆ-ի և բրիտանական նավթային բիզնեսի կողմից: NBCA-ի քաղաքագետները նշում են, որ Թուրքմենստան-Իրան-Թուրքիա խողովակաշարը կարող է վերացնել ծայրահեղ բարդ ու ծախսատար Անդրկասպյան խողովակաշարի շինարարության անհրաժեշտությունը, սակայն ԱՄՆ-ի տնտեսական պատժամիջոցները և Ռուսաստանի կողմից դեպի Եվրոպա գազի մատակարարման մենաշնորհ դիրքերը չկորցնելու ցանկությունը կարող են խոչընդոտել նախագծի իրականացմանը: Ներկայումս ԱՄՆ-ի Կոնգրեսը օրենսդրություն է քննարկում, որը պատժամիջոցներ է նախատեսում ցանկացած ընկերության դեմ, որը պատրաստ է Իրանի նավթագազային սեկտորի մեջ ներդնել 20 և ավելի մլն. դոլար՝ ի պատասխան Թեհրանի հրաժարմանը կասեցնել իր միջուկային ծրագիրը:

Թուրքիայի և Իրանի կողմից մշակված նմանատիպ խողովակաշարի մեկ այլ նախագիծ 1993 թ.-ին անհաջողություն կրեց միայն ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ ուղղված միջազգային պատժամիջոցների իրականացման պատճառով: «ԱՄՆ-ն կխոչընդոտի այդ նախագծի իրականացմանը», - ասում է Ռազմավարական հետազոտությունների դաշախստանյան ինստիտուտի փորձագետ Ասկար Նուրշան: Բաքվի «Գաֆգազ» համալսարանի միջազգային հարաբերությունների ոլորտի մասնագետ Ռոբշան Իբրահիմովը նշում է Թուրքմենստանում և Իրանում գազի ազատ ծավալների անբավարարության մասին: Թուրքմենստանը դեռևս երաշխիքներ չի տվել իրանա-թուրքական ուղղությամբ գազի մատակարարման վերաբերյալ: Բացի այդ, լրացուցիչ խողովակաշարերի շինարարության ֆինանսավորման իրավիճակը բարդանում է Իրանի նկատմամբ միջազգային տնտեսական պատժամիջոցների առկայությամբ, ինչպես նաև Ռուսաստանի կողմից հավանական ցավոտ ռեակցիայով, որը չի ցանկանում ունենալ մրցակիցներ թուրքմենական գազի գնման գործում: Նրա հետ համաձայնվում է նաև դաշախստանյան «Ալտերնատիվա» կենտրոնի փորձագետ Իլյաս Կորսակովը, որը գտնում է, որ դեռ վաղ է խոսել խողովակաշարի շինարարության սկզբի մասին՝ Թուրքմենստանում դրա կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների, իրական արտասահմանյան ներդրողների ու նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման բացակայության պատճառով: Որոշ գնահատականներով նախագիծը պահանջում է 6,3 մլրդ. ԱՄՆ դոլար:

Նշենք, որ ավելի ուշ դեկտեմբերի 26-ին, արդեն ինքը՝ Իրանը հայտարարեց այն մասին, թե ինչ նպատակ էր հետապնդում Թեհրանը էներգետիկայի ոլորտում Անկարայի հետ մերձեցմամբ. Եվրոպան ամբողջովին կապել իրեն և, համապատասխանաբար, «իրանական միջուկային գործի» հարցի շուրջ խարխլել ԵՄ-ի համաձայնեցված դիրքորոշումը ԱՄՆ-ի հետ: Ըստ իրանական ԻՐԻԲ գործակալության հաղորդագրության, իրանական գազի հանքավայրերի մշակման 16 մլրդ. դոլար արժողությամբ Մալազիայի հետ պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողությունից հետո, նավթի նախարար Գոլյամհոսեյն Նոուզարին լրագրողների առջև իր ելույթում շոշափեց «Nabucco» նախագծի հարցը, որը նախատեսում է գազի մատակարարում Եվրոպա: Նախարարը մասնավորապես նշեց, որ այդ նախագծի իրականացումն անհնար է առանց Իրանի մասնակցության: Ըստ նախարարի խոսքերի, դեպի Եվրոպա գազի մատակարարման մասին որոշման կայացման դեպքում միակ աղբյուրը, որը համապատասխանում է սպառողների պահանջներին, կարող են լինել միայն իրանական հանքավայրերը, և առանց Իրանի մասնակցության նախագիծը տնտեսական տեսանկյունից կլինի չկայացած: Գ. Նոուզարին ընդգծեց, որ իրանական գազի պաշարները բավարար են մոտակա 200 տարիների համար և «Nabucco» նախագծի գազատարը պետք է անցկացվի Իրանից գազի մատակարարման հաշվառումով: Նավթի նախարարը նշեց, որ չնայած Իրանը գազի արտահանման համար լայն ընտրություն ունի, այնուամենայնիվ այլ երկրները նույնպես կարող են իրենց ներդրումներն ունենալ «Nabucco» նախագծի իրականացման մեջ:

Շոշափելով դեպի Եվրոպա գազի մատակարարման Իրանի հնարավորությունների հարցը, Գ. Նոուզարին նշեց, որ առայժմ առաջին խողովակաշարը նախատեսված է դեպի Ռուսաստան վառելիքի մատակարարման համար: Ռուսաստանը և Իրանը շահագրգռված են սերտ համագործակցությամբ էներգակիրների տարբեր տեսակների արտահանման ոլորտում: Այսինքն, իրանական նախարարը փաստորեն հերքեց բրիտանական և այլ փորձագետների եզրակացություններն այն մասին, որ էներգետիկ ոլորտում իրանա-թուրքական մերձեցումը և մասնակցությունը «Nabucco» նախագծում ուղղված են Ռուսաստանի «շրջանցմանը» հօգուտ ԵՄ-ի երկրների: Նրա խոսքերով, ցանկացած պայմանագրի քննարկման ժամանակ կարող են լինել անկման ու վերելքի շրջաններ: Բոլոր դեպքերում փորձագետների աշխատանքային խմբերը քննարկում են պայմանագրերը և բանակցությունների ընթացքում անում են ամեն ինչ պայմանագրերի վրա աշխատանքների արագ ավարտի ու դրանց ստորագրման համար: Ներկայումս գազի մատակարարման մասին բանակցություններ վարվում են եվրոպական 4 երկրների հետ: Այնուհետև նավթի նախարարը հիշեցրեց Օմանի նավթի նախարարի հետ բանակցությունների մասին և հայտնեց դեպի Օման 1 մլրդ.խոր.ֆուտ գազի մատակարարման պայմանագրի ստորագրման մասին: Հարավային Պարս հանքավայրի 11-րդ փուլի մշակման և «Տոտալ» ընկերության հետ համապատասխան համաձայնագրի ստորագրման առիթով Գ. Նոուզարին ասաց, որ մոտ ժամանակները Իրանը սպասում է նշված ընկերության վերջնական որոշմանը: Ընդ որում, նախարարը հույս հայտնեց, որ «Տոտալ» ընկերությունը կհամաձայնի բնական հեղուկ գազի /LNG/ արտադրման ոլորտում Իրանի ռազմավարության հետ: Այս դեպքում լիովին

հնարավոր է պայմանագրի ստորագրումը նշված ընկերության հետ: Այժմ իրանական կողմը ուսումնասիրում է իրավիճակը շուկայում. LNG-ի գները և «Տոտալ» ընկերության առաջարկությունները: Այդ առաջարկությունների տնտեսական հիմնավորվածության դեպքում դրանք կընդունվեն:

Մնում է միայն հիշեցնել, որ «Nabucco» նախագծում Իրանի մասնակցությունը ձևակերպվել էր դեռևս 2004 թ.-ի հունվարին ավստրիական ընկերությունների և իրանական ազգային գազ արտահանող ընկերության միջև փոխըմբռնման մասին Հուշագրի ստորագրումով: Նախորդ տարի այդ մասին հիշատակում էին բազմաթիվ ԶԼՄ-ներ և հետազոտական կենտրոններ, որոնք գտնում էին, որ ԵՄ-ն և Թուրքիան դեռ 3 տարի առաջ սկզբունքորեն հասկացրել էին ԱՄՆ-ին, որ նրանք ընդունակ են ինքնուրույն էներգետիկ քաղաքականություն իրականացնել Թեհրանի հետ հարաբերություններում: Ինչպես օրինակ գրում էին հետազոտողները Ուկրաինայում, արդեն մի քանի տարի իրանական գազ ստացող Թուրքիայի և «Nabucco» գազամուղի իրականացմանը ձեռնամուխ եղած ԵՄ-ի փորձից կարելի է որոշակի եզրակացություններ անել: Նախ, ակնառու է, որ չնայած զգալի քաղաքական բարդություններին, դիվանագիտական ջանքերի ակտիվացման ուղիով կարելի է աստիճանաբար հասնել սեփական շահերին: Երկրորդը, գազի ոլորտում երկրների համագործակցությունը Իրանի հետ չի վատթարացրել միջազգային անվտանգության մակարդակը: Երրորդը, Կիևում հասկացել և հասկանում են, որ մինչև «իրանական միջուկային գործի» փակումը ծայրահեղ դժվար է զարգացնել գազի շուրջ համագործակցությունը Իրանի հետ: Սակայն Թուրքիայի օրինակը ցույց է տալիս, որ ցանկության դեպքում նույն ուկրաինացիները լիովին կարող էին չծգտել «շատ դուրեկան լինել» ԱՄՆ-ին, ինչն առկա էր 2004-2007 թթ.-ին: Այսպես, իրանական ԶԼՄ-ները նշում էին, որ երկրի նավթային ոլորտի փոխնախարար Հադի Նեջադ Հոսսեյնիանը պետական հեռուստատեսության եթերում հայտարարեց, որ «Ուկրաինան համաձայնվել է դեպի Եվրոպա 20 մլրդ խորանարդ մետր գազի տարանցմանը: Դեպի Եվրոպա իրանական գազի արտահանման հարցի շուրջ Թուրքիայի հետ որոշ հիմնախնդիրներից հետո այդ համաձայնագիրը կբացի Եվրոպայի դռները իրանական գազի առջև, որը մեզ համար խիստ կարևոր է»: Փոխնախարարը նշեց, որ Իրանը և Ուկրաինան Ռուսաստանին, Հայաստանին և Վրաստանին առաջարկել են համագործակցություն գազամուղի շինարարության հարցում:

Ի դեպ կան ապացույցներ, որ նույնիսկ անգլիացիները միշտ չէ որ էներգետիկայի ոլորտում «հավատարիմ» են ԱՄՆ-ին: Օրինակ, հայտնի է, որ «Շելլ» ընկերությունը /այսինքն, անգլո-հոլանդական «Ռոյալ Դաչչ Շելլ»-ը/ նախնական բանակցություններ է վարել իրանական պետական նավթային NIOC ընկերության հետ Հյուսիսային Պարս գազի հանքավայրի մշակման հեռանկարների մասին, որի պաշարները գնահատվում են 1340 մլրդ.խոր.մ. բնական գազ: «Շելլ»-ը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում նաև Հարավային Պարս հանքավայրի հավանական շահագործման ու Իրանից դեպի Պակիստան գազամուղի կառուցման նկատմամբ: Տվյալ տարածաշրջանում «Շելլ»-ի հիմնական մրցակիցներն են ֆրանսիական «Տոտալ»-ը, ՌԱՕ «Գազպրոմ»-ը և մալազիական «Պետրոնաս»-ը: «Շելլ»-ի ղեկավարությունը հայտարարել է, որ չնայած ԱՄՆ-ի կողմից հավանական պատժամիջոցներին, ընկերությունը շարունակում է Իրանի հետ հա-

մագործակցության բանակցությունները: Արդեն ձեռք են բերվել սկզբունքային համաձայնություններ Հարավային Պարս հանքավայրի մշակմանը «Շելլ»-ի մասնակցության մասին ֆրանսիական «Տոտալ»-ի հետ համատեղ /ներդրումների մոտավոր ծավալն է 5 մլրդ. դոլար/: Ընկերությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում նաև դեպի Պակիստան գազամուղի կառուցման իրանական կառավարության պլանների նկատմամբ: Ընդորում, «Շելլ»-ը Թուրքմենստանի, Թուրքիայի և Իրանի իշխանություններից պատվեր է ստացել Թուրքմենստանից դեպի Եվրոպա գազամուղի կառուցման ՏՏՀ-ի մշակման համար: Գազամուղի երկարությունը 1500 կմ է, նախագծային հզորությունը տարեկան 30 մլրդ.խոր.մ. գազ: Նախագծի մոտավոր արժեքը կազմում է 1,6 մլրդ. դոլար: Ինչպես տեսնում ենք, անգլիական գործարարները ևս, ըստ էության, նպաստում են էներգետիկ ոլորտում Թուրքիայի և Իրանի միջև համագործակցության ամրապնդմանը:

Իսկ ինչ վերաբերում է նախորդ տարվա հուլիսին, ապա այդ ամսվա գագաթնակետը եղավ թուրքական վարչապետ Ռ. Էրդողանի երկօրյա այցը Իրան, որը սկսվեց հուլիսի 28-ին: Այցելության ընթացքում Ռ. Էրդողանը երկկողմանի հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության ու միջազգային իրավիճակի շուրջ զրույց ունեցավ իրանական ղեկավարության հետ և համաձայնագիր ստորագրեց երկու երկրների միջև անվտանգության, տնտեսության ու մշակույթի ոլորտներում համագործակցության մասին: Բացի այդ, նրանք կարծիքներ փոխանակեցին Իման Հոմեյնիի անվան միջազգային օդանավակայանի աշխատանքների մասին, որի շինարարության ու կառավարման մեջ մասնակցում են թուրքական ընկերությունները: Այն ժամանակ Թեհրանից հաղորդեցին, որ ըստ իրանական պաշտոնական տվյալների, իրանական օրացույցի նախորդ տարում Իրանի ու Թուրքիայի միջև երկկողմանի առևտրի ծավալը հասել է 2,4 մլրդ. դոլարի նախորդ տարվա համեմատությամբ ավելանալով 91 %-ով:

Ավելի ուշ պարզվեց, որ Իրանը և Թուրքիան զբաղված են ոչ միայն էներգետիկ ոլորտում երկկողմանի համագործակցությամբ, այլև հանդես են գալիս Թուրքմենստանի հետ համագործակցությամբ: Օգոստոսի 22-ին բրիտանական Reuters գործակալությունը հաղորդեց, որ Թուրքմենստանը, Թուրքիան և Իրանը ստեղծելու են ընկերություն, որը գազի էլեկտրակայան է կառուցելու Թուրքմենստանում: ԳԷԿ-ի շինարարության մասին համաձայնագիրը ձեռք է բերվել թուրքական ու իրանական էներգետիկների վերջերս Թեհրանում կայացած բանակցությունների ընթացքում: Գազը մատակարարվելու է Թուրքմենստանից: Բացի գազային էլեկտրակայանի կառուցումը Թուրքմենստանում, կողմերը պայմանավորվել են Թուրքիայում և Իրանում ևս երեք ջերմային ու գազային էլեկտրակայանների կառուցման մասին:

Հոկտեմբերի սկզբին տեղեկատվություն եղավ, որ սպասվում է նաև Իրանի, Թուրքիայի և Սիրիայի միջև եռակողմ համագործակցություն էներգետիկայի ոլորտում: ԻՈՆԱ-ի հաղորդագրությամբ, հոկտեմբերի 4-ի առավոտյան Թեհրանում ԻԻՀ-ի նավթի նախարարությունում տեղի ունեցավ գազի ոլորտում Իրանի և Սիրիայի միջև համագործակցության հարցերի շուրջ Հուշագրի ստորագրման արարողությունը: Այդ հուշագիրը ստորագրեցին ԻԻՀ-ի նավթի նախարարի պաշտոնակատար Գ. Նուոզարին և Սիրիայի նավթի նախարար Սաֆիյան Ալավը: Այդ փաստաթուղթը նախատեսում է, որ 2009 թ.-ից Իրանը կսկսի իր բնական գազի մատակարարումը Սիրիա տարեկան 2-3 մլրդ.խոր.մ. ծավալով: Մատակարարումները պետք է իրականացվեն մագիստրալային գազամուղով, որն անցնում է Թուրքիայի տարածքով: Ելույթ ունենալով այդ արարողության ժամանակ, Ս. Ալավը նշեց Սիրիայի տնտեսության համար այդ նախագծի հսկայական տնտեսական նշանակության մասին: Նրա խոսքերով, դեպի Սիրիա իրանական գազի մատակարարման ծավալները կավելանան ամառվա ընթացքում և կնվազեն ձմեռային շրջանում, որը կապված է Իրանի բնակչության կողմից գազի սպառման սեզոնային աճի հետ: Հաղորդագրության մեջ նշվում էր, որ մոտ ժամանակները Սիրիայի և Իրանի մասնագետների աշխատանքային խմբերը կսկսեն այդ էներգետիկ նախագծի տեխնիկական ու ֆինանսական հարցերի վերջնական համաձայնեցման աշխատանքները:

Դա իր հաստատումը ստացավ հոկտեմբերի վերջին, սակայն բոլորովին այլ «ուղղությամբ»: Պարզվեց, որ Իրանը և Թուրքիան արդեն պլաններ ունեն Չինաստանի հետ էներգետիկ ոլորտում համագործակցության վերաբերյալ: Հոկտեմբերի 29-ին Իրանի Ջրային ռեսուրսների և էներգետիկայի զարգացման ընկերության գործադիր տնօրեն դոկտոր Աբբաս Ալի-Աբադին ԻՈՆԱ-ին հաղորդեց, որ մինչև իրանական 1386 թվականի ավարտը Չինաստանը և Թուրքիան պատրաստ են «Բախտիյարի» ՀԷԿ-ի նախագծի մեջ ներդնել 1,2 մլրդ. եվրո և «Խորասան-3» ՀԷԿ-ի նախագծի մեջ ներդնել 300 մլն. եվրո համապատասխանաբար 1500 և 300 ՄՎտ նախագծային հզորություններով: Նա նշեց, որ «Բախտիյարի» ՀԷԿ-ի ամբարտակի բարձրությունը կկազմի 315 մ: Դա կլինի աշխարհի ամենաբարձր ամբարտակը: Նա հիշեցրեց, որ ներկայումս արդեն պայմանագիր է ստորագրված Լուրեստան օստանում «Ռուդբար» ՀԷԿ-ի ներդրումային նախագծում մասնակցության պայմանների մասին: Այդ նախագծի նախնական արժեքը կազմում է 300 մլն. եվրո: Այս նախագծին մասնակցում է իրանական ու չինական ինժեներա-շինարարական ընկերությունների կոնսորցիումը:

Ըստ մեզ, բոլոր երեք օրինակները կարելի է գնահատել որպես այն բանի վկայություն, որ Իրանն ունի իր վառելիքա-էներգետիկ համալիրին որքան հնարավոր է շատ արտասահմանյան պետություններ «կապակցելու» իսկական ռազմավարություն: Հիշենք ԻԻՀ-ում Իտալիայի դեսպանի 2008 թ.-ի հունվարի 8-ի հայտարարությունը և եթե այն փոքր-ինչ ձևափոխենք, ստացվում է, որ, օրինակ Թուրքիան և Չինաստանը իրեն կապակցելով, Իրանը իրականում ձգտում է իրեն վերածել ողջ Եվրազգայի մասշտաբի վճռորոշ նշանակության իրական ռազմավարական գործոնի: Այդ քայլերով Իրանը բնականաբար նվազեցնում է Թուրքիայի դերը ինչպես Եվրոպայի, այնպես էլ Ասիայի նկատմամբ:

Սեպտեմբերի սկզբին մի պահ եղավ, որը տարաբնույթ խոսակցություններ առաջացրեց Իրանում: Սեպտեմբերի 9-ի երեկոյան թուրքական Դողուբայազիտ նահանգի տարածքում /Բայազեթ/ թուրք-իրանական սահմանից 17 կմ հեռավորության վրա տեղի ունեցավ Իրան-Թուրքիա արտահանող գազամուղի պայթյուն: Պայթյունի տեղում սկսվեց հրդեհ, որը շարունակվեց մոտ 20 րոպե: Դեպի Թուրքիա իրանական բնական գազի մատակարարումը ժամանակավորապես ընդհատվեց: Հղում կատարելով թուրքական մամուլի վրա, ԻՈՆԱ-ն հաղորդում էր, որ վթարի տեղամաս ժամանած Թուրքիայի պետական նավթագազային խողովակաշարերի ընկերության /«Բո-

թաշ»/ մասնագետները նշել են, որ ըստ նախնական տվյալների բնական գազի պայթյունը տեղի է ունեցել տեխնիկական պատճառներով: Նույն օրը սկսվեցին վերականգնողական աշխատանքները: Ենթադրվում էր, որ արդեն սեպտեմբերի 10-ի երեկոյան խողովակաշարի վերանորոգումը կավարտվի և կվերականգնվի իրանական բնական գազի մատակարարումը Թուրքիա: Սակայն, գազամուղի գործունեությունը վերականգնվեց միայն սեպտեմբերի 15-ին: Թեհրանում ենթադրեցին, որ թուրքերը միտումնավոր կերպով ծգծգեցին վթարված հատվածի վերանորոգումը:

Սակայն արդեն սեպտեմբերի 10-ին, թուրքական աղբյուրները շտապեցին հաղորդել, որ Իրանի և Թուրքիայի միջև գազային պայմանագիրը կստորագրվի հոկտեմբերին: Եվ բանակցությունները Իրանի ու Թուրքիայի միջև ընթանում են բավական արագ: Հոկտեմբերին սպասվում է քննարկումների ավարտը և պայմանագրի ստորագրումը: Իսկ ԻՌՆԱ գործակալությունը հիշեցրեց, որ Իրանի ու Թուրքիայի միջև հուսիսին համաձայնագիր էր ստորագրվել բնական գազի տեղափոխման վերաբերյալ, որը Անկարայում ստորագրել էին էներգետիկայի նախկին նախարար Սեյեդ Կազեմ Վազիրի Խամենեն և Թուրքիայի էներգետիկայի նախարար Հ. Գյուլերը: Հ. Գյուլերը, որը ղեկավարում էր թուրքական պատվիրակությունը, հուլիս ամսին Թեհրան կատարած այցի ժամանակ, այդ առթիվ քննարկումներ էր անցկացրել Իրանի էներգետիկայի նախարարի հետ: Իսկ հոկտեմբերին ամփոփիչ պայմանագրի ստորագրման համար իրանական պատվիրակությունը պետք է ժամաներ Անկարա: Ինչպես նշում են իրանական աղբյուրները, պաշտոնական Անկարայի ու Թեհրանի միջև նախապատրաստվում է նաև մեկ համաձայնագիր: Ըստ պայմանագրի Թուրքիան պարտավորվում է ներդնել 14 մլրդ. դոլար, որպեսզի գազ հանքահանի «Պարս Ջանուբ» հանքավայրի երեք կետերում /այսինքն, Հարավային Պարսում/: Դրան հաջորդեց բավական հետաքրքիր մանրամասնություն. չնայած Թուրքիայի պաշտոնատար անձանց պնդումներին, Իրանը հրաժարվում է նրան գազ տալ, քանի որ պլանավորում է հանքահանել ապագայում: Իրանա-թուրքական համատեղ ընկերությունը կանցնի գազի վաճառքին, իսկ դրա գները կսահմանվեն այդ ընկերության կողմից:

Սեպտեմբերի վերջին Թուրքիան նորից ստիպված էր ետ մղել ԱՄՆ-ի հարձակումները կապված էներգետիկ ոլորտում Իրանի հետ համագործակցության պլանների հետ: Մեկնաբանելով նախօրեին Անկարայում արված ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Նիկոլաս Բերնսի հայտարարությունը, որում ամերիկացին հայտարարում էր, որ ԱՄՆ-ի դաշնակիցները պետք է քննարկեն Իրանի միջուկային ծրագրի հետ կապված նրա նկատմամբ հավանական պատժամիջոցներին միանալու հարցը և, որ Թուրքիան և այլ պետություններ պետք է «զոհաբերեն» Իրանի հետ իրենց գործարար հարաբերությունները, թուրքական վարչապետ Ռ. Էրդողանը նշեց, որ Թուրքիան մտադիր չէ դադարեցնել Իրանի հետ համագործակցությունը էներգետիկ ոլորտում, եթե նոր պատժամիջոցներ մտցվեն Իրանի Իսլամական Հանրապետության նկատմամբ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից. «Ռուսաստանը և Իրանը մնում են Թուրքիային բնական գազի գլխավոր մատակարարները, և մեզ համար դժվար է պատկերացնել մի իրավիճակ, որի պայմաններում մենք կդադարացնենք էներգետիկ ոլորտում մեր համագործակցությունը այդ երկրների հետ»: Ընդ որում թուրքա-

կան ԶԼՄ-ները նշում են, որ երկրի տնտեսությունը խիստ կախված է իրանական գազից: Իրանը Ռուսաստանից հետո հանդիսանում է դեպի Թուրքիա բնական գազի երկրորդ մատակարարը, որի նկատմամբ պահանջարկը կանոնավոր աճում է: Բացի այդ, թուրքական մամուլը հիշեցնում է, որ Թուրքիան և Իրանը մասնակցում են «Nabucco» գազամուղի շինարարության համատեղ նախագծին, որը պետք է եվրոպական սպառողներին ապահովի միջինասիական ու կասպիական գազով:

Ընդ որում, ըստ իրանական ԶԼՄ-ների, նույն օրերին իրանա-թուրքական նախնական համաձայնությունների ու պայմանավորվածությունների գործում սաստկացան որոշ բարդությունները: Թուրքական «Զաման» թերթի սեպտեմբերի 20-ի համարի վրա հղում կատարելով, ԻՌՆԱ-ն հաղորդում է, որ Թուրքիայի կառավարությունը հայտնվել է դժվարին վիճակում կապված իրանական գազային նախագծի հետ: Ամռանը Իրանը և Թուրքիան Անկարայում հուշագիր ստորագրեցին գազի ոլորտում երկկողմանի համագործակցության հարցերի վերաբերյալ: Այդ հուշագիրը նախատեսում էր Թուրքիայի ֆինանսական ու տեխնիկական մասնակցությունը Հարավային Պարս իրանական խոշորագույն ծովային նավթագազային հանքավայրի երեք հերթափոխների մշակմանը և Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական ու թուրքմենական բնական գազի տեղափոխմանը: Այս խոշոր ներդրումային նախագիծը, որը Թուրքիայի համար ունի մեծ տնտեսական և քաղաքական նշանակություն, բացասական ռեակցիա առաջացրեց ինչպես ԱՄՆ-ի կողմից, որը շարունակում է կտրականապես հանդես գալ Իրանի նավթագազային ոլորտում ցանկացած խոշոր արտասահմանյան ներդրումների դեմ, այնպես էլ Ռուսաստանի կողմից, որը արդարացիորեն այդ նախագիծը գնահատել է որպես ոչ միայն Թուրքիայի, այլ նաև Եվրոպայի համար բնական գազի այլընտրանքային աղբյուրների որոնման փորձ: Թեհրանում նշում էին, որ Թուրքմենստանը, որն ամբողջովին աջակցում է այդ նախագծին, նույնպես դժգոհ մնաց, քանի որ իր թիկունքում երկու հարևան պետությունները պայմանավորվել են թուրքմենական գազի տեղափոխման մասին, իսկ այդ գազի «տիրոջը» նույնիսկ չեն հրավիրել հուշագրի ստորագրման արարողությանը:

Բացի այդ, վերջին ժամանակները թուրքական պետական նավթագազային ընկերությունները խստորեն զգում էին ինժեներական ու տեխնիկական կադրերի անբավարարություն, քանի որ լավագույն մասնագետները զանգվածաբար անցնում էին դեպի թուրքական ու արտասահմանյան մասնավոր ընկերությունները, որտեղ աշխատավարձերը զգալիորեն բարձր են: Նման իրավիճակը կադրերի խնդիր է ստեղծում համատեղ գազային նախագծում Թուրքիայի մասնակցության համար: Այդ պայմաններում ԻԻՀ-ի նավթի նախարարության ղեկավարը Հ. Նոռուզարին հիշեցրեց Թուրքիայի ղեկավարությանը, որ համագործակցության մասին ստորագրված հուշագիրը կոշտ ժամանակացույց է նախատեսում գազի վերաբերյալ վերջնական համաձայնագրի ստորագրման և համատեղ աշխատանք սկսելու համար: Նրա խոսքերով, մտորումների համար Թուրքիային մնացել է միայն չորս ամիս:

Ընդ որում, հղում կատարելով Թուրքիայի Պետական վիճակագրական վարչության 2007 թ.-ի 8 ամիսների կտրվածքով հրատարակված տվյալների վրա, ԻՌՆԱ-ի հոկտեմբերի 1-ի հաղորդագրության համաձայն, Իրանի և

Թուրքիայի միջև ապրանքափոխանակությունը կազմել է 5 062 976 հազ. ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածում ապրանքափոխանակության գումարը կազմել է 4 453 507 հազ. դոլար: Նշված ժամանակաշրջանում Իրան կատարած թուրքական արտահանման արժեքը կազմել է 785 618 հազ. դոլար, իսկ Իրանից ներկրումը 4 277 358 հազ. դոլար: Ըստ որում, դեպի Իրան թուրքական արտահանման արժեքը աճել է 26,0 %-ով, իսկ Իրանից ներկրումը 11,7 %-ով: Թուրքիայի ներկրման ընդհանուր արժեքում Իրանի մասնաբաժինը կազմել է 4 %, իսկ արտահանմանը՝ 1,2 %: Հաղորդագրության մեջ ասված է, որ 2006 թ.-ին Իրանի և Թուրքիայի միջև ապրանքափոխանակությունը աճել է 52,45 %-ով և կազմել է 6 681 696 հազ. ԱՄՆ դոլար:

Հոկտեմբերի կեսերին արդեն ընտրված նախագահ Ա. Գյուլը աչքի ընկավ մի շարք իրանամետ հայտարարություններով: Այսպես, ԻՈՆԱ-ի հաղորդագրությամբ, լինելով Վան արևելյան նահանգում նա այդ նահանգի վարչակազմին խոսք է տվել բոլոր միջոցները ձեռնարկել տարանցիկ մայրուղու շինարարությունն արագ ավարտելու համար, որն առավել կարճ ճանապարհով կմիացնի երկու սահմանամերձ նահանգների կենտրոնները՝ Վանը /Թուրքիա/ և Ուրմիան /Արևմտյան Ադրբեջան իրանական օստանը/: Նրա կարծիքով, այդ մայրուղին բարենպաստ պայմաններ կստեղծի Իրանի և Թուրքիայի միջև սահմանամերձ առևտրի արագ զարգացման համար, իսկ Անկարան շահագրգռված է երկու երկրների միջև սահմանամերձ առևտրի զարգացման խթանման մեջ: Այդ մայրուղու նոր ճանապարհը անցնում է իրանական սահմանային Ռազի անցակետով և հանդիպակաց տեղակայմամբ թուրքական Կապըկույ անցակետով: Արդյունքում այդ ուղու երկարությունը կրճատվում է 190 կմ-ով՝ 300-ից մինչև 110 կմ /փաստորեն խոսքը վերաբերվում է իրանական մայրուղու հարավային մասի էսենդերե անցակետի փոխարինմանը հյուսիսային Ռազի անցակետով/: Թուրքիայի նախագահը կատարեց իր խոստումը և այդ մայրուղու թուրքական հատվածի շինարարությունն ամբողջովին ավարտվել էր հոկտեմբերի 18-ին, իսկ իրանական տարածքում մնացել էր կառուցել միայն այդ մայրուղու 10-15 կմ. հատվածը: Իրանական ԶԼՄ-ները հաղորդում էին, որ Թեհրանը երկար տարիներ պնդում էր Թուրքիային Վան լիճը շրջանցող երկաթուղու շինարարության անհրաժեշտությունը, քանի որ Վան լճի վրայով երկաթուղային լաստանավային անցումը արգելակում էր Իրանի ու Սիրիայի միջև տարանցիկ ուղևորաբեռնատար երկաթուղային հաղորդակցությունը: Թուրքիայի կառավարությունը տարբեր շարժառիթներով խուսափում էր այդ հիմնախնդրի լուծումից: Սահմանամերձ նոր մայրուղու շինարարությունը մեծ նշանակություն չունի իրանական ավտոմոբիլային փոխադրիչների համար, քանի որ դիզելային վառելիքի գինը Իրանում տասնյակ անգամ ավելի պակաս է, քան Թուրքիայում:

Նոյեմբերի 16-ին Անկարայում տեղի ունեցավ Թուրքիայում ԻԻՀ-ի դեսպանատան ղեկավար Գուլամռեզա Բագերի-Մոկադդամի մամլո ասուլիսը: Պատասխանելով թուրք լրագրողների հարցերին, նա նշեց, որ ներկայումս Թուրքիայում է գտնվում ԻԻՀ-ի էներգետիկայի նախարարության պատվիրակությունը, որը նախնական բանակցություններ է վարում գազի և էլեկտրաէներգիայի ոլորտում Իրանի ու Թուրքիայի միջև երկկողմանի համագործակցության ընդլայնման հարցերի շուրջ: Մոտ ժամանակները դրական

արդյունքներ կգրանցվեն այդ ոլորտում: Հաջորդ օրը սպասվում էր ԻԻՀ-ի էներգետիկայի նախարարի այցելությունը Թուրքիա: Այդ բանակցությունների նպատակը էներգետիկայի ոլորտում երկկողմանի համագործակցության ընդլայնման հարցերի շուրջ համաձայնության հուշագրի նախապատրաստումն ու ստորագրումն էր: Հավանական է, որ այդ համաձայնագիրը կստորագրվի ԻԻՀ-ի նախագահի Թուրքիա կատարվելիք այցի շրջանակներում: Ներկայումս խորհրդատվություններ են արվում այդ այցի ժամկետների շուրջ: Նա վստահություն հայտնեց, որ էներգետիկայի ոլորտում երկկողմանի համագործակցության ընդլայնումը զգալիորեն կնպաստի երկու երկրների քաղաքական հարաբերությունների բարելավմանը:

Արդեն նոյեմբերի 20-ին Իրանը և Թուրքիան համաձայնագիր ստորագրեցին էլեկտրաէներգետիկայի ոլորտում համագործակցության մասին: Փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Հ. Գյուլերը և Իրանի էներգետիկայի նախարար Փ. Ֆաթթահը: Համաձայնագիրը նախատեսում է մասնավոր կապիտալի հնարավորությունների հաշվին կառուցել ջերմային ու հիդրոէլեկտրակայաններ 10 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Մեկական ՄՎտ հզորությամբ երկու ջերմակայան կկառուցվեն Իրանում, իսկ երեք նմանատիպ կայաններ Թուրքիայի տարածքում: Անհրաժեշտ հզորության մնացած ծավալը կհամալրվի ՀԷԿ-ի շինարարությամբ: Ըստ համաձայնագրի Իրանը և Թուրքիան հավասար մասնաբաժիններ կունենան կառուցված էլեկտրակայանների կառավարման մեջ բաժնետոմսերի 49 %-ը հարևան երկրում գտնվող ընկերությունների, և բաժնետոմսերի 51 %-ը իր տարածքում գտնվող ընկերությունների համար:

Փաստաթղթի ստորագրման արարողությունից հետո կայացավ Հ. Գյուլերի և Փ. Ֆաթթահի մամլո ասուլիսը, որի ընթացքում նրանք պատմեցին էներգետիկայի ոլորտում Իրանի և Թուրքիայի համագործակցության իրավիճակի և հեռանկարների մասին: Հ. Գյուլերը հաղորդեց, որ այդ փաստաթղթի ստորագրումը էլեկտրաէներգետիկայի ոլորտի իրանական ու թուրքական մասնագետների մի քանի ամիսների բանակցությունների արդյունքն է: Նա նշեց, որ այդ պայմանագիրը դուրս է գալիս երկու երկրների շահերի շրջանակներից և ունի տարածաշրջանային նշանակություն: Այս պայմանագրի համաձայն դեպի Թուրքիա իրանական էլեկտրաէներգիայի մատակարարման ծավալը կավելանա մինչև 2 հազ. ՄՎտ: Մատակարարումների համար կօգտագործվեն էլեկտրահաղորդակցման երեք գործող գծերը, սակայն դրանց հզորությունը կավելացվի: Թուրքական ընկերությունները Իրանի տարածքում իրենց հաշվին կկառուցեն 10 հազ. ՄՎտ. ընդհանուր հզորությամբ մի քանի հիդրոէլեկտրակայաններ: Մոտակա երկու ամիսների ընթացքում կհամաձայնեցվեն այդ նախագծերի ֆինանսավորման պայմանները, իսկ երեք ամսից Թեհրանում տեղի կունենա հերթական հանդիպումը երկու երկրների էներգետիկայի նախարարների միջև, որի ժամանակ վերջնականապես կհամաձայնեցվեն այդ նախագծերի բոլոր առանցքային հարցերը:

Փ. Ֆաթթահն իր ելույթում նշեց, որ վերջին յոթ ամիսների ընթացքում Անկարայում և Թեհրանում տեղի են ունեցել երկու երկրների էներգետիկայի նախարարների երեք հանդիպումներ: Չորրորդ հանդիպումը կկայանա Թեհրանում: Այդ հանդիպումները զգալիորեն արագացրել են բանակցային

գործընթացը: Բացի այդ, նշված ժամանակաշրջանում բանակցությունների մասնակիցները ստացել են Թուրքիայի վարչապետի և Իրանի նախագահի աջակցությունը: Մամլո ասուլիսի ընթացքում երկու երկրների էներգետիկայի նախարարները պատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին: Մասնավորապես, երկու նախարարները հաղորդեցին, որ ձեռքբերված համաձայնությունների իրականացման համար Անկարան և Թեհրանը կստեղծեն համատեղ ընկերություն երկու երկրների տարածքներում էլեկտրակայանների կառուցման համար: Անկարան մտադրված է Իրանից ներկրել տարեկան 3-6 մլրդ. ԿՎտ/ժ էներգիա, ինչպես նաև մտադիր է Իրանից գնել գազ և այն վաճառել Եվրոպային: Ընդ որում, ինչպես այն ժամանակ նշում էին աշխարհի գրեթե բոլոր առաջատար ԶԼՄ-ները, Թուրքիան գնաց այդ քայլին առանց ուշադրություն դարձնելու ԱՄՆ-ի կողմից արված բազմաթիվ նախազգուշացումներին: «Էրդողանի կառավարությունը հստակ հասկացնում է, որ մի շարք հարցերի շուրջ նա կարող է առանձնահատուկ կարծիք ունենալ, որը տարբերվում է Հյուսիսատլանտյան դաշինքի մնացած անդամների դիրքորոշումներից», - այսպես մեկնաբանեց իրավիճակը IslamNews կայքը:

Թուրք-իրանական կապերի խորացման գործընթացը տնտեսական և հատկապես էներգետիկ ոլորտում դեկտեմբեր ամսին շարունակում էր առաջընթացը: Դեկտեմբերի 11-ին Ստամբուլում կայացած իրանա-թուրքական Առևտրային խորհրդի 6-րդ նիստում Իրանի Առևտրի, արդյունաբերության ու հանքերի պալատի նախագահ Մոհամմադ Նահավանդիանը ընդգծեց գլոբալիզացիայի պայմաններում տարածաշրջանային համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը: Նա նշեց, որ Թուրքիայի հետ տնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Իրանի առաջարկությունների թվին վերաբերվում են նաև Համատեղ ներդրումների աջակցության հիմնադրամի ստեղծումը, էներգետիկայի ոլորտում համագործակցության ընդլայնումը, զբոսաշրջության զարգացումը, համատեղ բանկի ստեղծումը, գիտական հետազոտությունների ու տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցության ընդլայնումը, տարանցիկ փոխադրումների բնագավառում համագործակցության ընդլայնումը, առևտրային արտոնությունների ապահովումը և միջազգային ասպարեզում տնտեսական համագործակցությունը: Նշելով, որ Իրանը վճռականորեն վարում է երկրի տնտեսական գործունեության մեջ մասնավոր սեկտորի մասնաբաժնի ավելացման քաղաքականություն, Մ. Նահավանդիանը ընդգծեց, որ Իրանի Սահմանադրության 44-րդ հոդվածի դրույթների իրականացումը արտասահմանյան ներդրողներին հնարավորություն կտա մասնակցել այնպիսի ոլորտներում կարևոր նախագծերի իրականացման մեջ, ինչպիսիք են նավթաքիմիան, կապը, բանկային համակարգը և տրանսպորտը:

Ըստ որում, Մ. Նահավանդիանը նշեց, որ տնտեսական զարգացման բնագավառում 21-րդ դարում կարևոր դերակատարություն ունեն Ասիան և Աֆրիկան, իսկ Իրանն ու Թուրքիան որպես երկու հարևան մահմեդական երկիր կարող են միմյանց հետ հաջողությամբ համագործակցել: Ինչպես կարելի է նկատել, Իրանը առաջադրել է 8 նոր առաջարկություններ: Եվ դատելով այն բանից, որ Առևտրի պալատների համաշխարհային ֆեդերացիայի նախագահ թուրք Ոռնա Յիրջալին հայտարարել է, որ թուրքական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը հանդիսանում է

Իրանի հետ տնտեսական համագործակցության ընդլայնումը, Թուրքիան դեռևս որոշել է հետ չկանգնել իր ընտրած ուղուց: Նա հայտարարեց նաև, որ Անկարան վճռականորեն տրամադրված է հաջորդ տարի ավելացնել ապրանքաշրջանառության ծավալը Թեհրանի հետ՝ ներկայիս 7 մլրդ. դոլարից մինչև 10 մլրդ. դոլարի:

Իրանա-թուրքական առևտրային խորհրդի 6-րդ նիստի ընթացքում իրանական 45 գործարարներ թուրք արդյունաբերողների ու ներդրողների հետ ուղիղ բանակցություններ վարեցին այնպիսի բնագավառներում համագործակցության ընդլայնման մասին, ինչպիսիք են ավտոմոբիլաշինությունը, շինանյութերի, քիմիական ապրանքների արտադրությունը, էլեկտրահաղորդակցական համակարգերի և չորացրած մրգերի արտահանումը: Այնուհետև՝ դեկտեմբերի 20-ին ԻԻՀ-ի էներգետիկայի նախարարի էլեկտրաէներգետիկայի հարցերով տեղակալ Մոհամմեդ Ահմադիանը ԻՌԻԲ գործակալությանը տրված հարցազրույցում հայտարարեց, որ Թուրքիան ցանկանում է 6 հազ. ՄՎտ հզորությամբ էլեկտրակայան կառուցել Իրանի տարածքում՝ Իրանա-թուրքական սահմանի մոտ, որի նպատակն է երկու երկրների միջև էլեկտրաէներգիայի փոխանակության ծավալների ավելացումը: Նրա խոսքերով, ներկայումս Իրանը էլեկտրաէներգիա է մատակարարում հարևան 6 երկրների և այն ստանում է 3 պետություններից: Իրանական էլեկտրաէներգիայի արտահանում իրականացվում է դեպի Հայաստան, Պակիստան, Թուրքիա, Իրաք, Աֆղանստան և Նախիջևանի ինքնավար հանրապետություն: Իրանը էլեկտրաէներգիա ներկրում է Թուրքմենստանից, Ադրբեջանից և Նախիջևանի հանրապետությունից:

Վերջապես դեկտեմբերի 24-ին, իրանական ու թուրքական ԶԼՄ-ները հաղորդեցին, որ երեք ամսից կսկսվեն իրանական էլեկտրաէներգիայի մատակարարումները Թուրքիա: Այդ մատակարարումները կիրականացվեն Արևմտյան Ադրբեջան իրանական օստանից երկու գծերով՝ Բազերգան /Իրան/ - Դողուբայազիտ /Թուրքիա/ 80 ՄՎտ հզորությամբ և Խոյ /Իրան/ - Բաշկալե /Թուրքիա/ 170 ՄՎտ հզորությամբ: Նախատեսվում է, որ Թուրքիան տարեկան Իրանից կգնի 3-5 մլրդ. կՎտ/ժ էլեկտրաէներգիա 20-30 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ, ինչը մեծ օգնություն կլինի Թուրքիայի արևելյան շրջանների տնտեսական զարգացման համար: Հաղորդագրության մեջ ասվում է, որ Թուրքիայում էներգասպառման միջին տեմպերը կազմում են տարեկան 12-13 մլրդ. կՎտ/ժ: Այսպես, օրինակ 2006 թ.-ին Թուրքիայում էլեկտրաէներգիայի սպառման ծավալը կազմել է 174 մլրդ. կՎտ/ժ, իսկ այս տարի կկազմի՝ շուրջ 187 մլրդ. կՎտ/ժ:

Արդեն տեղեկություններ կան նաև էներգետիկ ոլորտում կողմերի մտադրությունների մասին, որոնք փաստագրված են 2008 թ.-ով: Այսպես, հունվարի 10-ին Թուրքիայում ԻԻՀ-ի դեսպանատան տնտեսական խորհրդական Ահմադ Նուրանին ԻՌՆԱ-ին տեղեկացրել է, որ ներկայումս Թուրքիան զգում է բնական գազի խիստ պակաս, ինչը նա հանգեցրել է տարբեր ձեռնարկությունների ու երկրի բնակավայրերի էներգամատակարարման ընդհատումների: Դրա պատճառն այն է, որ թուրքական ԶԷԿ-երի մեծամասնությունը աշխատում է բնական գազով և չունի հեղուկ վառելիքի պաշարներ: Բացի այդ, խառը ցիկլի էլեկտրակայանների անցումը գազից հեղուկ վառելիքի, վերջինիս գնման համար պահանջում է լրացուցիչ տարադրամային ծախսեր: Նման պայմաններում Թուրքիայում էլեկտրաէներ-

գիայի պակասը լրացնելու լավագույն տարբերակը հանդիսանում է դրա մատակարարման ավելացումը Իրանից: Ներկայումս իրանական էլեկտրաէներգիայի մատակարարումը Թուրքիա /250 ՄՎտ/ իրականացվում է երկու ԷՀԿ-ներով, որոնք աշխատում են իրենց հզորության միայն 50 %-ով: Դրա շնորհիվ իրանական էլեկտրաէներգիայի մատակարարումները կարող են ավելացվել մինչև 400 ՄՎտ, իսկ հեռանկարում մինչև 2000 ՄՎտ: Ա. Նուրանին նշել է, որ իրանական ՋԷԿ-երը ձմեռային պայմաններում գրեթե ամբողջովին փոխադրվում են հեղուկ վառելիքի /մազութ կամ դիզելային վառելիք/: Այդ պատճառով աշնանը իրանական խառը ցիկլի ՋԷԿ-երում ստեղծվում են հեղուկ վառելիքի մեծ պաշարներ, որոնք համալրվում են նաև ձմռանը: Դրա համար օգտագործվում է հատուկ նշանակության երկաթուղային ու ավտոմոբիլային տրանսպորտ: Արդյունքում, ձմռանը, երբ Իրանում նկատվում է բնական գազի պակաս, գործնականում էներգամատակարարման ընդհատումներ չեն լինում բնակավայրերում ու արդյունաբերական ձեռնարկություններում:

Մի քանի խոսք 2007 թ.-ին էներգետիկայի ոլորտում իրանա-թուրքական համագործակցության այլ կողմերի մասին: Հուլիսի 4-ին Թեհրանում տեղի ունեցավ հանդիպում Թեհրանի Առևտրի պալատի նախագահի և Թուրքիայի Տրանսպորտային միության նախագահի ու վարչության անդամների միջև, որի ընթացքում քննարկվեցին Իրանի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառության ավելացման ու Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա իրանական ապրանքների տարանցիկ փոխադրման ծավալների ավելացման համար, տրանսպորտային ոլորտում երկկողմանի համագործակցության ակտիվացման հարցերը: Հանդիպման ժամանակ որոշում կայացվեց ստեղծել աշխատանքային խումբ, որի մեջ կմտնեն Թեհրանի Առևտրի պալատի և Թուրքիայի Տրանսպորտային միության ներկայացուցիչները: Այդ խումբը կքննարկի վարչական ու տեխնիկական արգելքները, որոնք խանգարում են տրանսպորտի բնագավառում համագործակցության զարգացմանը և կառաջարկի դրանք հաղթահարելու ու համագործակցությունը զարգացնելու անհրաժեշտ միջոցառումները: Հանդիպման մասնակիցները որոշում ընդունեցին, որ Իրանի ու Թուրքիայի միջև ուղևորատար և բեռնատար փոխադրումները պետք է իրականացնեն միայն այդ երկու երկրների տրանսպորտային ընկերությունները, իսկ երրորդ երկրների ընկերությունների մուտքը այս շուկա չպետք է թույլատրվի: ԻՌՆԱ-ի հաղորդագրության մեջ նշվում է, որ ներկայումս Իրանի ու Թուրքիայի միջև բեռնատար փոխադրումների իրականացման համար օգտագործվում է շուրջ 30 հազ. բեռնատար ավտոմեքենա յուրաքանչյուր կողմից 15-հազարական: Այդ պայմանավորվածությունները արևմտյան մամուլի կողմից հրամցվեցին որպես իրանական ու թուրքական տրանսպորտային աշատողների «երրորդ երկրների դեմ ուղղված դավադրություն»:

Սեպտեմբերի 21-ին թուրքական ՁԼՄ-ները տեղեկացրին, որ «Իրան Խոնդրոու»-ն համագործակցության մեջ է մտնում թուրքական «M.Y.S. Otomotiv» ընկերության հետ և Թուրքիայի հյուսիսարևմուտքում տեղակայված Բուրսա քաղաքի շրջակայքում պատրաստվում է կառուցել նոր ավտոմոբիլային գործարան: Այս նախագծի նախնական արժեքը կազմում է 60 մլն. եվրո, իսկ գործարանի առաջին հերթափոխի նախագծային հզորությունն է տարեկան 15 հազ. «Սամանդ» ավտոմեքենա: Գործարանի արտադրական հոսքերի քանակը հեռանկարում կարող է հասցվել մինչև հինգի: Իրանական խմբի կոմերցիոն շահերը չեն բավարարվելու միայն պատրաստի արտադրանքի վաճառքով, քանի որ «Իրան Խոնդրոու»-ն պլանավորում է թուրքական շուկայում տարեկան գնել ավտոմոբիլային պահեստային ու համալրող դետալներ 300 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ: Դա բացատրվում է նրանով, որ այդ խմբի գործարաններում ըստ հայտնի միջազգային ավտոմոբիլային ընկերությունների լիցենզիաների /«Մերսեդես-Բենց», «Պեժո», «Դաչիա-Լոգան», «Հունդայ» և «Սանն»/ արտադրվում են մարդատար և բեռնատար կոմերցիոն ավտոմեքենաներ:

Նոյեմբերի 6-ին Թուրքիայում «Սամանդ» իրանական ավտոմեքենայի պաշտոնական դիլեր հանդիսացող թուրքական «M.Y.S. Otomotiv» ընկերության տնօրեն Շոքրի Սասկարը ԻՌՆԱ-ին տեղեկացրեց, որ «Սամանդ» ավտոմեքենայի «LX» մոդելը, որի վաճառքը Թուրքիայում սկսվել է միայն նախորդ ամսից, տեղի ավտոսիրողների մոտ մեծ պահանջարկ ունի: Դրա հետ կապված նա իրանական արտադրողին պատվիրել է «Սամանդ» ավտոմեքենայի «Սարիր» մոդելը, որը համարվում է ներկայացուցչական կարգի մեքենա: Շուտով այդ ավտոմեքենաները կմտնեն թուրքական շուկա: Նա տեղեկացրեց նաև, որ ընկերությունը արդեն «Սամանդ» ավտոմեքենաների /LX/ ավելի քան հազար պատվեր է ստացել: Ուստի որոշում է կայացվել Թուրքիայում այդ ավտոմեքենաների վաճառքը առաջին փուլում ավելացնել 3-ից 5 հազ. միավորով: Իսկ հոկտեմբերի 31-ին սկսվեց իրանական ավտոմեքենաների կենտրոնացված մատակարարումը Թուրքիա: Մեքենաների առաջին խմբաքանակը մատակարարվեց 7 տրեյլերներով: Այդ առթիվ Թեհրանում հանդիսավոր արարողություն տեղի ունեցավ, որին ներկա էին «Իրան Խոնդրոու» ընկերության և Իրանում Թուրքիայի դեսպանատան ներկայացուցիչները: Նա նշեց, որ ընկերությունն արդեն պլանավորում է շաբաթական ստանալ այդ մեքենաներով 10 տրեյլերներ:

Հոկտեմբերի 25-ին Արևելյան Ադրբեջան օստանի Մերագե նահանգից ընտրված ԻԻՀ-ի Իսլամական խորհրդի ժողովի /Մեջլիս/ պատգամավոր Մոստաֆա Սեիդ-Հաշեմին ԻՌՆԱ-ին տեղեկացրեց, որ ներկայումս այդ նահանգի արդյունաբերական գոտում տարվում է տարեկան 200 հազ. պողպատե և մետաղյա գլանվածք հզորությամբ մասնավոր մետալուրգիական գործարանի և գլանման հաստոնի շինարարությունը: Այդ գործարանը Իրանի և Թուրքիայի համատեղ տնտեսական նախագիծն է: Իրանի մասնաբաժինը այդ նախագծում կազմում է միայն 30 %, իսկ Թուրքիայինը 70 %: Բացի շինարարական ամրաները, պողպատյա գլոցուկը և տարբեր տրամատները, այդ գործարանը պետք է նաև արտադրի տարբեր տրամաչափի պողպատյա խողովակներ: Գործարանի տարածքի մակերեսը 10 հեկտար է: Շինարարությունն իրականացվելու է մի քանի փուլով: Նախագծի առաջին հերթափոխի նախնական արժեքը շուրջ 29,5 մլն. դոլար է: Գործարանի առաջին հերթափոխի օբյեկտներում աշխատելու են 300 մարդ: Հաղորդագրության մեջ ասվում է, որ Մերագե նահանգի բնակչության քանակը 250 հազ. մարդ է: Այդ նահանգում գրանցված են 150 մեծ և փոքր գործարաններ: Նույնանուն նահանգի վարչական կենտրոնը գտնվում է Արևելյան Ադրբեջան նահանգի վարչական կենտրոն Թավրիզից 145 կմ հարավ:

Սեպտեմբերի 28-ին տեղեկացվում էր, որ Նյու-Յորքում անցկացվող ՄԱԿ-ի 62-րդ Ասամբլեայի շրջանակներում Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդո-

ղանի և Իրանի նախագահ Մ. Ահմադինեջադի հանդիպման ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց Իրանը և Թուրքիան միացնող երկաթուղու կառուցման մասին: «Դեռևս կոնկրետ ճշտված չէ, թե որտեղով է անցնելու երկաթգիծը, սակայն կան երկու տարբեր նախագծեր, որոնք նախատեսում են Վան լճի հարավով և հյուսիսով ճանապարհի անցկացումը», -ասել է Թուրքիայի տրանսպորտի նախարար Իսմեթ Յըլմազը: Նրա խոսքերով, Իրանի նախագահի ու Թուրքիայի վարչապետի միջև երկաթուղու կառուցման մասին ձեռքբերված համաձայնությունից հետո, նրանք տվյալ հարցը քննարկել են Իրանի տրանսպորտի նախարար Մուհամմեդ Ռահմատիի հետ, որը նշել է, որ իրանական կողմը կարող է իրականացնել նախագիծն իր հաշվին: «Արդեն իսկ հաջորդ շաբաթ երկաթուղու կառուցման հարցի քննարկման համար Իրան կուղարկվի թուրքական պատվիրակությունը: Մեր կարծիքով, առավել իրատեսական է երկաթուղու շինարարության Վան լճից հյուսիս տեղակայման տարբերակը», - եզրակացրել է Ի. Յըլմազը:

Դեկտեմբերի 25-ին Իրանը և Թուրքիան համաձայնագիր ստորագրեցին գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին, որից հետո, ինչպես նշում էին երկու երկրների ԶԼՄ-ները, նոր հեռանկարներ բացվեցին այդ ոլորտում երկկողմանի համագործակցության համար: Համաձայնագիրը ստորագրվել է երկու երկրների գյուղատնտեսության նախարարների մասնակցությամբ Անկարայում: Կողմերը պարտավորություն են վերցրել ապահովել երկկողմանի համագործակցության ընդլայնումը բոլոր ոլորտներում, որոնք կապված են գյուղատնտեսական արտադրության ու անասնապահության հետ, ինչպես նաև ավելացնել համատեղ ներդրումների ծավալները գյուղատնտեսական արտադրանքի վաճառքով զբաղվող մասնավոր ընկերությունների գործունեության մեջ: Տվյալ համաձայնագրում նշվում է համագործակցության այլ ոլորտներում ստորագրված համաձայնագրերի կատարման անհրաժեշտության մասին՝ բուսական արտադրանքի կարանտինի, բամբակի, յուղային կուլտուրաների սերմերի և այգեգործական արտադրանքի ոլորտներում գիտահետազոտական նախագծերի իրականացման բնագավառներում: Խոսվում է նաև ջերմոցային արտադրության, խուրմայի, ձիթապտղի, ծաղիկների ու դեկորատիվ բույսերի համատեղ արտահանումների մասին:

Վերջապես, պարզվեց նաև տնտեսական ոլորտում Իրանի և Թուրքիայի միջև կապերի ևս մեկ բնորոշիչ գիծը: Ինչպես ոչ առանց դժգոհության հայտնեցին իրանական ԶԼՄ-ները սեպտեմբերի 24-ին, Թուրքիան իր ապրանքանիշի անվան տակ դեպի եվրոպական երկրներ է արտահանում իրանական մեղրը: Մեղվաբուծության ոլորտի իրանական խոշոր մասնագետներից Ալի Ռահբարը ISNA-ին տեղեկացրել է, որ իրանական մեղրը իր որակով չի զիջում աշխարհի լավագույն տեսակներին, և հետևաբար մեծ պահանջարկ ունի համաշխարհային շուկայում: Ընդ որում, խոսքը վերաբերվում է այն մեղրին, որի որակի պաշտոնական ստուգումն անցկացվել է երկրի նահանգների ստանդարտացման վարչությունների լաբորատորիաներում և կարող է ուղարկվել ներքին և միջազգային շուկաներ: Նա նշել է, որ 2000 թ.-ից Իրանը դուրս է հանվել ԵՄ-ի երկրներ պաշտոնապես մեղր արտահանող երկրների ցանկից: Այդ շրջանում մեղրի իրանական արտադրողները բազմիցս խնդրանքով դիմել են ԻԻՀ-ի գյուղատնտեսական ջիհադի նախարարին, որպեսզի պարզվի ԵՄ-ի նման որոշման պատճառները և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն դրա վերացման համար: Սակայն, մինչ օրս ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել համաշխարհային շուկայում կորսված դիրքերը վերականգնելու համար: Այդ պայմաններում անբարեխիղճ թուրքական գործարարները գտան շահույթի նոր աղբյուր. նրանք Իրանի տարբեր շրջաններում ամենացածր գներով գնում են մեղրը, որը չի անցել իրանական սպեցիֆիկացիան, և այն ուղարկում են ԵՄ-ի երկրներ իրենց փաթեթավորմամբ և թուրքական ապրանքանիշով:

Որոշ եզրակացություններ

Չնայած բերված բազմաթիվ տեղեկություններին ու մտորումներին, խոսել այն մասին, թե Իրանի ու Թուրքիայի միջև տնտեսական համագործակցության, առավել ևս էներգետիկ ոլորտում, ամեն ինչ կոնկրետացված է, դեռ վաղ է: Արդեն հիշատակվել է այն, թե Թեհրանը բազմաթիվ տարիների ընթացքում ինչպես է հետ մղում Անկարայի կտրուկ պահանջները մատակարարվող բնական գազի գների իջեցման մասին: Եվ հաճախ Իրանը Թուրքիայի նկատմամբ «պատժամիջոցների» է դիմում այդ և մի շարք այլ հարցերում վերջինիս ցուցաբերած համառության համար: Այսպես, չնայած երկու երկրների կողմից ցուցաբերված մերձեցման դինամիկային 2007 թ.-ի ընթացքում, անցած տարվա դեկտեմբերի 29-ին ԻԻՀ-ն անսպասելիորեն դադարեցրեց բնական գազի արտահանումը Թուրքիա, երբ այնտեղ սպառումը հասավ ռեկորդային մակարդակի: Իրանի հետ պայմանագրով նախատեսված օրական 29 մլն.խոր.մ.-ի փոխարեն Թուրքիան ստանում էր 2 մլն.խոր.մ. գազ: Իրանական և թուրքական ԶԼՄ-ները տեղեկացնում են, որ մատակարարման անբավարարությունը Իրանը բացատրում է կոմպրեսորային կայանի աշխատանքների խաթարմամբ, որի առթիվ կողմերը ներկայումս բանակցություններ են վարում՝ այդ խնդրի լուծման ուղիների որոնման համար: Ընդ որում, զարմանալի է, որ հենց Թուրքիայում, ինչպես և այլ երկրներում, Իրանից գազի մատակարարման դադարեցման մասին հաղորդեցին... միայն 2008 թ.-ի հունվարի 7-ին: Ըստ որում, արդեն մեկ այլ պատճառ էր նշվում. ինչպես նշում էր թուրքական NTV հեռուստաընկերությունը, իբր դրա պատճառը «խիստ ցրտերն են»: Դա տեղի է ունենում Իրանի հետ գազի շուրջ նոր համաձայնագրի ստորագրման առթիվ Թուրքիայի էներգետիկայի նախարարության ներկայացուցիչների հետ Թեհրանում սպասվող բանակցությունների նախաշեմին:

Իրանական կողմը նախկինում ևս ծմռանը դադարեցրել է գազի մատակարարումը Թուրքիա՝ դա բացատրելով սառը եղանակային պայմաններում սեփական ներքին պահանջմունքը բավարարելու դժվարություններով: Գազի պահեստարանների բացակայության պատճառով Թուրքիան նախորդ տարիներին էներգակիրների պակասը լրացնում էր Ռուսաստանից գազի ներկրման ավելացումով, հիշեցնում է NTV-ն: Ըստ հեռուստաալիքի տեղեկությունների, Թուրքիայի էներգետիկայի նախարար Հ. Գյուլերը մտադիր է օգնության համար դիմել երկրի վարչապետ Ռ. Էրդողանին: «Ես ստեղծված իրավիճակը քննարկել եմ իրանական գործընկերջս հետ, սակայն այժմ ստիպված եմ դիմել կառավարության ղեկավարին Ռուսաստանի և Իրանի նախագահների հետ բանակցություններ վարելու խնդրան-

քով», - մեջբերում էր թուրքական նախարարի խոսքը NTV հեռուստաալիքը: Համաձայն 1996 թ.-ին Իրանի հետ կնքված պայմանագրի, վերջինս օրական Թուրքիային պետք է մատակարարի 27-28 մլն.խոր.մ. գազ երկու երկրների միջև անցկացված 2,5 հազ. կմ երկարության գազամուղով: Ընդ որում, այս ամենը տեղի էր ունենում Թեհրանում Թուրքիայի էներգետիկայի նախարարության ներկայացուցիչների Իրանի հետ գազի նոր համաձայնագրի կնքման հարցերի շուրջ մեկ շաբաթից ավել տևող բանակցությունների հիմնապատկերի վրա:

Այնուհետև թուրքական կողմը չգիտես ինչու հունվարի 7-ին հայտարարեց, որ Իրանը անմիջապես վերականգնել է գազի մատակարարումը: Սակայն, հունվարի 9-ին տեղեկություն հայտնվեց այն մասին, որ Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը դիմելու է Իրանի նախագահ Մ. Ահմադինեջադին դադարեցված գազի մատակարարումը վերականգնելու խնդրանքով: Թուրքական վարչապետին մեջբերելով, Reuters գործակալությունը նշում է. «Ես կխոսեմ նրա հետ և կխնդրեմ արագ վերականգնել մատակարարումը»: Սակայն հունվարի 11-ին արդեն ինքը Անկարան ստիպված էր խոստովանել, որ Թեհրանը խոստացել է վերականգնել մատակարարումը ոչ շուտ քան հունվարի 14-ից...

Ըստ մեզ, այս ամենը Իրանի և Թուրքիայի միջև նախկին տարածայնությունների արձագանքներն են: Հնարավոր են նաև այլ գործոններ, որոնք մշտապես ուղեկցում են երկու երկրներին երկկողմանի տնտեսական համագործակցության հաստատման ճանապարհին: Այն ամենը, ինչ գրվում էր 2007 թ.-ի սկզբներին, օրինակ Ուկրաինայի և Մերձբալթյան երկրների ՁԱՄ-ներում. «Վերջին ժամանակները նորից սրվել են իրանա-թուրքական գազային հարաբերությունները: Թուրքիան, զգալիորեն ավելացնելով գազի պահանջարկը, բազմաթիվ միջազգային պայմանագրեր է ստորագրել դրա մատակարարման վերաբերյալ: Պայմանագրերով նախատեսված գազի ծավալների սպառման անհնարինության պայմաններում Թուրքիան հիմնական սահմանափակում է իրանական մատակարարումը: Ուստի և Իրանի համար ծայրահեղ անհրաժեշտ է ստեղծել խողովակաշարային մի ուղի, որը չի անցնի թուրքական տարածքով»: Կարծում ենք, որ սա լիովին ընդունելի բացատրություն է այն բանի, թե ինչու է Թեհրանը պարբերաբար փակում Անկարայի «գազի փականը»: Եվ դատելով ամենից, քանի դեռ Թուրքիան վերջնականապես չի հրաժարվել այդ ոլորտում Իրանին ինչ-որ բան թելադրելուց, իրանական կողմը այսուհետև ևս կդիմի նմանատիպ «պատժամիջոցների»:

Որևէ այլ բան դժվար է պատկերացնել: Նույնիսկ, Իրանի հետ տնտեսական համագործակցության խորացման պատճառով Թուրքիայի քաղաքականության վրա ԱՄՆ-ի ազդեցության մասին այսօր խոսել, նշանակում է դրսևորել անլրջություն: Թեև հազիվ թե կարելի է մոռանալ այն մասին, որ Թուրքիայում ԱՄՆ-ի արդեն վերոհիշյալ դեսպան Ռ. Ուիլսոնը անցած տարվա հուլիսի 27-ին տագնապով հայտարարել է, որ «էներգետիկ ոլորտում համագործակցության Իրանի ու Թուրքիայի միջև ստորագրված համաձայնագիրը կարող է լրջորեն խանգարել Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների յուրացման և թուրքական տարածքով դեպի համաշխարհային շուկաները հումքի տեղափոխման գործընթացներին»: Ռ. Ուիլսոնը սպառնաց Անկարային, որ դա կարող է հանգեցնել Կասպից ծովի նավթային պաշարների յուրացման գործընթացի կասեցմանը. «Իրանի հետ կնքված համաձայնագիրը կարող է ընդհատել Թուրքիայի և ԱՄՆ-ի կողմից Կասպից ծովի ածխաջրածնային ռեսուրսների շահագործումը և թուրքական տարածքով դեպի Եվրոպա հումքի տեղափոխումը: Պատճառն այն է, որ Թուրքիան առանցքային դեր է խաղում դեպի Եվրոպա և համաշխարհային շուկաներ Կասպիցի ավազանի նավթագազային ռեսուրսների մատակարարման հարցում: Թուրքիան իր ռազմավարական տեղակայմամբ, իրեն և Եվրոպային գազի մատակարարման հարցով վերածվել է տարածաշրջանային առաջնորդի: Նման դիրքը կարող է նպաստել նաև տարածաշրջանի երկրների հետ տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Իրանական գազի տեղափոխումը զգալիորեն կծգծգի Ադրբեջանից, Ղազախստանից և Թուրքմենստանից երկնագույն վառելիքի մատակարարման գործընթացը»:

Անսխալ կերպով կարելի է ասել, որ ԱՄՆ-ն տվյալ դեպքում հոգում է սեփական, ոչ թե Թուրքիայի կամ նույնիսկ ԵՄ-ի անդամ երկրների շահերը, քանի որ մենք արդեն առիթ ենք ունեցել համոզվելու, որ և ԵՄ-ն և Թուրքիան համաձայն են նույն «Nabucco» նախագծի իրականացմանը առանց դրա մեջ ներառելու Անդրկասպյան խողովակաշարի սեգմենտը, և նույնիսկ առանց Միջին Ասիայի գազի, բավարարվելով միայն Իրանի բնական գազի հսկայական պաշարներով և նրա կոմունիկացիոն համակարգերով, որոնք ուղղված են դեպի Թուրքիա: Դա ձեռնտու չէ միայն ԱՄՆ-ին:

Ինչպես ճիշտ են նկատել նաև Արևմուտքի և ԱՊՀ-ի որոշ երկրների մի շարք փորձագետները, խնդիրն այն է, որ Իրանի ու Թուրքիայի իրատեսական տնտեսական համագործակցության դեպքում տարածաշրջանում շատ արագ կարող է փոխվել ուժերի հավասարակշռությունը, այդ թվում նաև արտատարածաշրջանային ուժերի: Եվ եթե համադրենք Թեհրանի ու Անկարայի կողմից բոլոր ուղղություններով վերջին 2-3 տարիների ընթացքում երկկողմանի հարաբերություններում նախաձեռնված քայլերը, այդ թվում նաև անվտանգության ոլորտում, ապա ակնառու կդառնա, թե ինչից են վախենում ԱՄՆ-ում, այդ թվում նաև «STRATFOR» ամերիկա-իսրայելական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փորձագետները: Օրինակ, երբ Թուրքիա կատարած այցի ժամանակ Իրանի փոխարտգործնախարար Մոհսեն Ամինզադեն հայտարարեց, որ ոչ մի արգելք չի կարող խանգարել տարածաշրջանային անվտանգության ու ահաբեկչության դեմ պայքարի ոլորտներում Անկարայի և Թեհրանի միջև համագործակցության զարգացմանը, ինչպես նաև, որ Իրանը պատրաստ է գազ մատակարարել Թուրքիային և երկու կառավարությունները նաև համաձայնվել են ընդլայնել առևտուրը, ապա Վաշինգտոնում անմիջապես նշեցին, որ անվտանգության ոլորտում երկու երկրների համագործակցությունը կարող է նպաստել նաև այդ երկրների տնտեսական աճին, բացի այդ փոխել ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում: Մինչ օրս երկու երկրների միջև առկա հակասությունները անվտանգության խնդիրների շուրջ, խոչընդոտում էին ավելի սերտ տնտեսական կապերի հաստատմանը:

Եվ Անկարան, և Թեհրանն ունեն սեփական դրդապատճառները անվտանգության ոլորտում համագործակցության հաստատման համար: Թուրքիան ցամաքում սահմանակցում է 7 երկրների հետ և մուտք ունի դեպի երկու ծովերը, որը նրան խոցելի է դարձնում առնվազն երեք կողմից հարձակման դեպքում: Եվ Իրանի հետ անվտանգության գծով համաձայ-

նությունը կամրացնի այդ ճակատներից մեկը, միևնույն ժամանակ դա նրան տալիս է դաշնակից, որը ունակ է դիմակայել Սիրիայի և Իրաքի կողմից եկող սպառնալիքներին:

Իր հերթին Թուրքիայի հետ համագործակցությունը կարող է աշխուժացնել իրանական տնտեսությունը: 2008 թ.-ից Թուրքիան կսկսի Իրանից ներկրել 3 մլրդ.խոր.մ. բնական գազ: Այդ մատակարարումները կկրկնապատկեն երկու երկրների միջև ապրանքափոխանակությունը և այն կմոտեցնեն 2001 թ.-ի 1,5 մլրդ. դոլարի նիշին: Իրանն իր հերթին փորձում է թուրքական ներդրումները ներքաշել նավթաքիմիական նախագծերի, ավտոպահեստամասերի, էլեկտրոնիկայի արտադրության, պարենամթերքի փաթեթավորման ձեռնարկությունների ստեղծման մեջ: Դրա հետ մեկտեղ Թուրքիայի աշխարհագրական դիրքը նրան բարենպաստ տրանսպորտային միջանցքի է վերածում դեպի եվրոպական շուկաները Իրանի էներգառեսուրսների մատակարարման համար: Իրանը բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է երկրորդ տեղը և դրա սպառման նոր շուկաների կարիք ունի: Մյուս կողմից, Թուրքիան ներկրում է սպառվող գազի գրեթե 95 %-ը և նույնպես փորձում է բազմաձևացնել էներգամատակարարման աղբյուրները: Ի հավելումն ամենի, համագործակցությունը երկու երկրներին տալիս է տարածաշրջանում, կասպիական ավազանը ներառյալ, նավթային արտահանումների տարբեր ուղիների վրա ազդեցության հնարավորություն:

Սակայն, հսկողությունը ռազմավարական արտահանման ուղիների նկատմամբ և երկու երկրների միջև անվտանգության ոլորտի համագործակցությունը կարող է խարխլել տարածաշրջանում ստեղծված ուժերի այն փխրուն հավասարակշռությունը, որը ամերիկացիները ստեղծել էին ԽՍՀՄ-ի ինքնափլուզումից հետո: «Սառը պատերազմի» տարիներին Սիրիան և Իրաքը հակված էին Ռուսաստանին՝ ընդդեմ ամերիկա-իսրայելական առանցքի: Թուրքիան, որը լավ հարաբերությունների մեջ է Վաշինգտոնի հետ, վաղուց ճանաչել է Իսրայելը և այժմ համաձայնագիր ունի Թել-Ավիվի հետ ռազմական համագործակցության մասին: Իրանը ընդդիմանում էր Իսրայելի ստեղծմանը և սատարում էր Պաղեստինի, ինչպես նաև Լիբանանի և Թուրքիայի «ահաբեկչական խմբավորումներին» ամերիկա-իսրայելա-թուրքական դաշինքի վրա ճնշման աջակցության համար: 1979 թ.-ի իսլամական հեղափոխությունից հետո Թեհրանը փորձում էր ամրապնդել հարաբերությունները իր արաբական հարևանների հետ, դեպի տարածաշրջան ԱՄՆ-ի «ներխուժմանը» դիմակայելու համար: Սակայն այժմ էլ, չնայած Իսրայելին ու նրա դաշնակիցներին դիմակայմանը, Իրանը չպետք է մոռանա Իրաքից և Սիրիայից իր անվտանգությանը բխող սպառնալիքների մասին: Իրանը պատերազմել է Իրաքի հետ 8 տարիների ընթացքում, և նրանց միջև լարվածությունը դեռևս պահպանվում է: Իրաք-սիրիական համագործակցության զարգացման վերջին իրադարձությունները նույնպես սպառնալիք են ներկայացնում Իրանի համար: Մոսկվայի կողմից սատարվող Բաղդադն ու Դամասկոսը ձգտում են կրկին բացել նավթամուղները, որոնք կարող են Իրաքին նավթի արտահանման այլընտրանքային ուղիներ տալ: Ներկայումս Իրաքը հիմնականում կախված է Թուրքիայի տարածքով ընթացող ուղիներից և Իրանի կողմից վերահսկվող ջրանցքներից: Դա երկու երկրներին Բաղդադի վրա ճնշման լծակներ է տալիս:

«STRATFOR» կենտրոնի փորձագետները գտնում են, որ անվտանգության ոլորտում երկկողմանի համաձայնագիրը Թուրքիային էլ ավելի շատ մանևրելու հնարավորություն կտա: Իր տարածքում ստեղծված ահաբեկչական կազմակերպություններով պայմանավորված մտահոգությունը կնվազի, քանի որ Թեհրանը կսկսի ավելի քիչ աջակցել դրանց: Իսկ դա, իր հերթին, Անկարային, որը ներկայումս արդիականացնում է իր բանակը, ավելի շատ հնարավորություն կտա ռեսուրսներ կենտրոնացնել հարևաններից բխող պոտենցիալ սպառնալիքների դեմ: Ոչ Սիրիան, և ոչ էլ Իրաքը չունեն տնտեսական ռեսուրսներ, որպեսզի զգալի չափով արդիականացնեն իրենց բանակները: Բացի այդ, Թուրքիան վերահսկում է Տիգրիս և Եփրատ գետերը, որոնք սնում են ինչպես Իրաքը, այնպես էլ Սիրիան Անկարային տալով ճնշման կարևոր լծակ:

Անցած տարի «STRATFOR»-ի փորձագետները գտնում էին նաև, որ տարածաշրջանի երկու հիմնական դերակատարների միջև դաշինքը, որոնցից յուրաքանչյուրն ունի զգալի բնակչություն, ընդլայնվող տնտեսություն և ժամանակակից բանակ, վատ նախանշան է հանդիսանում տարածաշրջանի այլ պետությունների համար: Նման դաշինքի դեմ հանդիման տարածաշրջանի այնպիսի երկրներ, ինչպիսիք են Սիրիան և Իրաքը, կարող են ավելի սերտորեն համագործակցել, ինչ անհրաժեշտ է իրանա-թուրքական ազդեցությանը դիմակայելու համար:

Սակայն, եթե մենք ամերիկա-իսրայելական «ճամբարի» այս բոլոր մտավախություններին ավելացնենք նաև մահմեդական աշխարհում իրենց դիրքով Իրանի և Թուրքիայի անհանգստությունը, ինչպես նաև հաշվի առնենք Թեհրանի և Անկարայի անհանգստությունը՝ կապված «Մեծ Մերձավոր Արևելք» ամերիկյան ռազմավարական նախագծի որոշ մանրամասների հետ, որոնք տեղեկատվության արտահոսքի տեսքով «նետվել» էին 2006 թ.-ի ամռանը, ապա կարելի է հասկանալ, թե ինչու այս երկու երկրները հանդգնեցին երկկողմանի տնտեսական համագործակցության ինտենսիվացմանը, առանց հաշվի առնելու իրենց շահերի միջև որոշ վիճելի հարցերի ու տարաձայնությունների, և նույնիսկ հակասությունների գոյությանը: Համարձակվենք այդ պատճառն անվանել. դա Իրանի ու Թուրքիայի տարածքային կորուստներին ուղղված ԱՄՆ-ի փորձերին դիմակայելու համատեղ խորքային ձգտումն է: Դա, մասնավորապես, կարող է կապված լինել նաև տարածաշրջանում քրդական գործոնի հերթական «հայտնության» և «զարթոնքի» մտավախությունների հետ:

Թուրք-Վրացական տնտեսական համագործակցության որոշ ասպեկտները. տնտեսություն՝ պայմանավորված քաղաքականությամբ

Վլադիմիր Իվանով

Վրաց-թուրքական տնտեսական համագործակցության ձևավորման նախադրյալները

ԽՍՀՄ-ի փլուզումը և նրա տեղում մի շարք նոր պետությունների առաջացումը բարենպաստ հնարավորություններ էին ստեղծում դեպի Կենտրոնական Ասիա ու Կովկասի տարածաշրջան Թուրքիայի քաղաքական ներկայության իրականացման համար: Թուրքիայի կողմից հետխորհրդային տարածքի յուրացման կարևոր տարրերից մեկը դիտարկվում էր տնտեսությունը, ինչը և հանգեցրեց վերջինիս ձգտմանը առևտրա-տնտեսական կապեր հաստատել մի շարք նախկին խորհրդային հանրապետությունների հետ: Ընդ որում, հարկ է նշել, որ 1990-ական թվականների սկզբներին թուրքական պաշտոնատար անձինք, մի շարք պատճառներով պայմանավորված, այս թեմայի շուրջ լիովին բաց էին արտահայտվում: Այսպես, Ս. Դեմիրելը 1992 թ.-ի հունիսին, Ստամբուլում կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան տվյալ պահին իր առջև խնդիր է դրել դառնալ առաջնորդ՝ միջտարածաշրջանային տնտեսական կապերի ամրապնդման գործում[1]: Հետագայում թուրքական պաշտոնատար անձինք տնտեսական, իսկ դրա միջոցով նաև քաղաքական գերիշխանության ձեռքբերման իրենց ցանկությունների մասին սկսեցին ավելի հավասարակշռված արտահայտվել: Չխորանալով այնպիսի հարցերի մեջ, ինչպիսիք են պանթուրքիզմի ու նեոօսմանիզմի տարանցիկությունը, նշենք միայն, որ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական առումներով, տարածաշրջանն ամբողջությամբ, իսկ Վրաստանը՝ մասնավորապես, գործնականում իր նախնական կողմնորոշմամբ դեպի Արևմուտք ու ԱՄՆ,որը ավելի ուժեղացավ անկախության առաջին բուռն տարիներից հետո, Թուրքիայի համար գայթակղիչ նոր հնարավորություններ էին ստեղծում: Սակայն, ինչպես Վրաստանի, այնպես էլ ընդհանուր առմամբ տարածաշրջանի ներքին անկայունությամբ պայմանավորված, ընդհուպ մինչև 1990-ական թվականների կեսը, դժվար է խոսել Թուրքիայի ու Վրաստանի միջև քիչ թե շատ լուրջ փոխհարաբերությունների մասին /ի նկատի ունենք ոչ այն, ինչը միայն թղթի վրա է/: Ուստի, չնայած տարբեր մակարդակներում տեղի ունեցած ինտենսիվ հանդիպումներին, պայմանագրերի ու համաձայնագրերի բազմազանությանը, որոնց քանակը մինչև 2001 թ.-ը թվով 20-ից ավել էր[2], երկկողմանի քաղաքական, դրան զուգահեռ նաև առևտրա-տնտեսական փոխհարաբերությունները սկսվեցին լուրջ ուրվագծեր ձեռք բերել միայն 1990-ականների վերջերին՝ շահագրգիռ արտատարածաշրջանային միջազգային դերակատարների ուղղակի մասնակցությամբ ու աջակցությամբ՝ համատեղ էներգո-կոմունիկացիոն նախագծերի իրականացման համատեքստում: Պետք է նշել, որ թուրք-վրացական սերտ համագործակցության հաստատումը՝

մի շարք վճռորոշ հարցերի շուրջ Ադրբեջանի ներգրավմամբ, ամբողջովին տեղավորվում էր ԱՄՆ-ի՝ Կենտրոնական Ասիայի ու Կովկասի տարածաշրջանում իր ազդեցության աճի և ռուսական ու իրանյան ազդեցության նվազեցման պլանների մեջ: Այն ժամանակ, սերտ, բազմակողմ համագործակցության հաստատման համար որպես իրատեսական հիմք էր ծառայում շահերի գիտակցված ընդհանրությունը: Թուրքիայի համար Վրաստանն առաջին հերթին տրանսպորտային զարկերակ և դեպի Կենտրոնական Ասիայի հանրապետություններ հարմար ուղի էր ներկայացնում, որին, խորհրդային Միության փլուզման հետ կապված, թուրքական կառավարության մեջ տիրող սպասումներում մեծ նշանակություն էր տրվում: Այսպես, 1992 թ.-ի հոկտեմբերին, Անկարայում տեղի ունեցած թուրքալեզու երկրների առաջին գագաթաժողովում, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը 21-րդ դարը հռչակեց «թուրքերի դար, եթե թույլ չտրվեն սխալներ»[3]: Բացի այդ, Վրաստանը հանդիսանում էր կապող օղակ Ադրբեջանի հետ, որտեղ տիրող վառ դրսևորված թուրքամետ տրամադրությունները նույնպես լավատեսության մեծ խթան էին հանդիսանում: Ինչ վերաբերվում է Վրաստանին, ապա Թուրքիայ նկատմամբ մեջ շահագրգռվածություն առաջին հերթին առաջացավ նրա տարածքների միջոցով դեպի Եվրոպա ելքի կապակցությամբ: Բացի այդ, հարկ է նշել, որ Վրաստանի արևմտամետ արտաքին քաղաքական ուղղվածություն ունեցող ղեկավարությունը Թուրքիան դիտարկում էր որպես արևմտյան աշխարհի մի մասը, հատկապես ՆԱՏՕ-ում վերջինիս մասնակցության համատեքստում, դեպի որի անվտանգության համակարգը ձգտում էր Վրաստանը: Բացի նշված գործոնները, աշխարհագրական մոտիկությունը ևս իր բնական դերը կատարեց տնտեսական սերտ կապերի հաստատման գործում:

Վրաստանում Թուրքիայի ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները

1992 թ.-ի վերջին, Ս. Դեմիրելի Թբիլիսի կատարած այցի ընթացքում, ստորագրվեց «Բարեկամության ու համագործակցության մասին» պայմանագիրը: Երկկողմանի հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլում ստորագրվեց նաև «Առևտրի և տնտեսական համագործակցության մասին» պայմանագիրը ստեղծվեց Համատեղ տնտեսական հանձնաժողով ու թուրք-վրացական բիզնես ասոցիացիան: Սակայն, ինչպես արդեն նշվել էր, Վրաստանում անկայուն իրավիճակի պատճառով, ընդհուպ մինչև 90-ական թվականների վերջը, արտասահմանցի ներդրողների կողմից ներդրումային մթնոլորտը հրապուրիչ չէր դիտվում զգալի ներդրումներ իրականացնելու համար: Տնտեսական աշխուժացումը Վրաստանում սկսվել է միայն 90-ական թթ. վերջից, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևոր նախագծերի իրականացմանը զուգահեռ, որտեղ էլ թուրքական բաժնեմասը շուտով գբաղեցրեց ոչ վերջին տեղը: Այսպես թուրքական T.C. Ziraat Bancasi բանկը արդեն 1998 թ.-ին Թբիլիսիում բացեց իր մասնաճյուղը և 2007թ.-ին պետք է բացեր նաև վարկային ծրագիրը[4]: Իսկ 2005 թ.-ի դրությամբ, Վրաստանում արդեն գրանցվել էր 100-ից ավելի ընկերություններ, թուրքական կապիտալի մասնակցությամբ: Ներդրումների հիմ-

նական մասը ուղղվում էր հեռահաղորդակցությունների, վերամշակման և ծառայությունների ոլորտներ: Առավել հայտնի թուրքական ընկերություններ, որոնք հաջողությամբ ներդրվել և գործառույթներ են իրականացնում վրացական տնտեսական տարածքում հետևյալներն են՝ Sisecam / Mina Joint Stock Company դուստր ձեռնարկությունը/, Ջurcell, Sener Arda Group, Delta Petroleum Company: Այսպես Ջurcell ընկերությունը ձեռք բերեց Geosell-ի հսկիչ բաժնեմասը, իսկ թուրքական Sisecam կոնցեռնը, որը հանդիսանում էր Եվրոպայում ամենախոշոր ապակի արտադրողներից մեկը, դեռ 1997 թ.-ին դարձավ Կասանսկի «Սինա» ԲԸ ապակետարայի գործարանի տերը, ձեռք բերելով նրա հսկիչ փաթեթը /62 տոկոսը/: Գործարանը ձեռք բերելուց գրեթե անմիջապես հետո, Sisecam-ն գործունյա կերպով սկսեց իրականացնել արտադրության վերականգնման ծրագիրը, և ներդրված միջոցների ընդհանուր ծավալը հասավ 40 մլն. դոլարի: Ներկայումս «Սինա» ԲԸ-ն արտադրում է ավելի քան 25 տեսակի ապակե տարա: Delta Petroleum Company-ին սպասարկում է Փոթիի նավթապահեստարանը, ներդրել է արդեն 15 մլն. դոլար այս նավահանգստի նավթային տերմինալի մեջ և Georgian-Turkish Channel Energy-ի 75 տոկոս բաժնետոմսերի սեփականատերն է:[5] Ոչ պակաս ակտիվություն թուրքական գործարար շրջանակների ներկայացուցիչները ցուցաբերում են նաև տարբեր շինարարական կապալների ոլորտում: Այսպես, Վրաստանում գործում են թուրքական շինարարական ընկերություններ՝ Baytur, Borova, Burc, Ustay, Zafer և այլն: Այս և այլ ընկերությունների կողմից իրականացված նախագծերից են, օրինակ թուրքական դեսպանատան կառուցումը Թբիլիսիում և վրացականինը՝ Անկարայում, նավթային տերմինալը՝ Սուպսայում, էլեկտրոնային սպասարկման միջոցները Թբիլիսիի օդանավակայանում, ալրաղաց գործարանը՝ Քոբուլետիում, թուրք-վրացական առևտրի կենտրոնը, Փոթիի նավթապահեստարանի և Բաթումի նավահանգստի տերմինալի վերակառուցումները /չհաշված մի շարք ռազմական օբյեկտների կառուցումը/[6]: Ընդ որում թուրքական կողմը ձգտում էր շինարարական ոլորտում ներդրումների ծավալների ընդլայնմանը: Այսպես թուրքական արտաքին գործերի նախարար Ք. Թուզմենի խոսքերով, Թուրքիան ցանկանում է Վրաստանի շինարարական սեկտորի մեջ իր ուղղակի ներդրումների ծավալը հասցնել մինչև 350 մլն. դոլարի[7] Վերջին մի քանի տարիների ընթացքում շինարարական սեկտորում կարևոր նշանակություն է ձեռք բերել նաև TAV&Urban կոնցեռնը: TAV ընկերությունը համատեղ ձեռնարկություն էր, որը ստեղծվել էր 1998 թ.-ին "Tere" և "Akfen" ընկերությունների միաձուլումից: Նրա գործունեության ոլորտը շատ բազմազան է և ներառում է տնտեսության ամենաբազմազան սեկտորները՝ շինարարությունը, զբոսաշրջությունը, վերամշակող արդյունաբերությունը և այլն: Նա զբաղվում էր Ստամբուլի Աթաթուրքի անվան օդանավակայանի և Իզմիրի օդանավակայանի շինարարությամբ: 2006 թ.-ին ընկերությունը հիմնականում ավարտեց Անկարայի միջազգային օդանավակայանի արդիականացումը:

Urbans ընկերությունը հանդիսանում է արդյունաբերա-շինարարական և առևտրական ընկերություն: TAV&Urban–ը, 2006 թ.-ի սեպտեմբերի 6-ին Վրաստանի կառավարության հետ կնքած պայմանագրի համաձայն, պետք է արդիականացներ Թբիլիսիի միջազգային օդանավակայանը, կառուցեր օդանավակայանի նոր շենքը, նաև վերակառուցեր Բաթումիի օդանավակայանը: Բաթումիի օդանավակայանի օգտագործման մասին միջկառավարական համաձայնագիրը ստորագրվել էր 2006 թ.-ի մարտի 14-ին և վավերացվել էր 2006թ.-ի ապրիլին Վրաստանի խորհրդարանի կողմից: Թբիլիսիի և Բաթումիի օդանավակայանների վերակառուցման ֆինանսավորման համար թուրքական կոնսորցիումը պարտավորվել է հատկացնել ընդհանուր առմամբ 95 մլն. դոլար, որից 62 մլն.-ը պլանավորվում էր ուղղել Թբիլիսիի օդակայանի սպասասրահի շինարարության և արդիականացման համար, իսկ 15մլն. Բաթումիի օդանավակայանի վերակառուցմանը: Եվս 18 մլն. մոտակա 10 տարում կհատկացվի ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և օդանավակայանների ենթակառուցվածքների զարգացման համար[8]: Թբիլիսիի օդանավակայանի նոր շենքի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 2007թ. փետրվարի 7-ին: Սակայն բացումից մոտավորապես երկու շաբաթ հետո անախորժություն տեղի ունեցավ: Վատ եղանակի պատճառով նոր շենքը խիստ վնասվեց: Բաթումիի վերակառուցված օդանավակայանի բացումը տեղի ունեցավ 2007թ.-ի մայիսի 26-ին: Արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին, թուրքական կողմից արտաքին գործերի նախարար Ա. Գյուլը: Հայտարարվում էր, որ մոտ ժամանակներս Բաթումիի օդանավակայանը նույնպես պետք է անցնի այն թուրքական ընկերության տնօրինման տակ, որը իրականացրել է նրա վերակառուցումը: Իսկ Թբիլիսիի օդանավակայանը 2005 թ.-ի նոյեմբերի 1-ից արդեն գտնվում էր այդ ընկերության տնօրինման ներքո 15,5 տարի ժամկետով:[9] Թուրքական միջազգային համագործակցության վարչակազմը /TICA/ Վրաստանում նույնպես իրականացնում է սոցիալ-տնտեսական ծրագրեր: Նրա Վրաստանի կոորդինացնող գրասենյակը բացվել էր 1994 թ.-ին, «Համագործակցության արձանագրության» համաձայն, որը կնքվել էր Թուրքիայի և Վրաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև: Այսպես, 2006 թ.-ի նոյեմբերի 27-ին, «Թուրքիայի միջազգային համագործակցության վարչակազմի» նախագահ /Turkish International Cooperation Administration – TICA/ Խ. Փիդանիի և Վրաստանի կրթության փոխնախարար Բ. Ցիպուրիայի համատեղ հանդիպման ժամանակ հայտարարվել էր Վրաստանի 170 դպրոցների լրիվ վերականգնման ավարտի մասին, որն իրականացվել է TICA-ի անմիջական ֆինանսական օգնության շնորհիվ:[10] Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ թուրքական կողմը ցանկություն էր հայտնում ներդրումներ կատարել բազմաթիվ ծրագրերում: Չէին մոռացվել նաև տարածաշրջանները: Այսպես՝ 2004 թ.-ի դեկտեմբերին, երբ Թբիլիսի էր ժամանել 150 հոգուց կազմված թուրք բիզնեսմենների պատվիրակությունը՝ վարչապետ Էրդողանի գլխավորությամբ, նրանց շատ էր հետաքրքրել Աջարիայի ներդրումային մթնոլորտը, որի հետ, ի տարբերություն մնացած Վրաստանի, մի շարք գործոնների և առանձնահատկությունների շնորհիվ, թուրքական բիզնես շրջանակները սերտ կապեր էին հաստատել դեռ 90-ական թթ.-երի սկզբին:[11]

2006թ.-ի հունիսի 6-ին Ռիզեի թուրքական պատվիրակությունը ներկայացրեց համագործակցության ծրագիր: Խոսքը գնում էր, մասնավորապես, Աջարիայում թեյի գործարանների կառուցման մասին:[12]

Աջարիան ի սկզբանե թուրքերի կողմից դիտվում էր, որպես զբոսաշրջության բիզնեսը զարգացնելու վայր, ինչպես նաև տնտեսության այլ ոլորտներում ներդրումների համար հարմար տարածաշրջան: Ռազմավա-

րական հետաքրքրություններից բացի, թուրքական ներդրումների համար գոյություն ունեին նաև այլ պատճառներ, զուտ առևտրային բնույթի: Այսպես, Ջեզմի Աքշահինը (Cezmi Aksahin) Բաթումիի տեքստիլ ֆաբրիկայի BTM գործադիր տնօրենը, թվարկեց մի շարք առևտրային բնույթի պատճառներ, որոնց շնորհիվ թուրք գործարարները գումարներ են ներդնում Վրաստանում՝ բանվորական ուժի ցածր ինքնարժեքը, համեմատաբար էժան էլեկտրաէներգիան և այլն:[13] Ֆաբրիկան սկսել է իր աշխատանքը 2007թ.-ի սեպտեմբերին: 2007թ.-ի մայիսի 26-ին Աջարիայի ինքնավարությունում բացվեց կարի 2 ֆաբրիկա, որոնք գործարկվել էին թուրքական ներդրումների օգնությամբ: Ֆաբրիկաներից մեկը գտնվում է Մախինջաուրիում, մյուսը Խուլոյում /որը բնակեցված է մահմեդական բնակչությամբ/: Ըստ որոշ հայտարարությունների, Մախինջաուրիի ֆաբրիկայում պետք է աշխատեն 900 մարդ, Խուլոյում՝ 300: Ինչպես հայտարարեց ինքնավարության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետգույքի վարչության ղեկավար Ա. Գուրգենիձեն՝ «Վրաստանում ազատական հարկային քաղաքականություն է, այդ պատճառով էլ գալիս են մեզ մոտ ներդրողները»:[14] Ընդհանուր առմամբ, թուրքական ուղիղ ներդրումները Վրաստան 1995 թ.-ից մինչև 2006 թ.-ի առաջին կեսը որոշ տվյալներով հասել են 217,5 մլն. դոլարի:[15] Համաձայն այլ հայտարարությունների, նրանց ծավալը ավելի մեծ էր: Այսպես 2006 թ.-ի հոկտեմբերի 12-ին Թբիլիսիում կայացած Վրաց-թուրքական բիզնես-խորհրդի հերթական նիստի ժամանակ, թուրքական կողմի համանախագահ Թ. Էրկինի գնահատմամբ, թուրքական մասնավոր ներդրումները կազմում էին մոտ 500 մլն. դոլար, ընդ որում պլանավորվում էր նրա հետագա ավելացումը: Ինչպես նշեց էրկինը՝ «Այսօրվա դրությամբ մասնավոր թուրքական ներդրումների ծավալը վրացական տնտեսության զարգացման մեջ կազմում է 500 մլն. դոլար, բայց թուրքական կողմը պլանավորում է ավելացնել այդ թիվը երկու անգամ՝ այսինքն մինչև 1 մլրդ. դոլար»:

Էրկինը նշեց նաև, որ վրաց-ռուսական հարաբերությունների բարդացումից հետո, Թուրքիայի և Վրաստանի առևտրական հարաբերությունների կարևորությունը զգալիորեն ավելանում է: Այդ ժամանակ էլ հերթական անգամ դրվել էր կրկնակի հարկման խնդիրների լուծման հարցը:[16] Վերոնշյալ ծրագրերից բացի, պետք է նշել նաև այնպիսիները, որոնց իրականացումը դեռևս միայն ենթադրվում է: Այսպես, 2007 թ.-ի մայիսի 29-ին Վրաստանի կառավարության և թուրքական Georgian Urban Energy ընկերության միջև ստորագրվեց հուշագիր՝ Փարվանա /Ջավախք/ լճի մոտ 70-80 ՄՎտ հզորությամբ նոր ՀԷԿ կառուցելու մասին:[17] Այսպիսին է Վրաստանում թուրքական ձեռնարկատիրական ընկերությունների գործունեության դեռևս ոչ լիարժեք պատկերը:

Թուրք-Վրացական առևտրա-տնտեսական համագործակցություն: Զարգացման որոշ միտումներ

Վերջին ժամանակներս երկու երկրների միջև նկատվում է առևտրային շրջանառության անշեղ աճ: Դա կապվում է ինչպես Վրաստանի ընդհանուր տնտեսական միտումների որոշ բարելավման հետ, այնպես էլ մի շարք սպեցիֆիկ հանգամանքների հետ, որոնք ունեն զուտ քաղաքական

հետևանքներ: 2000-ական թթ.-ին Թուրքիայում վրացական արտահանման հիմնական հոդվածներն էին՝ լեռնահանքային արդյունաբերության արտադրանքը /մանգանի և պղնձի հանքաքարերը/, գինիները և հանքային ջրերը, ընկուզեղենը, ավիացիոն միջոցները, գունավոր մետաղները, ավելի ուշ՝ բնական գազը, նավթամթերքները և այլն: Վրաստանում թուրքական արտահանման հիմքն էին կազմում հիմնականում մեքենաշինության բնագավառի, քիմիական և թեթև արդյունաբերության ապրանքները: Նշենք, որ փոքր չէր TUYAP ընկերության վաստակը թուրքական արտադրանքի տարածման գործում, որը խոշոր տոնավաճառներ է կազմակերպում Վրաստանում: Առևտրատնտեսական համագործակցության շրջանակներում, վերոնշյալ համաձայնագրերից բացի, տնտեսական համագործակցության ավելացմանը և երկկողմանի առևտրին հետագայում նպաստելու նպատակով, 2005 թ.-ի հունիսի 20-ին պայմանավորվածություն էր ձեռք բերվել վիզային ռեժիմի պարզեցման մասին, որն այնուհետև լիովին վերացվել էր /«Վիզային ռեժիմի վերացման մասին» պայմանագիր 2006 թ.-ի փետրվարի 10-ից/ և այլն: Ընդհանրապես հարկ է նշել, որ առևտրատնտեսական համագործակցության հարցերը և Վրաստանում, և Թուրքիայում վերջին ժամանակներս միշտ ամենաբարձր մակարդակի քննարկումների առարկա էին հանդիսանում: Դրանք քննարկվում էին նաև Թուրքիայի նախագահ Ա.Ն. Սեզերի մարտի 14-15-ին Թբիլիսի կատարած այցի ժամանակ, որի ավարտից հետո ձեռք էին բերվել մի շարք պայմանավորվածություններ և մատնանշվել էին համատեղ գործողությունները, որոնք ուղղված էին երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների հետագա ամրապնդմանը:[18]

2000թ.-ից սկսած Թուրքիան սկսեց ամուր դիրքեր գրավել Վրաստանի ամբողջ արտաքին առևտրական ապրանքաշրջանառության մեջ՝ Վրաստանի առևտրային գործընկերների շարքում գրավելով մերթ առաջին, մերթ երկրորդ տեղը, ժամանակ առ ժամանակ զիջելով գերակայությունը միայն՝ Ռուսաստանին, իսկ 2007թ.-ի արդյունքներով կրկին դուրս եկավ առաջին հորիզոնական: Այսպես, համաձայն Վրաստանի տնտեսական զարգացման նախարարության վիճակագրական դեպարտամենտի տվյալների, 2000 թ.-ին Թուրքիայի հետ արտաքին առևտրային շրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 184. 299 մլն. դոլար, որի մեջ արտահանումը կազմում էր 72 837 մլն., իսկ ներկրումը՝ 11. 466 մլն., այն դեպքում, երբ ՌԴ-ի հետ ընդհանուր առևտրային շրջանառությունը հասնում էր 160. 16 մլն. դոլարի, արտահանումը կազմում էր՝ 67.208 մլն. դոլար, ներկրումը՝ 92.958 մլն. դոլար, իսկ 2001 թ.-ին Թուրքիայի հետ ընդհանուր առևտրային շրջանառությունը կազմում էր 177.003 մլն. դոլար, ՌԴ-ի հետ՝ 167.272 մլն. դոլար, 2002 թ.-ին Թուրքիայի հետ Վրաստանի առևտրային ընդհանուր շրջանառությունը կազմում էր 143.284 մլն., իսկ Ռուսաստանի հետ՝ 183.563 մլն. դոլար, 2003 թ.-ին Թուրքիայի հետ առևտրային ընդհանուր շրջանառությունը կազմում էր 194.695 մլն., իսկ Ռուսաստանի հետ՝ 245.036 մլն. դոլար, 2004 թ.-ին Թուրքիայի հետ Վրաստանի առևտրային ընդհանուր շրջանառությունը կազմում էր 320.899 մլն., իսկ Ռուսաստանի հետ՝ 362.318 մլն. դոլար: 2005 թ.-ի արդյունքներով երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 405 մլն. դոլար, այդ թվում՝ Թուրքիա արտահանումը 122 մլն., Թուրքիայից ներկրումը՝ 283 մլն. դոլար: Այս

ցուցանիշով Թուրքիան հանդիսանում է Ռուսաստանից հետո Վրաստանի երկրորդ գործընկերը: Համաձայն նույն աղբյուրի, 2005 թ.-ի արդյունքներով Ռուսաստանի հետ Վրաստանի ապրանքափոխանակությունը կազմել է 538.3 մլն դոլար, այդ թվում արտահանումը 153.9 մլն., իսկ ներկրումը 384.4 մլն. դոլար[19]: Պետք է նշել, որ թուրքական պաշտոնական վիճակագրության տվյալները որոշ չափով տարբերվում են վրացականից: Այսպես, համաձայն թուրքական աղբյուրների 2005 թ.-ին Վրաստանի հետ Թուրքիայի ապրանքափոխանակությունը կազմել է 575 մլն. դոլար, այդ թվում արտահանումը 272 մլն., իսկ ներկրումը 303 մլն. դոլար[20]: Ինչ վերաբերվում է 1980 թ.-ից մինչև 2003 թ.-ը ընկած ժամանակահատվածում Վրաստան կատարած թուրքական արտահանման թուրքական վիճակագրական տվյալներին /թուրքական գանձապետարանի կայքը տվյալներ չի պարունակում տվյալներ 2003 թ.-ից հետո Վրաստան կատարված թուրքական արտահանումների ծավալների մասին/, ապա դրա ծավալն էլ ավելի աննշան էր 30.622.461 հազ. դոլար21: Այս առումով, վրացական վիճակագրական տվյալները շատ ավելի բաց են և ճշգրիտ: Չնորանալով բոլոր վիճակագրական տվյալների մանրակրկիտ շարադրման մեջ, միայն նշենք, որ 2000 թ.-ից մինչև 2005 թ.-ը Թուրքիան երկու անգամ /2000 թ.-ին և 2001 թ.-ին/ Վրաստանի հիմնական առևտրային գործընկերների շարքում զբաղեցրել է առաջին տեղը, ՌԴ-ն համապատասխանաբար 2002, 2003, 2004 և 2005 թթ.-երին: Բացի նշված երկրները, Վրաստանի արտաքին առևտրային շրջանառության մեջ թվարկված տարիներին շոշափելի տեղ են զբաղեցրել Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ուկրաինան, Ադրբեջանը: Կապված Ղազախստանի շահագրգռվածության և այդ երկրի կողմից ձեռնարկված կոնկրետ քայլերի հետ, կարելի է կանխատեսել, որ ոչ հեռու ապագայում, վերջինս նույնպես կարող է դառնալ Վրաստանի հիմնական առևտրային գործընկերներից մեկը: Ստորև բերվում է աղյուսակ, որն արտացոլում է տվյալներ 2006 թ.-ին Վրաստանի հիմնական առևտրային գործընկերների մասին:

Վրաստանի հիմնական առևտրային գործընկերները 2006 թ.-ին[22]

	հունվար-դեկտեմբեր 2006 թ.				
	արտահանումը (FOB)	ներկրումը (CIF)	հաշվեկշիռը	ընդամենը	ապրանքաշրջ. %
Թուրքիա	124960.4	522982.2	-398021.8	647942.6	13.9
Ռուսաստան	75664.8	561723.6	-486058.8	637388.4	13.6
Անդրբեջան	92355.1	318485.9	-226130.8	410841.0	8.8
Գերմանիա	45645.2	351152.7	-305507.5	396797.9	8.5
Ուկրաինա	56956.8	320093.0	-263136.2	377049.8	8.1
ԱՄՆ	58864.1	129608.6	-70744.5	188472.7	4.0
Բուլղարիա	62307.6	115535.7	-53228.1	177843.3	3.8
Թուրքմենիա	71808.9	101061.5	-29252.6	172870.4	3.7
ՍՍՏ	22877.5	109124.1	-86246.6	132001.6	2.8
Իտալիա	24048.0	102097.8	-78049.8	126145.8	2.7
Ընդամենը	635488.4	2631865.1	-1996376.7	3267353.5	-
Առաջին առևտրային շրջանառությունը, ընդամենը	993053.5	3681229.5	-2688176.0	4674283.0	100.0
Տեսակարար կշիռը, %	64.0	71.5	74.3	69.9	-

Այն ներկայացվում է, որովհետև վրացական առևտրատնտեսական գործընկերների զբաղեցրած տեղերի մասին տվյալները առավել բնորոշ են հանդիսանում անցած 5-7 տարիների ընթացքում Վրաստանի արտաքին առևտրի ամբողջ դինամիկայի համար:

Ինչպես արդեն նշվել էր, 2007 թ.-ին Վրաստանի հիմնական առևտրային գործընկերների շարքում Թուրքիան կրկին առաջին տեղը զբաղեցրեց: Վրաստանի տնտեսական զարգացման նախարարության վիճակագրության դեպարտամենտի տվյալները պարունակում են հետևյալ պատկերը. 2007 թ.-ի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում Վրաստանի արտաքին առևտրային շրջանառությունը ընդամենը կազմել է 5 մլրդ. 627,0 մլն. դոլար /առանց չկազմակերպված առևտրի հաշվառման/, ինչը 37,2 %-ով ավելի է 2006 թ.-ի միևնույն ժամանակահատվածի նկատմամբ: Արտահանումը կազմել է 1 մլրդ. 115,7 մլն. դոլար, իսկ ներկրումը 4 մլրդ. 511,3 մլն. դոլար, Վրաստանի բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 3 մլրդ. 395,6 մլն. դոլար, ինչը 960,6 մլն. դոլարով ավելին է, քան նախորդ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներինը: Թուրքիայի հետ Վրաստանի արտաքին առևտրային շրջանառությունը կազմել է 781,2 մլն. դոլար, իսկ ՌԴ-ի հետ 574,4 մլն. դոլար: Վրաստանի արտահանման կառուցվածքում առաջին տեղը զբաղեցնում են երկաթի համաձուլվածքները, որոնց արտահանման արժեքը կազմել է 138,8 մլն. դոլար, երկրորդ տեղում սև մետաղների ջարդոնն է, որը 2007 թ.-ի հունվար-նոյեմբեր ամիսներին արտահանվել է 89,6 մլն. դոլարի, իսկ երրորդ տեղում պղնձի հանքայնքն ու խտանյութը, որոնք նշված ժամանակահատվածում արտահանվել են 79,2 մլն. դոլար արժողությամբ: Ներկրման կառուցվածքում հիմնական տեղը զբաղեցրել են նավթը, նավթամթերքը, մարդատար ավտոմեքենաները, բնական գազը և այլն[23]: Սակայն, չնայած առևտրային շրջանառության նման աճին, արտաքին առևտրի շրջանառության բացասական սալդոյի ցուցանիշները էլ ավելի ավելացել են նախորդ 2006 թ.-ի համեմատությամբ: Տնտեսագետ Ա. Եղիազարյանը վերլուծելով 2006 թ.-ին Վրաստանի արտաքին առևտրի շրջանառության ծավալների ցուցանիշները, երբ Վրաստանի արտաքին առևտրային շրջանառությունը նույնպես ուներ բացասական հաշվեկշիռ, նշել է. «Դրանք վերջին տարիների ընթացքում գրանցված վատթարագույն ցուցանիշներն են...չհամակշռված արտաքին առևտուրը և դրա աճող բացասական հաշվեկշիռը հանդիսանում է մակրոտնտեսական թիսկի հիմնական աղբյուրներից մեկը... հարկ է նշել, որ թվարկված որոշ հոդվածների դինամիկայում արդեն դիտվում են կրճատման միտումներ, իսկ այլ արտահանման ապրանքների ծավալները պարզապես մոտենում են իրենց հնարավոր նվազագույն մակարդակին»[24]: Ինչպես երևում է բերված վիճակագրական տվյալներից, նույն տարում բացասական հաշվեկշիռը էլ ավելի է աճել, իսկ դա նշանակում է, որ վրացական շուկան արդեն այսօր բառացիորեն գերհագեցված է մի շարք ապրանքներով, այդ թվում նաև թուրքական արտադրողների ապրանքներով: Տվյալ հանգամանքը մատնանշում է այն փաստը, որ զուտ առևտրատնտեսական չափման մեջ դա ավելի շահավետ է Թուրքիային, քան վրացական կողմին:

Վրաստանի արտաքին առևտրային շրջանառության մեջ Թուրքիայի հայտնվելը առաջին տեղում փորձագետները գլխավորապես կապում էին վրաց-ռուսական հարաբերությունների վատացման և Ռուսաստանի կող-

մից 2006 թ.-ի մարտի 27-ից իր տարածք վրացական գինիների և հանքային ջրերի ներմուծման վրա դրված արգելափակման հետ, որոնք հանդիսանում էին Վրաստանի պետական բյուջեի համալրման էական աղբյուրներից մեկը: Այդ ժամանակ դեպի Ռուսաստան վրացական գինու ներմուծման ու իրացման վրա դրված արգելքը հանգեցրեց Վրաստանի գինու ոլորտի գրեթե լիարժեք կանգին, և որպես հետևանք երկրի արտաքին առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի էական աճին: Ըստ Վրաստանի գյուղատնտեսության նախարարության տվյալների, որոնք հաղորդվել են REGNUM տեղեկատվական-վերլուծական գործակալության կողմից, 2006 թ.-ի ընթացքում գինիների արտահանման ծավալները նվազել են առաջին եռամսյակի 9,490 մլն, լիտրից մինչև 1,535 մլն. լիտր երկրորդում: Արդյունքում 2006 թ.-ի առաջին կիսամյակում, Վրաստանի արտաքին առևտրի դեֆիցիտը կազմել է 1,579 մլրդ. դոլար՝ 2005 թ.-ի միևնույն ցուցանիշի համեմատությամբ ավելանալով 82,2 %-ով[25]: Վրացական ղեկավարությունը՝ տվյալ հարցը լուծելու և ոչ ռուսական շուկաներ մուտք գործելու իր ձգտման մեջ, տվյալ ուղղությամբ մի շարք ակտիվ քայլեր ձեռնարկեց: Վրացական գինու մատակարարման հարցի շուրջ բանակցություններ տարվեցին ամենուրեք. եվրոպական երկրներում, Լատվիայում, Ղազախստանում և այլն: Սակայն, մի շարք դեպքերում՝ անբավարար արդյունավետությամբ: Դրանից ոչ շատ անց տեղեկություններ հայտնվեցին այն մասին, որ Թուրքիայի կառավարությունը քննարկում է Վրաստանի գինիների և գյուղատնտեսական այլ արտադրության նկատմամբ մաքսերի իջեցման հարցը:

2007 թ.-ի նոյեմբերի 14-ին, Վրաստանի այն ժամանակվա վարչապետ Զ. Նողաիդելին վրաց-թուրքական հետագա համագործակցության հեռանկարների հարցի շուրջ թուրքական կառավարության հետ բանակցությունների նպատակով ուղևորվեց Թուրքիա, իսկ արդեն 2007 թ.-ի նոյեմբերի 21-ին Վրաստանի և Թուրքիայի միջև կնքվեցին արդեն վաղուց նախապատրաստվող համաձայնագրեր «Ազատ առևտրի մասին» և «Կրկնակի հարկումից խուսափելու մասին»: Փաստաթղթերի ստորագրման արարողությունը տեղի ունեցավ Թբիլիսիում անցկացվող վրաց-թուրքական բիզնես-ֆորումի շրջանակներում երկու երկրների նախագահներ Մ. Սահակաշվիլու և Ա. Գյուլի մասնակցությամբ: Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Ազմանը նշեց, որ ստորագրված համաձայնագրերը կնպաստեն երկկողմանի տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանը: «Վրաստանը և Թուրքիան դեռևս ոչ քիչ մեծ նախագծերի իրականացման հեռանկարներ ունեն: Դա կարող է լինել նաև երկու երկրների տարածքներում ազատ առևտրային գոտիների ստեղծումը: Ես ուզում եմ խոստանալ մեր նախագահներին, որ վրաց-թուրքական առևտրային շրջանառությունը էլ ավելի կաճի և կգերազանցի 1 մլրդ. դոլարը»[26]: Մեկնաբանելով այս համաձայնագիրը, նախագահ Մ. Սահակաշվիլին հայտարարեց բառացիորեն հետևյալը. «Թուրքիայի հետ ազատ առևտրի մասին այսօր ստորագրված պայմանագիրը նշանակում է, որ ոչ միայն կաճի ներկրումը Թուրքիայից, այլև կաճի վրաց·կան արտադրանքի արտահանումը Թուրքիա, օրինակ՝ գինիներ...2007 թ.-ին Վրաստանի ավելի քան 800 հազ. բնակիչներ են հատել վրաց-թուրքական սահմանը, և դա խիստ կարևոր փոփոխություն է աշխարհաքաղաքական կողմնորոշման մեջ»[27]: Ազատ առևտրի մասին համաձայնագիրը նախատեսում է արդյունաբերական ապրանքների առևտրի

լրիվ ազատականացում և լուրջ արտոնություններ գյուղատնտեսության ոլորտում: Մասնավորապես, 70-տոկոսանոց մաքսային տուրքի դիմաց, դեպի Թուրքիա տարեկան 1 250 000 շիշ վրացական գինու արտահանումը կունենա զրոյական հարկում: Դեպի Թուրքիա տարեկան 4 հազ. տոննա ցիտրուսայինների /մանդարին և նարինջ/ արտահանման 54-տոկոսանոց սակագնային հարկման փոխարեն ևս կկիրառվի զրոյական հարկում: 60-տոկոսանոց սակագնի փոխարեն զրոյական հարկում կկիրառվի նաև դեպի Թուրքիա 2 հազ. տոննա խնձորի արտահանման վրա: 58,5-տոկոսանոց սակագնի փոխարեն 4 հազ. տոննա տարեկան մրգահյութի արտահանման վրա կկիրառվի 20,5-տոկոսանոց հարկում: Միևնույն ժամանակ, Վրաստանը ազատ առևտրի ռեժիմ է ներմուծել հետևյալ ապրանքները. կաթ, սերուցք, լոլիկ, ցիտրուսներ, բնական մեղր, ընկուզեղեն, խաղող, խնձոր, թեյ, բանջարեղենի պահածոներ, ծխախոտի հումք, սիգարետներ և այլն: Տվյալ արտադրանքը Վրաստան ներմուծման ժամանակ արտոնյալ հարկային ռեժիմները չեն կիրառվելու[28]: Սակայն, հարկ է նշել, որ Թուրքիայի կողմից նման արտոնությունների ներդրման որոշումը ավելի շուտ թելադրված է քաղաքական, և ոչ թե տնտեսական բնույթի մոտիվներով, հատկապես, վերջերս նկատվող վրաց-ռուսական հարաբերությունների վատթարացման լույսի ներքո: Նեկայումս, համաձայն բազմիցս արված համատեղ հայտարարությունների, երկու կողմերից պլանավորվում է էլ ավելի ավելացնել ապրանքային շրջանառությունը, որն ըստ իրենց մտադրության պետք է հասնի 2 մլրդ. դոլարի:

Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ասպեկտները: Վերջին որոշ իրադարձությունների ընդհանուր բնութագիրը:

1990-ական թվականների կեսերից, կասպիական ածխաջրածինների հետ կապված «բումից» ի վեր, Վրաստանին էլ ավելի էական դերակատարություն հատկացվեց որպես Արևելքի և Արևմուտքի միջև կապող օղակ: Չխորանալով համընդհանուր հայտնի դրույթների շարադրման մեջ, նշենք, որ այդ ժամանակահատվածում վրացական փորձագետների ձայները, որոնք կասկածի տակ էին դնում հայտնի նախագծերի իրացումից ստացվող անմահաբեկ շահույթները, գործնականում լռեցվում էին: Հակառակը, ինչպես Վրաստանի դեկավարության, այնպես էլ Վրաստանի փորձագիտական հանրության զգալի մասի կողմից սկսվեց դրական նշանակություն տրվել երկիրը ագրարային-արդյունաբերականից տրանսպորտային-սերվիսայինի վերափոխելու հարցին: Այսպես, Ս.Չադունելին գրում էր «Եթե կասպիական «ոսկին» անցնի Վրաստանով, ապա դա երաշխիք կդառնա այն բանի համար, որ հաջորդ հազարամյակում կայունության մակարդակով Կովկասը կմոտենա Շվեյցարիային: Խիստ տարակուսելի է, որ արևմտյան խոշոր ընկերությունները, որոնք գործում են իրենց պետական կառույցների հովանու ներքո, այս տարածաշրջանում թույլ կտան անկայունության որևէ առաջացում, դրանով իսկ կորցնելով հսկայական եկամուտներ: Նման իրավիճակը պոտենցիալ առումով մեծ հեռանկարներ է խոստանում Վրաստանին: Քանի որ այդ դեպքում Արևմուտքը կվերածվի Վրաստանի զորավոր կուրատորի»[29]: Սակայն, ԲԹԶ և ԲԹԷ նախագծերի

իրացումից հետո /ըստ էության այդ խողովակաշարերի կառուցումից ու ընթացքի մեջ դնելուց հետո/, ի հայտ եկան մի շարք դժվարություններ, որոնք կապված են ինչպես օբյեկտիվ պատճառների, այնպես էլ տարածաշրջանում տեղի ունեցած որոշ աշխարհաքաղաքական ձևափոխումների հետ: Այսպես, 2007 թ.-ի մայիսի 11-ին Թուրքմենբաշիում տեղի ունեցավ կարևոր իրադարձություն. ՈԴ-ի, Ղազախստանի և Թուրքմենստանի միջև ստորագրվեց համատեղ «Հռչակագիր Մերձկասպյան գազամուղի շինարարության մասին»: Գազամուղը պլանավորվում է անցկացնել Կասպից ծովի թուրքմենական ափի երկայնքով և այն համակցել ռուս-ղազախական սահմանին մոտ Ալեքսանդրով Գայ բնակատեղի շրջանում գոյություն ունեցող Միջին Ասիա - Կենտրոն գազամուղին: Շինարարությունը պլանավորվում է սկսել 2008 թ.-ի երկրորդ կեսին: Չնայած դազախական և թուրքմենական պաշտոնատար անձինք խոսում էին այն մասին, որ այս նախագծի ստորագրումը ոչ մի կերպ չի խանգարում ԲԹՋ և ԲԹԷ նախագծերին իրենց երկրների մասնակցությանը, սակայն փորձագետների կողմից լուրջ կասկածներ են հայտնվում, որ Մերձկասպյան նախագծում մասնակցության մասին պայմանագրի վերջնական ձևակերպումից հետո, վերոնշյալ երկրների մոտ միջնաժամկետ հեռանկարում գազի /Թուրքմենստան/ և նավթի /Ղազախստան/ ազատ ծավալներ կմնան ԲԹՋ-ին և ԲԹԷ-ին մասնակցելու համար: Իսկ առանց տվյալ երկրներից ածխաջրածինների մատակարարման այդ խողովակաշարերը կարող են ոչ շահութաբեր դառնալ: Ամեն դեպքում, Վրաստանը իր տարանցիկ գործառույթից դեռևս «ոսկե սարեր» չի ստացել: Ավելին, նա բախվել է Թուրքիայի և Ադրբեջանի բավական պրագմատիկ դիրքորոշումների հետ: Այսպես, Թուրքիան բավական անհանգստացած էր Վրաստանից Ուկրաինա, որպես Անդրկասպյան խողովակաշարի շարունակություն Սև ծովի հատակով, միջինասիական գազը դեպի Եվրոպա տեղափոխելու նախագծի կյանքի կոչման գաղափարից: Ուստի, միջազգային փորձագիտական մի շարք հանդիպումների ժամանակ, թուրքական ներկայացուցիչները կամ նրանց շահերը ներկայացնող արտասահմանյան լոբբիստները GUEM /Վրաստան-Ուկրաինա-Եվրոպա/ նախագծի իրականացման դեմ առաջ էին քաշում տարբեր առարկություններ, ընդ որում գլխավոր փաստարկը հանդիսանում էր դրա թանկությունը, ինչպես նաև դրա անցումը սեյսմիկ առումով վտանգավոր Սև ծովի գոտիով: Սակայն, Թուրքիայի կողմից այս նախագծի իրացմանը ակտիվ հակադրման իրական պատճառները, ըստ մի շարք փորձագետների, կայանում էին այն, որ Թուրքիան ցանկանում է միայն իրենով պարփակել բոլոր տարանցիկ հոսքերը, և դրանով իսկ վերածվել հիմնական հաղորդակցական օղակի Արևմուտքի ու Արևելքի միջև: Հաղորդակցական նախագծերում Թուրքիայի գերակայության ձգտումն էլ ավելի շատ դրսևորվեց ԿԱՏԲ-ի հարցում: Թեև այս առթիվ առաջին բանակցությունները ընթացել են դեռ 1993 թ.-ի հուլիսի 28-29-ին Թուրքիայում, սակայն միայն 2007 թ.-ի փետրվարի 7-ին, թբիլիսյան հանդիպման ժամանակ, երբ երեք երկրների առաջնորդները ընդունեցին «Հռչակագիր տարածաշրջանային համագործակցության միասնական վարման մասին», հայտարարվեց նախագծի իրականացման սկիզբը: Այն, որ տվյալ նախագիծն առաջին հերթին համապատասխանում էր ոչ թե Վրաստանի, այլ Թուրքիայի շահերին, մատնանշում էին տարբերական տնտեսական հաշվարկները: Այսպես, տնտեսագետ

Ն. Օրավելաշվիլին նշում էր, որ «Վրացական երկաթուղիների թողունակությունը մինչև նավահանգիստներ 18 մլն. տոննա է: Դա մեր նավահանգիստների լրիվ ծանրաբեռնվածությունն է: ԿԱՏԲ-ի թողունակությունը 15 մլն. տոննա է: Այս տվյալների հաշվառումով ստացվում է, որ եթե բեռներն ուղարկվեն նոր երկաթուղով, ապա Փոթիի և Բաթումիի նավահանգիստները կգրկվեն բեռնափոխադրումների զգալի մասնաբաժնից»[30]: Այսպիսով, այս նախագծից ուղղակի շահույթ է ստանում Զեյհան նավահանգիստը /Թուրքիա/, իսկ Վրաստանի սևծովյան նավահանգիստները /Փոթի և Բաթումի/ միջնաժամկետ հեռանկարում կարող են զրկվել իրենց շահույթների մի մասից: Բացի այդ, բեռնահոսքերի ուղղումը դեպի թուրքական միջերկրածովային նավահանգիստները կարող է ունենալ նաև զուտ քաղաքական նշանակություն: Այն է, Վրաստանի առջև կհառնի կեղծ տարանցման ուղու վերածվելու լիովին իրատեսական վտանգ: Այս հարցում ցուցադրական էր նաև ԱՄՆ –ի դիրքորոշումը, որը հրաժարվել է ֆինանսավորել նշված նախագիծը, որպես Հայաստանին շրջանցող նախագիծ: Ադրբեջանը նույնպես պրագմատիզմ դրսևորեց որոշելով Վրաստանի համար թանկացնել սեփական ադրբեջանական գազը: Այս խնդրի շուրջ երկկողմանի բանակցությունները անցած տարի ոչնչի չհանգեցրին: Իսկ արդեն 2007 թ.-ի նոյեմբերի 20-ին, Ադրբեջանի առաջին փոխվարչապետ Յա. Էյուբովը հայտարարեց, որ ԳՆԿԱՌ-ը դադարեցրել է սեփական գազի մատակարարումը Վրաստան. «Այսօր այդ երկիրը Ադրբեջանից գազ ստանում է միայն «Շահ-Դենիզ» հանքավայրից, որը մշակվում է միջազգային կոնսորցիումի կողմից: Սեփական գազի մատակարարումը Ադրբեջանի կողմից դադարեցվել է այն պատճառով, որ երկիրը սպասվածից քիչ ծավալների տարանցիկ գազ կստանա Ազերի-Չիրագ-Գյունեշլի բլոկից և «Շահ-Դենիզ» հանքավայրից: 2008 թ.-ին դեռևս պլանավորվում է գազ մատակարարել Վրաստանին միայն «Շահ-Դենիզ» հանքավայրից: Ադրբեջանական սեփական գազի մատակարարումը կախված է BP ընկերությունից ստացված ծավալներից»[31]: Իսկ ինչ վերաբերում է արդեն իսկ իրացված նախագծերից ստացված շահույթին, ապա մոտ ժամանակները նավթի և գազի տարանցման համար Վրաստանի բյուջեի միագումար եկամուտները դժվար թե գերազանցեն 60-70 մլն. դոլարը:

Եզրափակում

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ թուրքական ներխուժումը Վրաստան ամենևին անվնաս չէ և չի բացառվում զուտ տնտեսական շահերով: Տնտեսական տեսանկյունից դիտարկելիս, Վրաստանի համար ևս ամբողջովին անվտանգ չէ Թուրքիայի հետ առանց ետ նայելու տնտեսական հարաբերությունների զարգացումը: Դատելով առկա տվյալներից, հարկ է ընդունել, որ ոչ աճող թուրքական ներդրումները, ոչ Վրաստանի արտաքին առևտրային շրջանառության մեջ Թուրքիայի արտահանման մասնաբաժնի ավելացումը, դեռևս չեն նպաստել վրացական տնտեսության շոշափելի զարգացմանը, այլ հակառակը, իրենց դերն են կատարել ամեն տարի աճող Վրաստանի արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի ավելացման մեջ: Ավելին, գլխավոր վտանգներից մեկն այն է, որ թուրքական տնտեսա-

կան էքսպանսիան կարող է հանգեցնել երկկողմանի առևտրային շրջանառության մեջ Վրաստանի արտահանման բաժնեմասի հետագա կրճատմանը: Արդեն այսօր Վրաստանի ներքին շուկան գերհագեցած է թուրքական էժան ապրանքներով: Թուրքական կողմը Վրաստանը առաջին հերթին դիտարկվում է որպես սպառման շուկա, ուստի և Վրաստանի արտահանման ավելացմանը նպաստելը այնքան էլ չի մտնում Թուրքիայի օրգարերի մեջ: Վրաստանի արտահանման վերկողմնորոշման հիմնախնդիրը կամ արտահանման ապրանքների այլ հոդվածներին նշանակություն տալը հանդիսանում է մի խնդիր, որը դժվար լուծելի է նույնիսկ միջազգային խոշոր դերակատարների համար: Վրաց-թուրքական տնտեսական համագործակցության բացասական կողմերը դեռևս կրում են ծպտյալ բնույթ և ոչ այնքան բացահայտ են դրսևորվում /թերևս միայն այն, որ վերջին տարիների ընթացքում թուրքական ներկրումը գրեթե երկու անգամ գերազանցում է վրացական արտահանմանը/: Առավել ակնառու դրանք դրսևորվել են առայժմ ԿԱՏԲ-ի օրինակով, որը Վրաստանի համար անշահավետ գտնվեց, և կարող է այն վերածել կեղծ տարանցիկ երկրի:

1998 թ.-ի մարտին Վրաստան կատարած այցի ժամանակ Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ Յըլմազը նշել է, որ «Թուրքիան և Վրաստանն ունեն միևնույն շահերը»[32]: Սակայն, ժամանակը ցույց տվեց, որ Թուրքիան ունի իր սեփական շահերը և դրանցով առաջնորդվելով չի հրաժարվել տարածաշրջանում իր քաղաքական ազդեցության ամրապնդման ձգտումից, այդ թվում նաև, տնտեսության օգնությամբ:

1.Копылов В. К вопросу о политике Турции в Закавказье. Ближний Восток и Современность. Вып.13., М. 2002, С.51.

2.Кантемиров А. Экономические отношения Турции со странами Закавказья. Востоковедный сборник. Вып.2., М.2001, С.169.

3.Турция между Европой и Азией, М.,2001, С.427. Թուրքիայի քաղաքականությունը այն ժամանակ բնութագրվում էր /թերևս այժմ նույնպես/ ռուսական ազդեցության ոլորտից դուրս բերման նպատակով մի շարք նորանկախ պետությունների աջակցությամբ: Այսպես, այդ առթիվ Ն. Ուսլուն ասել է, որ «Թուրքիայի գլխավոր խնդիրը տարածաշրջանում հանդիսանում է նոր ինքնավար պետությունների տնտեսական ու քաղաքական անկախության աջակցությունը, նրա համար, որպեսզի հավասարակշռվի Ռուսաստանի ուժն ու ազդեցությունը»: Տես Nasuh Uslu. The Russian, Caucasian and Central Asian Aspects of Turkish Foreign Policy in the Post Cold War Period.// Alternatives: Turkish Journal of International Relations, Vol.2, No 3&4, Fall&Winter, 2003, p.171.

4.Commercial Councelor of Turkey Speaks of Progress in Turkish-Georgian Business Ties. http://www.geotimes.ge.13.02.2007.

5.Егиазарян А. Грузия: структурные проблемы экономики и турецкая экономическая экспансия (1994-2007). Ереван; Москва, 2007, С.61-64.

6.Serkan Yalcin. Turkish Investments in Georgia and Azerbaijan Recent Trends and Future Prospects.http://www.caucaz.com.03.09.2006. Ինչ վերաբերում է վրացական ռազմական օբյեկտների շինարարությանը թուրքական մասնակցությանը, ապա բացի Մարնեուլիի օդանավակայանի արդիականացումը, կարելի է նաև մի շարք օրինակներ բերել: Այսպես, 2005 թ.-ի նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ Սենա-

կիում ռազմական հենակայանի բացման արարողությունը, իսկ 2006 թ.-ի հուլիսի 5-ին նոր ռազմական հենակետ բացվեց Գորիում: Երկու դեպքում էլ շինարարական աշխատանքները կատարում էր վրաց-թուրքական ընկերությունը International Building Company. Այդ մասին տես Վրաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական կայքի նորությունների արխիվը http://www.mod.gov.ge.

7.http://www.turkishdailynews.com.26.05.2006.

8. http://www.interfax.ru. 06.05.2006.

9.Гюль и Саакашвили открыли международный аэропорт в Батуми. .

10.При поддержке «Администрации международного сотрудничества Турции» завершилась реабилитация 170 школ Грузии.

http:// www.turtsia.ru. 28.11.2006.

11.http://www.civil.ge.12.08.2004.

12.http://www.adjara.gov.ge.10.06.2006. Այն, որ արտաքին տնտեսական կապերը Թուրքիայի համար հանդիսանում են հետխորհրդային տարածքում իր քաղաքական ազդեցության ընդլայնման էական տարրերից մեկը և հետագայում «նուրբ» գերակայության հնարավորությունը, առավել ակնառու բնութագրում են նրա գործողությունները, որոնք ուղղված են բազմաթիվ մզկիթների կառուցմանը և իր նպատակների համար կրոնական գործոնի օգտագործման փորձերին: Շինարարությունը որպես կանոն իրականացվում է անանուն նվիրաբերությունների հաշվին, փաստաթղթերը չեն պահպանվում, իսկ ազդեցությունը մի շարք դեպքերում աճում է: Ոչ մի տնտեսական վիճակագրական հաշվետվության մեջ այդ թվերը չեն հանդիպի և չեն շրջանառվի: Սակայն, դրանք կարելի է բնութագրել նաև որպես «ֆիլտրարված» ներդրումներ: Առավել բնութագրական էր դա Աջարիայի պարագայում, որի բնակչության զգալի մասը կազմում են մահմեդականները: Թեև, ինչպես արդեն նշվել էր, պաշտոնական վիճակագրական տվյալներ չկան, սակայն, հիմնվելով Աջարիայի մուֆտի Բ. Բելկվածեի խոսքերի վրա, կարելի է տեսնել, որ վերջին տարիներին Աջարիայում տեղի է ունեցել մզկիթների կառուցման իսկական բում /նրա խոսքերով, վերջին տարիներին կառուցվել է 137 մզկիթ/: Տես Аджарские мусульмане в политику не вмешиваются http:www.ccrgchouse.ge/gazeti/9/3/htm.

13.http://www.newsgeorgia.ru.31.10.2007.

14.В Аджарии откроются швейные фабрики.

http://www. apsny.ge. 26.05.2007.

15. http://www.geotimes.ge.13.02.2007.

16.Турецкие бизнесмены планируют увеличить объем капиталовложений в Грузию до $1 млрд. http://www.regnum.ru. 12.10.2006.

17.Турецкая компания построит в армянонаселенном регионе Грузии новую ГЭС. http://www.regnum.ru.29.05.2007.

18.Turkey and Georgia pledge closed cooperation.

http://www.turkishweekly.net.17.03.2006.

19.Տես Ministry of Economic Development of Georgia Department of Statistics, Statistical Yearbook of Georgia, 2000,2001,2002,2003,2004,2005:

http://www.statistics.ge

20.Տես Undersecretariat of the Prime Ministry for Foreign Trade.

http://www.treasury.gov.tr.

21.Տես Foreign Investment Statistics. Turkish Treasury.

http:\\www.hazine.gov.tr./stat'gabser/sermage_ihrasi.xls.

22.Егиазарян А. Основные итоги социально-экономического развития Азербайджана, Армении и Грузии в 2006г. http: //www.regnum.ru.24.05.2007.

23. Տես Վրաստանի տնտեսական զարգացման նախարարության վիճակագրության դեպարտամենտի պաշտոնական կայքը -http://www.statistics.ge.

24.Егиазарян А. Основные итоги социально-экономического развития Азербайджана, Армении и Грузии в 2006г. http: //www.regnum.ru.24.05.2007.

25. http: //www.regnum.ru. 22.07.2006.

26. http://www.newsgeorgia.ru.21.11.2007.

27. http: //www. abkhazeti.ru.21.11.2007.

28. Текст соглашения – см. на официальном сайте минэкономразвития Грузии: Agreement on free trade cooperation between Georgia and Turkey signed.http: //www.economy.ge.21.11.2007.

29.Sandro Chaduneli. Oil Fever.//The Georgian Times, 13 May, 1997.

30.http: // www.expert.ru. 12.02.2007.

31.http: // www.regnum.ru.20.11.2007.

32.Manos Karagiannis. The Turkish-Georgian Relationship and the Transportation of Azerbaijani Oil // Caspian Crossroads Magazine / Volume 4, Issue No. 1, Summer/ Fall 1998.

Թուրքիա-Չինաստան առևտրատնտեսական հարաբերությունների շուրջ

Լևոն Հովսեփյան

Թուրք-չինական տնտեսական համագործակցության հիմնավորվածությունը

2005 թ. Թուրքիայի կառավարության Արտաքին առևտրի վարչությունն ընդունեց Ասիական-խաղաղօվկիանոսյան երկրների հետ առևտրական և տնտեսական հարաբերությունների զարգացման ռազմավարությունը, որով այդ տարածաշրջանը դիտվում է որպես թուրքական առևտրատնտեսական հարաբերությունների կարևոր ուղղություն: Հիմնական նպատակն է 2010 թ. այդ տարածաշրջանի երկրներ թուրքական արտահանման ծավալները հասցնել 7.5-8 մլրդ դոլարի՝ ներկայիս 2 մլրդի փոխարեն[1]: Թուրքիան Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ իր հարաբերություններում առաջին հերթին ամրապնդում է առևտրատնտեսական հարաբերությունները Չինաստանի հետ: Թուրքիայի առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտում 2006 թ. սկսած այդ տարածաշրջանում Չինաստանը դարձել է Թուրքիայի խոշոր առևտրատնտեսական գործընկերը: Չինաստանի հետ Թուրքիայի վստահ եւ կայուն հարաբերությունները հնարավորություն կտան դառնալու այդ երկրի կայուն գործընկերը՝ Չինաստանի համար հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջաններում: Կենտրոնական Ասիայի, Մերձավոր եւ Միջին Արևելքի տարածաշրջանների նկատմամբ Չինաստանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հավակնությունների պայմաններում, Թուրքիան, որպես այդ տարածաշրջաններում քաղաքական և տնտեսական, ինչպես նաև անվտանգության ոլորտում ազդեցիկ դեր ստանձնած երկիր, ավելի մեծ նշանակություն ձեռք կբերի Չինաստանի համար, ինչն էլ իր հերթին ավելի կմեծացնի Թուրքիայի աշխարհատնտեսական կարևորությունը: Բացի այդ թուրք-չինական տնտեսական հարաբերությունները էլ ավելի կբարձրացնեն Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրների հետ Թուրքիայի առևտրատնտեսական հարաբերությունների մակարդակը[2]: Երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների համատեքստում Թուրքիան կարող է Չինաստանի համար հանդես գալ որպես յուրահատուկ տարանցիկ խաչմերուկ՝ դեպի Եվրոպա և Մերձավոր Արևելքի երկրներ, իսկ Չինաստանի միջոցով Թուրքիան կարող է ամրապնդել իր առևտրատնտեսական կապերը Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ:

Երկկողմ քաղաքական և տնտեսական հարաբերությունների մակարդակում Չինաստանը Թուրքիայի համար հետաքրքրություն է ներկայացնում մի քանի առումներով.

1.Չինաստանի քաղաքական ազդեցիկ դերը միջազգային հարաբերություններում (Չինաստանը հանդիսանում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամներից մեկը, այն 2030-2050 թթ. համաշխարհային գերտերություն դառնալու հնարավորություն ունի)

2. Առևտրատնտեսական գործոն (Չինաստանը աշխարհի խոշոր առևտրային 3-րդ և տնտեսական հզորությամբ 6-րդ երկիրն է)

3. Քրդական անջատողականության և Հյուսիսային Կիպրոսի հարցերը, որում Թուրքիան ցանկանում է ստանալ Չինաստանի աջակցությունը միջազգային հարթության վրա

4. Ռազմական արդյունաբերության և նորագույն տեխնոլոգիաների ոլորտում համագործակցություն

5. Թուրքիայի տնտեսական ենթակառուցվածքներում չինական ներդրումների ծավալի մեծացում, նորագույն տեխնոլոգիաների ներդրում տնտեսական համակարգում:

Չինաստանի հետաքրքրությունները Թուրքիայի նկատմամբ.

1.Թուրքիայի աշխարհառազմավարական դիրքը՝ Եվրոպա և Մերձավոր Արևելք ներթափանցելու համար

2. Թուրքական ներքին տնտեսական շուկայում ազդեցության մեծացումը

3.Չինաստանի հյուսիս-արևմտյան տարածաշրջանում անջատողականության և կայունության պահպանման գործում Թուրքիայի աջակցությունը[3]:

1971 թվականին հաստատելով դիվանագիտական հարաբերություններ՝ սկսեցին քայլեր ձեռնարկվել նաև երկկողմ տնտեսական համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ: Առևտրատնտեսական հարաբերությունների ոլորտում Թուրքիայի եւ Չինաստանի միջև 1974 թ. ստորագրվեցին Առևտրային, իսկ 1981 թ. Տնտեսական, արդյունաբերական և տեխնիկական համագործակցության մասին պայմանագրերը, ինչպես նաև Առևտրի մասին արձանագրությունը, որոնք իրավական հիմք ստեղծեցին երկկողմ տնտեսական համագործակցության ոլորտում[4]:

1994թ. ստորագրվեց Ներդրումների խրախուսման և պաշտպանության, 1997թ. Երկակի հարկումից խուսափելու մասին պայմանագրերը: Քայլեր կատարվեցին նաև առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը նպաստելու մի շարք կազմակերպությունների ստեղծման աշխատանքների ուղղությամբ: 1982թ. դեկտեմբերին, Պեկինում անցկացված Տնտեսական, արդյունաբերական և տեխնիկական համագործակցության թուրք-չինական միացյալ կոմիտեի համապատասխան որոշմամբ, հիմնադրվեց Թուրք-չինական տնտեսական և առևտրային միացյալ կոմիտեն, որը 1982թ. մինչև 2007թ. Պեկինում և Անկարայում գումարվել է 15 անգամ: Հետագայում, առևտրատնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով, 1992թ. Թուրքիայի Արտաքին տնտեսական հարաբերությունների կոմիտեի (DEIK) և Չինաստանի Միջազգային առևտրի խրախուսման խորհրդի (CCPIT) կողմից հիմնադրվեց Թուրք-չինական առևտրային խորհուրդը[5]: Փաստորեն երկու երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման համար ստեղծվեցին իրավապայմանագրային համապատասխան բազա և մի շարք հատուկ կառույցներ:

Երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ոլորտները

Թուրք-չինական տնտեսական հարաբերությունների մեջ գերակշիռ մասնաբաժինը պատկանում է առևտրաշրջանառությանը, ինչը գրանցել է արագ զարգացման տեմպեր: Երկկողմ առևտրաշրջանառությունը 1990 թ. կազմել է 283.5 մլն դոլար, որտեղ թուրքական արտահանման ծավալը եղել է ընդամենը 37.2 մլն դոլար: Եթե 1990 թ. առևտրի ծավալը կազմել է 283 մլն դոլար, ապա 1999 թ. այն աճել է ավելի քան 3.3 անգամ, հասնելով՝

931.4 մլն-ի: Սակայն ողջ 90-ականներին գրանցվել է ընդհանուր առևտրի անհամաչափություն՝ ի հաշիվ չինական արտահանման ծավալների: Միայն 1992-1994 թթ. շուրջ 2.5 անգամ ավելացան թուրքական արտահանման ծավալները՝ գերազանցելով ներկրման ցուցանիշը, 1993 թ. հասնելով 511 մլն դոլարի[6] (Աղյուսակ 1): Թուրքական արտահանման ծավալների կտրուկ աճը պայմանավորված է եղել չինական բուռն զարգացող արդյունաբերության պահանջարկն ապահովելու գործոնով, քանի որ թուրքական արտահանման ապրանքները հիմնականում եղել են հանքային հանածոներ, մետաղներ և այլն: Միայն 1994 թ. թուրքական արտահանման ծավալում գերակշռել է երկաթի և պողպատի արտահանումը, որոնք կազմել են այդ թվականի արտահանման գրեթե 80 %-ը: Շնչին ծավալ են կազմել նաև երկկողմ ներդրումները: Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը 1995 թ. Չինաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ, Թուրքիային վերապահեց Չինաստանից մինչև Եվրոպա տարածվող «Մետաքսի ճանապարհի» կարևորագույն կամրջի դերը և երկկողմ տնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով առաջ քաշեց թեթև արդյունաբերության, կաշեգործության, հեռահաղորդակցության, ագրոարդյունաբերության եւ մի շարք ոլորտներում ներդրումների կամ համատեղ արտադրության նպատակահարմարության հարցը[7]:

Աղյուսակ 1

Թուրքիայի և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը
(մլն դոլար)

Թուրքիայի և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը (մլն դոլար)				
Տարի	Արտահանում	Ներկրում	Ծավալ	Բալանս
1990	37.2	246.3	283.5	-209.1
1991	20.4	171.8	192.2	-151.4
1992	144.2	172.4	316.6	-28.2
1993	511.9	255.2	767.1	-256.7
1994	354.8	257.8	612.6	+97.0
1995	67.0	539.0	605.9	-472.1
1996	65.1	551.3	616.4	-486.2
1997	44.4	787.5	831.9	-743.1
1998	38.0	846.1	884.1	-808.1
1999	36.6	894.8	931.4	-858.2

*Ըստ Թուրքիայի 8-րդ հնգամյա զարգացման պլանի արտաքին տնտեսական հարաբերությունների վերաբերյալ հատուկ հանձնաժողովի զեկույցի վիճակագրության: Տե՛ս Turkiyenin Dis Ekonomik Iliskileri Ozel Ihtisas Komisyonu Raporu, Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, T.C. Başbakanlık Devlet Planlama Teşkilatı Muştesarlığı, Yayın No: DPT: 2512-ÖIK:529, Ankara, 2000, s171.
http://www.ekutup.dpt.gov.tr

Երկկողմ առևտրաշրջանառության ծավալներն ավելացան 2000 թ. հետո՝ հասնելով 1 մլրդ դոլարի սահմանագիծը: Այդ ցուցանիշն արդեն 2004 թ. հասավ 4.867 մլն դոլարի՝ 2000թ. 1.440 մլն դոլարի փոխարեն: Նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն գերակշռել է թուրքական ներկրումը: Միայն 2004 թ. թուրքական արտահանումը կազմել է ընդհանուր առևտրաշրջանառության շուրջ 8.1%-ը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2000 թ. հետո երկկողմ առևտրաշրջանառության ծավալները զգալի աճ են ապահովել՝ նույն թվականի 1.440 մլն դոլարից 2006 թ. հասնելով ավելի քան 10.280 մլն դոլարի: Նշված ժամանակահատվածում թուրքական արտահանման և ներկրման ծավալներն ավելացել են ավելի քան 7 անգամ: 2006 թ. թուրքական ներկրման ընդհանուր ծավալը կազմել է 9.588 մլն, արտահանմանը՝ 693 մլն դոլար, ինչը մոտ 14 անգամ գիջում է ներկրման ցուցանիշին: Ներկրման ծավալների նման աճը պայմանավորված է ոչ միայն թուրքական ներքին շուկայի սպառման անհրաժեշտությամբ, այլ նաև որպես տարանցիկ գործառույթ իրականացնող երկիր հանդիսանալու հանգամանքով: Առևտրաշրջանառության արագ աճի տեմպերը ցույց են տալիս երկկողմ տնտեսական հետաքրքրությունները, որոնք հետագա պայմաններ են ապահովում ոչ միայն առևտրական հարաբերությունների, այլ նաև տնտեսական համատեղ փոխգործակցության զարգացման համար: 2006 թ. դրությամբ Չինաստանը դարձավ Թուրքիայի 7-րդ առևտրային գործընկերը և Թուրքիա արտահանման ծավալներով 4-րդ երկիրը Գերմանիայից, Ռուսաստանից և Իտալիայից հետո[8]:

Աղյուսակ 2

2000-2006 թթ. երկկողմ առևտրաշրջանառությունը
(1000 ԱՄՆ դոլար)

Տարի	Արտահանում	Թուրքիայի ընդհանուր արտահանման մասնաբաժինը (%)	Թուրքիայի ներմուծման ընդհանուր ծավալում մասնաբաժինը (%)	Ներկրում	Թուրքիայի ներմուծման ընդհանուր ծավալում մասնաբաժինը (%)	Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառության մասնաբաժինը (%)	Ծավալ	Հաշվեկշիռ
2000	96.010	0,35	0,04	1.344.731	2,48	0,54	1.440.741	-1.248.721
2001	199.373	0,64	0,09	925.620	2,24	0,35	1.124.993	-726.247
2002	268.229	0,74	0,10	1.368.317	2.65	0,42	1.636.546	-1.100.088
2003	504.626	1,07	0,12	2.610.298	3,77	0,60	3.114.924	-2.105.672
2004	391.585	0,62	0,07	4.476.077	4,58	0,75	4.867.662	-4.084.492
2005	549.764	0,75	0,08	6.885.400	5,89	0,89	7.435.164	-6.335.636
2006	693.038	0,81	0,09	9.588.249	6,98	0,99	10.281.287	-8.895.211

* Տվյալներն ըստ Թուրքիայի կառավարության Արտաքին առևտրի վարչության վիճակագրության, տես http:www.dtm.gov.tr

2002 թ. սկսած թուրքական արտահանման մեջ հիմնական մաս են կազմել երկաթն ու պողպատը, աղը, ծծմբային նյութերը, ցեմենտը, սինթետիկ արհեստական մանրաթելերը, մետաղական հանքաքարերը, նավերը և նավաշինական արտադրանքը, թուղթը և տարբեր ստվարաթղթերը, պլաստիկ նյութերը, օրգանական քիմիական նյութերը, պղինձը և այլ ապրանքներ[9]: Թուրքիայի մուտքը չինական շուկա հատկապես շահավետ էր ոսկերչական իրերի արտահանման առումով[10]:

Թուրքական ներկրման հիմնական ապրանքներն են էլեկտրոնային սարքավորումներն ու մեքենաները, արդյունաբերական կաթսաները և մեքենաները, հանքային վառելիքը, բամբակը, օրգանական քիմիական արտադրանքը, օպտիկական սարքերը, կենցաղային իրերը, խաղալիքները և այլն[11]:

Աղյուսակ 3

2003 թ. երկկողմ առևտրաշրջանառության հիմնական ապրանքները			
Արտահանում		Ներկրում	
Ապրանքներ	%	Ապրանքներ	%
երկաթ, պողպատ	49,8	էլեկտրոնային մեքենաներ	22,2
աղ, ծծմբային նյութեր, ցեմենտ	12,0	արդյունաբերական կաթսաներ և մեքենաներ	21,1
սինթետիկ արհեստական մանրաթելեր	8,4	օրգանական քիմիական արտադրանք	3,8
ավտոմեքենաների արտադրություն	8.3	բամբակ	3,3
պղինձ և պղնձե այլ ապրանքներ	3,7	խաղալիք	2,6
թուղթ և տարբեր ստվարաթղթեր	1,3	օպտիկական սարքեր	2,4
Այլ ապրանքներ	24.8	պլաստիկ նյութեր	2,4
		Այլ ապրանքներ	38.9

Թուրքիայի իշխանությունների համար մտահոգիչ էր երկկողմ առևտրում գրանցված անհավասարակշռությունը և տարբեր հանդիպումների ժամանակ նրանք փորձում էին քայլեր ձեռնարկել արտահանման-ներկրման առկա անհամաչափությունը հարթելու ուղղությամբ: 2002 թ. ապրիլին Թուրքիա այցելեց Չինաստանի վարչապետ Ժու Ռոնգին, որը Թուրքիայի վարչապետ էջևիթի հետ հանդիպման ժամանակ գոհունակություն հայտնեց երկկողմ զարգացող տնտեսական հարաբերությունների կապակցությամբ՝ նշելով, որ Չինաստանի կառավարությունը հետաքրքրված է թուրքական առևտրում առկա դեֆիցիտի հարցում և քայլեր է ձեռնարկում Թուրքիայից ներկրումներն ավելացնելու ուղղությամբ: Թուրքիայի վարչապետ էջևիթը բարձր գնահատեց երկկողմ տնտեսական հարաբերությունները՝ նշելով, որ Չինաստանի հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացումը թուրքական արտաքին քաղաքականության կարևոր բաղադրիչներից է: Այցի ընթացքում Թուրքիան և Չինաստանը ստորագրեցին 4 փաստաթուղթ՝ գյուղատնտեսության, մաքսային և տեղեկատվական տեխնոլոգիա-

ների ոլորտում համագործակցության վերաբերյալ: Առանձին փաստաթուղթ ստորագրվեց չինական MinMetal Group ընկերության համար թուրքական արտադրության մեքենաներ գնելու վերաբերյալ[12]:

Դեռևս 2000 թ. ապրիլին Թուրքիայի նախագահի հրավերով Անկարա այցելեց ՉԺՀ նախագահ Ջյան Ձեմինը, որի այցը համընկավ Թուրք-չինական միացյալ առևտրի կոմիտեի 13-րդ նստաշրջանի աշխատանքների հետ: Այցի արդյունքում երկկողմ համագործակցության ոլորտում ստորագրվեց կարևոր փաստաթուղթ՝ էներգետիկ ոլորտում տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին շրջանակային արձանագրությունը[13]:

Երկկողմ քաղաքական-տնտեսական համագործակցության ոլորտում առանցքային նշանակություն ունեցավ երկու երկրների արտաքին գործերի նախարարների միջև 2001 թ. ստորագրված «Գործողությունների ծրագիրը», որը սահմանում էր երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում համագործակցության ուղենիշերը[14]: «Գործողությունների ծրագրի» ստորագրումից հետո, Չինաստանում Թուրքիայի դեսպանը Պեկինում ՄԱԿ-ի Միջազգային զարգացման կազմակերպությանը ներկայացրեց մի փաստաթուղթ, որը ներառում էր այդ կազմակերպության շրջանակներում թուրք-չինական տնտեսական հարաբերությունները զարգացնելու առաջարկներ: Թե «Գործողությունների ծրագրում» և թե Միացյալ տնտեսական կոմիտեի նիստերում, որպես երկկողմ համագործակցության առավել նպատակահարմար և նախնտրելի ոլորտ էր դիտվում մանր և միջին ձեռնարկատիրությունը: Ինչն էլ հանդիսանում է թուրքական արդյունաբերական զարգացման կարևոր ոլորտը[15]: Երկկողմ առևտրում առկա անհամաչափությունից բացի անհամաչափությունը մեծ է նաև ընկերությունների ներդրումային ոլորտում: Պեկինում թուրքական հյուպատոսարանի տվյալներով, 2005 թ. Չինաստանում գործել են 26 թուրքական, մինչդեռ Թուրքիայում գործել են 219 չինական ընկերություններ[16]: Տարբեր երկկողմ հանդիպումների ժամանակ առաջնային քննարկման թեմաներից է Թուրքիայում չինական ներդրումների մեծացման խնդիրը՝ հատկապես ենթակառուցվածքների, արդյունաբերության և նորագույն տեխնոլոգիաների բնագավառներում: Թուրքական կողմը զգալի քայլեր կատարեց ապահովելու մի շարք թուրքական ընկերությունների գործունեությունը Չինաստանում: 2007 թ. արդեն Չինաստանում գործում էին շուրջ 100 մլն դոլար կապիտալով 6 ֆաբրիկաներ և 120 ֆիրմաների ներկայացուցչություններ: Թուրքական Sabanci Giroup ընկերությունը, 70 մլն դոլարով գնելով չինական նավահանգիստ Թիանջինում գործող ամերիկյան ընկերությունը, կատարեց ամենամեծ ներդրումը Չինաստանում: Չինաստանում թուրքական ներդրումների շարքում առանձնանում են Demirdokum ընկերության՝ երկրի հարավում յուղի ռադիատորների արտադրությամբ զբաղվող ֆաբրիկան և Gimtas-ի՝ էներգետիկ ոլորտում պողպատե բաղադրիչների արտադրությունը: Չինաստանում գործում են նաև Ipekyolu Danishmanlik ընկերությունը խորհրդատվական ծառայությունների ոլորտում, Goldas ընկերությունը ոսկու վաճառքի ոլորտում, Dezhou Donmez Leather ընկերությունն իր կաշվե իրերի արտադրության ֆաբրիկայով, Garanti և Ish Bankasi բանկերը՝ բանկային սեկտորում, Sarchem Kimya ընկերությունը՝ քիմիական նյութերի առևտրի ոլորտում[17]:

2008 թ. հունվարին, Չինաստանի Քարածխի էներգիայի ընկերության ին-

ժեներները, թուրքական Սանիսա նահանգի Սոմա շրջանում, հայտնաբերեցին շուրջ 200 մլն տոննա քարածխի պաշարներ, ինչը երկրի երկրորդ ամենախոշոր հանքավայրն է Զոնգուլդակից հետո: Չինական ընկերությունը իր մասնակցությունը կունենա ինչպես քարածխի արդյունահանմանը, այնպես էլ ջերմային էներգիայի արտադրության նախագծին[18]:

2007 թ. հունիսին, Անկարայում անցկացվեց Թուրք-չինական միացյալ տնտեսական կոմիտեի 15-րդ նիստը, որի ընթացքում առաջ քաշվեցին հետևյալ հարցերը: Երկկողմ առևտրի մեծացման ու առևտրական ապրանքների բազմազանեցման ուղղությամբ աշխատանքների իրականացում, թուրքական արտահանման ծավալների մեծացման ուղղությամբ աշխատանքներ, թուրք-չինական տնտեսական հարաբերությունների ոլորտում ռազմավարական պայմանագրի ստորագրման, Պեկինում և Շանհայում թուրքական առևտրային գրասենյակների հիմնման, Ստամբուլ-Անկարա ճեպընթացի նախագծի ապահովման 720 մլն դոլարի վարկի իրավական հիմքի արագ ապահովման, ինչպես նաև Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական բարձրագույն խորհրդի ու Չինաստանի գիտական և տեխնիկական նախարարության միջև պայմանագրի ստորագրման խնդիրները[19]:

Նիստի արդյունքում Թուրքիան և Չինաստանը 2007 թ. հունիսին ստորագրեցին երկկողմ առևտրաշրջանառության զարգացման վերաբերյալ արձանագրություն, ինչը հնարավորություն կտա զարգացնել գործակցությունը տրանսպորտի, ենթակառուցվածքների, շինարարության, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում: Թուրքիան մտադիր է մեծացնել իր առևտրի ծավալները այդ երկրի հետ, այն 2007 թ. 14 մլրդ դոլարից հինգ տարի անց հասցնել 50 մլրդ-ի[20]: Թուրքիայի պետնախարար Քյուրշադ Թյուզմենն, իր Չինաստան կատարած այցի ընթացքում, նշեց, որ թուրքական կառավարությունը Չինաստանը դիտում է որպես Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում թուրքական տնտեսական ռազմավարական հետաքրքրությունների թիրախ և թուրքական արտահանման ծավալների մեծացման հսկայական շուկա, քանի որ նախատեսված է 2013 թ. հետո թուրքական ընդհանուր արտահանման ծավալները հասցնել 200 մլրդ դոլարի[21]:

Թուրքական և չինական կողմերը նախատեսում են նաև քայլեր իրականացնել երկկողմ սահմանային առևտրի զարգացման ուղղությամբ: Թուրքական կողմը նպատակահարմար համարեց և առաջարկեց թուրքական հարավային Մերսին և Իսքենդերուն նահանգներում հիմնել Թուրք-չինական արդյունաբերական գոտիներ, որոնք հնարավորություն կտան չինական ընկերություններին հանդես գալ տարբեր լայնածավալ ներդրումային ծրագրերով[22]:

Վերջին ժամանակներում երկու երկրների միջև որոշակի համագործակցություն է նկատվում նաև ռազմական արդյունաբերության ոլորտում: Հատկապես թուրքական ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարության[23] համատեքստում, թուրքական կողմի համար հետաքրքրություն է ներկայացնում ռազմական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրման, տեխնոլոգիական նորագույն մշակումների չինական փորձը: Չնայած թուրքական ռազմական արդյունաբերության ոլորտում Թուրքիան դեռևս նախապատվությունը տալիս է արևմտյան գործընկերներին, այդուհանդերձ չինական ընկերությունները սկսել են մասնակ-

ցել Թուրքիայի ռազմաարդյունաբերական հայտամրցույթներին: Հատկապես 2007թ. չինական Chmiec ընկերությունը հայտ ներկայացրեց մասնակցելու Թուրքիայի զինված ուժերի համար Միջին հեռահարության հակաօդային պաշտպանության համակարգերի ձեռքբերման նպատակով հայտարարված հայտամրցույթին[24]:

Երկու երկրների միջև առկա աշխարհաքաղաքական և տնտեսական մրցակցությունը

Չնայած զարգացող երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններին, Թուրքիան և Չինաստանը հանդիսանում են նաև մրցակիցներ միջազգային առևտրի մի շարք ոլորտներում: Խոսքը նախ և առաջ վերաբերում է թեթև արդյունաբերությանն ու տեքստիլին: Հատկապես միջազգային շուկայում, չինական էժանագին թեթև արդյունաբերական արտադրանքի լայնածավալ հեղեղումը, լուրջ վնաս է հասցնում թուրքական արտադրությանը, քանի որ տեքստիլը և հագուստի արտադրությունը թուրքական արտադրության հիմնական ոլորտներից մեկն է, ինչն ապահովում է երկրի ներքին համախառն արդյունքի 10 և աշխատուժի զբաղվածության 21 տոկոսը[23]: Այդ պատճառով է, որ Թուրքիան արձագանքեց Եվրամիության և ԱՄՆ-ի ձեռնարկած քայլերին՝ վերահսկելու չինական արտահանումն այդ երկրներ:

Երկու երկրների միջև զգալի մրցակցություն է առկա նաև էներգետիկ, վառելիքահումքային ապահովվածությունն ամրապնդելու ոլորտում: Թուրքիան և Չինաստանը, ունենալով արագ աճող տնտեսություն և զուրկ լինելով սեփական էներգետիկ-վառելիքային կարիքներն ապահովող ներքին պաշարներից, զգալի կախվածության մեջ են գտնվում էներգակիրների ներկրման միջազգային քաղաքականությունից: Մրցակցությունը ակնհայտ դարձավ հատկապես Կասպյան ավազանի երկրների նավթի և գազի արտահանման համար մղվող պայքարում: Թուրքիան լուրջ ձեռքբերումներ ունեցավ հատկապես ադրբեջանական նավթի արտահանումն իր տարածքով փոխադրելու հարցում՝ չնայած Չինաստանի շահագրգռությանը Կասպյան ավազանի էներգակիրները սեփական երկիր հասցնելու ուղղությամբ: Թուրքիան ապահովեց իր ներգրավվածությունը նաև ադրբեջանական Շահ-Դենիզ հանքավայրից գազի արտահանման ծրագրին, ինչը հնարավորություն կտա ոչ միայն գազ մատակարարել իր երկրին, այլ հնարավորություն կտա արտահանել նաև Եվրոպա[24]: Չինաստանը իր էներգետիկ քաղաքականության հիմնական ուղղությունը կենտրոնացրեց միջինասիական երկրներից էներգակիրների ներկրմանը: Հատկապես 2005 թ. սկսեց գործել տարեկան 20 մլն բարել թողունակությամբ ղազախա-չինական 600 կմ-անոց նավթամուղը, ինչը հակառակ դեպքում պետք է փոխադրվեր Արևմուտք: Միևնույն ժամանակ Չինաստանն ակտիվ քայլեր էր ձեռնարկում թուրքմենական գազը իր տարածք հասցնելու ուղղությամբ[25]:

90-ական թթ. որոշակի մրցակցություն էր առկա Թուրքիայի և Չինաստանի միջև՝ Կենտրոնական Ասիայում իրենց աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հավակնություններն իրագործելու առումով: ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված աշխարհաքաղաքական միջավայրում Թուրքիան և Չինաստանը փորձում էին լրացնել Կենտրոնական Ասիայում ստեղծված վակուումը՝ տարածաշրջանի երկրներում հաստատելով իրենց քաղաքական-տնտեսական ազդեցությունը: Չնայած Կենտրոնական Ասիայում Թուրքիայի հավակնություններին, հատկապես տնտեսական առումով, Թուրքիան չկարողացավ լուրջ հաջողություններ գրանցել: Թուրքիայի համար կենտրոնասիական երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունների առումով խոչընդոտ էր այդ երկրների հետ ոչ անմիջական սահմանների առկայությունը՝ ի տարբերություն Ռուսաստանի, Իրանի եւ Չինաստանի: Կենտրոնական Ասիայի հանրապետությունները ակտիվ տնտեսական հարաբերություններ հաստատեցին Ռուսաստանի, ինչպես նաեւ Իրանի եւ Չինաստանի հետ: Ընդհանուր առմամբ տարածաշրջանի երկրների հետ առևտրատնտեսական ոլորտում համագործակցության ցուցանիշով Թուրքիան զիջում է Իրանին եւ Չինաստանին:

Վերջաբան

Ներկայումս թուրք-չինական առևտրատնտեսական հարաբերությունները զարգանում են արագ տեմպերով, ինչը երկու երկրների որդեգրած արտաքին տնտեսական քաղաքականության տրամաբանական շարունակությունն է: Թուրքիայի զարգացող տնտեսության համար հատկապես խիստ հեռանկարային է դիտվում բազմավեկտոր արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը, տարածաշրջանում առևտրային, տնտեսական առաջատար տերության վերածվելու հեռանկարով: Ըստ Թուրքիայի պետնախարարի՝ նախատեսված է 2008 թ. Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառությունը հասցնել 300 մլրդ դոլարի, որից շուրջ 120 մլրդը արտահանման, 180 մլրդ-ը՝ ներկրման ոլորտում[26]: Թուրքական իշխանությունների համար առաջնահերթ տնտեսական խնդիրներից է դիտվում թուրքական արտահանման ծավալների մեծացումը: Թուրքիայի 60-րդ կառավարության[27] ծրագրով նախատեսվում է մինչև 2013 թ. թուրքական արտահանումը հասցնել 200 մլրդ դոլարի[28]: Որպես ավելի երկարաժամկետ ծրագիր խնդիր է դրված 2023 թ. այդ նույն ցուցանիշը հասցնել 500 մլրդ դոլարի[29]:

Այսպիսով Թուրքիայի արտաքին տնտեսական քաղաքականության ռազմավարության համատեքստում կարևոր տեղ են զբաղեցնում Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրները, հատկապես Չինաստանը[30], իր տնտեսական հզոր պոտենցիալով և թուրքական արտահանման համար իր լայնամասշտաբ շուկայով: Հաշվի առնելով թուրքական առևտրատնտեսական հեռանկարային ծրագրերը և չինական տնտեսության արագ զարգացման տեմպերը՝ երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները կզարգանան արագ տեմպերով՝ ելնելով երկու երկրների տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից:

1.Radikal, 01.06.2005
2.Dr. Erkin EKREM, Türkiye-Çin İlişkisi: Dışişleri Bakanı Abdullah Gül'ün Çin Ziyareti, http://www.turksam.org/tr, 8 Şubat 2005
3.TÜRK-ÇİN İLİŞKİLERİNİN GELİŞMESİ, http://www.tusam.org/tr, 14.08.2006:
Թուրք-չինական քաղաքական հարաբերություններում 90-ական թթ. նկատվում էր խիստ անվստահության մթնոլորտ, ինչը կապված էր Չինաստանում ույղուր անջատողականներին թուրքական որոշ շրջանակների աջակցության հետ: Չինաստանի համար խիստ մտահոգիչ էին երկրի հյուսիս-արևմտյան Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանում ույղուր անջատողականության դրսևորումները, որոնք որոշակիորեն ակտիվացան 1990-ական թթ.: Հատկապես այդ ժամանակահատվածում Թուրքիայում պանթուրքիստական տրամադրությունների ակտիվացման հետ միասին, թուրքական պանթուրքիստական շրջանակների օժանդակությամբ, իրենց գործունեությունն ակտիվացրեցին ույղուր անջատողական կազմակերպությունները: Այդ թեման բազմիցս եղել է թուրք և չինացի պաշտոնյաների հանդիպումների առանցքային հարցերից մեկը: 2002 թ. Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիթն իր չինացի գործընկերոջ հետ հանդիպման ժամանակ վստահեցրել էր, որ թուրքական կառավարությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում իր երկրում «Արևելյան Թուրքեստան» անջատողական խմբավորման գործունեությունը սահմանափակելու ուղղությամբ: Տե՛ս John C.K. Daly, Sino-Turkish Relations Beyond the Silk Road, http://www.asianresearch.org/articles/3005.html, 4.5.2007

4.http://www.mfa.gov.tr/MFA_tr/DisPolitika/Bolgeler/DoguAsyavePasifik/CHC/CHC.htm
5.195.142.135.65/unido/documents/Composite%20Project%20ConceptTurkey-China.doc
6.Türkiye-Çin Ticari ilişkileri, http://www.cinvizesi.com
7.MEHMET ÖGÜTÇÜ, TURKEY AND CHINA, http://egemenlikulusundur.org/ustat/ulastra/ogutcu1.htm
8. Turkish Daily News, 28.11.2007
9.Türkiye-Çin Ticari ve Ekonomik İlişkileri, http://www.cinvizesi.com/makale/%C7%DDN%20T%DDCAR%DD%20VE%20EKONOM%DDK%20%DDL%DD%DEK%DDLER.doc
10.Zaman, 27.07.2005
11.Türkiye-Çin Ticari ve Ekonomik İlişkileri.,
12.Chinese Premier Expresses Satisfaction With Sino-Turkish Ties, http://news.xinhuanet.com, 2002-04-17
13.195.142.135.65/unido/documents/ Composite%20Project%20ConceptTurkey-China.doc
14. http://www.chinaembassy.org.tr/eng/ztgx/t162025.htm
15.195.142.135.65/unido/documents/ Composite%20Project%20ConceptTurkey-China.doc
16.John C.K. Daly, նշվ.աշխ.:
17.'En'lerin Ülkesi Çin'de 2007 Yılı, http://www.sondakika.com/haber-en-lerin-ulkesi-cin-de-2007-yili/, 30.12.2007.
18.Turkish Daily News, 07.01.2008
19.Türk-Çin Halk Cumhuriyeti Ekonomik İlişkileri için Yol Haritası, Asya Pasifik'te Gündem, Sayı 7, 06.08. 07
20.Turkish Daily News, 19.07.2007
21.http://haber.tnn.net, 09.09.2007
22.http://www.hri.org/cgi-bin/brief?/news/cyprus/tcpr/2007/07-06-19.tcpr.html#13

24.Türk hava sahasına füze kalkanı, http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070910.aspx
25.Old Silk Road traders must resolve dispute, http://www.chinadaily.com.2005-10-18
26.The New Anatolian, 21.11.2006
27.John C.K. Daly, Sino-Turkish Relations Beyond the Silk Road, China Brief, Vol.7, Issue 4, 21 Feb. 2007, p. 12.
28.Zaman, 31.10.2007
29. 2007թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում խոշոր հաղթանակ տարավ իսլամիստական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որն էլ հնարավորություն ստացավ կազմել միակուսակցական կառավարություն՝ վարչապետ Ռ. Թ. Էրդողանի գլխավորությամբ:

30. Տե՛ս Թուրքիայի 60-րդ կառավարության ծրագիրը, Hükümet programı, http://www.akparti.com.tr

Առևտրատնտեսական կապերի հաստատումն ու խորացումը Թուրքիայի և ԱՊՀ-ի թուրքալեզու հանրապետությունների միջև

Հայկ Դեմոյան

1980-1990-ական թվականների ընթացքում, դրական տեղաշարժեր ուրվագծվեցին Թուրքիայի տնտեսական զարգացման ու նոր առևտրատնտեսական կապերի հաստատման մեջ: 1980թ.-ի սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո, Թ. Օզալի վարչապետության /1983-1989 թթ./ և նրա նախագահության հետագա ժամանակաշրջանում /1989-1993 թթ./, Թուրքական Հանրապետության տնտեսական համակարգում իրականացված ազատականացման արմատական տնտեսական բարեփոխումների շնորհիվ, երկրի տնտեսական զարգացումը հասավ նոր սահմանագծերի՝ հաջողություններ արձանագրելով տնտեսական զարգացման նոր ռազմավարության մեջ, որն առաջին հերթին ուղղված էր արտահանմանը միտված արտադրությանը: Տնտեսական այդ հաջողությունների շնորհիվ, 20-րդ դարավերջին Թուրքիան սկսեց ակտիվ արտաքին քաղաքականություն վարել Բալկաններում, Մերձավոր Արևելքում և նախկին Խորհրդային Միության տարածքում:

1980-ական թվականների ընթացքում և 1990-ական թվականների սկզբում, Թուրքիայի սոցիալտնտեսական իրավիճակը բնութագրվում էր ֆինանսական անկայունությամբ, ինֆլյացիայի աճով, բնակչության գնողունակության և ներքին պահանջարկի նվազումով, սպառման արտաքին շուկաների որոնման դժվարություններով, էներգառեսուրսների կտրուկ անբավարարությամբ: Ի հավելումն դրանց, իրավիճակի վրա բացասական հետք էին թողնում նաև քաղաքական անկայունությունը և հաճախակի փոփոխվող կառավարությունները:

Խորհրդային հանրապետությունների անկախությունը հսկայական հնարավորություն ընձեռեց թուրքական կապիտալի ու ապրանքների հետ՝ խորհրդային տարածք զանգվածային ներխուժման և այդտեղ՝ իր տնտեսական տեղը գտնելու հնարավորության համար:

Կենտրոնական Ասիայի ու Հարավային Կովկասի հանրապետությունների նկատմամբ Թուրքիայի աճող տնտեսական հետաքրքրության հիմքում ընկած էր իր արդյունաբերական արտադրանքի համար արտահանման նոր շուկաների և գյուղատնտեսական ու հանքային հումքի նոր աղբյուրների ձեռքբերման ձգտումը, առաջին հերթին՝ նավթի ու գազի, որոնք այնքան անհրաժեշտ են զարգացող թուրքական տնտեսության համար[1]:

Թուրքական տնտեսությունը մուտք գործեց իր զարգացման նոր փուլը՝ շուկայական հարաբերությունների ու տնտեսական հարաբերությունների աստիճանական ազատականացման շեշտադրումով: 1980-ական թվականների սկզբներին, Թ. Օզալի կողմից ձեռնարկված տնտեսական համակարգի ազատականացման բարեփոխումներն ուղղված էին արտահանմանը միտված արդյունաբերության ստեղծմանը, զբոսաշրջության զարգացմանն ու առևտրային ռեժիմի ազատականացմանը, ինչպես նաև տարադրամային եկամուտների աճին: Թ. Օզալի բարեփոխումները ներկայացվում էին որպես պետական կապիտալիզմի ու շուկայական հարաբերությունների լավագույն զուգակցում: Տնտեսական բարեփոխումների կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում էր Թուրքիայի արտաքին տնտեսական կապերի աշխարհագրության ընդլայնումը[2]:

Արտահանմանը միտված ռազմավարությունը հիմնարար մոդել հանդիսացավ Թուրքիայի տնտեսական զարգացման համար՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով արտարժութային մուտքերի աճի ապահովմանը:

Այդ բարեփոխումներն իրականացվեցին կայունացման ծրագրի կամ «Հունվարի 24- փաթեթ» հիման վրա, որը, ըստ Էնդրյու Սանգոյի դիպուկ արտահայտության, չհանգեցրեց ազատ առևտրին, բայց քայլ հանդիսացավ դեպի նման ազատությունը[3]: Չնայած այդ բարեփոխումների արդյունավետությանը տրված տարբեր գնահատականներին և որոշ ոլորտներում արդյունքների հակասականության, 1980-ական թվականների տնտեսական բարեփոխումները հզոր խթան հանդիսացան Թուրքիայի հետագա տնտեսական զարգացման համար՝ նշանավորվելով համաշխարհային տնտեսության մեջ Թուրքիայի մասնաբաժնի կրկնապատկմամբ: Եթե բարեփոխումների սկզբնամասում այդ ցուցանիշը կազմում էր 0,4, ապա 1980-ական թվականների վերջում արդեն 0,2[4]:

1990-ական թվականների շուկայական բարեփոխումների արդյունքում, Թուրքիան ընդհուպ մոտեցավ Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրների մակարդակին, սակայն Արևմտյան Եվրոպայի երկրներից նրա հետ մնալը չկրճատվեց[5]:

ԽՍՀՄ-ում բարեփոխումների և վերակառուցումից հետո՝ Թուրքիան որոշակի տնտեսական հետաքրքրություն դրսևորեց Խորհրդային Միության նկատմամբ, մասնավորապես սահմանամերձ առևտրի զարգացման մեջ՝ որակապես տնտեսական նոր հարաբերությունների հաստատման հարցում:

1988 թ.-ի կեսին թուրք-խորհրդային համաձայնագիր ստորագրվեց միջազգային ցամաքային փոխադրումների մասին, իսկ նույն տարվա օգոստոսի վերջից վրացական Սարփի բնակավայրին մոտակա թուրք-խորհրդային սահմանի վրա, բացվեց հսկիչ-անցման կետ:

Թ. Օզալի կողմից, 1991 թ.-ի մարտին Մոսկվա կատարած այցից հետո, ակտիվացան առևտրատնտեսական հարաբերությունները ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև, ինչն իր ձևակերպումը ստացավ թուրք-խորհրդային երկկողմ պայմանագրի ստորագրմամբ: Մինչ այդ, 1989 թ.-ի հուլիսի սկզբին, Թուրքիայի ֆինանսների նախարար է. Բակդեմիրլին Մոսկվայում անցկացված բանակցություններից հետո, այցելեց Բաքու՝ Խորհրդային Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների հաստատման նպատակով:

Թուրքական աշխարհի տարածքը Թուրքիայի համար ներկայացվում էր որպես թուրքական ապրանքների արտահանման հեռանկարային շուկա և արտահանմանը միտված տնտեսության հետագա զարգացման խթան:

ԽՍՀՄ-ի թուլացումն ու փլուզումը նոր հորիզոններ բացեցին այդ տարածքներ թուրքական տնտեսական ներխուժման համար: Նախկին խորհրդային հազարավոր քաղաքացիներ մաքոք-առևտրականներ դարձան՝ Թուրքիայի բյուջե ներմուծելով մի քանի միլիարդ դոլար: Դեպի հետ-խորհրդային տարածք թուրքական ապրանքների ու ծառայությունների հոսքի հետ մեկտեղ, այդտեղի շուկաներում կայուն դիրքեր զբաղեցրեց

նաև թուրքական շինարարական բիզնեսը:

ԽՍՀՄ-ի թուրքալեզու հանրապետությունների անկախացումից հետո, Թուրքիայի Արտաքին տնտեսական հարաբերությունների գործակալությունը /DEIK/ ձեռնամուխ եղավ համատեղ Գործարար խորհուրդների գործունեության ակտիվացմանը միտված կազմակերպչական աշխատանքներին, որոնք թուրքալեզու հանրապետություններից յուրաքանչյուրում ձևավորվել էին արդեն 1991 թ.-ի դեկտեմբերին /բացառությամբ Թուրքուզբեկական գործարար խորհրդի, որը ստեղծվեց 1993 թ.-ին/: Հատկանշական է, որ այդ կառույցներում թուրքական կողմը ներկայացված էր մասնավոր սեկտորով, այն դեպքում, երբ հակառակ կողմը գլխավորապես ներկայացնում էին տեղական բարձրաստիճան չինովնիկները: Թուրքական ձեռներեցները հնարավորություն ստացան հանդիպել թուրքալեզու պետությունների ձեռնարկությունների, նախարարությունների, գերատեսչությունների ղեկավարությունների հետ, քննարկելու համագործակցության հնարավոր ուղղությունները, առաջին դեմքերից տեղեկատվություն ստանալու տեղական արտադրության ու շուկայի մասին, որոշելու ներդրումների ու պայմանագրերի համար առավել հեռանկարային ոլորտները[6]:

Համաձայն Օ. Ոեզնիկովայի, ամենասկզբից «պանթուրքիզմի» տակ քողարկված էր ոչ թե գաղափարա-կրոնական, այլ տնտեսական իմաստը, և դա բարենպաստ արձագանք ստացավ տնտեսական ծանր ճգնաժամով ախտահարված Կենտրոնական Ասիայում[7]: Ռուսական մեկ այլ հետազոտող Գ. Ստարչենկովայի կարծիքով, պատմական, մշակութային, լեզվային ու կրոնական ընդհանրության անվան տակ, իսկ փաստացի պանթուրքիզմի հիմքերի վրա, Թուրքիան ձգտում էր հեռացնել նորանկախ թուրքալեզու հանրապետությունները Ռուսաստանից և միաժամանակ բարձրացնել ՈԴ-ի կազմի մեջ գտնվող այլ թուրքալեզու հանրապետությունների անկախության աստիճանը: Ընդ որում, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մերձկասպյան հանրապետություններին, Թաթարստանին և Բաշկիրիային, որոնք ածխաջրածնային վառելիքի կարևոր հանքավայրերի են տիրապետում[8]:

Արտաքին քաղաքական նոր դոկտրինի՝ նեոպանթուրքիզմի և դրա տնտեսական բաղկացուցիչի համատեքստում, նոր շուկաների զավթման ձգտման մեջ Անկարան առաջնահերթ նշանակություն էր տալիս նորանկախ հանրապետությունների հետ առևտրատնտեսական սերտ հարաբերությունների հաստատմանը: Նա հենց սկզբից հատուկ ուշադրություն դարձրեց այդ հանրապետությունների նավթագազային ռեսուրսների մշակման և դեպի միջազգային շուկաները թուրքական տարածքով դրանց տեղափոխման մեջ Թուրքիայի մասնակցությանը: Ամրապնդելով ու խորացնելով հարաբերությունները այդ հանրապետությունների հետ, Անկարան մտադրված էր ծանրակշիռ տնտեսական հիմք ստեղծել թուրքալեզու հանրապետությունների հետագա քաղաքական միավորման համար: Դեպի այդ երկրները տնտեսական ներխուժման ընթացքում, Անկարան հնարավորինս ձգտում էր նաև արդեն գոյություն ունեցող տնտեսական կապերն ու ենթակառուցվածքային ցանցը վերակողմնորոշել դեպի Արևմուտք, այդպիսով նվազագույնի հասցնելով այդ տարածքներում Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը:

Այլ խոսքով, ԽՍՀՄ-ի փլուզման պահից Թուրքիայի քաղաքականությունը ուղղված էր «տնտեսական բովանդակության լեցմամբ»[9]:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, կենտրոնասիական հանրապետությունների և Ադրբեջանի տնտեսական համակարգերը գործնականում ամբողջությամբ կողմնորոշված էին ներմիութենական պահանջների բավարարմանը: Ինչպես մնացած խորհրդային հանրապետությունների դեպքում, այստեղ էլ միութենական պետության տարբեր սուբյեկտների տնտեսական կյանքի կարևորագույն խնդիրները լուծվում էին Մոսկվայում և ավելորդ է խոսել արտաքին տնտեսական կապերի հաստատման որևէ ավտոնոմ ռեժիմի մասին: Որպես կանոն այդ որոշումները հիմնվում էին միութենական Պետպլանի պահանջների, և ոչ ամենևին շուկայական հարաբերությունների վրա:

Անկախության ձեռքբերումից հետո ինքավար հանրապետությունների ղեկավարները կանգնեցին բոլորովին նոր առևտրատնտեսական կապերի հաստատման և իրենց պետությունների քաղաքական-տնտեսական զարգացման ռազմավարությունների ու մոդելների մշակման հիմնախնդրի առջև:

1990-1991 թթ.-երի ժամանակահատվածում, Ղազախստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ադրբեջանի բիզնես շրջանակների ներկայացուցիչները թուրքական կողմի հետ առաջին կապերը հաստատեցին տնտեսական ասպարեզում, մասնակցելով թուրքական քաղաքներում կազմակերպված տոնավաճառներին և ցուցահանդեսներին: 1990-1991 թթ.-երին տեղի ունեցան բանակցություններ Կենտրոնական Ասիայի խորհրդային հանրապետությունների ու Ադրբեջանի տնտեսական շրջանակների ներկայացուցիչների և թուրքական կողմի միջև[10]: Անկախության հռչակումից հետո այդ հանրապետությունները հնարավորություն ստացան անմիջական առևտրատնտեսական կապեր հաստատել Թուրքիայի հետ:

Ռուսական հետազոտող Ե. Ուրազովան, Թուրքիայի և հետխորհրդային թուրքալեզու հանրապետությունների միջև առևտրատնտեսական համագործակցությունը ստորաբաժանում է երեք հիմնական շրջանների՝ 1991-1993 թթ., 1994-1997 թթ. և 1998-2002 թթ.: Առաջին շրջանը /1991-1993 թթ./ բնութագրվում էր Թուրքիայի առավելագույն ակտիվությամբ, որը հետագայում կգնահատվի որպես դրույթ, որը հաստատվում է հետխորհրդային հանրապետություններում առկա տնտեսական ու սոցիալական պայմանների, նախկին խորհրդային մնացած հանրապետությունների հետ դրանց փոխկապվածության, առաջին հերթին Ռուսաստանի հետ առևտրատնտեսական ու տրանսպորտային ինտեգրման լրջագույն վերլուծությամբ[11]: Երկրորդ փուլում /1994-1997 թթ./ թուրքալեզու հանրապետություններին հաջողվեց որոշ չափով հաղթահարել նախնական ճգնաժամը, կայունացնել տնտեսական ու սոցիալ-քաղաքական իրավիճակը: Այդ գործում Թուրքիայի օգնությունը այնքան էլ նկատելի չէր, և ամեն ինչ իրականացվում էր միջազգային կազմակերպությունների ու բանկերի աջակցության, արևմտյան ուղղակի ներդրումների շնորհիվ: Եվ վերջապես երրորդ փուլը /1998-2002 թթ./ բնութագրվում էր Թուրքիայի ու թուրքալեզու հանրապետությունների միջև առևտրատնտեսական հարաբերությունների անկմամբ, որի հիմնական պատճառը ֆինանսատնտեսական ճգնաժամն էր 1998թ.-ին Ռուսաստանում և Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում[12]:

Անկախության առաջին տարիներին, մահմեդական հանրապետությունների առաջնորդների հայտարարություններում բազմիցս նշվում էր

նրանց հակվածությունը զարգացման «թուրքական մոդելին»: «Թուրքական մոդելի» հայեցակարգը ներառում էր երկու հիմնական ասպեկտ՝ քաղաքական և տնտեսական: Առաջինը վերաբերում էր պետական կառուցվածքին. Թուրքիայի օրինակով մահմեդական, սակայն աշխարհիկ պետություն, իր ձևավորված բազմակուսակցական ու ժողովրդավարական քաղաքական համակարգով: Երկրորդը, տնտեսական բաղկացուցիչը դիմում էր ազատ շուկայի տնտեսությանը, խրախուսելով մասնավոր ձեռնարկատիրությունը և շուկայական հարաբերությունների այլ հիմնարար սկզբունքները: Թուրքական տնտեսությունը՝ մինչև 1970-1980-ական թվականները լինելով փակ, ագրարային ու ցանկացած շուկայական մրցակցությունից պաշտպանված համակարգ, 1980 թ.-ի ռազմական հեղաշրջումից հետո ենթարկվեց արմատական ու ցնցումային բարեփոխումների և կարճատև ժամանակահատվածում ներդրեց զարգացման ու մրցակցության շուկայական մոդելներ հիմնական շեշտը դնելով ներկրման փոխարինումային ու արտահանիչ կողմնորոշման արտադրանքի վրա: Հարկ է նաև նշել, որ շեշտադրումը «թուրքական մոդելի» վրա, նպատակ էր հետապնդում, ի հեճուկս Արևմուտքի, հակադրվել «իրանական մոդելին ու մահմեդական ժողովրդավարության օրինակ դառնալու ձգտմանը»[13]: Այս առումով ամենևին պատահական չէին թուրքական ու արևմտյան քաղաքական գործիչների հայտարարությունները՝ զարգացման հատկապես «թուրքական մոդելին» նախապատվություն տալու մասին կոչերով:

Այդ հանրապետությունները, ԽՍՀՄ-ի այլ շրջանների համեմատ, իրենց հետամնաց ենթակառուցվածքներով հանդիսանում էին խորհրդային պետության ագրարային կցդրդները: Նրանք ենթակվեցին տնտեսական ու բնապահպանական առավելագույն շահագործման և անկախության ձեռքբերումով փորձում էին հաստատել բազմակողմ ու դիվերսիֆիկացված տնտեսական կապեր: Պատահական չէ, որ իրենց ձարտասանության մեջ շեշտադրումներ էին արվում պետականաշինության ու զարգացման մեջ հատկապես թուրքական, այլ ոչ թե իրանական մոդելին հակվածության վրա[14]:

Նման դիրքորոշման ուժեղացման վրա վճռորոշ ազդեցություն ունեցող լրացուցիչ գործոն հանդիսացավ Թուրքիան, որը մինչ այդ արևմտյան առաջատար երկրների ու հատկապես ԱՄՆ-ի աջակցությամբ, բարեփոխել էր տնտեսական համակարգը ըստ ազատականացման մոդելի[15]: Պետք է նաև նշել, որ թուրքական տնտեսական մոդելի արդյունավետությունը հիմնվում է էժան աշխատուժի վրա, ինչը վերջին հաշվով հանդիսանում է համաշխարհային շուկաներում թուրքական ապրանքների մրցունակության ապահովման գործոն, որը ուժեղանում է նաև պետական աջակցության շնորհիվ[16]:

1991 թ.-ի մարտին, Ղազախստանի ու Թուրքիայի միջև ստորագրվեց արձանագրություն տնտեսական համագործակցության մասին, իսկ մեկ ամիս անց, Ղազախական հանրապետության մայրաքաղաք այցելեց Թուրքիայի Առևտրաարդյունաբերական միության պատվիրակությունը: Երկու կողմերի միջև բանակցությունների հիմնական թեման էր նավթային ու լեռնահանքային արդյունաբերության մեջ և տարանցիկ փոխադրումների ոլորտում ներդրումների հեռանկարները:

Ուզբեկստանում թուրք գործարարներին հետաքրքրում էր կաշվի, բրդի, բամբակի վերամշակումն ու կաթի արտադրությունը, ինչպես նաև ուզբեկական տնտեսության տարբեր բնագավառներում համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունները:

Համագործակցության այս ոլորտները առաջնահերթ էին նաև թուրքմենական ու ղրղզական գործընկերների հետ գործնական կապերի հաստատման ընթացքում[17]: 1991 թ.-ի հունիսին, թուրքական ընկերությունների ներկայացուցիչները մասնակցեցին Տաշքենտում անցկացվող գործարարների միջազգային համախորհրդակցությանը: Միևնույն ժամանակ տեղի ունեցան Թուրքմենստանի Նախարարների խորհրդի պատվիրակության այցը Թուրքիա և գործարար կապերի հաստատման բանակցությունները: Նույն տեղում, ղրղզական կողմի հետ ստորագրվեցին արձանագրություններ, ինչպես նաև մտադրությունների մասին պայմանագրեր՝ թուրքական ընկերությունների, կազմակերպությունների ու ձեռնարկությունների հետ:

Թուրքալեզու այլ հանրապետությունների համեմատ, թուրքական կապիտալն ու տնտեսական ներխուժումը առավել չափով ուղղված էին Ադրբեջան, և բավական կարճ ժամանակահատվածում Թուրքիան կարողացավ իր համար այնտեղ լուրջ դիրքեր ապահովել: Դրանում շահագրգռված էր նաև ադրբեջանական ղեկավարությունը: Մասնավորապես, Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը, 1992 թ.-ի հունվարին Թուրքիա կատարած առաջին պաշտոնական այցի արդյունքներն ամփոփելիս հայտարարեց իր այն ցանկության մասին, որ «թուրքական գործարար շրջանակները ակտիվություն ցուցաբերեն Ադրբեջանի տնտեսության վերականգնման մեջ: Մենք թուրքական տեխնոլոգիաների կարիքն ունենք»[18]:

Թուրքական գործարարների մի ծանրակշիռ բանակ ընդգրկված էր Թուրքական հանրապետության առաջին դեմքերի դեպի թուրքալեզու տարածաշրջաններ կատարած առաջին պաշտոնական այցելությունների կազմում: ԽՍՀՄ-ի փլուզման էյֆորիայի ալիքի վրա, այդ ուղևորությունների ընթացքում թուրքական առաջնորդները հայտարարություններ էին անում «Առևտրի ու զարգացման թուրքական բանկի», ինչպես նաև «Թուրքական ընդհանուր շուկայի» ստեղծման հնարավորության մասին: Թուրքական գործարարները հայտնվեցին կենտրոնասիական ղեկավարների ուշադրության կենտրոնում, և նրանցից ոմանք զբաղեցրեցին երկրների նախագահների տնտեսական հարցերով խորհրդականների պաշտոնները: Նրանք ընդգրկվեցին Թուրքմենստանի նախագահ Ս. Նիյազովի և Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի աշխատակազմերում[19]:

Տնտեսական ներխուժմանը զուգահեռ, Անկարան ակտիվորեն ներգրավվեց նաև միջազգային տնտեսական կազմակերպություններին նորանկախ հանրապետությունների անդամակցությունը նպաստելու գործընթացին, դրանով փորձելով լրացուցիչ կշիռ տալ իր որպես առաջնորդի հավակնություններին: Այսպես, Ադրբեջանը դարձավ ՍՏՀ կազմակերպության անդամ, իսկ կենտրոնասիական հանրապետությունները, 1992թ.-ի փետրվարին, միացան Տնտեսական համագործակցության կազմակերպությանը, որը ստեղծվել էր 1963 թ.-ին Իրանի, Պակիստանի և Թուրքիայի մասնակցությամբ, սակայն 1990-ական թվականների սկզբներին գործնականում դադարել էր գործել: ՏՀԿ-ին նոր պետությունների /ի դեմս կենտրոնասիական հանրապետությունների, իսկ ավելի ուշ նաև Ադրբեջանի/ ներգրավումը էական գործոն հանդիսացավ այդ միջազգային կազմակերպության «վերակենդանացման» համար:

Չգտնելով բոլոր միջոցներով անկախ թուրքալեզու հանրապետություններին իր նկատմամբ, տրամադրվածություն ստեղծել, Թուրքիան իրականացնում էր նաև լայնածավալ մարդասիրական ծրագրեր: Այդ օգնությունը սկզբնական շրջանում հանդես էր գալիս առաջին անհրաժեշտության ապրանքների տեսքով, մասնավորապես՝ դեղորայքի: Ելնելով ձգտում էր դառնալ օգնության միակ աղբյուրը, սակայն պարզ է որ, նման ցանկությունը ամրագրված չէր Թուրքիայի տնտեսական հնարավորություններով[20]: Թուրքական ներդրումներն ու ապրանքները ավելի համեստ չափով էին ներթափանցում Ադրբեջան և Կենտրոնական Ասիա, քան դա կցանկանային թուրքական ղեկավարները: 1994 թ.-ի դրությամբ, Թուրքիայի օգնությունը կենտրոնասիական հանրապետություններին կազմել է 78 մլն. դոլար, որոնցից 54 մլն. բաժին էր ընկնում միայն Ուզբեկստանին:

Ազդարարելով այդ երկրներին տնտեսական աջակցություն ցուցաբերելու իր պատրաստակամությունը, թուրքական կողմը հատուկ նշանակություն էր տալիս տեղական տնտեսության ու ենթակառուցվածքների զարգացման համար կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկերի և դրամաշնորհների տրամադրմանը: Միայն 1992 թ.-ին թուրքական 62 բանկեր և խոշոր ընկերություններ այդ հանրապետություններում բացեցին իրենց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, կատարելով առաջին գործարքը[21]: Դրանց շարքում, տարածաշրջանում առաջինը իր մասնաճյուղը բացեց Թուրքիայի գյուղատնտեսական բանկը /Ziraat Bankasi/: Անկախ հանրապետություններին վարկերը տրամադրվում էին հիմնականում թուրքական «էքսիմբանկի» կողմից, որը տարադրամով վճարունակության հնարավորությունը ապահովում էր հենց թուրքական ապրանքներով ու ծառայություններով[22]: Վարկային գծերի մեծամասնությունը, ունենալով լիովին համապատասխան պայմաններ, այնուամենայնիվ չիրականացվեցին, հիմնականում այս կամ այն նախագծին նախապատվություն տալու կամ դրանց վերջնական ավարտման անպատրաստվածության պատճառով:

1994 թ.-ին Ղրղզստանը ներգրավվեց 100 մլն. արժողությամբ թուրքական վարկի մեջ: Այդ պահին Ղրղզստանում արդեն գործում էին թուրքական և թուրք-ղրղզական 20 համատեղ ձեռնարկություններ[23]: Այդ ձեռնարկությունները հիմնականում գործում էին հեռահաղորդակցման, կաշվի վերամշակման, շինարարական բիզնեսի, զբոսաշրջության և այլ ոլորտներում: Դրանց շարքում առավել խոշորը «BMB» ձեռնարկությունն էր, որը ղրղզական կողմի համաձայնությամբ զբաղված էր երկու ոսկու հանքերի շահագործմամբ:

Թուրքական «էքսիմբանկի» պաշտոնական տվյալներով, 1993 թ.-ի օգոստոսի դրությամբ, թուրքալեզու հանրապետություններին Թուրքիան 975 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ վարկեր է տրամադրել: Նույն տվյալների համաձայն, Թուրքիայի արտահանման ու ներկրման վարկերից 175 մլն. դոլարը տրամադրվել է Ղազախստանին, Ուզբեկստանին, Ղրղզստանին, Ադրբեջանին, Թուրքմենստանին, ինչպես նաև Տաջիկստանին[24]:

Ակնհայտ էր, որ թուրքալեզու հանրապետությունների տնտեսությունների վարկավորման ոլորտում Թուրքիայի հնարավորությունները ավելի քան համեստ էին և հատկապես դա առաջնահերթ պատճառ հանդիսացավ նախնական դիրքորոշման վերանայման համար և պակասեցրեց այդ հանրապետությունների սպասումները Թուրքիայից: Ըստ վերլուծաբան-

ների հաշվարկների, միայն 1992 թ.-ին թուրքական առաջնորդների կողմից խոստացված ֆինանսական վարկավորումների ծավալը համարժեք էր Թուրքիայի արտարժութային պահուստի 80 %-ին[25]: Չափազանցություն չէ այն պնդումը, որ նորանկախ պետություններին տրամադրված բազմամիլիոնանց վարկերը արագացրեցին թուրքական տնտեսության ֆինանսական ու բանկային համակարգերի ճգնաժամը, ինչը 1993 թ.-ի վերջում և 1994 թ.-ի սկզբում, վերջին հաշվով, վերաճեց հերթական ճգնաժամի:

Երկկողմանի տնտեսական կապերի ակտիվացման ու խորացման համար Թուրքիայի և թուրքալեզու հանրապետությունների միջև ստեղծվեցին գործարար խորհուրդներ: Նման առաջին կառույցը ստեղծվեց 1991 թ.-ի նոյեմբերին, Թուրք-ուզբեկական գործարար խորհրդի տեսքով[26]: Անկարան մեծ ճիգեր գործադրեց նաև բանկային ծառայողների ու կառավարման ոլորտի մասնագետների նախապատրաստման գործում: Այդ նպատակով 1992թ.-ին ստեղծվեց «Համագործակցության ու զարգացման թուրքական գործակալությունը» /TICA/: Այս կառույցը կոչված էր նաև լուծելու տեխնիկական աջակցության ու մասնավոր ներդրումների խթանման հարցերը: Գործնական շփումների հաստատման գործում ակտիվորեն ներգրավվեցին բազմաթիվ պետական ու մասնավոր կազմակերպություններ և կառույցներ, որոնց շարքում կարելի է առանձնացնել «էքսիմբանկը», Արտաքին տնտեսական հարաբերությունների վարչությունը /DEIK/ և այլն:

TIKA-ի և այլ կազմակերպությունների գծով թուրքական կողմը թուրքալեզու հանրապետություններին աջակցություն ցուցաբերեց բանկային ոլորտի կադրերի նախապատրաստման մեջ: 1994 թ.-ի փետրվարին, Թուրքիայի կառավարությունը, Թուրքական բանկերի ասոցիացիան Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ, օգնություն ցուցաբերեցին գործող ուսումնական բանկային կենտրոնի կազմակերպման մեջ Ուզբեկստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի մասնագետների համար, որոնց կառավարությունները 1994 թ.-ի փետրվարին պայմանագիր ստորագրեցին Տաշքենտում նման կենտրոնի ստեղծման մասին[27]:

Որպես կանոն թուրքական ընկերությունները ԱՊՀ-ի մահմեդական հանրապետություններում առաջատար դիրքեր էին զբաղեցնում վերամշակող արդյունաբերության ու շինարարության մեջ:

1993թ.-ի ավարտին, ավելի քան 40 թուրքական ընկերություններ էին գործում Թուրքմենստանում, որտեղ թուրքական գործարար ակտիվությունը պայմանավորված էր երկրի ներքաղաքական համեմատական կայունությամբ և բիզնես ոլորտում մրցակցության բացակայությամբ: Արդեն 1995 թ.-ի դրությամբ, թուրքմենական բաժակի 30%-ը մշակվում էր թուրքական ընկերությունների կողմից, իսկ գյուղատնտեսության ոլորտում թուրքական կապիտալին բաժին էր ընկնում ստեղծված ընկերությունների 70%-ը[28]: Ըստ տվյալների, նույն ժամանակահատվածում, Թուրքմենստանում շահագործման հանձնվեցին արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ ստեղծված ավելի քան 70 օբյեկտներ: Դրանց թվում 17-ը թուրքական էին, նույնքանը ամերիկյան: Տեքստիլ արդյունաբերության ոլորտում, այլ արտասահմանյան ընկերությունների շարքում նախապատվությունը տրվում էր հատկապես թուրքական ընկերություններին: Թուրքական «Ֆոլգեր ԼՏԴ» ընկերության տեխնիկական աջակցությամբ կառուցվեց Թուրքմենկալինի ֆաբրիկան, որն ունակ էր արտադրել մինչև

10,5 տոննա մանվածք: Ավելի մեծ հզորություն ուներ Աշգաբադի մոտ գործող տեքստիլ կոմբինատը, որը նույնպես հանդիսանում է թուրք-թուրքմենական համատեղ ձեռնարկություն: Թուրքական կապիտալը նկատելի էր նաև Թուրքմենստանի տարածքում գործող ազատ տնտեսական գոտիներում[29]: Թուրքական և թուրքմենական կողմերի միջև ստորագրված միջկառավարական երկկողմ համաձայնագրերը, նախատեսում էին տնտեսական համագործակցության ընդլայնում և երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ավելացում: Եթե 1992 թ.-ին ապրանքափոխանակությունը կազմել է 28 մլն. դոլար, ապա 1993 թ.-ին այն հասել է մինչև 167 մլն. դոլարի, որից հետո կայունացել է 120-130 մլն. դոլարի սահմաններում: Դրա հետ մեկտեղ, Թուրքմենստանի արտաքին ապրանքափոխանակության ցուցանիշներում Թուրքիան զբաղեցնում է երկրորդ տեղը՝ առաջնությունը զիջելով Իրանին[30]:

Թուրքմենստանից Թուրքիայի ընդհանուր ներկրումների հիմնական հոդվածում գերակշռում են մանվածքն ու կտորեղենը:

Ավելի համեստ էին Անկարայի տնտեսական ներխուժման նախաձեռնությունները Ուզբեկստանում: 1994 թ.-ի վերջի տվյալներով, Ուզբեկստանի տարածքում գործող համատեղ ձեռնարկությունների միայն 7 %-ն է բաժին ընկնում թուրք-ուզբեկականներին, այն դեպքում, երբ միայն թուրք-ամերիկյան համատեղ ձեռնարկությունների քանակը կազմել է 19 %: 1994 թ.-ի հոկտեմբերի դրությամբ, թուրքական ներդրումների ընդհանուր ծավալը կազմեց 446 մլն. դոլար: Թուրքմենստանի պարագայում այդ գումարը կազմել է 650,7 մլն: Թուրքական ներդրումների հիմնական մասնաբաժինը ընկնում էր բամբակի վերամշակմանը: Ակտիվություն էին ցուցաբերում նաև թուրքական շինարարական ընկերությունները: 1994 թ.-ի վերջում, շուրջ 20 հազ. թուրք շինարարներ, Թուրքմենստանի տարածքում ընդգրկված էին շինարարական աշխատանքներում և այլ նախագծերում: Թուրքմենստան կատարած այցի ժամանակ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը նշեց, որ 2004 թ.-ին, միայն Թուրքմենստանում, թուրքական ներդրումների ընդհանուր ծավալը կարող է կազմել 10 մլրդ. դոլար[31]:

1990-ական թվականների կեսերից, հետխորհրդային տարածքում մասնաճյուղերի միջոցով իրենց գործունեությունը ծավալեցին մի շարք արևմտյան անդրազգային կորպորացիաներ: Դրանք առանձնահատուկ ակտիվություն ցուցաբերեցին մերձկասպյան հանրապետությունների հանքահանող արդյունաբերության մեջ, որոնք հարուստ են ածխաջրածնային հումքի հանքավայրերով՝ Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան, ինչպես նաև ոսկու հանքահանման մեջ՝ Ուզբեկստան և Ղրղզստան[32]: Չնայած Թուրքիայի մասնակցությունը նվազագույն էր այդ կապիտալատար ոլորտներում, թուրքական բիզնեսը հաջողությամբ համագործակցում էր անդրազգային կորպորացիաների հետ: Այսպես, թուրքական ընկերությունները «Siamens»-ի հետ համատեղ էլեկտրական կառուցելու թույլտվություն ստացան Ղազախստանում, իսկ «Coca-Cola»-ի հետ պլաստմասսե տարայի արտադրության հոսքագծեր հիմնեցին Ղազախստանում, Ուզբեկստանում և Ղրղզստանում[33]: Պտղաբեր էր նաև այդ տարածքներում Թուրքիայի և ԱՄՆ-ի համագործակցությունը: Կարելի է բերել ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իսրայելի միջև եռակողմ համագործակցության մասին հուշագրի օրինակը, որը ստորագրվել է 1994թ.-ի հոկտեմբերին՝ Ուզբեկստանի ագրարային ոլորտում համագործակցության մասին:

Թուրքական բիզնեսը ակտիվություն էր ցուցաբերում տեղական նավահանգիստների և օդանավակայանների շինարարության ու միջազգային ստանդարտների համապատասխան արդիականացման մեջ: Նման աշխատանքների կապալառուներ հանդես էին գալիս թուրքական խոշոր շինարարական ընկերությունները: Շքեղ հյուրանոցների, առևտրային ու գործարար կենտրոնների, ինչպես նաև տուրիստական ենթակառուցվածքների շինարարությունը կատարվում էր արևմտյան երկրների կապիտալի մասնակցությամբ: Արևմտյան /բրիտանական/ կապիտալի և թուրքական շինարարական ընկերությունների /Ալարկո/ մասնակցության արդյունքը հանդիսացավ Աշգաբադի միջազգային օդանավակայանը՝ 40 մլն. դոլար արժողությամբ[34]:

Պետք է նշել, որ Թուրքիայի ու թուրքալեզու հանրապետությունների միջև արտաքին տնտեսական հարաբերությունների հաստատման մեջ առկա էին նաև որոշակի դժվարություններ: Առաջին հերթին դա վերաբերվում է երկկողմանի պայմանագրային պարտավորությունների կատարման և դրանց վերջնական իրականացման խնդրին: Լուրջ հիմնախնդիր էր նաև թուրքական ապրանքների մրցունակությունը, որը միջազգային շուկաներում հստակ ցածր էր, հատկապես տեղական շուկաներում չինական լայն սպառման էժանագին ապրանքների առկայությամբ: Այս հանգամանքները լրջորեն ազդեցին Թուրքիայի ու նախկին խորհրդային հանրապետությունների միջև ապրանքափոխանակության հիմնական ինդիկատորների վրա, որոնք միանշանակ ի օգուտ չէին տեղական շուկաներում թուրքական տնտեսական ներկայության ավելացմանը: Թվերով այդ տվյալներն ունեին ներքոհիշյալ տեսքը[35]:

1992թ.-ի 11 ամիսների ընթացքում, թուրքական ապրանքների Ադրբեջան և Կենտրոնական Ասիա արտահանման ընդհանուր ծավալը կազմել է ընդամենը թուրքական արտահանման ամբողջ ծավալի 2%-ը: Ներկրման ցուցանիշները ավելի ցածր էին[36]:

Չնայած նրան, որ 1992-1995 թթ.-երի ժամանակահատվածում թուրքական ապրանքների ու ծառայությունների ներկրման ծավալը կրկնապատկվեց այդ երկրների ներկրման հաշվեկշռում, թվային համարժեքով այն անշնչան մեծություն էր՝ համապատասխանաբար 1992 թ.-ին 0,4 %, իսկ 1995թ.-ին՝ 0,8%: Որպես կանոն թուրքական ընկերությունները հետաքրքրվում էին տեղական հումքով, այլ ոչ թե արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրանքով: Այսպես, Թուրքիա կատարած ադրբեջանական արտահանման ավելի քան 60%-ը կազմել է դիզելային վառելիքը, ավելի քան 15%-ը՝ բամբակը[37]:

Երկկողմանի առևտրի խթանման համար Թուրքիան և թուրքալեզու հանրապետությունները համաձայնության եկան կրկնակի հարկումը վերացնելու մասին: Ս. Դեմիրելի և Ուզբեկստանի նախագահ Ի. Քարիմովի միջև ստորագրված «Հավերժ բարեկամության ու համագործակցության մասին» պայմանագրում, հատուկ նշվում էր կրկնակի հարկման բացառման անհրաժեշտությունը: Երկու երկրների միջև առևտրի ընդհանուր ծավալը 1995թ.-ի դրությամբ կազմել է 280 մլն. դոլար: Մամուլի տեղեկություններով, 1996թ.-ի երկրորդ կեսի դրությամբ, թուրք գործարարների ներդրումները Ուզբեկստանի տնտեսության մեջ կազմել է 300 մլն. դո-

լար[38], ինչը սակայն ամենևին չէր խոսում Թուրքիայի առաջատար դերի մասին, մասնավորապես Ուզբեկստանի, ինչպես նաև այլ հանրապետությունների արտաքին առևտրում:

Ուզբեկստանի և Թուրքիայի առևտրատնտեսական համագործակցության դինամիկայի վրա բացասական էր անդրադառնում ոչ միայն ֆինանսատնտեսական ճգնաժամը Թուրքիայում, այլ նաև 1998 թ.-ի փետրվարին Տաշքենտում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններին հետևած թուրք-ուզբեկական հարաբերությունների կտրուկ վատթարացումը: Հավանական թուրքական հետքի մասին ուզբեկական իշխանությունների կասկածների հետևանքով:

Բավական է ասել այն, որ միայն 1996 թ.-ին Բելառուսի, Ռուսաստանի, Ղազախստանի և Ղրղզստանի միջև Մաքսային միության ստորագրումը հնարավորություն տվեց, օրինակ Ղազախստանին 80%-ով ավելացնել արտաքին առևտրի ծավալները Ռուսաստանի Դաշնության հետ[39]:

Կենտրոնասիական տարածաշրջան կատարած այցի ժամանակ Ս. Դեմիրելը ղազախական կողմի հետ ստորագրել է 29 համաձայնագրեր, որոնց մեծամասնությունը կազմել են առևտրային ու տնտեսական համագործակցության ոլորտի պայմանագրերը: Ղազախական կողմը համաձայնություն է տվել արևմտյան Ղազախստանի նավթային ռեսուրսների շահագործման, Մանգըշլակում նավթավերամշակման գործարանի շինարարության ու վերակառուցման, Ակտյուբինսկում գազային էլեկտրակայանի շինարարության, Ակտաուի նավահանգստի վերակառուցման մեջ թուրքական ընկերությունների մասնակցությանը, իսկ թուրքական կողմն իր հերթին պարտավորվել է խթանել Թուրքիայում ղազախական ապրանքների սպառումը: Ստորագրվել են նաև երկկողմանի համաձայնագրեր ներդրումների խրախուսման ու դրանց պաշտպանության մասին[40]: Միաժամանակ, Անկարան պարտավորություններ է ստանձնում վերցնում Թուրքիայում ղազախ գործարարների ուսուցման վերաբերյալ, այս թեկնածուներին ընտրում էր ղազախական կառավարությունը: Թուրքական կողմը կրթաթոշակներ առանձնացրեց 2 և 4-ամսյա դասընթացների համար[41]:

Թուրքական պետական պաշտոնական վիճակագրության մեջ հայտնվեց նոր խորագիր «Թուրքիայի համագործակցությունը թուրքալեզու հանրապետությունների հետ», որը առանձին խմբում պետություններ էր առանձնացնում ոչ թե ըստ որևէ սոցիալտնտեսական կամ աշխարհագրական ցուցանիշների՝ այլ ազգային հատկանիշի հիման վրա[42]:

Ակնհայտ է, որ նման սկզբունքով էլ ստեղծվեց Թուրքական պետությունների գործարարների ասամբլեան: Ասամբլեայի առաջին կոնգրեսը տեղի ունեցավ 1997 թ.-ի դեկտեմբերին, իսկ երկրորդը՝ 2000 թ.-ի նոյեմբերին:

Հարկ է նշել, որ երկկողմանի հարաբերությունների հաստատման առաջին ամիսների ընթացքում թուրքական կողմը ներկրել է ավելի մեծ քանակների ապրանք, քան դրա կարիքը զգացվել է այդպիսով ծգտելով տեղական շուկաները ապահովել արտադրության բավարար քանակներով: Առաջին հայացքից թվում էր, թե Թուրքիայի այս քայլը չի բխում տնտեսական շահերից, սակայն, միևնույն ժամանակ դա վկայում էր որոշ տնտեսական զոհողությունների գնալու նրա պատրաստակամության մասին հանուն կոնկրետ քաղաքական շահաբաժնի ապահովման:

Երկկողմանի տնտեսական համագործակցության, սերտ առևտրատնտեսական կապերի հաստատման ու այդ ոլորտներում տարածաշրջանային համագործակցության հարցերը իրենց արտացոլումը գտան նաև թուրքական գագաթաժողովների եզրափակիչ հռչակագրերում[43]: Թուրքական կողմի նախաձեռնությամբ դրանցում հատուկ շեշտադրում էր արվում՝ Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպական շուկաները Կասպիական ավազանի ածխաջրածնային ռեսուրսների արտահանման հարցերի ու «Մետաքսե ուղու» նախագծի վրա[44]:

Համաշխարհային նավթագազային արդյունաբերության ինտեգրացիոն գործընթացները հզոր խթան հանդիսացան Կասպիական ավազանի ածխաջրածնային ռեսուրսների մշակման և դրանց տեղափոխման ուղիների շուրջ կոշտ մրցակցության խնդիրների վրա տարածաշրջանային տերությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի սեռեուն հետաքրքրության համար: Այս մրցակցությունը կարևոր նշանակություն ունի ապագա աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական վերադասավորումներում: Կասպիական ավազանի ածխաջրածնային ռեսուրսների հանքահանման ու տեղափոխման միջոցով Թուրքիան մտադրված է կոնկրետ տնտեսական շահաբաժին ստանալ, ինչպես նաև ձեռք բերել տարածաշրջանային առաջնորդի կարգավիճակ[45]:

1993թ.-ին Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը համաձայնագիր ստորագրեց տարեկան 25 մլն. ադրբեջանական և 10 մլն. տոննա ղազախական նավթը թուրքական Ջեյհան տերմինալ, իսկ այնտեղից՝ միջազգային շուկաներ արտահանման մտադրության մասին[46]: Թուրքական կողմը հսկայական առավելություններ էր տեսնում Թուրքիայի տարածքով Կասպիական նավթագազային ռեսուրսները դեպի Եվրոպա տեղափոխելու մեջ, մասնավորապես ԵՄ-ին երկրի անդամակցության ռազմավարական նշանակության հարցում:

Հեյդար Ալիևի իշխանության գալուց մեկ տարուց քիչ ավելի ժամանակ անց, 1994թ.-ի աշնանը, 11 նավթային ընկերությունների մասնակցությամբ, Բաքվում ստորագրվեց «դարի համաձայնագիրը», որից հետո ստեղծվեց «Կասպիական կոնսորցիումը», որում «Թուրքական ազգային նավթային ընկերությանը» /TPAO/ պատկանում էր արժեթղթերի 1,75 %-ը: Ավելի ուշ Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը /SOCAR/ նրան իր բաժնեմասից տրամադրեց ևս 5 %-ը, այդպիսով թուրքական մասնաբաժինը հասցնելով 6,75 %-ի: Թուրքական մասնաբաժինը «Շահ-Դենիզ» հանքավայրում կազմել է 15%[47]:

Բաքու-Ջեյհան նախագծի շուրջ բանավեճը, ադրբեջանական շելֆում անհրաժեշտ պաշարների առկայության մասին, այդ նախագծին հաղորդում էր ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական նշանակություն:

Թուրքական բիզնեսը և կառավարական կառույցները սերտ առևտրատնտեսական համագործակցություն հաստատեցին ոչ միայն թուրքալեզու հանրապետությունների, այլ նաև զերակշռող թուրքալեզու բնակչությամբ ինքնավարությունների հետ: Նման կապեր հաստատվեցին Ղրիմի, Թաթարստանի, Բաշկիրիայի, Ղաղստանի, Կաբարդինո-Բալկարիայի և այլնի հետ:

Թուրքիան հանդիսանում է Ղրիմի ինքնավար հանրապետության հիմնական արտաքին առևտրային գործընկերը: Միայն 1998թ.-ին, Թուրքիայի և Ղրիմի միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 19 մլն. դոլար:

Դրիմում գործում են 21 համատեղ ձեռնարկություններ, որոնցից 9-ը մեքենաշինության ոլորտում: Կան մի շարք նոր նախագծեր, որոնց իրականացումը կատարվում է Սիմֆերոպոլում գտնվող TICA-ի ներկայացուցչության միջոցով[48]:

Առանձնահատուկ մեծ է Թուրքիայի հետաքրքրությունը ինքնավարության տուրիստական-ռեկրեացիոն համալիրի զարգացման ոլորտում խոշոր ծրագրերի իրականացման, հյուրանոցների շինարարության մեջ[49]:

1993 թ.-ի մարտի 3-ին Թուրքիայի և Կաբարդինո-Բալկարիայի կառավարության միջև պայմանագիր ստորագրվեց տնտեսական համագործակցության մասին, որը բազային էր հանդիսանում տնտեսական համագործակցության մասին միջկառավարական պայմանագրերի համար: Համաձայնագրի ստորագրման ժամանակ կողմերը գործում էին նախապես գտնված սխեմայի շրջանակներում, որը հնարավորություն էր տալիս շրջանցել ուղիղ միջկառավարական պայմանագրերի ստորագրման իրավունքի բացակայությունը ԿԲՀ-ի մոտ: Երկկողմանի համագործակցության հիմնարար սկզբունքների հետագա զարգացմանը նպաստում էր 1996 թ.-ի մարտի 27-ին ԿԲՀ-ի արտաքին կապերի նախարարի և Միջազգային համագործակցության թուրքական գործակալության /TICA/ միջև ստորագրված համաձայնագիրը[50]:

Թուրքալեզու հանրապետությունների հետ անմիջական ցամաքային հաղորդակցության բացակայությունը Անկարայի առջև անլուծելի խնդիրներ էր առաջացնում: Այդ հանրապետություններից և ոչ մեկի հետ չունենալով ընդհանուր հաղորդակցման հնարավորություն /բացառությամբ անկլավային Նախիջևանի/, որպես այլընտրանքային տարբերակ Անկարան առաջին հերթին օդային հաղորդակցություն հաստատեց թուրքալեզու հանրապետությունների մայրաքաղաքների հետ, որը սպասարկում էին թուրքական ավիաընկերությունների ինքնաթիռները:

Ակնհայտ է սակայն, որ միայն օդային հաղորդակցմամբ հնարավոր չէր հասնել պլանավորված տնտեսական ու քաղաքական ներխուժմանը: Այսպիսով, ի տարբերություն Իրանի ու Ռուսաստանի, թուրքական ներխուժման ներուժը ավելի քան համեստ էր:

Թուրք գործարարների համար դեպի կենտրոնասիական շուկաներ ապրանքների փոխադրման համար գոյություն ունեին ոչ այնքան շահավետ ուղիներ: Դա վերաբերում է Վրաստանով և Իրանով դեպի Կենտրոնական Ասիա տանող ցամաքային ճանապարհներին: Այլ ճանապարհը՝ ջրայինը, անցնում էր ռուսական Նովոռոսիյսկ նավահանգստով, այնտեղից Վոլգա-Դոն ջրանցքով դեպի ափամերձ կասպիական հանրապետությունները: Սակայն բարձր մաքսերը, ճանապարհի հեռավորությունը և դրա հետ կապված դժվարությունները լրջորեն խոչնդոտում էին թուրքական տնտեսական ազդեցության ներթափանցմանը այդ տարածաշրջան:

Թուրքական մասնավոր բիզնեսը որոշակի վերապահումներով էր մոտենում այդ հանրապետություններում իր կապիտալի ներդրման գաղափարին, որը առաջին հերթին պայմանավորված էր բիզնես ռիսկերով: Նախկին խորհրդային համակարգի տնտեսության ու ենթակառուցվածքների կախվածությունը Ռուսաստանից, ինչպես նաև թուրքական տնտեսության պարբերական ճգնաժամերը, ստիպեցին Անկարային վարկեր ու փոխառություններ որոնել միջազգային կազմակերպություններում և զարգացած երկրներում՝ սեփական տնտեսության մեջ իրավիճակի կայունացման համար:

Հատկանշական է, որ որոշ դեպքերում դեպի կենտրոնասիական տարածաշրջան թուրքական կապիտալի ներխուժումը ֆինանսավորվում էր հենց Թուրքիային հատկացված միջազգային օգնության հաշվին[51]:

1992-1993 թթ.-երի զարգացումները ցույց տվեցին, որ այդ հանրապետությունները անհրաժեշտ ռեսուրսների չեն տիրապետում տնտեսական ու քաղաքական զարգացման սեփական ռազմավարության ապահովման համար, իսկ ռազմաքաղաքական կայունությունը տարածաշրջանում պաշպանվում է հիմնականում ի հաշիվ Ռուսաստանի ներկայության[52]:

Իր որակական բնութագրերով թուրքական ապրանքը ակնհայտորեն զիջում էր եվրոպականին, և տարածաշրջանում երկարատև տնտեսական ազդեցության ապահովումը միայն գյուղատնտեսական ու ոչ տեխնոլոգիական ապրանքների մատակարարմամբ իրատեսական չէր: Ավելին, ժամանակի ընթացքում թուրքական օգնությունը շատ արագ կենտրոնացավ այնպիսի ընկերությունների ձեռքում, որոնք իրենք էին հանդիսանում թուրքական ապրանքների սպառողներ[53]:

Արդեն 1990-ական թվականների կեսերին տեղի սպառողների մոտ կտրուկ փոխվեց վերաբերմունքը թուրքական ապրանքների նկատմամբ, որը շուտով պատճառ դարձավ թուրքական արտահանման ծավալների կրճատմանը, հատկապես կենտրոնասիական տարածաշրջան: Օրինակ, Ղազախստանում այդ ցուցանիշը 1993թ.-ի առաջին կեսի համեմատությամբ, 1994 թ.-ի միևնույն ժամանակահատվածում կրճատվեց 29,6 %-ով, Թուրքմենստանում 17,5 %-ով, իսկ Ղրղզստանում 38,5%-ով[54]: Այուս կողմից, թուրքական արտահանման հիմնական հոդվածը՝ տեքստիլ ապրանքները, չէին դիմանում էժանագին չինական ապրանքների մրցակցությանը: 1994-1995 թթ.-երի տնտեսական ճգնաժամը բացահայտեց թուրքական կողմի լուրջ թերությունները՝ միաժամանակ ցուցադրելով այն, որ տարածաշրջանում հետագա տնտեսական ներկայությունը հնարավոր է միայն մասնավոր ձեռներեցների միջոցով:

2001 թ.-ին Ադրբեջանում գործում էին շուրջ 1000 թուրքական ընկերություններ: Թուրքական ներկայությունը նկատելի էր հեռահաղորդակցման ոլորտում: «Ազերսելլ» ընկերությունը, որը հանդիսանում է Ադրբեջանում բջջային կապի հիմնական պրովայդերներից մեկը, ստեղծվել է թուրքական «Թուրքսելլ» ընկերության ակտիվ մասնակցությամբ: Ադրբեջանական տնտեսության մեջ թուրքական ընկերությունների ներդրումները 1992 թ.-ից մինչև 2001 թ.-ի սկիզբը հասել էին 1,5 մլրդ. դոլարի: Այդ գումարի 85 %-ը ներդրված էր ծախսերի արագ փոխհատուցման ապահովմանը ունակ ոլորտների մեջ՝ մանրածախ առևտուր, սպասարկում, շինարարական բիզնես և այլն[55]:

20-րդ դարի վերջին քառորդը սկսվեց խորհրդային ժառանգության համար տարվող այսպես կոչված «Մեծ խաղով», և այդ պայքարի գլխավոր սյուժեներից մեկը ծավալվում էր Կասպիական ավազանի ածխաջրածնային պաշարների ու դեպի համաշխարհային շուկաները դրանց տեղափոխման շուրջ:

Թուրքիայի զարգացող տնտեսության համար ածխաջրածնային հումքով ապահովումը հանդիսանում էր երկրի տնտեսական անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչներից մեկը, այնինչ սեփական պաշ-

արները ծածկում էին երկրի միայն ներքին պահանջարկի աննշան մասը: Օրինակ, 1989 թ.-ին նավթի արդյունահանումը Թուրքիայում կազմել է 2,6 մլն. տոննա, այն դեպքում, երբ ներքին պահանջարկի չափը կազմում է 20,6 մլն. տոննա[56]:

Արդեն 1992 թ.-ին, Թուրքիայի տարածքով նավթի արտահանման հարցը բարձրացվել էր նախագահ Թ. Օզալի կողմից: Ղազախստան կատարած իր այցելության ժամանակ: Նավթամուղի կառուցման շուրջ Ղազախստանի ու Ադրբեջանի նախնական համաձայնությունը բախվում էր նման լայնածավալ նախագծերի իրականացման համար անհրաժեշտ միջոցների ու տեխնիկական հնարավորությունների բացակայությանը, ընդ որում միջոցները բացակայում էին ինչպես Թուրքիայի, այնպես էլ նորանկախ հանրապետությունների մոտ[57]: Թեև այդ հանգամանքը չխանգարեց թուրքական ընկերություններին, արդեն 1990-ական թվականների սկզբներին մասնակցել Ղազախստանում՝ Ակտյուբինսկի, Ուրալսկի և Ակտաուի շրջաններում նավթի հետախուզմանը[58]:

Մեկ այլ նախագիծ էր Թուրքմենստան-Իրան-Թուրքիա-Եվրոպա ուղիով գազամուղի շինարարությունը: Համապատասխան արձանագրությունը ստորագրվել էր 1993 թ.-ի դեկտեմբերի 9-ին Աշգաբադում: Դրա իրականացման մեջ պետք է մասնակցեր թուրքական պետական «Բոթաշ» ընկերությունը: Սակայն, այդ նախագծի մեջ նրա ներգրավման հեռանկարը ձեռնտու չէր Վաշինգտոնին: Թուրքական կողմը բանակցություններ էր վարում Ռուսաստանի և Կովկասի տարածքով թուրքմենական գազի մատակարարման շուրջ: Թուրքական կողմն առաջարկում էր նախագծի մասնակից անդամների շարքում ընդգրկել նաև Ադրբեջանը: Սակայն այդ առաջարկությունը հանդիպեց թուրքմենական կողմի անարկությանը, որի պատճառաբանությունը Ադրբեջանի հետ լուրջ տարաձայնությունների առկայությունն էր Կասպից ծովի կարգավիճակի, ակվատորիայի բաժանման ու նավթային հանքավայրերի պատկանելիության հարցերում[59]:

Կասպիի նավթային ու գազի պաշարների արտահանման նախագծերի իրականացման ուղղությամբ, կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին արդեն 1990-ական թվականների երկրորդ կեսին: Թուրքիայի և նրա հովանավորների հիմնական նպատակը՝ մերձկասպյան հանրապետություններից նավթի տեղափոխման միջազգային նախագծերից Ռուսաստանին ամենուրեք հեռու պահելու և այդպիսով մեկուսացման ու տարածաշրջանից ռուսական ազդեցության աստիճանական վերացման ձգտումն էր:

Թուրքիան լայնածավալ ծրագրեր է իրականացնում նաև տրանսպորտային հաղորդակցման բնագավառում: Թուրքալեզու հանրապետությունների հետ ենթակառուցվածքային սերտ կապերը դիտարկվում են որպես այլընտրանքային ԵՄ-ին անդամակցության մերժման պարագայում:

Ըստ կանխատեսումների, նավթարդյունաբերությունը Ղազախստանում կշարունակվի մինչև 21-րդ դարի կեսը, Ադրբեջանում այն իր գագաթնակետին կհասնի 2010 թ.-ին, իսկ 2024 թ.-ին այն կկրճատվի մինչև առավելագույն արդյունահանման քառորդ մասը[60]: Սակայն գոյություն ունեն նաև այլ առաջարկություններ, որոնք հիմնված են փորձագիտական եզրակացությունների վրա, համաձայն որոնց ադրբեջանական հատվածում նավթի պաշարները համապատասխանում են այն կանխատեսումներին, որոնք բերվում են Ադրբեջանի պաշտոնական պետական վիճա-

կագրության կողմից:

2001 թ.-ի փետրվարի վերջին սկսեց գործել Ալմատի-Սերախս-Թեհրան միջազգային երկաթգիծը: Այն թուրքական տարածք դուրս բերելու համար Վան իլում նոր ճյուղի կառուցման շինարարական աշխատանքներ են տարվում: Ղազախստանը պլանավորում է ուղիղ երկաթուղային գիծ անցկացնել Բիշկեկ-Տաշքենտ-Թավրիզ-Ստամբուլ ուղիով, որը Մեծ Մետաքսե Ուղի նախագծի կարևոր բաղկացուցիչը և համապատասխանաբար՝ TRACEKA-ի չորրորդ տրանսպորտային միջանցքը պետք է հանդիսանա:

Անատոլիայի սևծովյան ափի երկայնքով, Էդիրնե-Ստամբուլ-Թբիլիսի-Բաքու-Աշգաբադ-Ալմատի՝ 9245 կմ. ընդհանուր երկարությամբ, արագընթաց մայրուղու անցկացումը արդեն մոտենում է ավարտին[61]:

1998 թ.-ի հոկտեմբերի 29-ին ստորագրվեց Թուրք-թուրքմենական համաձայնագիրը՝ բնական գազի մատակարարման պայմանների մասին, համաձայն որի նախատեսվում էր 30 տարիների ընթացքում Թուրքիային տարեկան 30 մլրդ.խոր.մ. բնական գազ մատակարարել, որից 16 մլրդ.խոր.մ.-ը նրա ներքին կարիքների և 14 մլրդ.խոր.մ.-ը՝ Արևմտյան Եվրոպա վերաարտահանման համար[62]:

1999 թ.-ի փետրվարին, Աշգաբադում համաձայնագիր ստորագրվեց Թուրքմենստանից Ադրբեջանի ու Վրաստանի տարածքներով դեպի Թուրքիա Անդրկասպյան գազամուղի շինարարության ու շահագործման շուրջ կոնսորցիումի ստեղծման մասին:

Թուրքիայի ներքաղաքական ճգնաժամը լրջորեն ազդեց նաև երկրի տնտեսական իրավիճակի վրա և հանգեցրեց արտարժույթ-ֆինանսային ճգնաժամի ու բանկային համակարգի կոլապսի: Դա իր հերթին ստիպեց արտասահմանյան ներդրողներին զգալի միջոցներ դուրս բերել Թուրքիայի տարածքից. տարբեր գնահատականներով ճգնաժամի առաջին օրը Թուրքիայից դուրս է բերվել շուրջ 5 մլրդ. դոլար: Արդյունքում 2001 թ.-ը Թուրքիայի համար ավարտվեց տնտեսական անկման աննախադեպ ցուցանիշով՝ 9,4 %[63]:

Թուրքիայի և թուրքալեզու հանրապետությունների միջև արտաքին առևտրի ցուցանիշները 1992-1995 թթ.-ին ժամանակահատվածում /մլն. դոլարներով/

	1992	1993	1994	1995	թուրքական արտահանման ու ներկրման ծավալը %-ով /1992-1995 թթ./
Արտահանում	154	455,3	484	551,2	1 – 2,5 %
Ներկրում	96	196,8	191,9	293,6	0,4 – 0,8 %

Ամփոփում

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է ենթադրել, որ չնայած նախկին խորհրդային թուրքալեզու հանրապետությունների տնտեսական կյանքում առաջատար դերի ապահովման Անկարայի հսկայական ջանքերին, պարզվում է, որ նրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձնացված քաղաքական-տնտեսական համակարգ հետագա զարգացման և ազգային շահերի ապահովման իր սեփական գերակայություններով: Չնայած թուրքական տնտեսության ազատականացմանն ուղղված բարեփոխումների դրական տեղաշարժերին, Թուրքիան չուներ տեղական շուկան թուրքական արտադրողների բարձրորակ ու մրցունակ արտադրանքով ապահովելու ներուժ:

Տնտեսական կյանքի կառավարման խորհրդային վարչահրամայական ժառանգությունը, տնտեսության մեջ պետության չթուլացող դերը, անհնար էին դարձնում թուրքական մոդելով տնտեսական համակարգի ակնթարթային վերակառուցման հնարավորությունը: Այս հանգամանքները որոշակի դեր կատարեցին նաև նրանում, որ թուրքական կապիտալը և թուրք գործարարները ձեռնպահ մնացին ներդրումներից: Թուրքիան չկարողացավ արդարացնել թուրքալեզու հանրապետությունների սպասումները՝ կապված լայնածավալ ներդրումային ծրագրերի հետ: Տարածաշրջանի հումքային շուկայում Թուրքիայի գբաղեցրած տեղի զգալի չէ: Այդ պատճառով Անկարան տրամադրված է արտոնյալ պայմաններ ապահովել թուրքական ընկերությունների գործունեության համար:

Շուկայական կառույցների ձևավորումը, մասնակցությունը համաշխարհային ու տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին, ինչպես յուրաքանչյուր առանձին երկրում հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացումը ընթանում են յուրահատուկ սցենարով և առանձին տրամաբանությամբ: Այս առումով «թուրքական մոդելին» անվերապահ նախապատվություն տալը գործուն չդարձավ և դրա արագ հարմարեցումը այլ հասարակական-քաղաքական ու տնտեսական համակարգին անհնար եղավ: Միաժամանակ շնորհիվ թուրքական ապրանքների ու ծառայությունների ակտիվ ներխուժմանը նախկին խորհրդային հանրապետություններ, Թուրքիային այնուամենայնիվ հաջողվեց ապահովել իր տնտեսական ներկայությունը այդ հանրապետությունների տնտեսությունների մեջ, ինչը նաև տնտեսական հիմքեր ստեղծեց քաղաքական ներկայության համար: Ինչպես նշում է ռուսական հետազոտող Գ. Ստարչենկովը, 20-րդ և 21-րդ հարյուրամյակների սահմանագծում Ռուսաստանի բազմաթիվ թուրքալեզու տարածքներում ստեղծվեց հզոր թուրքամետ լոբբի: Թուրք ազգայնականների մի զգալի մասն իրեն աշխատանք գտավ բազմաթիվ թուրքական կամ խառը ընկերություններում, այդ թվում նաև նրանցում, որոնք զբաղված են նավթի արդյունահանմամբ ու տեղափոխմամբ[64]:

Սակայն ճիշտ չէր լինի ենթադրել, որ Թուրքիան հաշտվել է Կենտրոնական Ասիայի և Կովկասի տնտեսության մեջ իր մարգինալ դերի հետ: Եվրաինտեգրման մշուշոտ հեռանկարը կարող է Թուրքիային հրել դեպի Արևելք, և այդ պատճառով կարող է կտրուկ աճել այս տարածաշրջանների նշանակությունը թուրքական տնտեսության համար՝ տեղական տնտեսությունների մեջ թուրքական ներկայության մասնաբաժնի հետագա աճով:

1999 թ.-ի ընտրություններից և Բ. Էջեվիտի կոալիցիոն կառավարության իշխանության գալուց հետո, կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին տնտեսական պանթուրքիզմի գաղափարների վերականգնման համար և միջոցներ էին ձեռնարկվում թուրքալեզու պետությունների հետ առևտրատնտեսական համագործակցության ամրապնդման ուղղությամբ: Հատկանշական է, որ 8-րդ հնգամյա պլանի տեքստում /2001-2005 թթ./, Թուրքիա-թուրքական կապերին նվիրված բաժնում, նախատեսվում էր «տնտեսական, առևտրային, սոցիալական, մշակութային, գիտական ու տեխնիկական համագործակցության ուղղությամբ գործունեության արագացում»[65]:

Թուրքիան ակտիվորեն ներգրավված էր թուրքալեզու պետություններում ժամանակակից տրանսպորտային, հաղորդակցական ենթակառուցվածքների ստեղծման նախագծերի մշակումների մեջ: Թուրքական շինարարական ընկերությունները ակտիվորեն ներգրավվեցին օդանավակայանների շինարարության, նավահանգիստների, էներգետիկայի ոլորտի ենթակառուցվածքների, առևտրային ու գործարար կենտրոնների արդիականացման մեջ:

Իր երկրի առջև թուրքական ղեկավարության կողմից դրված նախնական խնդիրը առ այն, որ անհրաժեշտ է արագորեն իրականացնել թուրքալեզու հանրապետությունների տնտեսությունների արագ յուրացումն ու թուրքականի հետ ինտեգրումը, ամբողջովին չիհմնավորված էին:

Անկարան չկարողացավ և չէր էլ կարող առաջատար դիրքեր զբաղեցնել արդյունաբերության այնպիսի կապիտալատար ու բարձր տեխնոլոգիական ոլորտներում, ինչպիսիք են անդրմայրցամաքային հաղորդակցությունների ստեղծումը, դեպի համաշխարհային շուկաներ ածխաջրածնային հումքի տեղափոխման խողովակաշարերի անցկացումը[66]:

Դրան կարելի է ավելացնել վարկերի ծայրահեղ անբավարարությունը, որոնք տրամադրվում էին Թուրքիայի կողմից նոր պետություններին: Թուրքական կառավարության հասցեին քննադատություն հնչում էր նաև գործողությունների ինքաբխության ու ձեռներեցներին անբավարար աջակցության համար: Կոռուպցիայի, տեղերում գործընկերների անհուսալիության պայմաններում, պետական աջակցությունից զրկված թուրքական մանր ու միջին բիզնեսը զրկվում էր նաև մրցունակությունից և նրանցից շատերը ստիպված էին լինում վերադառնալ տուն:

1.Е.И. Уразова. Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, Москва, 2003, с. 7.

2.Турция: новые тенденции экономического развития в 80-е годы, М., Наука, 1991, с. 9.

3.Andrew Mango. The Turkish model, "Middle Eastern Studies", vol. 29, No. 4, October 1993. c. 742.

4.Sbu Г. Демоян. Социально-экономические реформы в Турции 1980-1990х гг. Автореферат кандидатской диссертации, Ереван, 2001.

5.Мусульманские страны у границ СНГ, с. 62.

6. Sbu http://www.deik.org.tr.

7.О. Резникова. Россия, Турция и Иран в Центральной Азии, Мировая экономика и международные отношения, 1997, с. 57.

8.Г. И. Старченков. Нефть и газ в экономике и политике Турции (XIX – начало XXI вв.), М., ИВ РАН, 2003, с. 149.

9. Г.И. Чуфрин. Политика Ирана и Турции в отношении стран Централь-

ной Азии, «Новая Евразия: отношения России со странами Ближнего Зарубежья», Но. 2, РИСИ, М., 1994, с. 37.

10.В. И. Кононов. Советско-турецкие торгово-экономические связи: поиски новых форм и направлений, в кн. «Турция: новые тенденции экономического развития в 80-е годы», М., 1991, с. 299.

11.Е. И. Уразова. Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, Москва, 2003, с. 42.

12.Նույն տեղում, с. 50.

13.Idris Bal. The Turkish Model and Turkic Republics, ,Perceptions. Journal of International Affairsb, Ankara, 1998, September – November, Vol. 3, No.3, p. 38.

14.«Независимая газета», 06. 04. 1992.

15.The Political Economy of Turkey in the Post-Soviet Era. Going West and Looking East?, Ed. by Libby Rittenberg, London 1998, p. 185.

16.Е. И Уразова. К характеристике турецкой экономической модели, в сб. «Турция: современные проблемы экономики и политики», М., 1997, с. 55.

17.В. И. Кононов. СССР-Турция: договорная база расширяет горизонты сотрудничества, «Внешняя торговля», М., 1991, Но. 9, сс. 14-15.

19. Sbu ,Сегодня», 08. 07. 1994.

20.Gareth M. Winrow, Turkey and the Post-Soviet Central Asia, London 1995, p. 32.

21.Jacob M. Landau Pan-Turkism: From Irredentism to Cooperation, London 1995, p. 208.

22. Sbu Gareth M. Winrow. Turkey and the Post-Soviet Central Asia, p. 34.

23.«Uqqb», 06. 01. 1994.

24.«Uqqb» 14. 08. 1993.

25.Gül Turan and Ilter Turan Turkey's Emerging Relationship with Other Turkic Republics, in «The Political Economy of Turkey in the Post-Soviet Era. Going West Looking East?», p. 192.

26.Gareth M. Winrow.1995, p. 38.

27.Е. Уразова , 2003, с. 67.

28.Philip Robins. Turkey's Ostpolitik. Relations with the Central Asian States, ,Central Asia Meets the Middle Eastb, Edited by Menishri, London, 1998, pp. 146-147.

29.А. Гушер. Туркменистан: без инохода, «Азия и Африка сегодня», No. 8, 1998, с. 15.

30.И. Мурадян. Геоэкономические проблемы кавказо-каспийского региона, Ереван, 1999, сс. 136-137.

31.«Turkish Daily News», 29. 10. 1994.

32.Е. Уразова, с. 50.

33.О. Резникова. Россия, Турция и Иран в Центральной Азии, «Мировая экономика и международные отношения», No.1 1997, с. 58.

34.Gareth M. Winrow, указ. раб. с. 40. Ландау (p. 219)

35. Sbu աղյուսակը,

36.В. И. Данилов. Турция и постсоветская Центральная Азия, «Азия и Африка сегодня», Но. 2, 1994, с. 31.

37.И. Мурадян. Указ. Работа, с. 36.

38.,The Washington Report on Middle East Affairsb, October 1996, p. 89.

39.,The Washington Report on Middle East Affairsb, Nov/Dec, 1996, p. 35.

40.«Казахстанская правда», 05. 05.1992.

41. Նույն տեղում,

42.Российско-турецкие отношения, М., 2003, с. 249.

43.Ավելի մանրամասն տես Գ. Դեմոյան. Թյուրքական գագաթնաժողով, Նորավանք 2005.

44.,Documents d'actualit internationaleb, 15 janvier, No. 2, Paris, 1995, p. 68.

45.Libby Ritenberg. Introduction: The Changing Fortunes of Turkey in the Post-

Soviet World, in ,The Political Economy of Turkey in the Post-Soviet Erab, p. 10.

46.Gareth Winrow Turkey's Evolving Role in «Post-Soviet World, in «The Political Economy of Turkey in the Post-Soviet Era», p. 105.

47. Նույն տեղում, p. 160.

48.Турецкая Республика Справочник, М., 2000.

49.2006 թ.-ի կեսին Ղրիմի ինքնավար հանրապետության ղեկավարության հետ հանդիպման ժամանակ Թուրքական Հանրապետության վարչապետ Ռ. Էրդողանն ասել է «Ղրիմը դա Ուկրաինայի տարածքի մի մասն է, որը առավել մոտ է գտնվում Թուրքիային և հանդիսանում է կապող օղակ մեր երկրների միջև: Թուրքական փողերը կարող են Ղրիմի ափերը վերածել երկրորդ Անթալիայի էլ ավելի հարմարավետ հանգստի համար»: Տես Участие Турции в экономике Крыма. Экономический обзор, www.regnum.ru/news/703893.html22:13 12.09.2006.

50.С. А. Логунова. Договорные основы и практика развития экономических отношений Турции и Кабардино-Балкарской республики, «Ближний Восток и современность», выпуск 9, М ИИИБВ, М., 2000, с. 340.

51.О. Резникова. Россия, Турция и Иран в Центральной Азии, "Международная экономика и международные отношения", 1997, с. 59.

52.С. Жуков, О. Резникова. Центральная Азия в мировой политике и экономике, «Мировая экономика и международные отношения», Но. 12, 1994, с. 30.

53.Г. Старченков. Киргизия: путь без старшего брата, «Азия и Африка сегодня», No. 2, 1995, с. 27.

54.А. Куртов. Политика Турции в отношении республики Казахстан, в сборнике «Казахстан: реалии и перспективы независимого развития», РИСИ, М., 1995, с. 401.

55.А. В. Кантемиров. Экономические отношения Турции со странами Закавказья, «Востоковедный сборник», Выпуск второй, М., 2001, с. 162.

56.Н. Г. Киреев. Изменения в основных отраслях промышленности. Применение новой технологии, Турция: новые тенденции экономического развития в 80-е годы, М., Наука, 1991, с. 79.

57.Уразова с. 140.

58.Oner Kabasakal. The Economic and Trade Relations of Turkey with the Turkish Republics, "Eurasian Studiesb, Special Issue on the 10th of the Turkish Republics, Summer 2001a 49

59.Уразова с. 101.

60.Светлана Цалик. Каспийские нефтяные доходы: кто окажется в выигрыше? OSI, New York, 2003, с. 112

61.Уразова сс.130, 133.

62.Уразова, с 102

63.В. Н. Контевский «Россия – Турция: этапы торгово-экономического сотрудничества», Москва, ИВ РАН, 2003, с. 352.

64.Г. И. Старченков. Нефть и газ в экономике и политике Турции (XIX – начало XXI вв.), М., ИВ РАН, 2003, с.173.

65.Е. Уразова с. 53.

66.Е. Уразова, с. 167.

Ֆրանսիայի առևտրատնտեսական շահերը Թուրքիայում և երկու երկրների փոխհարաբերությունները

Թամարա Անդրիասյան

Ֆրանսիայի և Թուրքիայի հարաբերությունները 20-րդ դարասկիզբին

Ֆրանսիայի և Թուրքիայի փոխհարաբերությունները բազմադարյա արմատներ ունեն, ընդգրկելով այդ հարաբերությունների տարբեր ասպեկտները: Հայտնի է, որ գրեթե 400 տարիների ընթացքում, բացառությամբ Նապոլեոն Բոնապարտի հետ հակամարտության կարճատև ժամանակահատվածը, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը Ֆրանսիայի և Թուրքիայի միջև չի եղել ոչ մի լուրջ ռազմական բախում և թուրք-ֆրանսիական հարաբերությունները զարգանում էին բավական հանդարտ, առանց խորը քաղաքական ճգնաժամերի և բազմապիսի արտոնությունները, որոնցից ֆրանսիացիներն օգտվում էին Օսմանյան կայսրության մեջ, ձեռք էին բերվել հմուտ դիվանագիտությամբ ու կայուն թուրքամետ քաղաքականությամբ:

Վերջին, քսաներորդ դարը, բնորոշվում է թուրք-ֆրանսիական տնտեսական հարաբերությունների ուժեղացմամբ, որը կապված է մի շարք գործոնների հետ: Եթե փորձենք հպանցիկ ներկայացնել 20-րդ դարում թուրք-ֆրանսիական հարաբերությունների զարգացման ընդհանուր պատկերը, ապա կարելի է սկսել 20-ական թվականներից, երբ ֆրանսիական մերձավորարևելյան քաղաքականությունը, համաձայն մի շարք հեղինակների կարծիքի, պաշտպանում էր ֆրանսիական մոնոպոլիաների տնտեսական ու ֆինանսական շահերը: Հատկապես ֆրանսիական մոնոպոլիստների և բանկիրների թուրքական գործերում ծայրահեղ շահագրգռվածության պատճառով էր, որ Ֆրանսիան շահագրգռված չէր Թուրքիայի մասնատման /ի տարբերություն Անգլիայի/ և նրա պետական ինքնուրույնության վերացման մեջ: Համաշխարհային պատերազմի նախօրյակին ֆրանսիական կապիտալը գերակշռող դիրք էր գրավում Օսմանյան կայսրության տնտեսության մեջ: Ֆրանսիային բաժին էր հասնում Օտտոմանյան պարտքի 60,31 %-ը /2 454 417 377 ֆրանկ/[1], այն դեպքում, երբ Անգլիայի բաժինը կազմում էր ընդամենը 14,19 % /577 499 281 ֆրանկ/: «Ֆրանսիայի առաջնահերթ խնդիրն էր ստանալ այն ֆրանսիական կապիտալը, որը ներդրված էր Արևելյան Միջերկրածովի շրջանում», - խոստովանում էր իր հուշագրերում ֆրանսիացի դիվանագետ Ժակ Բարդուն: Այդ մասին էր խոսում նաև Ֆրանսիայի արտգործնախարար Ստեֆան Պիշոնը, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հայտարարելով, որ «Ֆրանսիան անվիճելի իրավունքներ ունի Օսմանյան կայսրությունում»:

Թուրքիայի նկատմամբ Ֆրանսիայի քաղաքականությունը դիտարկվող ժամանակահատվածում, առանձնահատուկ տեղ է գրաղեցնում: Ֆրանսիան Թուրքիայի հետ պատերազմած տերություններից առաջինը դիվանագիտական շփումներ հաստատեց երկրում իրական իշխանության ներկայացուցիչների՝ քեմալական ղեկավարության, իսկ այնուհետև նաև Թուրքիայի Գերագույն ազգային ժողովի կառավարության հետ: Օտտոմանյան

պարտքի վարչակազմում, ուր մտնում էին վեց երկրների ներկայացուցիչներ՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի և Հոլանդիայի, ֆրանսիացիները գրաղեցնում էին գերակշռող դիրք: Այդ վարչակազմը Օտտոմանյան կայսերական բանկի հետ համատեղ ստեղծեց Օսմանյան կայսրության ծխախոտի բոլոր ծեռնարկությունների կառավարման անանուն միություն /Regie des tabacs l'Empire Ottoman/, որի կապիտալի կեսը 20 մլն. ֆրանկ, գտնվում էր ֆրանսիական կապիտալիստների ծեռքերում: Բացի ծխախոտային մենաշնորհից, ֆրանսիական կապիտալիստներին էին պատկանում երկաթուղիների կառուցման, ինչպես նաև հանքերի, նավահանգիստների և այլնի շահագործման մի շարք կոնցեսիաներ: Ֆրանսիան մասնավոր ծեռնարկությունների մեջ ներդրված կապիտալի ծավալով ճնշող գերակշռություն ուներ իր հիմնական մրցակիցների՝ Անգլիայի և Գերմանիայի նկատմամբ: Նրա կապիտալ ներդրումները կազմում էին 50,58 % /830 856 000 ֆրանկ/, այն դեպքում, երբ Անգլիան միայն 14,36 % /235 818 675 ֆրանկ/, Գերմանիան 35,06 % /575 903 000/:

Պատերազմի նախօրյակին թուրքական ծեռնարկությունների մեջ արտասահմանյան մասնավոր ընկերությունների կապիտալ ներդրումները բաշխված էին հետևյալ կերպ.

Ծեռնարկությունները	Ֆրանսիա		Անգլիա		Գերմանիա	
	Ֆրանկ	%	Ֆրանկ	%	Ֆրանկ	%
Բանկեր	85 000 000	37,77	75 000 000	33,33	65 000 000	28,9
Երկաթուղիներ	512 784 000	46,83	114 693 675	10,49	466 078 000	42,61
Նավահանգիստներ և նավամառույցներ	55 375 000	67,97	10 000 000	12,27	16 100 000	19,76
Ջրային տնտեսություն	33 000 000	88,65	-	-	4 225 000	11,35
Հանքեր	42 297 000	100	-	-	-	-
Այլ ծեռնարկություններ	12 400 000	62,82	36 125 000	22,15	24 500 000	13,03
Ընդամենը	830 856 000	50,58	235 818 675	14,36	575 703 000	35,06

Ինչպես երևում է բերված աղյուսակից, Ֆրանսիան բոլոր ոլորտներում գերազանցում էր Գերմանիային և Անգլիային, ընդ որում, երկաթուղիների և նավահանգիստների շինարարության մեջ ներդրված կապիտալի ծավալով այն ուներ բացահայտ առավելություն Անգլիայի նկատմամբ, իսկ ինչ վերաբերում է ածխային արդյունաբերությանը, ապա դա ամբողջովին կենտրոնացած էր Ֆրանսիայի ծեռքերում: Եթե նկատի ունենանք այն, որ կայզերյան Գերմանիան պարտություն կրելով համաշխարհային պատերազմում, զրկվել էր իր բոլոր գաղութներից, ազդեցության ոլորտներից և արտոնություններից, ապա էլ ավելի ակնառու կդառնա այն շահագրգռվածությունը, որը դրսևորում էին ֆրանսիական կապիտալի ներկայացուցիչները թուրքական գործերում: «Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր նրա բանկիրների տենչանքով», - գրում էր Բեռլինում նախկին թուրքական դեսպան Մուխթար փաշան:

Պատահական չէ, որ առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ֆրանսիական ազդեցիկ շրջանակներում շատ հաճախ ծայր էին հնչում վաղեմի թուրք-ֆրանսիական բարեկամության վերականգնման և ամրապնդման օգտին:

«Ֆրանսիան մահմեդականների կողմնակիցն է, նա այդպիսին է հանդիսանում ըստ ավանդույթի, ըստ իր մեծահոգի ձգտումների և հանուն իր շահերի պաշտպանության», - գրում էր հայտնի հրապարակախոս Ժակ Կայզերը: Չնայած ֆրանսիական դիվանագիտության սխալներին, չնայած նրա ներկայիս իր ծնով խիստ հաշվենկատ և շահախնդիր վերաբերմունքին Թուրքիայի նկատմամբ, այնուամենայնիվ երկու երկրներին կապում են մեծ և մշտապես աճող համակրանքները...

Կոնստանդնուպոլիսում ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Բոսֆոր» թերթի խմբագիր Միշել Պայարեսը վերարտադրում էր իր գրույցները ֆրանսիական բարձրագույն սպայակազմի որոշ ներկայացուցիչների հետ, որոնք արտացոլում էին Ֆրանսիայի թուրքասեր շրջանակների տրամադրությունները:

Ֆրանսիացի սպաներից մեկը կոչ էր անում հենվել թուրքերի վրա այն բանի համար, որպեսզի «վերադարձվի այն տեղը, որը հափշտակվել է գերմանացիների կողմից»: Ընդ որում, նա բաց էր անում այն հեռանկարները, որոնք սպասում էին ֆրանսիացիներին. «...Անատոլիան իր ընդերքում առասպելական հարստություններ է թաքցնում, որոնք մինչ օրս ոչ մեկը չի օգտագործել: Մենք կոնցեսիաներ կստանանք հանքերի ու անտառների շահագործման համար, և մենք լիովին կհատուցենք այն վնասը, որը կրել ենք Արևելքում: Մենք կկառուցենք երկաթուղիներ, տրամվայի գծեր, նավահանգիստներ, նավամատույցներ, ճանապարհներ, հասարակական աշխատանքների շարքում ընտրելով այնպիսիք, որոնք առավել շահավետ են մեր ինդուստրիայի համար: Մենք ոչ մի գնով չպետք է սպառնալիքի տակ դնենք մեր շահերը հայերի ու հույների գեղեցիկ աչքերի համար...»:

Թուրքիայի և Ֆրանսիայի միջև հարաբերությունների արդի փուլը

Մինչև Հինգերորդ Հանրապետությունը, ինչպես և հետո, տնտեսական համագործակցությունը Թուրքիայի և Ֆրանսիայի միջև շարունակվում էր փոփոխական հաջողությամբ, սակայն երբեք ամբողջությամբ չէր ընդհատվում: Վերջին 10-20 տարիների ընթացքում բավական դինամիկ կերպով աճում էր Ֆրանսիայի տնտեսական ներկայությունը Ասիայի արագ զարգացող երկրներում, որտեղ ֆրանսիական ձեռնարկություններում զբաղված բանվորների ու ծառայողների քանակը 1990-ից 1995 թվականների միջև աճել է ավելի քան 60 %-ով: Սակայն, ընդհանուր առմամբ, նույն ժամանակահատվածում Ֆրանսիայի համար տնտեսական ներթափանցման գլխավոր գոտին հանդիսանում են Եվրոպական Միության երկրները, որոնց բաժին է ընկել արտասահմանի ֆրանսիական ձեռնարկություններում բանվորների ու ծառայողների ընդհանուր քանակի 45 %-ը /1990-1995 թվականներին/:

Թուրք-ֆրանսիական հարաբերությունների արդի փուլում գոյություն ունեն որոշ պատճառներ կամ, ավելի շուտ, արգելքներ, որոնք խանգարում են այդ երկու երկրների միջև հաջողված և պտղաբեր առևտրատնտեսական համագործակցության իրականացմանը:

Թուրքիայի արտահանման ու ներկրման բաշխումը

	1999 թ. /մլ. դոլար/	2000 թ. /մլ. դոլար/
Արտահանումը		
Գերմանիա	5474	5150
ԱՄՆ	2437	3060
Մեծ Բրիտանիա	1829	2020
Իտալիա	1683	1748
Ֆրանսիա	1570	1643
Նիդերլանդներ	932	869
Իսպանիա	763	683
Բելգիա և Լյուքսեմբուրգ	624	639
Ռուսաստան	589	628
Իսրայել	585	619
Ներկրումը		
Գերմանիա	5880	7150
Իտալիա	3192	4305
ԱՄՆ	3080	3869
Ռուսաստան	2374	3864
Ֆրանսիա	3127	3511
Մեծ Բրիտանիա	2190	2699
Իսպանիա	1262	1665
Ճապոնիա	1393	1588
Նիդերլանդներ	1315	1561
Շվեդիա	1444	1437

Պատճառներից մեկը /հավանաբար, գլխավոր պատճառներից մեկը/ հանդիսանում է Ֆրանսիայում մեծ հայկական համայնքի առկայությունը, որը լավ ինտեգրված է և իշխանության գրեթե բոլոր աստիճաններում ունի իր մարդկանց, և որպես հետևանք հզոր հայկական լոբբի: Հիմնականում հատկապես դրա շնորհիվ Ֆրանսիայում բարձրացվեց 1915 թվականի հայկական ցեղասպանության հարցը, որտեղ, նախ 2001 թ.-ի հունվարին ֆրանսիական Սենատը փաստաթուղթ ընդունեց, որը 1915 թվականի իրադարձությունները որակեց որպես ցեղասպանություն, իսկ այնուհետև 2006 թվականի հոկտեմբերին Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի Ազգային Ասամբլեայի կողմից ընդունվեց օրինագիծ, որը քրեական պատասխանատվություն է ենթադրում «հայերի ցեղասպանությունը հերքելու համար»:

2001 թվականին այդ քայլը թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա անդրադարձավ նրանով, որ Թուրքիան անմիջապես Փարիզից ետ կանչեց իր դեսպանին խորհրդատվության անցկացման համար, այնուհետև չեղյալ հայտարարեց «Ակատելի» հետ կնքված 149 մլն. դոլար արժողությամբ պայմանագիրը առաջին լրտես-արբանյակի արտադրության մասին: Թուրքիայի վարչապետ Բյուլենտ Էջեվիտը այն ժամանակ Ֆրանսիայի որոշումն անվանեց «անարդարացի և անընդունելի»: Անկարայում ընդհատեցին բանակցությունները Ֆրանսիայի հետ մի քանի բավական շահավետ պայմանագրերի վերաբերյալ, այդ թվում ԱԷԿ-ի կառուցման

/որոնցից յուրաքանչյուրը գնահատվում էր 5 մլրդ. դոլար/, մարտական ուղղաթիռների և տանկերի գնման և այլն, չնայած այն բանին, որ Գերմանիայի և ԱՄՆ-ի հետ Ֆրանսիան ևս հանդիսանում էր Թուրքիայի առաջատար ռազմական գործընկերը: Թուրքական ազատ սպառողների միությունը /հր նախագահ Բյուլենթ Դենիզի գլխավորությամբ/ Ֆրանսիական արտադրանքին բոյկոտ հայտարարեց: Միությունը կոչ արեց բոյկոտել Ֆրանսիական «Total» նավթային ընկերությանը, այնուհետև որպես հաջորդ «զոհ» հայտարարեց «L'Oreal» գեղարարական ընկերությունը: Թուրքիան բացառեց նաև երկրի օդանավակայանների ռադարային համակարգի կատարելագործման համար հայտարարված մրցույթին Ֆրանսիական Thales[1] ընկերության մասնակցությունը: Նշվում է, որ Ֆրանսիայի Ազգային Ասամբլեայի կողմից «Հայերի ցեղասպանությունը հերքելու համար քրեական պատասխանատվության մասին» օրինագծի ընդունումից հետո Միությունը սպառնացել է ամեն շաբաթ «սև ցուցակի» մեջ ընդգրկել մեկական ֆրանսիական ընկերություն, մինչև փաստաթուղթը չեղյալ հայտարարվի: Մինչդեռ Ֆրանսիայում Թուրքիայի նախկին դեսպան Ուլուչ Օզուլկերը հայտարարեց, որ նման գործողությունները բումերանգի պես կհարվածեն հատկապես թուրքական տնտեսությանը: Բացի այդ, նա նշեց, որ պետք է հաշվի առնել, որ Ֆրանսիայում ապրում են մոտ 400 հազ. թուրքեր, որոնց վրա կարող է անդրադառնալ Փարիզի հետ սառը պատերազմը: Միևնույն ժամանակ, մեկնաբանելով Ֆրանսիական մայրաքաղաքի Place du Canada հրապարակում հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանի կանգնեցման մասին Փարիզի մունիցիպալ ժողովի կողմից ընդունված որոշումը, Թուրքիայի ԱԳՆ-ի ներկայացուցիչը հայտարարեց, որ Փարիզի քաղաքային իշխանությունների այդ քայլը կարող է նպաստել թուրք-ֆրանսիական հարաբերությունների հետագա վատթարացմանը: Այսպիսով, սկսած 2001 թ.-ից, այն բանից հետո, երբ Ֆրանսիայի խորհրդարանը ճանաչեց հայոց ցեղասպանությունը, առաջատար ֆրանսիական ընկերությունները երկու տարով կորցրեցին մուտքը թուրքական շուկա: «Այն ժամանակ ֆրանսիական «ժիատ» կոնցեռնը այդպես էլ չմատակարարեց թուրքերին 4-րդ սերնդի «Լեկլերկ» տանկեր, որոնք կարող էին փոխարինել նախորդ տարիներին մատակարարված ֆրանսիական «Ռենո-35» թեթև տանկերին: Թուրքիան բանակցություններ էր վարում նաև ֆրանսիական «Աէրոսպասյալ» ընկերության հետ հակատանկային հրթիռների գնման մասին», - գրում էին ռուսական մեկնաբաններ Պյոտր Իսկանդերովը և Վիկտոր Վոլոդինը: Բացի այդ, Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար գեներալ Իլկեր Բաշբուղը այն ժամանակ տեղեկացրեց, որ իր երկիրը սառեցնում է Ֆրանսիայի հետ բոլոր ռազմական կապերը. «Ֆրանսիայի հետ հարաբերությունները ռազմական ոլորտում կասեցված են», «իսկ բարձր մակարդակի փոխադարձ այցելությունները չեղյալ են հայտարարվել»: Թուրքիայի ռադիոհաղորդումների միությունը արգելք դրեց ֆրանսիական ֆիլմերի ու երգերի վրա: Անկարան կտրեց ֆրանսիացիների ճանապարհը Թուրքիայի հյուսիս-արևմուտքում ճանապարհների, կամուրջների և թունելների շինարարության համար մեկուկես միլիոն դոլար ստանալու հնարավորությունից: Չնայած այն բանին, որ հետագա տարիները այնքան էլ պտղաբեր չէին երկու երկրների տնտեսական համագործակցության առումով, այնուամենայնիվ որոշ բնագավառներում գործերը շատ լավ էին

ընթանում: Այդ առումով, եթե վերոնշյալը ճիշտ էր ռազմական տեխնիկայի համար, ապա դա շրջանցեց ավտոմոբիլային տեխնիկան: Համաձայն Ֆրանսիայի էկոնոմիկայի, ֆինանսների և զբաղվածության նախարարության հետազոտության[2], որը վերաբերվում է ավտոմոբիլային հնդուստրիայի ծեռքբերումներին, մեքենաների վաճառքի մակարդակը Թուրքիայում և Իրանում, որտեղ գտնվում են ֆրանսիական նախագծողները, առանձնահատուկ բարձր է եղել: 2002 և 2003 թվականների ընթացքում այն մոտ երեք անգամ ավելացել է Թուրքիայում և մոտ 2 անգամ Իրանում, և այդ երկրներից յուրաքանչյուրը հետագայում այդ սեկտորում արտահանման մասնաբաժինը ներկայացրել են 2,5-ական %: Դա հիմնականում վերաբերում է Renault և Peugeot Citroen ընկերություններին, որոնք ուժեղացրել են իրենց ներկայությունը Իրանում /այն ծառայում է որպես տարածաշրջանային հարթակ արտահանման համար/: Այդ ավտոմեքենաների արտահանումը նոր բարձունքի հասավ 2004 թ.-ին: Նշված ծեռքբերումները բացատրվում են Արևմտյան Եվրոպայի սահմաններից դուրս առևտրի ավելացմամբ: Վաճառքը Թուրքիայում և Իրանում ապագա հարթակ հանդիսացան «Logan»-ի հավաքման համար՝ նախատեսված Ռուսաստանի և Ռումինիայի համար: Հարկ է նշել, որ միայն 2004 թ.-ին մեքենաների վաճառքը Թուրքիայում աճեց ավելի քան 50%-ով:

Ավտոմոբիլային սարքավորման
մատակարար-երկրների ցանկը

Հազար եվրո	2001	2002	2003	2004	2004/2003
Գերմանիա	36249	59971	47899	51530	7.58 %
Թունիս	20656	30435	27930	34319	22.88 %
Իսպանիա	8438	7760	5981	32440	442.38 %
Իտալիա	17784	17502	23860	23267	-2.49 %
Թուրքիա	234	2573	12258	20308	65.67 %
Մեծ Բրիտանիա	22082	18530	14926	11131	-25.43 %
Լեհաստան	1146	1860	677	5738	747.56 %
Ճապոնիա	718	764	969	3307	241.28 %
Ընդամենը	**109306**	**141397**	**136503**	**184044**	**34.63 %**

Այսպիսով, համաձայն փորձագետների հաշվարկի, 2005 թ.-ին Ֆրանսիայի և Թուրքիայի միջև ապրանքափոխանակությունը կազմել է 8,2 մլրդ. եվրո: Բավական է նայել 2002 և 2003 թթ.-ին Թուրքիայի արտաքին առևտուրն արտացոլող աղյուսակներին, որպեսզի պարզ դառնա, որ 2005 թ.-ին Թուրքիայի և Ֆրանսիայի միջև ապրանքափոխանակությունն աճել է: Այլ բան է, որ 2006 թ.-ին դրա մակարդակը նվազել է ավելի քան միլիարդ եվրոյով:

Ապրանքափոխանակությունը Թուրքիայի և այլ երկրների միջև 2002 թ.-ին

Գերմանիա	տարեկան 10,0 մլրդ. դոլար
ԱՄՆ	ավելի քան 5,0 մլրդ. դոլար
Իտալիա	ավելի քան 4,5 մլրդ. դոլար
Ռուսաստան	շուրջ 4,5 մլրդ. դոլար առանց «մաքոքային» առևտրի հաշվառման
Ֆրանսիա	3,0 մլրդ. դոլար
Մեծ Բրիտանիա	շուրջ 3,0 մլրդ. դոլար

Թուրքիայի հիմնական գործընկերները 2002 թ.-ին

Գերմանիա	ընդհանուր ապրանքափոխանակության 14,6 %-ը
ԱՄՆ	7,5 %
Իտալիա	7,4 %
Ֆրանսիա	6,1 %
Անգլիա	6,1 %
Ռուսաստան	5,8 %
Իսպանիա	2,9 %
Ճապոնիա	2,9 %
Շվեյցարիա	2,9 %

Նույն թվականին Թուրքիայի արտահանիչ արտադրանքի առավել սպառողները

Գերմանիա	արտահանման ընդհանուր ծավալի 16,7 %-ը
ԱՄՆ	9,4%
Մեծ Բրիտանիա	8,4%
Իտալիա	6,4%
Ֆրանսիա	6,1%
Ռուսաստան	3,4%

Թուրքիայի հիմնական գործընկերները 2002 թ.-ին

Գերմանիա	ընդհանուր ապրանքափոխանակության 15,0 %-ը
ԱՄՆ	6%
Իտալիա	7,2%
Ֆրանսիա	6%
Անգլիա	6,3%
Ռուսաստան	5,8%,
Նիդերլանդներ	2,6%
Շվեյցարիա	2,5%

2003 թվականին Թուրքիայի արտահանիչ արտադրանքի առավել սպառողները

Գերմանիա	արտահանման ընդհանուր ծավալի 16,6 %-ը
ԱՄՆ	9,2%
Մեծ Բրիտանիա	8,5%
Իտալիա	6,4%
Ֆրանսիա	6%
Ռուսաստան	3,3%

Տվյալ աղյուսակում ներկայացված են Ֆրանսիայի էկոնոմիկայի, ֆինանսների և զբաղվածության նախարարության տվյալները 2001 թ.-ից մինչև 2003 թ.-ը երկրի արտաքին տնտեսական սալդոյի վերաբերյալ

Առևտրային սալդոն
/Երկրների արտաքին առևտրային սալդոյի ցանկը/

Երկիրը	2001	2002	%evo 2002/2001	2003	%evo 2003/2002
Իտալիա	152865	145361	-4.91 %	145987	0.43 %
Իսպանիա	28627	51365	79.43 %	109541	113.26 %
Մեծ Բրիտանիա	72712	100981	38.86 %	101993	1.00 %
Հունաստան	33738	46843	38.84 %	57796	23.36 %
Բելգիա	33222	45514	37.00 %	44629	-1.94 %
Ռուսաստան	16077	18746	16.60 %	35114	87.31 %
Հունգարիա	13084	15723	20.17 %	20031	27.40 %
Պորտուգալիա	31152	18884	-39.38 %	18080	-4.26 %
Սինգապուր	10922	14241	30.39 %	15980	12.21 %
Շվեյցարիա	6985	18514	165.05 %	14301	-22.76 %
Այժիր	7778	11675	50.14 %	9419	-19.32 %
Իսրայել	8290	10503	26.69 %	8773	-16.47 %
Սաուդյան Արաբիա	10118	6873	-32.07 %	7502	9.15 %
Թուրքիա	2863	7800	172.44 %	7127	-8.63 %

Համաձայն Ֆրանսիայի էկոնոմիկայի, ֆինանսների և զբաղվածության նախարարության տվյալների, արտահանող ձեռնարկությունների պատկերը՝ բաշխված ըստ իրենց աշխարհագրական գոտիների /2004 թ.-ին/ ունի հետևյալ տեսքը.



PME (petit et moyen entreprise) – մանր և միջին բիզնես,
TPE (tres petit entreprise) – շատ փոքր ձեռնարկություն

Նախարարության կայքից վերցված Բուրգունդիայի տարածքի տվյալները ներկայացնում են 2004 թ.-ի արտահանման ու ներկրման վիճակը:

Արտահանողների ցանկը /հիմնական գործընկեր-երկրները/[3]

Արտահանման գործընկերները	քանակը	արտահանումը (ՄԵ)	քանակը /մանր և միջին բիզնես/	արտահանումը (ՄԵ)
Գերմանիա	18 900	45 880	16 500	19 000
Իսպանիա	17 200	30 610	14 900	12 100
Մեծ Բրիտանիա	15 800	28 790	13 600	11 800
Իտալիա	16 600	28 450	14 300	13 400
Բելգիա	20 200	23 070	17 800	9 481
ԱՄՆ	19 800	20 810	17 100	7 931
Նիդերլանդներ	13 900	11 980	12 000	6 023
Հվեյցարիա	30 300	9 319	26 900	4 151
Չինաստան	10 700	6 519	8 300	2 526
Ճապոնիա	9 800	4 870	8 200	2 464
Հվեդիա	6 900	4 214	5 600	1 434
Պորտուգալիա	9 900	4 007	8 300	1 814
Լեհաստան	9 200	3 899	7 700	1 472
Թուրքիա	5 900	3 897	4 700	1 424
Այժիր	10 100	3 746	8 900	2 190
Հունաստան	6 800	3 398	5 600	1 535
Ավստրիա	7 500	3 201	6 100	1 290
Սաուդյան Արաբիա	3 700	3 067	2 900	428
Ռուսաստան	5 800	2 885	4 800	706
ՍԱԷ	4 600	2 876	3 700	720
Մարոկկո	11 300	2 494	9 700	1 108

Ներկրողների ցանկը /հիմնական գործընկեր-երկրները/[4]

Ներկրման գործընկերները	քանակը	ներկրումը (ՄԵ)	քանակը /մանր և միջին բիզնես/	ներկրումը (ՄԵ)
Գերմանիա	31 800	55 160	28 400	24 000
Իտալիա	31800	28 340	28 600	16 200
Իսպանիա	25 200	23 590	22 500	9 814
Բելգիա	27 600	22 890	24 500	11 600
Մեծ Բրիտանիա	19 400	20 600	16 600	8 540
ԱՄՆ	20 700	20 290	17 300	8 379
Չինաստան	21 600	15 312	18 900	9 361
Նիդերլանդներ	19 800	13 690	17 000	7 462
Ճապոնիա	7 200	9 749	5 700	5 935
Հվեյցարիա	15 300	7 233	12 700	4 851
Ռուսաստան	1 200	6 646	900	1 025
Նորվեգիա	1700	6 235	1 200	511
Իռլանդիա	3 400	5 659	2 600	1 462
Հվեդիա	5 800	4 123	4 400	2 446
Պորտուգալիա	7 300	3 271	6 200	1 601
Թուրքիա	5 700	2 945	4 800	1 515
Ավստրիա	6 900	2 886	5 500	1 617
Լեհաստան	5 400	2 850	4 400	1 372
Հարավային Կորեա	4 300	2 812	3 600	1 482
Սաուդյան Արաբիա	300	2 736	200	140
Այժիր	300	2 568	300	169

Այսպիսով, ինչպես արդեն նշվել էր, թուրք-ֆրանսիական հարաբերությունների վատթարացման երկրորդ գարկը հանդիսացավ «հայոց ցեղասպանության հերքման» օրինագիծը: Օրինագիծը մինչ օրս հավանության չի արժանացել Սենատի կողմից և չի ստորագրվել նախագահի կողմից, սակայն արդեն իսկ տեղի ունեցած իրադարձությունները բավարար էին Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանի համար, որպեսզի նա իր երկրի ու Ֆրանսիայի միջև հարաբերությունների հետագա ճակատագրի առումով կանգներ սպառնալիքների ուղու վրա: Ավելին, Թուրքիայի ԱԳՆ-ի նախկին նախարար Յաշար Յակընը հայտարարեց, որ օրինագծի հաստատման պարագայում «Թուրքիայից պետք է արտաքսվեն անօրինական գործունեությամբ զբաղվող 70 հազ. հայ միգրանտներ»: Այն ժամանակ դեռևս թուրքական ԱԳՆ-ի ղեկավար Ա. Գյուլը նշեց, որ «Եթե ցեղասպանության մասին օրենքն ընդունվի, Թուրքիան ոչինչ չի կորցնի, սակայն Ֆրանսիան կկորցնի Թուրքիային»:

Ինչպես 2001 թ.-ին, 2006 թ.-ին ևս Թուրքիան Ֆրանսիային հայտարարեց ռազմական կապերի դադարեցման մասին: Եվ նորից Թուրքիան սպառնաց Ֆրանսիային տնտեսական պատժամիջոցներով: Թուրքական իշխանությունների կողմից մտցված միջոցները նշանակում էին, որ այսուհետ Անկարան չի պատրաստվում սպառազինություն գնել ՆԱՏՕ-ի իր դաշնակցից և չեղյալ կհայտարարի երկու երկրների միջև բոլոր բարձրաստիճան այցելությունները: Այսպես օրինակ, մերժված է ֆրանսիական «Eurocopter» ընկերության առաջարկը ժանդարմերիայի ուժերի համար 12 ուղղաթիռների ձեռքբերման առթիվ, մեկ այլ ֆրանսիական ընկերության չի թույլատրվել մասնակցել 54 ուղղաթիռների ձեռքբերման մրցույթին, որոնք նախատեսված էին Թուրքիայի Զինված ուժերի տարբեր նպատակների համար, ինչպես նաև հաշվի չի առնվել ֆրանսիացիների նախագծային

առաջարկը Ծովային ուժերի համար ժամանակակից սուզանավերի ձեռքբերման կապակցությամբ, մերժվել է նաև ֆրանսիական «GIAT» ընկերության առաջարկը Ցամաքային զորքերի համար տանկերի ձեռքբերման մրցույթին մասնակցելու համար:

Սակայն, թուրքական փորձագետներից մեկը նշում է, որ «վերջին տարիներին Ֆրանսիան այսպես թե այնպես շանսեր չուներ ստանալ թուրքական ռազմական պայմանագրեր, հատկապես մարտական ուղղաթիռների ու արբանյակների մատակարարման առումով»: Վերջին հինգ տարիների ընթացքում Ֆրանսիան Թուրքիային վաճառել է ընդամենը 239 հակատանկային հրթիռային ERYX համալիրներ և ավարտել է D'Orves դասի 6 կորվետների խմբաքանակի մատակարարումը՝ հականավային Exocet հրթիռներով:

Չնայած այդ ամենին, 2007 թ.-ի գարնանը Թուրքիայի կառավարությունը հերքեց տեղեկություններն այն մասին, որ ֆրանսիական Gaz de France գազային ընկերության հետ բանակցությունները կասեցվել են Փարիզի կողմից հայոց ցեղասպանության հերքման քրեական պատասխանատվության մասին օրենքի ընդունման համար: Թեև միևնույն ժամանակ Թուրքիայում հայտարարվել էր Gaz de France-ի Թուրքիայից Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի տարածքներով դեպի Ավստրիա «Nabucco»[4] գազամուղի անցկացման նախագծի մասնակցության հետ կապված բանակցությունների դադարեցման մասին, Թուրքիայի էներգետիկայի նախարար Հիլմի Գյուլերը նշեց, որ «Nabucco-ն մեզ համար շատ կարևոր նախագիծ է, և գործընթացը բնականոն ընթացք ունի: Gaz de France-ի մասնակցությունը նախագծում կասեցված չէ»: Սակայն նշվում է, որ ֆրանսիական ընկերության մասնակցության օգտին հանդես են եկել բոլոր ներդրողները, բացի Թուրքիայից: 2006-2007 թթ.-ի[5] արտաքին առևտրի ցուցանիշները կարելի է ուսումնասիրել ներքո բերված աղյուսակներում:

Կոտ-դ՝օր[6] դեպարտամենտ, 2006-2007թթ.
Արտահանումը մլն. եվրո

Երկիրը	արժեքը	%	նախկին դիրքը*
ԱՄՆ	405	14,3	2
Գերմանիա	366	12,9	1
Մեծ Բրիտանիա	241	8,5	3
Իտալիա	218	7,7	5
Իսպանիա	213	7,5	4
Ճապոնիա	162	5,7	6
Բելգիա	147	5,2	7
Հվեյցարիա	116	4,1	8
Նիդերլանդներ	76	2,7	10
Կանադա	64	2,2	9
Չինաստան	63	2,2	11
Լեհաստան	51	1,8	13
Չեխիա	49	1,7	12
Ավստրալիա	33	1,2	16
Թուրքիա	27	0,9	14
Այլ	602	21,3	
Ընդամենը	2 833	100	

* - 2005-2006 թթ.-ի ժամանակահատված

Նիեվր դեպարտամենտ, 2006-2007 թթ.
Ներկրումը մլն. եվրո

Երկիրը	արժեքը	%	նախկին դիրքը*
Ռուսաստան	213	24,4	2
Բելգիա	144	16,6	1
Գերմանիա	119	13,6	3
Նորվեգիա	54	6,2	24
Մեծ Բրիտանիա	49	5,6	4
Իտալիա	42	4,8	7
Չինաստան	41	4,7	5
Լեհաստան	23	2,7	6
Նիդերլանդներ	23	2,6	9
Իսպանիա	20	2,3	8
Ռումինիա	12	1,3	11
Թուրքիա	11	1,3	10
Շվեդիա	11	1,3	13
Թունիս	9	1,0	14
Ճապոնիա	8	0,9	17
Այլ	93	10,7	
Ընդամենը	872	100	

* - 2005-2006 թթ.-ի ժամանակահատված

Յոնն դեպարտամենտ, 2006-2007 թթ.
Արտահանումը մլն. եվրո

Երկիրը	արժեքը	%	նախկին դիրքը*
Իսպանիա	196	13,5	2
Մեծ Բրիտանիա	189	13,0	1
Իտալիա	184	12,7	4
Գերմանիա	173	11,9	3
Բելգիա	148	10,2	5
Նիդերլանդներ	60	4,1	6
Թուրքիա	40	2,8	14
ԱՄՆ	29	2,0	7
Շվեդիա	27	1,9	12
Նորվեգիա	27	1,8	9
Շվեյցարիա	26	2,2	8
Լեհաստան	22	1,5	16
Պորտուգալիա	22	1,5	21
Հունգարիա	21	1,4	42
Այժիր	19	1,3	10
Այլ	269	18,5	
Ընդամենը	1 452	100	

* - 2005-2006 թթ.-ի ժամանակահատված

Բազմաթիվ փորձագետների կարծիքով, Թուրքիայի դեմարշը կարող է բացասական հետևանքների հանգեցնել հենց իր՝ Թուրքիայի համար, քանի որ այն կարող է էլ ավելի բարդացնել նրա անդամակցությունը Եվրամիությանը:

Եվրամիությունը նույնպես համարեց, որ հայոց ցեղասպանության մա-

սին օրենքը սրում է Թուրքիայի հարաբերությունները ԵՄ-ի հետ: Թեև, դա չի նշանակում, որ Բրյուսելի դրքորոշումը այդ հարցում խիստ տարբերվում է Փարիզի դիրքորոշումից:

Դեռևս 2006 թ.-ի սեպտեմբերին Եվրախորհրդարանի պատգամավորները որոշում ընդունեցին, որը Անկարային պարտադրում էր ճանաչել հայոց ցեղասպանությունը, եթե երկիրը ցանկանում է դառնալ Եվրամիության լիիրավ անդամ: Բացի հայկական հարցը, Թուրքիայի լիիրավ եվրոպականացմանը խանգարում է նաև Հյուսիսային Կիպրոսի հիմնախնդիրը: Այդ հարցի կապակցությամբ ևս Ֆրանսիան և ԵՄ-ն կոշտ դիրքորոշում ունեն: Դեպի ԵՄ Թուրքիայի համար արգելքներից մեկն էլ հանդիսանում է Եվրամիության պահանջը փոփոխել Թուրքիայի ՔՕ 301-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում Թուրքական Հանրապետությանը վարկաբեկող արտահայտությունների համար: Սակայն, արդեն 2006 թ.-ի աշնանը Անկարան հայտարարեց այդ տխրահռչակ հոդվածը մեղմելու մտադրության մասին: Համենայն դեպս Ռ. Էրդողանը 2008 թ.-ի հունվարին լրագրողների հայտարարեց այն մասին, որ Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի փոփոխությունների օրինագիծը շուտով կուղարկի խորհրդարանի հաստատմանը:

Սակայն, ընդհանուր առմամբ, վերջին ժամանակները Թուրքիայի լիիրավ անդամակցության մասին հարցը էլ ավելի տարակուսելի է թվում: Այդ տեսակետի օգտին է խոսում նաև Ելիսեյան պալատի տիրոջ կայուն դիրքորոշումը, որը թվում է հետևողական է իր արտահայտություններում: Դեռևս 2007 թ.-ի գարնանը, իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Նիկոլյա Սարկոզին հայտարարում էր, որ Թուրքիայի լիիրավ անդամակցությունը նպատակահարմար չէ: Դրա փոխարեն նա առաջարկում էր Անկարային հետ համագործակցության նոր ձևաչափ «Միջերկրածովային միություն», որն արդեն պետք է ստեղծվի 2008 թ.-ին: Ըստ Սարկոզիի «Միջերկրածովային միությունը» դա ԵՄ-ի այլընտրանք է այն երկրների համար, որոնք տեղակայված են միջերկրածովային ծովալուն ավազանում, և որոնք ցանկանում են ինտեգրվել Եվրոպային, սակայն տարածքային, տնտեսական կամ որևէ այլ ցուցանիշներով չեն ձգում Եվրամիության շարքերն ընդգրկվելուն: Որպես այդ Միության առաջնորդի դերակատար Սարկոզին տեսնում է Թուրքիային:

Ինչ վերաբերում է 2007 թ.-ի վերջին, ապա Անկարայում տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ երկու երկրների արտգործնախարարներ Բեռնար Կուշները և Ալի Բաբաջանը նշեցին, որ իրենց երկրներ շատ ընդհանրություններ ունեն և հնարավոր է երկխոսությունը երկրների միջև: Թուրքական Zaman թերթը գրում էր, որ Կուշները մեկ անգամ ևս հաստատեց այն տեղեկությունը, որ Ֆրանսիան Թուրքիային տեսնում է «Եվրամիության արտոնյալ գործընկերոջ» դերում, իսկ Ալի Բաբաջանը իր հերթին պնդում էր բացառապես լիիրավ անդամակցությունը: Հատկանշական է, որ այն ժամանակ, մամլո ասուլիսում, Ալի Բաբաջանը շոշափեց հայոց ցեղասպանությունը հերքմանը վերաբերող օրինագծի հարցը: Նա հույս հայտնեց, որ դա չի ուղարկվի Սենատի հաստատմանը, որին Ֆրանսիայի ԱԳՆ-ի ղեկավարը տվեց միանգամայն միանշանակ պատասխան՝ ասելով, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի կողմից չպետք է անդրադառնա երկու երկրների հարաբերությունների վրա: Կուշները նկատեց նաև, որ

Թուրքիայի հետ ներկայիս հարաբերությունների դժվարին շրջանի լույսի ներքո, նրա այցը նշանակում է նոր զարկ հաղորդել երկու երկրների միջև հարաբերություններին: Հարկ է նշել նաև, որ այցելությունների սառեցման պահից ի վեր, դա ֆրանսիական պետական գործչի առաջին այցն էր:

Ընդհանուր եզրակացություններ

Անկասկած Ֆրանսիային և Թուրքիային կապում են բազմադարյա փոխշահավետ առևտրատնտեսական հարաբերությունները: Ֆրանսիան հաշվի է առել և կշարունակի հաշվի առնել Թուրքիային իր հետագա տնտեսական պլաններում, որոնք առնչվում են մերձավորարևելյան տարածաշրջանին:

Դատելով Ֆրանսիայի և Թուրքիայի առևտրատնտեսական փոխհարաբերությունների զարգացման դինամիկայից, չնայած առևտրատնտեսական համագործակցության ընթացիկ անկմանը, ապագայում, ամենայն հավանականությամբ արդեն մոտ երկու տարուց, այդ համագործակցությունը նոր ուժով կվերսկսվի:

Ակնառու է նաև այն, որ մինչ օրս Ֆրանսիան մնում է Եվրամիության ամենաազդեցիկ երկիրը: Ամենասկզբից նա էր հանդիսանում Եվրոպական Միության ստեղծման գլխավոր նախաձեռնողը, և մինչ օրս մնում է միության ուժեղ մասնակիցը: Վաղ թե ուշ Թուրքիան դրա հետ պետք է հաշվի նստի, չնայած այդ պետության ղեկավարների չարացած ելույթներին ու սպառնալիքներին, չնայած նաև Ֆրանսիայի նկատմամբ իրականացված տնտեսական պատժամիջոցներին:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրակացնել, թուրք-ֆրանսիական դիվանագիտական ու քաղաքական հարաբերությունները անառարկելիորեն վատացել են: Դրա պատճառներն են. 1915 թվականի Հայոց ցեղասպանության խնդիրը, Հյուսիսային Կիպրոսի հիմնախնդիրը, ԵՄ-ի ընդլայնման հետ կապված նոր միտումները, որոնք բացառում են առավել խիտ բնակեցված մահմեդական երկրի միացումը, պայմանավորված ԵՄ-ի թուլացմամբ: Այսպիսով, ներկայումս, քսանմեկերորդ հարյուրամյակի սկզբին, որոշակի իրավիճակների բերումով «հայերի ու հույների սիրուն աչքերը» ֆրանսիացիների համար ավելի արժեքավոր են դարձել:

1. Այս մի շարք այլ տվյալներ վերցված են հետևյալ գրքից Саакян Р. Г. «Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг.»

2. Ֆրանսիական էլեկտրոնային Thales ընկերությունը նախկինում եղել է Thomson ռազմա-արդյունաբերական հսկայի մի մասը, նա հայտ էր ներկայացրել թուրքական ուղևորատար ինքնաթիռների ռադարային համակարգի մրցույթում մասնակցության համար:

3. http://minefi.gouv.fr

4. Աղբյուրը Тамохни. Ծանոթություն. միության մասնակից-երկրների միջև առևտուրը, որը անկում է անում 100 000 ՝ նիշի մակարդակից ցածր, բացառություն է հանդիսանում: Դա 2004 թ.-ի առաջին 11 ամիսների նախնական թվերն են:

5. Աղբյուրը Тамохни. Ծանոթություն. միության մասնակից-երկրների միջև առևտուրը, որը անկում է անում 100 000 evro նիշի մակարդակից ցածր, բացառություն է հանդիսանում: Դա 2004 թ.-ի առաջին 11 ամիսների նախնական թվերն են:

6. Նախագծի այլ մասնակիցներ են հանդիսանում OMV Ավստրիան, MOL Հունգարիան, Ռումինիան Transgaz, Բուլղարիան Bulgargaz, Թուրքիան Botas: Դրա հետ կապված Ռոյթեր գործակալությունը պնդում է, որ իրենց անանուն կերպով նշել են, որ թուրքերը մեղմացրել են Nabucco-ի հետ կապված իրենց հայտարարության տոնը: Եվրամիության ճնշման տակ: ԵՄ-ում համարում են, որ Nabucco նախագիծն ունի ռազմավարական նշանակություն. դա թույլ կտա Կասպիական տարածքի և Մերձավոր Արևելքի նավթը տեղափոխել շրջանցելով Ռուսաստանը և դրանով իսկ նվազեցնել Արևմտյան Եվրոպայի կախվածությունը ռուսական «Գազպրոմից», որին բաժին է ընկնում բնական գազի մատակարարման մինչև 30 %-ը: Nabucco նախագծի արժեքն է 4,6 մլրդ. եվրո:

7. Ֆրանսիական Բուրգունդիա տարածքը, որին 2006-2007 թթ.-ի ժամանակահատվածում բաժին է ընկել երկրի արտահանման 2,5 %-ը և ներկրման 1,7 %-ը:

8. Ըստ Դեպարտամենտների տվյալները վերցված են Ֆրանսիայի էկոնոմիկայի, ֆինանսների և զբաղվածության նախարարության կայքից http://minefi.gouv.fr.

SUMMARIES

The Energy Sector of Turkey: the development problems and perspectives.

Ashot Eghiazaryan

The aim of this work has been the examining the energy sector of Turkey to assess its stability and identify the existing problems and perspectives of development.

The author has used the documents of international organizations and official agencies in Turkey, articles and analytical materials of the experts of fuel and energy field, as well as statistical data and other materials regarding the issue in question. The author has used situational, comparative, statistical and graphic methods of analysis and has given expert evaluation.

The degree of dependence of Turkey on the import of energy resources has been identified. Also, the author analyzed the production and consumer market of the energy resources in Turkey. The main tendencies in Turkey's policy of energy transit have been identified and some issues of liberalization of Turkey's energy market have been discussed.

The processes of industrialization and urbanization in Turkey have boosted the consumption of first-hand energy and have caused some changes in its structure and increase in the degree of dependence of the country, whose energy resources are already scarce, on the import of gas and oil. In fact, Turkey will continuously increase its energy consumption which will lead to its greater dependence on the import of energy resources. Turkey has enough sources of recycled energy; however, the level of its consumption is low. The perspectives of developing nuclear energy still remain obscure. Turkey is trying to formulate quite an ambitious policy of energy transfer; however, the chances of accomplishing many of its set goals in this sphere are very low. Turkey doesn't have enough financial and technical resources to increase and modernize its energy infrastructure independently. It is assumed, that liberalization of the energy market under the influence/pressure of EC and IMF (International Monetary Fund) will partially solve this problem. Nevertheless, there are some political forces that oppose to that course of development, which, on the whole, creates tension in the political situation of the country.

The Commercial and Economic Relations between Russia and Turkey.

Michael Aghadganyan

The Russian-Turkish relations have a rich history. The geopolitical opposition between the two countries before the Revolution in 1917 in Russia was traditional and predetermined within the framework of regional and interna-

tional relations of those times. In the 1920s, there was a drastic change in the socio-political systems of Russia and Turkey, which contributed to the consolidation of both countries' relations and the establishment of a solid ground for the "Soviet-Turkish" cooperation, particularly in commerce and economy. After World War II, the USSR and Turkey appeared in confronting military-political blocks. However, the geographical closeness, the dependence of the countries on each other in the Black Sea region, on the whole, and the burden of mutual suspicion in the context of the possible revival of the territory issue in bilateral relations have created a certain situation when the slightest imbalance could result in some undesirable consequences both in and outside the region. Both sides became aware of the keen necessity of developing a trade and economic partnership and the latter was referred to as a restraining factor - then the most optimal one in preventing the relations from reaching a critical point of confrontation.

The collapse of the Soviet Union shook the well-established balance in the bilateral relations and the first post-soviet years became critical in the Russian-Turkish relations. Despite the fact that a Russian-Turkish treaty of bilateral cooperation was signed in May, 1992, Russia and Turkey continued to be in the condition of increasing mistrust until the year 2000, which was strengthened by both objective and subjective factors: Turkey's actions in the Turkic regions of the post-soviet territory, the Chechen conflict, the Kurds' issue, as well as the failure to promote trust on the personal level between the presidents of the countries. The nature of the bilateral relations between Russia and Turkey until another significant change in the political situation in each of the countries (when Putin began his presidency and the party of Justice and Development took office) could be described as "an existing political rivalry and a possibility of economic partnership". Just after 2002 the Russian-Turkish relations took a new turn, when the previous objective political problems became secondary, and the "personalized" level of mutual trust between the heads of the countries came in compliance with the creation in bilateral relations the atmosphere of multilevel partnership, as well as of "a strategic partnership" in the perspective.

There are diverse explanations of the drastic changes taking place in the Russian-Turkish relations. However, all the experts agree that certain detachment between Turkey and the USA contributed to the consolidation of the partnership between Russia and Turkey. What is important is, like in the Soviet times, the bilateral relations of the "forced neighborhood" got a new impulse first of all in the field of trade and economy and the principle of multilevel partnership itself was practically developing exceptionally in the sphere of economic cooperation between Russia and Turkey. Thus, it can be assumed, on the whole, that the Russian-Turkish relations are of a cyclic nature, what can be described the following way: "periods of political confrontation are followed by periods of political stability; the latter being achieved mainly due to economic partnership".

The last five years of the new phase in the Russian-Turkish relations have showed that even the economic partnership in bilateral relations bearing the main responsibility for realization of the principle of "multilevel partnership" is

not free from conflicts on both sides, which has been getting sometimes quite crucial, and from current instability in trade and economic partnership, that has caused worry for both sides. The economic cooperation between Turkey and Russia is to a great extent restricted to certain fields and is one-way directed, clearly determining the superiority of either of the partners in a particular field - energy resources supply, construction business, tourism and investments. Though Russia depends on the political actions of Turkey, for example, in respect to the Black Sea bays, or cooperation in the fields of construction, tourism and investments, Turkey is also dependent on the development of the trade and economic relations with Russia. According to the Turkish side, the Turkish-Russian economic relations are very sensitive to political fluctuations, in the meantime a great part of population in Turkey earn their living due to these relations. Today, many people - from builders to heads of big companies - depend on the Russian-Turkish relations.

In the light of the last parliamentary elections in Turkey and the "quite predictable upcoming presidential elections in Russia" it is easy to foresee that the attitude of both countries towards the development of "a multilevel partnership" won't change. Russia and Turkey will continue supporting each other, for example, co-opting at international forums and nominating for high positions at international organizations.

Turkey will be working towards the acceptable level of relations with the USA, a full membership in European Community and development of its Eurasian vector of the foreign policy, one of the central trends of which is Russia.

The Economic Cooperation between Iran and Turkey in the Region.

Sergey Shakaryants

During 1991-2008 Iran and Turkey were characterized as two neighboring countries claiming to be large regional powers and functioning as serious strategic factors. Both countries were supposed to influence the situation in the Trans-Caucasus and other regions bordering on Iran and Turkey. However, when characterizing the policy and economic programs of Iran and Turkey, little has been considered in terms of the full "complex" of the triple "ownership" of strategic factors which apart from the advantageous communicative location includes also the capacity of each country to self-supply various resources. This circumstance has allowed (and still allows) Iran to look down at the wishes and needs of its Turkish neighbors.

For a long time Tehran and Ankara functioned on the level of the agreements signed between various ministries, state agencies and firms, but not on the governmental level. Even the diplomatic relations are somewhat of a peculiar nature. However, in different periods, in tune with some moves towards each other in the political sphere there were attempts to systematize

also economic cooperation attaching to it an intergovernmental quality. The first attempts were made in the 90s of the 20th century, when the Islamites form the "Refah" party took office in Turkey. There has been another outburst of mutual interest between Tehran and Ankara in the last four or five years, when another Islamic political force - a party of Justice and Development - took office in Turkey. Thus, it is not difficult to conclude initially that the level of cooperation between the two countries always depended not on Iran but on to what extent the Turkish authorities were ready to perform the role of external forces, as far as Ankara is tied up to the USA within the NATO or in terms of its foreign debt. Needless to say, that the status of Turkey as the only reliable and consistent Muslim ally of Israel has always been apparent. Nevertheless, for the last few years nineteen recurrent sessions of the Iranian-Turkish intergovernmental commission have been held within the framework of the commercial and economic cooperation.

Turkey and Iran have always maintained an economic partnership of international and regional character, despite the fact that Ankara is still influenced by the West and Israel. The membership of both countries in the Organization of Regional Cooperation for Development (ORCD), which was established by Iran, Turkey and Pakistan in 1977, as well as in Economic Cooperation Organization (ECO) established in 1985 is being discussed. It should be noted that ORCD headquarters are situated in Tehran which suggests that it was not just a compromise but a deliberate choice made by Turkey and Pakistan in favour of Iran because of the latter's considerable weight in the complex of strategic factors.

The present article seeks to trace and systematize the main tendencies of the development of economic cooperation between Iran and Turkey at the present stage of their bilateral relations. The author used the most recently updated data and information publicly issued by the corresponding ministries, agencies and establishments in Tehran and Ankara. Our investigation revealed that despite all the above-mentioned contemplations it is too early to claim that all the issues of the economic cooperation between Iran and Turkey, and in energy sector, in particular, have been completely settled. Turkey is still influenced by the external factors - first of all, the USA and Israel. This in its turn is the main obstacle on the way to develop bilateral economic cooperation between Ankara and Tehran.

Some Aspects of the Turkish-Georgian Economic Cooperation: economy that is determined by politics.

Vladimir Ivanov

The article is about a number of issues of the Georgian-Turkish economic relations, mainly, their commercial-economic component. The analysis of the general dynamics of the Turkish-Georgian economic relations shows that economy is used by the Turkish side as an important tool to set up her own

political influence on the post-Soviet territory. There has been a noticeable increase in the Turkish investments in various fields of the Georgian economy. The trade turnover between Turkey and Georgia has been increasing since 2000 as a result of which Turkey became Georgia's first trade partner in 2007 leaving Russia behind. Despite this fact, the overall volume of Georgia's foreign trade balance has been increasingly negative for years. That situation was caused by a vast number of various Turkish products of last industry that flooded the Georgian market. It should also be noted that Turkey rarely directly invested in the Georgian strategic fields of economy. One of the largest investors is a Turkish company called Sisecam which invested in Ksan factory of glass products, whose production is realized at both home and foreign markets. Also, Turkey seems reluctant to open her market to a variety of Georgian products, which makes this cooperation unilateral, i.e. mainly beneficial for Turkey. However, all the above-mentioned negative factors are latent and not that vivid yet.

Turkey is more willing to control in geopolitical and geo-economic spheres. In this respect, Georgia faced Turkey's evident desire to dominate the East-West communication and energy transactions. On February 7, 2007, the construction of the Kars-Akhalkalaki-Tbilisi-Baku railway was announced. The analysis shows that the project does not benefit Georgia in terms of either economy or politics. In terms of economy, the significance of Georgian ports of Poty and Batumi in the Black Sea is diminishing; in terms of politics, Georgia is to be faced with the real danger of becoming a pseudo-transit. In the context of the latest significant geopolitical transformations and the increased pragmatism of her allies - Turkey and Azerbaijan, Georgia can be trapped due to her middle and transit location, which can lead to political and various economic consequences.

The Commercial and Economic Relations between Turkey and China.

Levon Hovsepyan

At present, the Turkish-Chinese commercial and economic relations are developing quite fast, which is a logical continuation of the countries' adopted foreign trade policies. For the developing economy of Turkey it seems quite beneficial to develop multidirectional foreign economic relations with the goal of becoming a leading trade and economic power in the region. That is why within the framework of her foreign economy policy Turkey started to consider economic relations with China. In 2005, the Foreign Trade Agency of the Government of Turkey adopted a strategy of developing trade and economic relations with the countries in the Asian and Pacific Region. According to this strategy, this region is viewed as an important branch in the Turkish trade and economic relations. In her relations with the countries of the region mentioned above Turkey is consolidating her relations with China. Since 2006, China has become Turkey's largest economic partner.

Stable relations between Turkey and China will help the former to become a reliable partner of China in the regions of her interest. As China has geopolitical and geo-economic ambitions concerning Central Asia, the Near and the Middle East, Turkey, playing an important role in the politics, economy and security of the region, will become more important for China, which in its turn will strengthen Turkey's geo-economic significance. Besides, the Turkish-Chinese relations will increase the level of Turkey's trade and economic relations with the countries of Eastern and South-eastern Asia. In the context of bilateral commercial-economic relations Turkey can serve as a transit crossroad for China on the way to Europe and the countries of the Near East and with the help of China Turkey can strengthen her commercial and economic relations with the countries of Asian and Pacific region.

In the Turkish-Chinese economic relations the greatest portion belongs to the trade turnover, which has been displaying growing rates. According to statistical data, the volume of bilateral trade turnover has considerable increased since 2000: from 1 440 000 dollars in 2000 to 10 280 000 dollars in 2006. As of the year 2006 China has become the seventh trade partner of Turkey's and the fourth country by the export volume into Turkey, after Germany, Russia and Italy.

The Turkish Government considers China as a 'target' for the interests of the Turkish economic strategy in the Asian-Pacific region and as a huge market for increasing the volumes of Turkey's export, as it is stipulated that the total volume of Turkey's export will have reached 200 billion dollars by 2013. Taking into account commercial and economic programs in perspective and the high rates of the Chinese economy development, the bilateral trade and economy coming from the priorities of economic policies of both countries will develop fast.

Establishment and Consolidation of the Commercial and Economic Relations between Turkey and the Turkic-speaking Countries of the CIS.

Hayk Demoyan

In spite of the fact that Ankara is trying hard to secure her leading position in the economic life of the former Soviet Turkic republics, it has happened that each of them is an independent political and economic entity with its own priorities in the development and security of its national interests. Despite the positive changes due to the reform of liberalizing Turkey's economy, Turkey had no potential to provide the local markets with competitive quality products of Turkish manufacturers.

The Soviet heritage of the commanding and administrative way of management in economy and the non-weakening role of the Government in the economy made the immediate transformation of the economy into that of a Turkish type nearly impossible. These circumstances played an important

role for Turkey's businessmen to keep away from investing. Turkey failed to realize the hopes of Turkic republics for broad investment programs. Turkey's position in the market of raw materials in the region is insignificant. For that reason, Ankara has decided to provide Turkish companies with favourable conditions.

The formation of market structures, participation in the world and regional integration processes as well as democratizing of the social and political life in each country have their peculiar way of development and are apt to a special logics. In that respect an unconditional preference for the "Turkish model" did not work out, and its quick adaptation to a different social, political and economic system turned out impossible. However, due to an active expansion of Turkish products and services in the former Soviet republics, Turkey managed to secure her economic presence in these republics as well as establish economic grounds for a political presence. According to the Russian researcher G. Starchenkov, at the end of the 20th century and the beginning of the 21st century a powerful pro-Turkish lobby was formed in many Turkic regions of Russia. The majority of Turkic nationalists were enrolled in numerous Turkish or mixed companies, as well as in oil mining and oil transporting companies.

However, it would be wrong to assume that Turkey has reconciled to her marginal role in the economy of Central Asia and the Caucasus. An obscure perspective of Turkey's European integration may push Turkey to the East, which may result in an increased significance of these regions for the Turkish economy with the consequent growth of Turkey's share in the local economies.

After the elections in 1999 when B. Edjevit's Coalition Government (with NMP) took office, certain steps were taken to rehabilitate the ideas of economic Pan-Turkism and to consolidate commercial and economic cooperation with the Turkic states. The paragraph on the Turkish-Turkic relations of the 8th five-year plan (2001-2005) supposed "enhancing the economic, trade, social, cultural, scientific and technological cooperation".

Turkey took an active part in developing projects to set state-of-the-art transportation and communication infrastructures in the Turkic states. Turkish construction companies actively participated in building airports, trade and business centers, modernizing old ports, developing infrastructures in the field of energy, etc.

The initial goal set by the Turkish government to conquer and integrate the economy of the Turkic states with that of Turkey was absolutely groundless.

Ankara did not manage and was hardly able to hold a leading position in the fields that required high investment capital and hi-tech industries such as establishment of transcontinental communications, laying pipes for the transportation of hydrocarbon raw material to the world markets.

In addition to this, Turkey provided the new countries with insufficient loans. The Turkish government was also criticized for spontaneity of actions and little support of the businessmen. Because of the corruption and unreliable local partners the Turkish middle and small businesses being deprived of the state support became no longer competitive and many of them had to withdraw.

The Commercial and Economic Interests of France in Turkey and the Relations between the Two Countries.

Tamara Andriasyan

The article deals with the relations between France and Turkey starting from the 20th century until the present, particularly, in trade, financial and political aspects. The greater part of the article is about the present day state of these relations which is supported with a lot of pictorial-analytical information. The objective of this work was to present huge information of this nature, to consider main facets of the relations between the two countries and the reasons for some deterioration of these relations at present. The Armenian Question is among those reasons, which has become a stumbling block in the French-Turkish relations. It is the Armenian Question - recognition of Armenian genocide in 1915 by France - that has changed the French-Turkish relations. The second stage of these relations began from the same Armenian Question; however, this time the cause was the bill of "denial of the Armenian Genocide" adopted by the lower chamber of the French Parliament. The article presents a detailed chronology of the actions undertaken by the Turkish side as a reaction to the fact of raising the issue about the Armenian Genocide, including, for example, cutting sales of the French weapons and armament in Turkey. But Turkey is ready to go further: Turkey promises to boycott the French goods in the future and still to restrict its cooperation with France especially in trade and economy.

Apart from the Armenian Question the article speaks about other reasons for the present weakened economic relations between France and Turkey. Recently the status of the Northern Cyprus has also started worrying the world, and in particular, the French community and the political circles.

The article also reads that as far as Turkey has not solved her inner and outer problems, its chances soon to become a member of European Union or at least to gain really guaranteed grounds for that are inconsiderable, though it still claims for a full membership. Hence, it can be assumed that Turkey has a different role to play in the world from the one it would like to. Turkey is offered to lead the imaginary "Mediterranean Union" as an alternative to the European Union.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ
Թողարկում 2

ԹՈՒՐՔԻԱ.
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պող. 26
Թողարկման պատասխանատու՝ Ա. Եղիազարյան

Ստորագրված է տպագրության 12.04.2008 թ.
Տպագրված է «Հայրապետ» հրատարակչատանը
Ֆորմատը՝ 35x70 1/16
Թուղթը՝ օֆսեթային
Ծավալը՝ – պայմ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օր.